

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ISSN 1829-4359

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

5

ԵՐԵՎԱՆ
2014

ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



EUROPEAN
EDUCATIONAL
REGIONAL
ACADEMY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

5

ԵՐԵՎԱՆ
2014

Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝

Հովհաննիսյան Դեզի, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

խմբագրական խորհուրդ

Հովհաննիսյան Դ.Ն., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Աբրահամյան Հ. Մ., պատմագիտության դոկտոր

Աստվածատրյան Ա. Վ., բժշկական գիտ. դոկտոր

Բաղիրյան Գ. Մ., իրավագիտության դոկտոր

Գրիգորյան Յու. Գ., ֆիզմաթ գիտ. դոկտոր

Ղարսյան Է. Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մովսիսյան Յու. Մ., ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Վահանյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Քրիստոֆ Կրեյտց, ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժլվ./

ԵՏԱ. Գլխ. խմբ.՝ Դ. Հովհաննիսյան, - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2014:

Գիրք 5 - 344 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավաբանության, տնտեսագիտության, կառավարման տարբեր ոլորտների հրատարակյալ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2014
© Publishing of European Educational Regional Academy 2014

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

***Ջ.Ա. Թադևոսյան
Մ.Մ. Ջաթարյան***

21-րդ դարում համաշխարհային տնտեսությունում տեղի են ունենում անհավատալի, արագ և քառսային փոփոխություններ, և այդ փոփոխություններին հարմարվելը յուրաքանչյուր երկրի համար ժամանակի հրամայական է: Գլոբալ փոփոխությունների դրդապատճառներից մեկը տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) առաջանցիկ տեմպերով զարգացումն է:

Այս համատեքստում տնտեսության զարգացման համար որպես առաջընթացի շարժիչներ պետք է դիտարկել գիտելիքի կուտակումը, նոր գաղափարների ստեղծումը, դրանց առևտրայնացումն ու տարածումը: Անառարկելի է, որ ժամանակակից հասարակության զարգացման հիմքը գիտելիքն է, և միայն գիտելիքի վրա հիմնված տնտեսությունն ու հասարակությունն են ի զորու հաղթահարելու մարդկության առջև արդեն իսկ ծառայած կամ սպասվելիք մարտահրավերները:

Գիտելիքը տեխնոլոգիայի հիմքում է, իսկ տեխնոլոգիայի կատարելագործումն ու զարգացումն իր հերթին սոցիալական կառուցվածքի փոփոխության կարևոր միջոց է: Ինչպես ֆուտուրոլոգ Էլվին Թոֆլերն է նշում իր «Ապագայի շուկր» գրքում, եթե տեխնոլոգիան դիտվի որպես հզոր շարժիչ, արագացուցիչ, ապա գիտելիքը կարող ենք համարել որպես դրա վառելիք: Մեր սոցիալական միջավայրում «գիտելիքը ենթադրում է փոփոխություններ», իսկ դրա ձեռք բերման արագացումը, որը սնուցում է տեխնոլոգիայի շարժիչը, նշանակում է վերափոխումների արագացում:^[1] Զարգացող երկրների փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում գիտելիքի ու նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված մրցակցային առավելություններն առավել նա-

խընտրելի են ավանդական ռեսուրսների առատության վրա հիմնված մրցակցային առավելություններից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում առկա են տնտեսական և սոցիալական դժվարություններ՝ կապված աշխարհագրական սահմանափակումների ու բնական պաշարների սակավության հետ, հնարավորությունների ընդլայնման լավագույն գրավականը SS արդյունաբերության զարգացումն է:

Վերջին տասնամյակում SS ոլորտը, մասնավորապես ծրագրային ապահովման և ծառայությունների բնագավառում, Հայաստանի տնտեսության արագ զարգացող ու եկամտաբեր ճյուղերից է դարձել: Մինչև Խորհրդային Միության փլուզումը Հայաստանը համարվել է էլեկտրոնիկայի և SS ոլորտի առաջատար կենտրոններից մեկը՝ ավելի քան մեկ տասնյակ խոշոր գիտահետազոտական ինստիտուտներով և արդյունաբերական ձեռնարկություններով:^[2]

Նկատի ունենալով SS արդյունաբերության զարգացման տեմպերն աշխարհում, այդ արդյունաբերության դերը տնտեսության զարգացման, տեղեկատվական հասարակության ձևավորման մեջ, և հիմք ընդունելով, որ SS արդյունաբերությունը բավարարում է գերակա ճյուղ ճանաչվելու ՀՀ տնտեսության զարգացման պահանջները՝ 2000թ.-ից սկսած ՀՀ կառավարությունն այն հայտարարեց տնտեսության գերակա ճյուղերից մեկը: Ինչպես նշվում է, SS զարգացման հայեցակարգի գերնպատակներից մեկը կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային հագեցվածության և համացանցի հասանելիության բարձր աստիճանով, համակարգչային բարձր գրագիտությամբ, մեծածավալ տեղական SS շուկայի առկայությամբ և առաջավոր գիտելիքահենք արդյունաբերությամբ տեղեկատվական հասարակության ձևավորումն է երկրում:^[3]

Չենք ժխտի այն փաստը, որ 2000թ.-ից մինչև այսօր SCS ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և նախագծերի արդյունքում գրանցվել է որոշակի առաջխաղացում, սակայն երբ համեմատում ենք SCS ոլորտում հաջողության հասած այլ երկրների հետ, որոնց տնտեսություններն ունեն ընդհանրական շատ գծեր ՀՀ տնտեսության հետ, ապա առաջխաղացումն այնքան էլ նշանակալի չէ: Դիտարկենք ոլորտի հիմնական ցուցանիշները և տեսնենք, թե ինչ փոփոխությունների են դրանք ենթարկվել:

Զարգացած SS ոլորտ ունենալու կարևորագույն տարր է համապատասխան մասնագիտացված կենտրոնների, ընկերությունների կողմից բարձրորակ ծառայությունների մատուցումը, արդյունավետ գործողությունների կատարումը: ՀՀ-ում SCS ոլորտի վերաբերյալ ներկայացված տվյալների համաձայն 2012թ. դրությամբ ոլորտում գործում էին 360 ընկերություններ, որոնցից 33-ը տրամադրում էին հեռահաղորդակցության ոլորտի ծառայություններ, իսկ մնացած ընկերությունները մասնագիտացած էին ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտում: Նշենք, որ 2010թ.-ին գործող ընկերությունների թիվը կազմել է 197, 2006թ.-ին՝ 160: 2008թ. գրանցվել է առավելագույն ցուցանիշը, երբ հիմնվել է շուրջ 30 նոր ընկերություն: Ստեղծված ընկերությունների քանակի այս ցուցանիշը դժվար է պահպանել, քանի որ առկա բարձրակարգ ծրագրավորողների, ճարտարագետների և ծրագրերի ղեկավարների քանակը երբեմն չի բավականացնում անգամ գործող ընկերություններին: 2012թ. տվյալներով Հայաստանում գործում են 151 արտասահմանյան բաժնեմասով ընկերություններ, որը կազմում է ընդհանուրի 42%-ը: 2006թ.-ին արտասահմանյան ընկերությունները կազմում էին 48 (30%), 2010-ին՝ 56 (28%): Արտասահմանյան ընկերությունների մեծամասնությունը ամերիկյան ընկերություններ են (48%):^[4]

Ուսումնասիրելով ոլորտի վերաբերյալ կատարված հետազոտությունները, տեսնում ենք, որ 2012թ.-ին ոլորտում գործող ընկերությունների թիվն աճել է 100-ով 2006թ.-ի համեմատ:^[5] Այսինքն, 44%-ով աճել է SS ոլորտում գործող ընկերությունների քանակը: Իհարկե 6 տարվա մեջ աճ արձանագրելը դրական երևույթ է, սակայն 2000-2012թթ. ընթացքում ոլորտում ընդամենը 360 ընկերության գործելը դեռևս հաջողության գրավական չէ:

Նշենք այն հանգամանքը, որ միջազգային ընկերությունների մեծ մասի մուտքը հայկական շուկա պայմանավորված է նաև տեղական STARTUP-ների գնմամբ: Սակայն այս հարցի հետ կապված խնդիրները նույնպես խոչընդոտում են ինչպես նորաստեղծ ընկերությունների ստեղծմանը, այնպես էլ ոլորտի հետագա զարգացմանը: 2013-ից ուժի մեջ մտած նոր հարկային օրենսդրական փաթեթի բազմաթիվ կետեր չեն նպաստել ոլորտի զարգացմանը, մասնավորապես՝ մեծ հարկային բեռը բարձր աշխատավարձերի վրա, որոնցով

ուրրտն առանձնանում է տնտեսության մյուս ճյուղերից: Հայաստանում չի գործել որևէ հատուկ պայման կամ արտոնություն SS STARTUP-ների համար: Վերջերս կառավարության կողմից ներկայացված նախագիծը կարելի է համարել որոշակի քայլ՝ ի օգուտ ուրրտում նոր ստեղծվող ընկերությունների, սակայն չենք կարող չնշել այն, որ SS ուրրտին հարկային արտոնություններ տրամադրելու որոշմամբ կառավարությունն այժմ փորձում է մեղմել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեմ առաջացած դիմադրությունը, որի հիմնական կորիզը հենց SS ուրրտի ներկայացուցիչներ են: Ըստ կատարված փոփոխությունների՝ 15-ից ավելի աշխատակից չունեցող ընկերությունները երեք տարի ժամկետով ընդհանրապես կազատվեն շահութահարկից, որն այսօր կազմում է 20 տոկոս, իսկ այդ ընկերությունների աշխատակիցները աշխատավարձից կվճարեն միայն 10 տոկոս եկամտահարկ:^[6]

Սակայն նշենք, որ նպատակահարմար չէ SS ուրրտի նորաստեղծ ընկերություններում աշխատակիցների թիվը սահմանափակել 15-ով: Ենթադրենք աշխատակիցների քանակն ավելանում և դառնում է 20 կամ 30: Ստացվում է այնպես, որ եթե գործունեության ընթացքում ընկերության աշխատակիցների թիվն աճել է 15-ից, անմիջապես այս օրենքից դուրս է մնալու: Եվ այստեղ հարցը փոխվում է, այսինքն շուկայում անհրաժեշտ է խրախուսել փոքր ընկերությունների գոյությունը, թե աջակցել հաջողակ ընկերությունների զարգացմանը:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի (<ՏՖ) կողմից հրապարակված «2013թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց»-ի հիմնական արդյունքների՝ ոչ բարենպաստ դիրքում են գտնվում նորարարության, կառավարության միջոցների ոչ նպատակային օգտագործման ցուցիչները:^[7] Եթե խոսենք նորարարությունների առևտրայնացման մասին, ապա այսօր երիտասարդ գիտնականների առաջ քաշած գիտական նորարարությունները և առհասարակ վերջիններիս կողմից կատարված որևէ ուսումնասիրություն կյանքի կոչվելու ճանապարհին հանդիպում է բազմաթիվ խնդիրների, ինչպիսին են՝ թղթաբանական քաջքշուկներ, հեղինակային իրավունքների ստացման համար մեծ ծախսեր, գիտնական-

գործարար երկխոսության հաստատման հետ կապված դժվարություններ:

Զարգացած երկրների փորձը վկայում է այն մասին, որ արևմտյան կրթական համակարգից դուրս եկած գիտնականներին սովորեցնում են նաև վաճառել սեփական արտադրանքը, բացի դրանից՝ ցանկացած միջազգային SS կազմակերպություն շատ բարձր է գնահատում այդ երկխոսության առկայությունը, ինչպես նաև R&D կենտրոնների, բաժինների առկայությունը: Օրինակ՝ ամերիկյան ու եվրոպական ձեռնարկությունները պարտադիր ունեն բաժիններ, որոնք իրականացնում են ուսումնասիրություններ և մշակումներ, որոնք տեղում աշխատում են նորարարությունների, դրանց ստեղծման, մշակման վրա, ինչպես նաև համագործակցում են տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների հետ և գործողությունների առավել օպտիմալ կազմակերպման շնորհիվ կարողանում են ստեղծել արդյունք: Կրթական նման քաղաքականության կարիքը շատ խիստ զգացվում է մեր երկրում:^[8]

Հայաստանի SCS ոլորտի մրցակցային առավելություններից կարելի է համարել ոլորտի աշխատուժը: Ուսումնասիրելով աշխատուժի վերաբերյալ համապատասխան տվյալները՝ տեսնում ենք, որ 2012թ. ոլորտում զբաղվածների թիվը կազմել է մոտ 9400 հոգի: 2010թ. և 2008թ. ոլորտում զբաղվածների թիվը կազմել է համապատասխանաբար՝ 4960 և 4890 հոգի: Երբ համադրում ենք 2010 թ. տվյալների հետ, ապա երևում է, որ թիվը գրեթե կրկնապատկվել է:^[9] Գուցե թիվը կրկնապատկվել է, սակայն որպես ոլորտի զարգացման լուրջ խոչընդոտ պետք է նշենք որակավորված տեխնիկական մասնագետների պակասը և վերջին տարիներին աշխատուժի առավել սուր արտահայտված արտահոսքը: Այս խնդիրն ունեն և՛ խոշոր ընկերությունները (տարեկան 700,000 ԱՄՆ դոլար և ավելի շրջանառություն ունեցող ընկերությունների 47%-ը), և՛ փոքր ընկերությունները (մինչև 100,000 ԱՄՆ դոլար տարեկան շրջանառություն ունեցող ընկերությունների 64%-ը):^[6]

Ոլորտում զբաղվածների թվի մեջ ներառված են նաև ուսանողներ: Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող մասնագիտացումներով սովորող ուսանողների թիվը 2011-2012 ուսումնական տարում կազմել է 9882, որը ՀՀ բուհերում սովորողների

10.4%-ն է: Այս 10.4%-ը ինքնին փոքր թիվ է, և եթե հաշվի առնենք այն, որ վերը նշված 9882 հոգուց 50%-ի մասնագիտական գիտելիքները գտնվում են ցածր մակարդակի վրա, իսկ մնացած 50%-ին պրակտիկ աշխատանք կատարելու համար բուհն ավարտելուց հետո պահանջվում է լրացուցիչ ժամանակ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար:

Աշխատուժի որակը և շրջանավարտների անբավարար կրթական մակարդակը տեղական գործարարների և ղեկավարների կողմից ծավալուն քննարկումների առարկա են դարձել: Գործատուների հարցման համաձայն՝ ընկերությունների ղեկավարների 90%-ը կարծում է, որ աշխատուժի որակի ներկայիս մակարդակը կարող է իրենց ոլորտի աճի խոչընդոտ հանդիսանալ:^[10]

Գերակշռող է այն տեսակետը, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները պատրաստ չեն աշխատելու իրենց մասնագիտական ոլորտներում՝ ինչպես տեսական, այդպես էլ գործնական գիտելիքների և հմտությունների պակասի պատճառով: Միայն տեսական գիտելիքների տրամադրումը չի նշանակում գիտելիքի փոխանցում: Այսպիսով, մեծ ճեղքվածք կա կրթական համակարգի կատարելագործվածության մակարդակի և տնտեսության իրական պահանջարկի միջև:

Համաաշխարհային մրցունակության զեկույցի (ՀՄՁ) վարկանիշների համաձայն՝ տարրական և ընդհանուր կրթական համակարգի կատարողականով Հայաստանի դիրքերը այդքան էլ անբարենպաստ չեն: Այդուհանդերձ, բարձրագույն կրթության և վերապատրաստման մի քանի ցուցանիշներ (ինչպես օրինակ՝ կառավարման դպրոցների որակը, հետազոտական և վերապատրաստման ծառայությունների հասանելիությունը և անձնակազմի վերապատրաստման ինտենսիվությունը) աչքի են ընկնում իրենց չափազանց ոչ մրցունակ վարկանիշներով: Այս ցուցանիշները մատնանշում են հայկական կրթական համակարգի խոցելի ոլորտները, որոնք հանգեցնում են կրթության ցածր մակարդակի և չեն օժանդակում տնտեսությանը տրամադրվելիք որակյալ աշխատուժի առաջարկի մեծացմանը:^[11]

ՀՀ ՏՀՏ ոլորտի գործունեության հիմնական կողմնորոշումն ուղղված է դեպի ծրագրային ապահովման մշակում, ՏՏ ծառայություններ, պատվերների ներգրավում (աուտսորսինգ): Ըստ տվյալնե-

րի, 2012թ.-ի դրությամբ Հայաստանի «Ծրագրային ապահովում և ծառայություններ» ոլորտի շրջանառությունը կազմել է շուրջ 244.3 մլն ԱՄՆ դոլար, 2010թ.-ին՝ 150 մլն ԱՄՆ դոլար: Որպես առավել եկամտաբեր հիմնական ոլորտներ կարող ենք առանձնացնել ծրագրային ապահովման պատվերները և արտապատվիրումը, միկրոսխեմաների նախագծումը, ՏՏ ծառայությունները և խորհրդատվությունը:

2008թ.-ի դրությամբ խոշորագույն 29 ընկերությունները (1 միլիոն ԱՄՆ դոլար և ավելի շրջանառությամբ), որոնք կազմել են գործող ձեռնարկությունների ընդամենը 17%-ը, ձևավորել են ոլորտի ընդհանուր հասույթի 60%-ը: Համեմատած 2006թ. հետ՝ 2008թ.-ին գործել են ևս 9 ընկերություններ, որոնց հասույթը կազմել է 1 միլիոն ԱՄՆ դոլար և ավելի: Հայաստանի ՏՀՏ ոլորտի «Ծրագրային ապահովում և ինտերնետ ծառայություններ» սեգմենտի հասույթի մասնաբաժինը 2012թ. ՀՀ ՀՆԱ-ում (9,8 միլիարդ ԱՄՆ դոլար) կազմել է 3.3%: Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր համախառն հասույթը 2012թ.-ին կազմել է այդ տարվա ՀՀ առևտրի և ծառայությունների շրջանառության 9%-ը:^[12]

ՏՏ ոլորտում զարգացում ապահովելու համար շատ երկրներ մեծ ֆինանսական միջոցներ են ուղղում տեխնոպարկերի, բիզնես ինկուբատորների, գիտահետազոտական կենտրոնների ստեղծմանը: Առաջինը, ինչին պետք է անդրադառնանք, Գյումրու տեխնոպարկն է: Գյումրիում տեխնոպարկ ստեղծելու գաղափարը սկիզբ է առել դեռ 2006 թվականից՝ միջազգային փորձը տեղայնացնելու նախաձեռնությամբ: Տեխնոպարկի ծրագրի նպատակն է խթանել Գյումրիում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների զարգացումը՝ նկատի ունենալով այդ ոլորտում Հայաստանի ընտրած ռազմավարությունը և ոլորտի զարգացման միջազգային հեռանկարները: Ինչ վերաբերում է ՀՀ-ում բիզնես ինկուբատորների ստեղծմանը և դրանց գործառույթների տարածմանը, նշենք, որ դրանք սահմանափակ են տեխնիկական, տոխնոլոգիական և ֆինանսական անբավարարության, ձեռնարկատերերի պասիվ վերաբերմունքի և բիզնես ինկուբատորների ինստիտուցիոնալ ենթակառուցյունների ստեղծման հնարավորությունների բացակայության պատճառով:

Ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի խոշոր ձեռնարկությունները հանդիսանում են արտասահմանյան ընկերու-

թյունների մասնաճյուղեր, որոնք գրեթե լիովին արտահանում են իրենց արտադրանքը: Հայաստանի ՏՀՏ ոլորտը 2012թ.-ին արտահանել է 119.6 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ արտադրանք և ծառայություններ: ՏՏ ոլորտի ընկերությունների շուրջ 50%-ը արտահանում է սեփական արտադրանքն ու ծառայությունները, սակայն տարբեր ծավալներով. որոշների համար արտահանումները կազմում են հասույթի ցածր տոկոս, իսկ մյուսները ամբողջությամբ են (100%) արտահանում իրենց արտադրանքը: Արտահանումների առավելագույն մասը՝ մոտ 54%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 31%-ը՝ Եվրոպա, իսկ երրորդ տեղում են Ռուսաստանն ու ԱՊՀ երկրները 6%-ով:

Ըստ ՀՀ 2012-2015 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի՝ տնտեսական զարգացման ռազմավարության շրջանակներում ակնկալվում է մինչև 2025թ. ոլորտում ստեղծել 10-15 հազար նոր աշխատատեղ, 2017թ. արտահանել թողարկված արտադրանքի շուրջ 60%-ը: Ներկայացված տվյալների հիման վրա պլանավորվում է ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2025թ. հասցնել շուրջ 6-7%-ի:^[3]

ՏՏ ոլորտի ներկայացուցիչներն ու մասնագետները, ռազմավարություններ մշակողները պետք է հասկանան, որ ոլորտը չի գործում մեկուսի: Այս համատեքստում պետք է նշել ոլորտում առկա մեկ այլ հիմնախնդրի մասին ևս՝ պետության և ոլորտում գործող ձեռնարկությունների միջև համագործակցության շատ ցածր մակարդակը: Կառավարության և մասնավոր հատվածի միջև զգալի անվստահություն կա: Մասնավոր հատվածի հետ թույլ համագործակցությունը հնարավորություն չի տալիս պետությանը լիարժեք տեղյակ լինել առկա հիմնախնդիրներին: Թույլ է երկխոսությունը պետության և ՏՏ ոլորտի ձեռնարկությունների, ինչպես նաև բուհերի և գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների, լաբորատորիաների միջև համագործակցությունը խորացնելու կարիք կա: Համաշխարհային ՏՏ շուկայում նման համագործակցությունը պարտադիր է, ոլորտի բաղկացուցիչ մասն է կազմում և առաջընթացի գլխավոր նախապայմանը:

Անհրաժեշտ է իրականացնել համակարգված միջոցառումներ, մշակել պատշաճ քաղաքականություն գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում, ուսումնասիրել միջազգային փորձը և հնարավոր

դասեր քաղել այն երկրներից, որոնք ընդամենը 20 տարիների ընթացքում այսօր արդեն դարձել են համաշխարհային ՏՀՏ ոլորտի առաջատարներ:

Հայաստանում շատ է խոսվում ՏՏ ոլորտի, դրա զարգացման, առաջխաղացման, միջազգային համագործակցության խորացման մասին, սակայն մինչ օրս չեն նկատվում լուրջ ձեռքբերումներ, որոնք կարելի է համարել տարիների ընթացքում կատարված աշխատանքների արժանի արդյունք, չեն նկատվում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող էին ոլորտում գրանցված հաջողությունների շնորհիվ երկիրը տեսանելի դարձնել միջազգային մակարդակում:

Քանալի բառեր. ՏՀՏ-Տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաներ, ՏՀՏ ոլորտի հիմնախնդիրներ, ՍՏԱՐՏԱՓ-ների գործունեության առաջնահերթություններ, ԳՀՓԿԱ-ի, տեխնոպարկերի և բիզնես-ինկուբատորների կենտրոններ, կրթության ոչ համարժեք մակարդակ:

Օգտագործված գրականություն

1. Тоффлер Э., "Шок будущего": Пер. с англ.-М.: "Издательство АСТ", 2002. -557 с.
2. 2005թ. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ:
3. IT Sector Development Concept Paper, Prepared for the USAID-Funded, Competitive Armenian Private Sector Project, November 2007, PDF 29 pages
4. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, 2008, 2010, 2012թթ. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, PDF 60 էջ
5. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, «2012թ. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն», PDF 60 էջ
6. <http://armenpress.am/arm/news/753700/tt-olorti-norastexts-yunkerutyunnerin-petutyuny-tramadrum.html> (19.03.2014)

7. http://ev.am/sites/default/files/EV_GITR_PressRelease_2013. PDF (18.03.2014)
8. <http://armscoop.com/2013/10/commercialization-of-scientific-innovation/> (19.03.2014)
9. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, 2008, 2010, 2012թթ. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, PDF 60 էջ
10. [http://www.evconsulting.am/media/documents/BRAINWORK/other%20research/Market study_on_HE_graduate_labor_demand_and_employment_in_Armenia_armenian_version](http://www.evconsulting.am/media/documents/BRAINWORK/other%20research/Market%20study_on_HE_graduate_labor_demand_and_employment_in_Armenia_armenian_version). PDF, 86 pages(19.03.2014)
11. Հայաստանի ազգային մրցունակության գեկույց 2013-2014, «Աճի հրամայականը և խոչընդոտները», PDF 114 էջ
12. 2008, 2010, 2012 թթ. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ
13. Հայաստանի Հանրապետության 2012-2015թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 2012թ., ք. Երևան, 180 էջ:

Резюме

В статье обсуждается необходимость накопления знаний и применения как залог социально-экономического прогресса в будущем. Учитывая тот факт, что в Армении существуют экономические и социальные трудности связанные с географическими ограничениями и с дефицитом природных ресурсов, наилучшим путем экономического прогресса может стать развитие отрасли ИКТ.

Представлено текущее состояние сектора ИКТ РА, ключевые показатели сектора, изменения на протяжении многих лет. Наряду с исследованием текущего состояния выявлены проблемы сектора, которые являются препятствием для его дальнейшего развития, продвижения а также в вопросах будущих инвестиций. Такие проблемы как недостаточные привилегии для деятельности Стартап-

ов, малое количество центров НИОКР, технопарков и бизнес-инкубаторов, неадекватный уровень образования и сотрудничество между государством и компаний ИКТ сектора.

Важные слова: ИКТ- информационно-коммуникационные технологии, проблемы сектора ИКТ, привилегии для деятельности Стартап-ов, центры НИОКР, технопарков и бизнес-инкубатор, неадекватный уровень образования.

Resume

In the article it is discussed the importance of accumulation and the use of knowledge as a guaranty of social-economic progress. Considering the fact, that in Armenia there are social and economic problems connected with geographical restrictions and natural resources, the development of information and communication sector (ICT) can be the best pledge of the expanding of opportunities. Here is performed the present situation, the main indicators and the changes of the armenian ICT sector. Besides, it is revealed some of the issues in the sector, which prevent further development, progress and attraction of investments in the sector. Issues such as deficiency of privelege for Startup companies, the lack of R&D centers, technoparks and business incubators, not adequate educational level and deficient cooperation between government and companies in ICT sector.

Thereby is mentioned the importance of these obstacles and offered systematic actions.

Important words: Information and communication sector (ICT), accumulation of knowledge, issues in the sector, Startup companies, R&D centers, technoparks and business incubators, educational level.

ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Դ. Հախվերդյան Է. Համբարձումյան

Համաշխարհային շուկայում գնագոյացման և գների դինամիկայի վրա էական ազդեցություն ունեն առաջնային ապրանքների՝ հումքի գները:

Միջազգային առևտրում վառելիքա-հումքային և պարենային ապրանքների տեսակարար կշիռը մնում է բարձր մի շարք պատճառներով: Առաջին հերթին դա ըստ երկրների բնական ռեսուրսների անհամաչափ տեղաբաշխումն է ու մի շարք զարգացած երկրներում օգտակար հանածոների սեփական պաշարների նվազումը, ինչպես նաև վառելիքա-հումքային ապրանքների նկատմամբ պահանջարկի կտրուկ աճը:

Հումքային ապրանքների համաշխարհային շուկան ներկայումս բնութագրվում է կոշտ մրցակցությամբ: Տվյալ շուկայում ազատ «խութեր» ձևավորվում են հազվադեպ, քանի որ խոշորագույն համաշխարհային արտադրողները (արդյունահանողները), որպես կանոն, զարգացած երկրների ռեզիդենտներն են, ի վիճակի են ազդելու իրենց երկրների առևտրային քաղաքականության վրա, շահագրգռված չեն նոր գնորդների ի հայտ գալով, որոնք առաջարկում են հումքի ավելի ցածր գներ:

Ընդունված է, որ էներգիայի արդյունավետ օգտագործման չափանիշ է ծառայում էներգատարության ագրեգացված ցուցանիշը, որն արտահայտվում է ՀՆԱ միավորի վրա ծախսված առաջնային էներգիայի ընդհանուր սպառմամբ: ՀՆԱ էներգատարության ցուցանիշի դինամիկան և կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

ՀՆԱ էներգատարության փոփոխությունն ըստ աշխարհի տարածաշրջանների¹

հազ. պայմ. տ. հազ. ԱՄՆ դոլարի համար

Աշխարհի տարածաշրջաններ	1990թ.	1995թ.	2000թ.	2010թ.	2020թ.
Զարգացած երկրներ	0,39	0,37	0,36	0,29	0,23
Զարգացող երկրներ	0,82	0,80	0,71	0,66	0,56

Հումքի և վառելիքի համաշխարհային շուկայի կոնյունկտուրան վերջին տարիներին ձևավորվում է այնպես, որ պահանջարկված են մնում միայն նավթի և գազի, գունավոր և ազնիվ մետաղների, ալմաստի և ուրանի հանքավայրերը: Հանքային ծագում ունեցող հումքի մյուս տեսակները սակավ գրավիչ են ներդրողների համար, քանի որ առկա ռեսուրսային բազան թույլ է տալիս ապահովել համաշխարհային արդյունաբերության պահանջները դեռևս տասնյակ տարիներ²:

Հումքային ապրանքների մատակարարումների ծավալների աճը կհանգեցնի համաշխարհային շուկայում գների անկման և որպես հետևանք՝ արտահանման եկամտաբերության նվազման:

Աղյուսակ 2-ում բերված են համաշխարհային շուկայի սկզբնական ապրանքների գները և դրանց ինդեքսները 1970-2010 թվականների համար³:

¹ Աղբյուրը՝ International Energy Outlook 2001. Wash., March 2001; Энергетическая стратегия России на период до 2020 г. М., Минэнерго России, 2000

² Растворцева С.Н. Международная торговля и мировые товарные рынки: Учебное пособие. – Белгород: Белгородский государственный университет. 2010. с 19-21.

³ Ապրանքների գների ինդեքսները հաշվարկվել են որպես Լասպեյրեսի ինդեքսի մեծություններ, սահմանելով դրանց կշիռները 2002-2004թթ.: Արտահանման միջին արժեքները ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրների համար (դրանք հիմնված են 2001թ. համախառն ազգային եկամտի վրա) վերափոխված են 2000թ.-ի համար: Արտահանման տվյալները վերցված են ՄԱԿ Ապրանքների առևտրի վիճակագրության (Comtrade) միջազգային ա-

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ 1970-2010 թվականներին հիմնական ապրանքների գներն աշխարհում էական փոփոխություններ են կրել: Ըստ որում, նշված ժամանակահատվածում ջրբաժան է 2000 թվականը: Կարևոր է ընդգծել, որ 1970-2000թթ. ժամանակահատվածում էներգիայի գինն ավելացել է 5,3 անգամ, պարարտանյութերինը՝ 18%-ով, փայտանյութինը՝ 3%-ով: Աղյուսակ 2-ում բերված ցանկի ապրանքների մյուս տեսակների համար նկատվել է գների նվազում:

ռևտրի ստանդարտ դասակարգման (SITC) 3-րդ բաժնից, Սննդամթերքի և գյուղատնտեսության կազմակերպության (FAOSTAT) տվյալների շտեմարանից, Միջազգային էներգիայի գործակալության տվյալների շտեմարանից, Համաշխարհային էներգիայի BP-ի վիճակագրական ակնարկից, Մետաղների համաշխարհային բյուրոյից, հիմք են ընդունվել նաև Համաշխարհային բանկի գնահատականները:

Աղյուսակի յուրաքանչյուր ինդեքս ներկայացնում է ժամանակի ընթացքում արտահանված հումքի անփոփոխ զամբյուղը: Ոչ էներգակիր հումքի գների ինդեքսը ներառում է 41 գների շարք 34 ոչ էներգակիր ապրանքների համար:

Էներգիայի և պողպատե արտադրանքի համար ներկայացված են առանձին ինդեքսներ, որոնք ներառված չեն ոչ էներգակիր հումքի գների ինդեքսում:

Արտադրված միավորի արժեքի (MUV) ինդեքսը գների միացյալ (բազմատարր) ցուցիչ է, որը հաշվարկվում է հինգ զարգացած արդյունաբերական երկրներից (Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա, Միացյալ Թագավորություն և ԱՄՆ) դեպի միջին և ցածր եկամուտներով երկրներ արտահանվող արդյունաբերական արտադրանքի գների հիման վրա՝ ԱՄՆ դոլարով: Այս ինդեքսը վերաբերում է ապրանքների միջազգային վիճակագրական դասակարգման 5-ից 8-րդ բաժիններում ներառված ապրանքներին: Այս ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր երկրի ազգային արժույթներով արտահայտված միավորի արժեքների ինդեքսները վերածվում են ԱՄՆ դոլարով արտահայտվածի՝ կիրառելով արժույթների շուկայական փոխարժեքը, և միավորվում են՝ կիրառելով յուրաքանչյուր երկրի արտահանման մասնաբաժնի համար սահմանված կշիռները (բազային տարի է ընտրված 1995 թվականը): Այսպես, Ճապոնիայի արտահանման մասնաբաժինը աշխարհում կազմում է 35.6%, ԱՄՆ-ինը՝ 32.2% Գերմանիայինը՝ 17.4%, Ֆրանսիայինը՝ 8.2% և Միացյալ Թագավորությանը՝ 6.6%:

Հիմնական ապրանքների գներն աշխարհում⁴

	1970	1980	1990	1995	2000	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Համաշխարհային բանկի ապրանքների գների ինդեքս (2000թ. = 100)												
Էներգիա	19	153	79	53	100	123	171	197	209	274	179	225
Ոչ էներգետիկ ապրանքներ	183	177	115	117	100	121	135	172	192	218	178	224
Գյուղատնտեսական	188	195	113	122	100	118	121	134	154	184	165	192
Ընկալիչներ	230	273	117	136	100	109	125	130	145	168	184	210
Մթերք	201	199	116	117	100	123	121	131	158	198	171	186
Ճարպեր և յուղեր	237	196	105	126	100	134	120	123	178	222	181	203
Զավարդեն	204	199	121	124	100	115	115	134	161	225	179	179
Այլ մթերքներ	151	205	124	101	100	117	129	140	127	142	152	170
Հումք	136	143	105	125	100	109	119	143	149	157	141	197
Փայտանյութ	97	92	88	105	100	90	100	113	117	120	116	119
Այլ հումք	179	198	124	146	100	129	140	177	185	196	168	282
Պարարտանյութեր	82	177	98	110	100	125	148	151	205	453	245	232
Մետաղներ և օգտակար հանածոներ	185	141	122	106	100	126	162	251	268	261	197	288
Ոչ ազնիվ մետաղներ	200	145	124	112	100	127	152	253	272	230	174	247
Պողպատ ^a	..	134	131	118	100	153	170	162	155	231	190	190
Ապրանքների գներ (2000թ. գներ) Էներգիա												
Ածուխ, ակտիվացված (\$/տ)	..	49	39	33	26	48	43	44	56	102	60	82
Բնական գազ, եվրոպա (\$/mmBtu)	..	5.21	2.48	2.26	3.86	3.88	5.74	7.57	7.30	10.72	7.27	6.87

⁴ Աղյուսակը՝ World Development Indicators, 2011, pp. 341-342.

Բնական գազ, ԱՄՆ (\$/mmBtu)	0.57	1.91	1.65	1.43	4.31	5.35	8.09	6.01	5.96	7.09	3.30	3.64
Բնական գազ, հեղուկ, Ճապոնիա (\$/mmBtu)	..	7.02	3.54	2.86	4.71	4.66	5.44	6.32	6.56	10.04	7.46	9.00
Սալիթ, միջին կշռված, սիլոթ. (\$/բարել)	4	45	22	14	28	34	48	57	61	78	52	66
Մետաղներ և հանքանյութեր												
Ալյումին (\$/տ)	1.926	1.795	1.593	1.499	1.549	1.558	1.724	2.297	2.252	2.058	1.390	1.802
Պղինձ (\$/տ)	4.904	2.690	2.586	2.437	1.813	2.602	3.340	6.007	6.076	5.564	4.300	6.248
Ոսկի (\$/տ.ունցիա) ^ա	125	750	373	319	279	372	404	540	595	697	812	1.016
Երկաթի հանքաքար (ցենտ/dmtu)	34	35	32	24	29	34	59	69	72	112	84	134
Երկաթի հանքաքար, սիլոթ, Չինաստան (ցենտ/dmtu)	108	125	69	126
Կապար (ցենտ/կգ)	105	112	79	52	45	80	89	115	220	167	144	178
Նիկել (\$/տ)	9.860	8.037	8.614	6.830	8.638	12.551	13.387	21.675	31.778	16.888	12.237	18.084
Արծաթ (ցենտ/տ. ունցիա) ^ա	614	2.544	475	431	500	607	666	1.034	1.145	1.200	1.227	1.675
Անագ (ցենտ/կգ)	1.273	2.068	591	516	544	773	670	785	1.241	1.481	1.133	1.692
Ցինկ (ցենտ/կգ)	102	94	147	86	113	95	125	293	277	150	138	179
MUV G-5 ինդեքս	29	81	103	120	100	110	110	112	117	125	120	121

Ծանոթություն.

dmtu = չորմետր/տոննա, mmBtu = միլիոնմետրիկ բրիտանական միավոր, տ = մետրիկ տոննա

ա-ով նշվածներն ընդգրկված չեն ոչ էներգետիկ ինդեքսում

MUV G-5 - Manufactures Unit Value (արտադրված միավորի արժեքը)


Այսպես, 2000 թվականին 1970-ի համեմատ, ոչ էներգակիր ապրանքների գները նվազել են 83 տոկոսային կետով (տ.կ.), գյուղատնտեսական ապրանքներինը՝ 88 տ.կ.-ով, ըմպելիքներինը՝ 2,3 անգամ, մթերքինը՝ ավելի քան երկու անգամ, հումքինը՝ 36 տ.կ.-ով, մետաղներինը և օգտակար հանածոներինը՝ 85 տ.կ.-ով, ոչ ազնիվ մետաղներինը՝ երկու անգամ, պողպատինը՝ (1980 թվականի համեմատ) 34 տ.կ.-ով: Այսինքն, 1970-2000թթ. (պողպատի համար՝ 1980-2000թթ.) աղյուսակում բերված 15 հիմնական ապրանքներից (ապրանքախմբերից) միայն երեքի (էներգիա, փայտանյութ և պարարտանյութեր) գների բարձրացում է նկատվել, իսկ մնացածների համար նվազել է: Մինչդեռ 2000-2010 թվականներին առանց բացառության բոլոր ապրանքների (ապրանքախմբերի) համար նկատվել է գների էական բարձրացում: Այդ ժամանակահատվածում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բացառություն է եղել 2009 թվականը, երբ նշված բոլոր ապրանքների կամ դրանց խմբերի համար նախորդ տարվա համեմատությամբ նկատվել է գների զգալի նվազում: Կարևոր է նկատել, որ ընդամենը տասը տարվա ընթացքում (2000-2010թթ.) հիմնական ապրանքների գները գրեթե կրկնապատկվել են: Ըստ որում, համաշխարհային շուկայում նշված ժամանակահատվածում գների ամենաբարձր աճ նկատվել է մետաղներ և օգտակար հանածոներ հողվածի գծով (գրեթե 3 անգամ), էներգիայի և ոչ էներգետիկ ապրանքների գները ավելացել են ավելի քան 2,2 անգամ: Իսկ եթե համեմատելու լինենք 2010 թվականը 1970 թվականի հետ (40-ամյա ժամանակահատված), ակնհայտ է դառնում, որ այդ ընթացքում էներգիայի գինը բարձրացել է շուրջ 12 անգամ, ոչ էներգետիկ ապրանքներինը՝ 41 տ.կ.-ով, գյուղատնտեսական ապրանքներինը՝ 4 տ.կ.-ով, հումքինը՝ 61 տ.կ.-ով, պարարտանյութերինը՝ 150 տ.կ.-ով, մետաղներինը և օգտակար հանածոներինը՝ 103 տ.կ.-ով:

Գծապատկեր 1-ում բերված է Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող ապրանքների գների ինդեքսը ընթացիկ գներով (2000թ.=100): Գծապատկերից հետևում է, որ նշված ժամանակահատվածում ամենաարագն աճել են էներգիայի, սննդամթերքի (մինչև 2010 թվականը) և ապա հումքի գները: 2008թ.-ի կեսին 2000 թվականի համեմատ էներգիայի գները բարձրացել են ավելի քան 4,2 անգամ, սննդամթերքինը՝ շուրջ 3, իսկ հումքինը՝ ավելի քան 2 անգամ: Այս

հանգամանքը սկիզբ դրեց 2008 թվականի համաշխարհային տնտեսական ճգնաժամին, թեև նշված 3 խումբ ապրանքների գների աճը սկսվել է 2007 թ.-ից և 2009 թ.-ին նկատվել է դրանց զգալի անկում 2008-ի համեմատ, սակայն 2010-ին գները կրկին բարձրացել են:

Սննդամթերքի գների ինդեքսը նորից սկսեց աճել 2009թ. սկզբին և 2011թ.-ի փետրվարի վերջին այն գերազանցեց 2008թ.-ի հունիսին սահմանված ռեկորդը: Հումքի գների ինդեքսը հասավ նոր բարձունքների: Էներգիայի գների ինդեքսը 2009 և 2010 թվականներին⁵ նույնպես աճեց:

Գծապատկեր 1. Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող ապրանքների գների ինդեքսը, ընթացիկ գներով (2000թ.=100)⁶



Ակնհայտ է, որ հումքի համաշխարհային շուկայում աստիճանաբար ավելի ու ավելի փոքր դեր սկսեցին խաղալ դասական առաջարկի ու պահանջարկի գործոնները: Հումքային ապրանքների արժեթղթավորումն ու հումքային ածանցյալ գործիքների ի հայտ գալն էապես փոխեցին հումքի շուկայի հիմքերն ու զարգացման ուղղվածությունը:

⁵ Մարկոսյան Աշոտ, Նազարյան Գրիգոր, Հախվերդյան Դավիթ, Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով/ Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան: Մասն. խմբ.՝ Ատոմ Վարդանյան. - Եր.: ԵՃՇՊՀ, 2012, Մաս 1. էջ 626-633:

⁶ Աղբյուրը՝ World Development Indicators, 2011, WB, p. 343.

1983 թվականին առաջին անգամ անցկացվեցին նավթի ֆյուչերսային պայմանագրերի բորսայական վաճառքները, որը խթան հանդիսացավ ածանցյալ նավթային գործիքների շուկայի զարգացման համար:

Ընդ որում, նավթային գործիքների ժամկետային շուկայի ձևավորումը հանգեցրեց նավթային ընկերությունների ֆինանսական գործառնությունների տեսակարար կշռի կտրուկ ավելացմանը⁷:

Ենթադրվում է, որ համաշխարհային ֆինանսական համակարգի վերաձևավորումը, առաջին հերթին, կազդարարի հումքի բարձր գների դարաշրջանի ավարտը: Բայց նույնիսկ այն դեպքում, եթե նման ճգնաժամ չլինի և ապրանքային շուկաները իրացվելիությամբ ներկայումս «լցնող» ամերիկյան ընկերությունները պահպանեն իրենց առաջատար դիրքերը համաշխարհային շուկաներում, նպատակահարմար է պատրաստվել հումքի չափազանց բարձր գների՝ 2000-ական թվականներից սկսված ժամանակաշրջանի ավարտին:

Հումքի չարդարացված բարձր գները թելադրված են այդ ապրանքների բորսայական բնույթով: Վերջին մի քանի տարիներին փաստացիորեն բոլոր բորսայական ապրանքների գները, անկախ շուկայի տեսակից և իրական հատվածի կողմից ներկայացվող պահանջարկից, կտրուկ բարձրացել են (երբեմն բազմակի, նույնիսկ հարյուրավոր անգամներ), գերազանցելով գնաճի տեմպերը և արտաբորսայական արդյունաբերական ապրանքների գները: Այս իրավիճակը բացատրվում է նրանով, որ բորսայական առևտուրն ապահովում է ապրանքների բարձր իրացվելիությունը և ներդրողների համար այդ շուկան դարձնում խիստ գրավիչ: Որպես հետևանք, բորսայական ապրանքներում ներդրվում են ինստիտուցիոնալ և մասնավոր ներդրողների անընդհատ աճող ծավալով ներդրումները, որն օրինաչափորեն բերում է գների չարդարացված բարձրացման: Գների սրընթաց աճը, ձևավորելով գնային «պղպջակներ», վաղ թե ուշ պատճառ է դառնում շուկաների փլուզման և նոր ճգնաժամերի առաջացման համար:

⁷ Растворцева С.Н., Международная торговля и мировые товарные рынки: Учебное пособие. – Белгород: Белгородский государственный университет. 2010. с 24.


Տվյալ իրավիճակը ակնհայտ է բոլոր մասնագետների համար և վերջին հաշվով ակնհայտ է դառնում նույնիսկ կառավարությունների ու միջազգային կազմակերպությունների համար:

Մեր կարծիքով, կարգավորող մարմինները ստիպված կլինեն միջոցներ ձեռնարկել բորսայական գնագոյացման առկա իրավիճակը փոխելու ուղղությամբ, վերջ դնելով բորսայական հատվածում գնաճային և ճգնաժամաստեղծ մեխանիզմների գոյությանը:


Վերջին տասնամյակում ապրանքային և ֆինանսական շուկաների բուռն աճը մեծապես պայմանավորված է 1990-ական թթ. վերջին ԱՄՆ օրենսդրության փոփոխություններով, երբ վերջնականապես ուժը կորցրած ճանաչվեց 1932 թվականից գործող Գլաս-Ստիգոլի օրենքը: Այս իրավական ակտով հստակ տարանջատվում էին բանկերի և ավանդա-վարկային գործառնությունները: 2011թ. փետրվարի 2-ին ֆինանսական ճգնաժամի հետազոտության ամերիկյան հանձնաժողովը (Financial Crisis Inquiry Commission) հրապարակեց 2008թ. ճգնաժամի պատճառների հետազոտության արդյունքները: Զեկույցում արված էր եզրահանգում, որ ճգնաժամի հիմնական պատճառը դեռևս Ֆրանկլին Ռուզվելտի կողմից 20-րդ դարի կեսերին ստեղծված քաղաքացիների պաշտպանության միջոցներից, այդ թվում՝ Գլաս-Ստիգոլի օրենքից ձերբազատվելն էր: Առաջինը՝ 1999 թվականի նոյեմբերին չեղյալ համարվեցին Գլաս-Ստիգոլի օրենքի՝ դեռևս գործող վերջին դրույթները և ընդունվեց Գրամ-Լիչի-Բլայլի օրենքը (GLBA): Հետագայում, 2000 թվականի դեկտեմբերի 15-ին ընդունվեց «Ապրանքային ֆյուչերսների մոդեռնացման մասին» օրենքը (CFMA), որի հիման վրա օրինականացվեց ածանցյալների արտաբորսայական առևտուրը, իսկ նրանց անվանական արժեքը հասավ տրիլիոնավոր դոլարների: Հենց այս որոշումից հետո, իսկ ավելի ստույգ՝ 2002թ.-ի սկզբներից, սկսեց ֆինանսական և ապրանքային շուկաների բոլոր հատվածների մասշտաբային աճը, որը հիմնված էր ածանցյալ գործիքների ներդրմամբ և բանկային համակարգից դեպի շուկա իրացվելիության ներհոսքով (ընդհուպ մինչև 2008 թ.-ը) (տե՛ս գծապատկեր 2)⁸:

⁸Додонов В.Ю. Основные тенденции развития мировой экономики и Казахстана до 2030 года. - Алматы: КИСИ при Президенте РК, 2011, с. 17-20.

Գծապատկեր 2. Արտաբորսայական ածանցյալների գլոբալ շուկայի ծավալների դինամիկան 1999-2013թթ., մլրդ. ԱՄՆ դոլար⁹ (չվճարված գումարներով)



Գծապատկեր 3. Արտաբորսայական ածանցյալների գլոբալ շուկայի համախառն շուկայական արժեքն ըստ առանձին տարիների (1999-2013թթ.) մլրդ. ԱՄՆ դոլար¹⁰



⁹ Հաշվարկվել է հեղինակների կողմից՝ Միջազգային հաշվարկների բանկի տվյալների հիման վրա. *BISStatistics*//<http://www.bis.org>.

¹⁰ Հաշվարկվել է հեղինակների կողմից՝ Միջազգային հաշվարկների բանկի տվյալների հիման վրա. *BISStatistics*//<http://www.bis.org>.

Գների անհիմն աճի և «պղպջակների» ձևավորման դեմ պայքարի հիմնական եղանակը սպեկուլյատիվ իրացվելիության անջատումն է շուկայից: Այս ոլորտի որոշումները նույնպես հայտնի են՝ բանկային և ներդրումային գործունեության տարանջատում (որը նախատեսված էր Գլխա-Ստիգոլլի օրենքով), ներդրումային չափանիշների կանոնակարգում, բորսայական գործառնությունների հարկում, ֆինանսական «ինժեներիայի» գործիքների և ածանցյալների սահմանափակումներ, օֆշորային գոտիների ֆինանսական շուկաներից և այնտեղ գրանցված ընկերությունների ներդրումներից հրաժարում:

Քանի որ այս որոշումները տեխնիկապես բավականին պարզ են, նրանք կկենսագործվեն միայն այն բանից հետո, երբ համաշխարհային տնտեսության համար վնասների մասշտաբների գիտակցումը գերակշռի համաշխարհային ֆինանսական ցանցերի լոբբիստական հնարավորությունների նկատմամբ: Այդ որոշումներից որոշներն արդեն իրագործվում են, սակայն ոչ ամբողջական: Այսպես, Մեծ Բրիտանիայում բանկային համակարգում սկսված բարեփոխումները նախատեսում են բանկերի ներսում վարկային և ներդրումային գործառնությունների տարանջատում: Արդյունքում, ռիսկային ներդրումային հատվածներում աշխատող բաժինները չեն կարող այլևս օգտվել բանկի ավանդատուների կուտակային հաշիվների ակտիվներից:

Մեր կարծիքով, համաշխարհային ֆինանսական համակարգի համար անհրաժեշտ մասշտաբներով բարեփոխումները տեղի կունենան 1-3 ֆինանսական ճգնաժամներից հետո, այսինքն՝ շուրջ 10-15 տարի հետո նոր կարելի է սպասել «պղպջակային» շուկաների խնդրի արմատական լուծման: Այդ ժամանակ կավարտվի ինչպես ապրանքային ակտիվների բարձր գների դարաշրջանը, այնպես էլ այդ գների բարձր տատանողականությունը: Շուկաները կդառնան առավել կայուն, կանխատեսելի, սակայն այլևս հարստացման համար նման լայն հնարավորություններ չեն ունենա, ինչպես այժմ: Դա «կհարվածի» ոչ միայն սպեկուլյատիվ հնարավորություններից զրկված ֆինանսական շուկաներին, այլև հումքային ոլորտին: Նորից առաջին պլան կնդվեն ոչ թե հումքային, այլ բարձր տեխնոլոգիական ապրանքներն ու ոլորտները, որոնց վերջնական արտադրանքն ունի բարձր ավելացված արժեք:

Բանալի բաներ՝ հումքի գներ, համաշխարհային շուկա, արտարտադրական անցյալներ

Резюме

Удельный вес топливно-сырьевых и продовольственных товаров в международной торговле остается достаточно высоким по многим причинам. Это и неравномерность распределения природных богатств по странам, и истощение в ряде развитых стран собственных запасов полезных ископаемых, и, в основном, это быстрый рост потребностей в топливно-сырьевых товарах.

Конъюнктура мирового рынка сырья и топлива в последние годы складывается таким образом, что востребованными являются лишь месторождения нефти и газа, цветных и благородных металлов, алмазов и урана. Месторождения других видов минерального сырья менее привлекательны для потенциальных инвесторов, так как уже имеющаяся ресурсная база позволяет обеспечить потребности мировой промышленности на десятилетия вперед.

Переформатирование мировой финансовой системы превозгласит окончание эры высоких сырьевых цен. Но даже в случае, если такой кризис не произойдет и американские финансовые компании, накачивающие сейчас ликвидностью товарные рынки, останутся ведущей силой на мировых рынках, целесообразно готовиться к окончанию периода чрезмерно высоких цен на сырье, которые наблюдаются с конца 2000-х годов.

Ключевые слова: сырьевые цены, мировой рынок, финансовые "пузыри", избыточная ликвидность, деривативы

Resume

The share of fuel and raw materials as well as food products in international trade remains quite high for many reasons. This is caused by uneven distribution of natural resources among countries, depletion

of own fossil reserves in a number of developed countries as well as rapidly increasing demand for fuel and raw materials.

Recent developments in the world market pave way for only fuel and raw materials such as oil and gas, nonferrous and precious metals, diamonds and uranium to remain highly demanded. However other mineral raw materials are less attractive to potential investors, as the existing resource base secures the needs of the global industry for decades to come.

Reformatting the global financial system will proclaim the end of the era of high primary prices. Even in case the world faces no crisis and the American financial companies, pumping full the commodity markets with liquidity, will remain the driving force in the global markets, it is rational to prepare for the end of the period of excessively high prices for raw materials observed since the late 2000s.

Key words: commodity prices, the world market, "financial bubbles", excess liquidity, derivatives.

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գ. Գրիգորյան
Ա. Հակոբյան

Պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործընթացում: Սա ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում, երբ որևէ երկիր ազդեցություն է կրում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում և պետք է վստահ լինի, որ փոխառության քաղաքականությունը ապագայում չի բերի անկայուն դիրքի, չի մեծացնի ֆինանսավորման ծախսերը մինչև անընդունելի և ծայրահեղ մակարդակի, կամ էլ երկիրը չի դարձնի խոցելի: Սա պահանջում է պարտքի կառավարման գործուն համակարգի կիրառում, որը անբարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը:

Վերջին ճգնաժամը նաև ցույց տվեց, որ այն երկրները, որոնք մշակել և իրականացրել են պարտքի կառավարման պատշաճ ռազմավարություն, կարողացան նվազեցնել այդ ճգնաժամի բացասական ազդեցությունները տնտեսության վրա: Հստակ ռազմավարությունը կարող է օգնել նվազեցնելու չափից ավելի փոխառությունների բեռը (դրանց առնչվող ծախսերն ու ռիսկերը)՝ հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին ընտրել ծախսերի և ռիսկերի մի շարք տարբերակներից օպտիմալը:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես շատ այլ երկրներ, ստիպված էր կանգնել դժվարին մարտահրավերների առջև, որոնք արդյունք էին գլոբալ ֆինանսական ճգնաժամի: 2009 թվականին երկրի տնտեսությունը էապես վատթարացել է և փաստացի ցուցանիշները ցույց են տալիս իրական ՀՆԱ-ի, պետական բյուջեի և ընթացիկ հաշվի դեֆիցիտների վատթարացում, որոնց արդյունքում մեծացել է փոխառությունների ծավալը, արձանագրվել էական արժեզրկում:

Պետական պարտքի մասին ՀՀ օրենքում ամրագրված դրույթների համաձայն պետական պարտք է հանդիսանում Հայաստանի

Հանրապետության անունից և Հայաստանի հանրապետության Կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների նկատմամբ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը: [1]

Արտաքին պետական պարտքը Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի անունից Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Պետական պարտքի կառավարումը մի գործընթաց է, որն իրականացվում է փոխառու միջոցների ներգրավման, վերաձևակերպման, մարման և սպասարկման ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:

Արտաքին պարտքի կառավարման նպատակն է պարտքի օպտիմալացումը (օպտիմալ կառուցվածքի սահմանում, պարտքի վերակառուցում ավելի բարենպաստ պայմաններով, ռիսկերի կառավարում):

Արտաքին պարտքի արդյունավետ կառավարման տեսանկյունից կարող ենք ասել, որ տնտեսական աճը պարտապան երկրին հնարավորություն է տալիս ապահովել իր վճարունակությունը և շահել փոխատուի վստահությունը, ինչպես նաև մեղմացնել վարկավորման կոշտ պայմանները կամ սահմանափակումները: Իսկ ներդրումների բարձր մակարդակը, իհարկե օգտագործման արդյունավետության, այլ ոչ թե ծավալի տեսանկյունից, կարևորագույն պայման է փոխատուներին վստահություն ներշնչելու համար: Իսկ ներդրումների օգտագործման արդյունավետություն ասելով՝ հասկանում ենք այն, որ ներդրումներից ստացված շահույթը ավելի բարձր լինի, քան ներգրավված կապիտալի արժեքը: Արտաքին պարտքի կառավարումը կապված է մի շարք հիմնախնդիրների հետ: Առաջինը արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավումն է, որն էլ հենց հանդիսանում է արտաքին պարտքի կառավարման գործընթացի առաջին փուլը: Արտաքին փոխառությունների ներգրավումների ծրագիրը քննարկելիս երկրի կառավարությունը պետք է հաշվի առնի երկու կարևորագույն հանգամանք [4].

1. զուտ արտահանումից սպասվելիք մուտքերը, հնարավոր արտաքին փոխառությունները և ֆինանսավորման այլ տեսակները պետք է բավարար լինեն արտաքին պարտքի սպասարկման համար,

2. նախատեսվող պետական եկամուտները պետք է բավարար լինեն, որպեսզի երկիրը կարողանա սպասարկել արտաքին պարտքը իր արժույթին համարժեք: Եկամուտների հավաքագրման մասով կարող են լուրջ խոչընդոտներ ի հայտ գալ հարկահավաքման գործընթացի հետ կապված:

Արտաքին պարտքի արդյունավետ կառավարումը ենթադրում է ապագայի կանխատեսումներ՝ կապված արտահանումից սպասվող եկամուտների, ներքին հարկային մուտքերի և ֆինանսավորման այլ աղբյուրների մատչելիության հետ: Ուստի այս ամենը հաշվի առնելով՝ պետությունը կարող է ներգրավել միջոցներ ավելի բարենպաստ պայմաններով վերաֆինանսավորման աղբյուրներից՝ պարտքը ժամկետից շուտ վճարելու համար:

Անդրադառնանք լավագույն ֆինանսավորման տեսակի ընտրության հիմնախնդրին: Քանի որ արտաքին փոխառությունները համապատասխան մակարդակի վրա պահելու երկրների հնարավորությունները, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների առաջարկը սահմանափակ են, ուստի փոխառու երկիրը արտաքին ֆինանսավորման առկա աղբյուրներից պետք է ընտրի լավագույն համակցությունը՝ ձգտելով նվազագույնի հասցնել նոր առաջացող պարտքի կառավարման հետ կապված հնարավոր հիմնախնդիրները: Որպես ֆինանսավորման լավագույն տարբերակ կարող է հանդես գալ արտաքին սուբսիդիաների և արտոնյալ վարկերի արդյունավետ օգտագործումը, քանզի դրանք արտաքին ֆինանսավորման ամենաէֆեկտիվ ձևերն են: Սակայն վերջիններս էլ մատչելի են միայն ամենաաղքատ, զարգացող երկրներին, դեռ ավելին՝ նույնիսկ այդ երկրների համար դրանց ծավալները բավարար չեն: Ուստի անհրաժեշտ է արտոնյալ ֆինանսավորումը համադրել ֆինանսավորման այլ աղբյուրների հետ. որպես այդպիսին կարող են հանդես գալ արտահանման վարկերը և միջազգային բանկային վարկերը:

Արտաքին փոխառությունների ներգրավման ժամանակ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի ստացվող փոխառու միջոցները, կազմելով մեկ ամբողջական փաթեթ, լինեն օպտիմալ: Այսինքն

ներգրավված միջոցների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ կազմեն արտոնյալ վարկերը, վերաֆինանսավորման միջոցով վճարման ժամկետը հետաձգող փոխառու միջոցները:

Արտաքին պարտքի կառավարման կարևոր հիմնախնդիրներից մեկն էլ այն է, թե որքան փոխառու միջոցներ ներգրավել: Յուրաքանչյուր երկրի համար արտաքին փոխառությունների ներգրավման ծավալը պայմանավորված է երկու գործոններով.

1. որքան արտասահմանյան կապիտալ երկիրը կարող է արդյունավետ օգտագործել,

2. պարտքի որքան մասը նա կարող է սպասարկել՝ առանց վճարումների հետ կապված խնդիրների առաջացման:

Երկիրն առավել խոցելի է դառնում այն դեպքում, երբ՝

1. ունի արտաքին փոխառությունների մեծ կարիք և, որպես հետևանք, արտաքին պարտքն արտահայտված է տարբեր արտաբյուջաներով,

2. պարտքի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն լողացող տոկոսադրույքներով պարտավորությունները,

3. արտաքին առևտրում մեծ տեղ է զբաղեցնում հումքային ապրանքների առևտուրը:

Արտաքին պարտքի կառավարման հաջորդ հիմնախնդիրը պարտքի վերաձևակերպումն է: Երբ երկիրն ի վիճակի չի լինում արտաքին պարտքի սպասարկման գծով կատարել իր պարտականությունները, ապա պետք է ձգտի հնարավորին չափ մեղմացնել պարտավորությունների մարման պայմանները: Առաջին անգամ արտաքին պարտավորությունների վերանայման անհրաժեշտություն առաջացավ 1950-ականների վերջին, երբ Թուրքիան դիմեց կարճաժամկետ և միջին ժամկետով առևտրային վարկերի պարտավորությունների վերաձևակերպման խնդրանքով: 1961թ. նման իրավիճակ ստեղծվեց նաև Բրազիլիայում և Արգենտինայում: Այս երկրների հետ էլ բանակցությունները հիմք դրեցին մի նոր կազմակերպության ստեղծման, որը անվանվեց Փարիզյան ակումբ: Վերջինս վարկատու երկրների հատուկ կազմակերպություն է, որը զբաղվում է արտաքին պարտավորությունների վերաձևակերպման դիմումների վերանայմամբ:

1988թ. Փարիզյան ակումբը առաջարկեց պարտքի վերաձևակերպման մի քանի տեսակներ, որոնք վերաբերում էին առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներին: Վերջիններիս տրամադրվում էին պարտքի վերաձևակերպման հատուկ պայմաններ՝ «Տորոնտոյի պայմաններ», երկու տարբերակով: [2]

Առաջին տարբերակի դեպքում պարտքը վերաձևակերպվում էր 25 տարի ժամկետով, ներառյալ 14 տարվա արտոնյալ ժամանակաշրջանը, սկզբնականից բարձր տոկոսադրույքով:

Երկրորդ տարբերակը հանդես է գալիս հետևյալ երեք ձևերով.


1. կուտակված ամբողջ պարտքի 1/3-ը դուրս է գրվում, մնացած մասը մարվում է 14 տարում, ներառյալ 8 տարվա արտոնյալ ժամանակաշրջանը, իսկ տոկոսադրույքները որոշվում են շուկայի հիման վրա,

2. պարտքը վերաձևակերպվում է 25 տարով, 14 տարի արտոնյալ ժամանակաշրջանով, իսկ տոկոսադրույքները որոշվում են շուկայականի հիման վրա,

3. պարտքը վերաձևակերպվում է 14 տարով, 8 տարի արտոնյալ ժամանակաշրջանով, իսկ տոկոսադրույքները սովորաբար այս դեպքում շուկայականից ցածր են:

Արտաքին պարտքի կառավարման կարևոր հիմնախնդիրներից է պարտքի և նրա սպասարկման վերաբերյալ ինֆորմացիայի տիրապետումը: Վերջինս կառավարման մարմնին հնարավորություն է տալիս հետևելու այն գործընթացին, որ պարտքը մարվի ճիշտ ժամանակին, գնահատելու արտարժույթով արտահայտված ընթացիկ փոխառությունները, նախագծելու պարտքի սպասարկմանն ուղղված վճարումները, գնահատելու նոր արտաքին փոխառությունների հետևանքները և կառավարելու արտաքին ռիսկերը: Այդ ինֆորմացիան հիմք է հանդիսանում արտաքին պարտքի վերաբերյալ հաշվետվությունների և վիճակագրական համակարգերի մշակման համար: Վերջինս էլ իրենից ներկայացնում է արտաքին պարտքի մոնիտորինգը: Համաշխարհային բանկի աշխատակիցների կողմից մշակվել է հաշվետվությունների ստանդարտ ձև, որը հանդիսանում է Համաշխարհային բանկի «Պարտատերերի հաշվետվությունների համակարգի» հիմքը:

ՀՀ կառավարության արտաքինությանը և դրամով արտահայտված պարտքերի հարաբերակցությունը 2010-2015թթ. [5]



Այսպես, 2012թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 3,695.4 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝


ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունները՝ 3,085.4 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 83.5%),

ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 610.1 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 16.5%):

2011 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալն աճել է 3.6 տոկոսով կամ 127.2 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է 2012թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործառնություններով:

2012թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 70.6%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 29.4%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր 2):

**2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևավորված
Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը**



Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանել է 2013-2015թթ. պարտքի կառավարման իր հիմնական նպատակադրումները [3], որը հնարավոր է փոփոխություններ կմտցնի արտաքին պարտքի հաշվեկշռում: Այս առումով նախատեսվում է.

1. Երկարաժամկետ հատվածում պարտքի կառավարման նպատակներից է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացումը, քանի որ վերջինս նվազեցնում է անվճարունակության հավանականությունը, փոխարժեքի հետ կապված ռիսկերը, հնարավորություն է ընձեռում ներգրավել և արդյունավետ օգտագործել համախառն ազգային խնայողությունները, հիմքեր է ստեղծում ֆինանսական շուկայում նոր գործիքների կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար:

2. 2013-15թթ. շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախատեսվում է ավելացնել 118.6 մլրդ դրամով: Մինևնայն ժամանակ դրամավարկային քաղաքականության հետ պարտքի կառավարման քաղաքականության կորդինացման շրջանակներում կարճաժամկետ հատվածում կլինեն 3-12 շաբաթ մարման ժամկետով պարտատոմսերի թողարկումներ, որոնք չեն ավելացնի կառավարու-

թյան պարտքի սպասարկման բեռը, քանի որ դրանց տեղաբաշխումից ստացված հասույթը նույն պայմաններով կավանդադրվի ՀՀ Կենտրոնական բանկում:

3. Կառավարության արտաքին պարտքի զգալի մասը կազմում են ենթակառուցվածքների զարգացման նպատակով ներգրավված վարկերը, որոնք ենթավարկագրվել են տնտեսվարող սուբյեկտներին և այդ վարկերի սպասարկման բեռը չի ծանրացնում պետական բյուջեի ծախսերը, քանի որ իրականում այն կրում են տնտեսվարող սուբյեկտները:

4. Կարևորելով պետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կակտիվացվեն գովազդային աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում, ինչպես նաև կներդրվի պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի էլեկտրոնային համակարգ:

Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից մեկը թափանցիկության ապահովումն է, ուստի կառավարությունը ոչ միայն պարբերաբար կներկայացնի հաշվետվություններ պարտքի վերաբերյալ կարևոր տեղեկատվությամբ, այլ նաև կթողարկի էլեկտրոնային ամսական տեղեկագրեր և բաց ու հրապարակային կլինի ներդրողների հետ աշխատանքներում:

Կառավարությունը կշարունակի ջանքերը պետական պարտատոմսերի տեղաբաշխումների, հետզնումների և փոխանակումների էլեկտրոնային համակարգի կատարելագործման ուղղությամբ:

✓ ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պարտատոմսերի հետզնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:

✓ Կառավարությունը սերտորեն կհամագործակցի ՀՀ Կենտրոնական բանկի ու պարտատոմսերի շուկայի մասնակիցների հետ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաները զարգացնելու նպատակով: Առաջնային և երկրորդային շուկաների զարգացմանը կնպաստեն կենսաթոշակային բարեփոխում-

ների նախատեսված ժամկետներում իրականացումն ու մեկնարկած ապահովագրական բարեփոխումների հետագա զարգացումը, որը կմեծացնի ինչպես գանձապետական պարտատոմսերում ներդրողների շրջանակը՝ թուլացնելով բանկային համակարգից կախվածությունը, այնպես էլ կբերի թողարկվող պարտատոմսերի ժամկետայնության աճի, որը ներքին պարտքի ծավալների մեծացման կարևոր նախադրյալ է:

✓ Առավելագույն ուշադրություն կդարձվի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման հարցերին՝ այդպիսով փորձելով նվազեցնել երկու քաղաքականությունների նպատակներին հասնելու ծախսերը և միաժամանակ ավելի հասկանալի դարձնելով այդ քաղաքականությունները պոտենցիալ ներդրողների համար:

✓ Համագործակցությունը արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ կշարունակվի և կխորացվի: Նախապատվությունը կտրվի արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:

Ակզբունքային համարելով արդեն հրամայական դարձած ՀՀ պետական պարտքի ծավալների նվազեցմանն ուղղված ճիշտ ուղղված արտաքին և ներգրավված միջոցների արդյունավետ օգտագործման ուղղությունները, պետք է ասել, որ պետական պարտքի, առավել ևս արտաքին պետական պարտքի ոչ ճկուն կառավարումը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել տվյալ պետության տնտեսական առաջընթացի համար: Անհրաժեշտ է պետական պարտքի ծավալում նվազագույնի հասցնել արտաքին պետական պարտքը, որով էլ պայմանավորված են մի շարք ռիսկային գործոններ, ինչպիսիք են անվճարունակության և արտարժույթի փոփոխության ռիսկերը: Առաջիկա տարիներին պետական պարտքի նվազեցմանն ուղղությամբ պետք է կատարել համարժեք քայլեր, մասնավորապես՝

✓ Ապահովել բարենպաստ ներդրումային միջավայր, որն էլ կնպաստի ներքին ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

✓ Ռացիոնալ օգտագործելով ներգրավված միջոցները, նպաստել նոր տնտեսական արդյունավետ բջիջների ստեղծմանը՝ ապահովելով առավել շահութաբերություն:

✓ Սերտորեն համագործակցել ՀՀ Կենտրոնական բանկի ու պարտատոմսերի շուկայի մասնակիցների հետ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաները զարգացնելու նպատակով:

✓ Քայլեր ձեռնարկել կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ և ակտիվացնել գովազդային աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում, կիրառել խրախուսման մեթոդներ հարկային պարտավորությունների մասով:

✓ Խորացնել համագործակցությունը արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ: Նախապատվությունը տալ արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:

Բանալի բառեր՝ արտաքին պարտք, արտաքին պարտքի կառավարում, պետական պարտք, պարտքի վերաֆինանսավորում, պարտքի վերաձևակերպում, առաջնային և երկրորդային շուկա, Փարիզյան ակումբ

Օգտագործված գրականություն

1. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը/minfin.am/search-պարտքօրենք/
2. "Сокращение уровня бедности, экономический рост и устойчивость долговой ситуации в странах СНГ с низким доходом", Международный Валютный Фонд, Всемирный банк, 2002г., 50с
3. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2013-2015թթ ռազմավարական ծրագիրը
4. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., «Շուկայական տնտեսության հիմունքները», 2002 Հրատարակչություն: - Եր., «Տիգրան Մեծ»,
5. ՀՀ պետական պարտքը, Հաշվետվություն, 2012թ. 1-ին կիսամյակ

Резюме

Разумное управление долгом играет важную роль в управлении финансами государственного сектора. Это является очень важным для любой страны, когда страна имеет влияние мирового финансового кризиса и должны быть уверены, что политика не приведет к неустойчивой долговой позиции, не приводит к увеличению стоимости финансирования, к экстремальным и неприемлемым уровням или не делает страну уязвимой к управлению долгом. Это требует эффективного применения системы, которые могут уменьшить негативные последствия неблагоприятных условиях и смягчения потенциальных рисков.

Ключевые слова: внешний долг, управление внешним долгом, государственный долг, рефинансирование долга, переоформление долга, первичный и вторичный рынок, Парижский клуб.

Resume

Prudent debt management plays an important role in the management of public sector finances. It is very important for any country, when the country has the global financial crisis and need to be sure that the policy will not lead to unsustainable debt position, does not increase the cost of financing, to extreme and unacceptable levels or make the country vulnerable to debt management. This requires the effective application of the system, which can reduce the negative effects of adverse conditions and mitigate potential risks

Key words. External debt, external debt management, gosudarsvenny debt refinancing debt rescheduling, primary and secondary markets, the Paris club.

«ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

L. Ղանթարյան

«Ոչ մի հասարակություն չի կարող ծաղկել ու երջանիկ լինել, եթե նրա անդամների մեծ մասը աղքատ է ու դժբախտ: Բացի այդ, հասարակ արդարությունը պահանջում է, որ մարդիկ, որոնք նպաստում են ազգի բարօրությանը, պետք է ստանան սեփական աշխատանքի արդյունքի այնպիսի բաժինը, որ իրենք էլ ունենան բավար սնունդ, հագուստ ու բնակարան»¹:

Մարդկության պատմության ողջ ժամանակահատվածում առկա է բնակչության շերտավորման հիմնախնդիրը: Ինքնին «շերտավորում» հասկացությունը բնութագրում է բնակչության անհավասարության կառուցվածքը, որում մարդիկ նախ գրավում են տարբերակված կառուցվածքային դիրքեր և ապա՝ ներառվում առանձին շերտերում, որոնք աստիճանակարգային (հիերարխիկորեն) գնահատվում են որոշակի ընդունելի չափորոշիչների համաձայն:

«Շերտավորում» բառը ծագել է լատիներեն «stratum»-շերտ և «fasere»-անել բառերից, որն էլ թարգմանաբար նշանակում է հասարակության շերտավորում²: Վերջինիս միջոցով կարելի է հասկանալ մարդկային անհավասարության, անարդարության և սոցիալական արհավիրքների զգալի պատճառները և էությունը:

Ներկայումս աշխարհի մի շարք երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, գոյություն ունեն տնտեսական անհավասարության, բնակչության շերտավորման բազմաթիվ պատճառներ, որոնք փոխկապակցված են միմյանց: Համաձայնվելով է. Էդուարդսի այն եզրակացության հետ, որ վերջին հաշվով բնակչության դասակարգման կամ շերտավորման հիմքում դրվում է եկամուտ-կրթություն-զբաղվածություն հատկանիշների շղթան, այդուհանդերձ գտնում ենք, որ մեր օ-

¹ Смит А., Исследование о природе и причинах богатства народов. Антология экономической классики. Предисловие И.А. Столярова.-М.: МП "Эконов". 1993, с. 146.

² <http://pages.marsu.ru/workgroup1/zhiguleva/stratum>

րերում բնակչության սոցիալական շերտավորման հիմքում առաջնա-
յին է նախ և առաջ եկամուտների անհավասար բաշխվածությունը, ո-
րի արդյուքում էլ ձևավորվում է բնակչության հարուստ, միջին և աղ-
քատ խավը, վերջին երկուսի մեջ առանձնահատուկ տեղ է հատկաց-
վում բնակչության անապահով խավին, քանի որ այն իր մեջ կարող է
ընդգրկել ոչ միայն աղքատներին, այլ նաև միջին խավի ոչ աղքատ
հատվածները՝ օրինակ՝ թոշակառուներին, միայնակ մայրերին, ուսա-
նողներին և այլն:

Անապահով խավը բնակչության այն հատվածն է կազմում, ո-
րոնց մոտ առկա է պահանջմունքների բավարարման համար անհ-
րաժեշտ ռեսուրսների սակավություն կամ բացակայություն: Նման
պայմաններում հայտնվող մարդը դառնում է անապահով, սոցիալա-
պես խոցելի և, հետևաբար, աջակցությունից և օգնությունից կախ-
յալ: Եթե սոցիալապես խոցելի կամ անապահով խավը չի ստանում
այդ օգնությունը, մասնավորապես պետությունից, ապա հասարա-
կության անդամների միջև առաջանում է խորը հակասություն, պայ-
մանավորված նրանով, որ վերջիններս հասարակությունից իրենց
թերի ստացումը կամ անբավարարվածությունը կապում են հասարա-
կության այն անդամների հետ, որոնք առավել ապահովված են, հա-
րուստ են և վարում են բարեկեցիկ կյանք, որը զգալիորեն տարբեր-
վում է իրենց կյանքի որակից:

Բնակչության անապահով, ինչպես նաև խոցելի խավը մշտա-
պես գտնվում է եկամտային ռիսկային սահմանային գոտում՝ աղքա-
տության շեմին: Հասարակության մեջ ցանկացած տնտեսական կամ
քաղաքական տատանում անմիջապես անդրադառնում է նրանց
ապրելակերպի վրա: Հետևաբար նրանց ֆինանսական կայունությու-
նը կարող է պայմանավորված լինել կամ տատանվել՝ այնպիսի
խնդիրների հետ կապված, ինչպիսիք են առողջապահության, կրթու-
թյան կամ այլ սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի չափերը:

Արտասահմանյան գրականության մեջ տնտեսագետները «ա-
նապահով խավ» և «խոցելի խավ» հասկացությունները շատ հաճախ
դիտարկում են մեկ հարթության վրա, որտեղ, երբեմն, մեկը փոխա-
րինվում է մյուսով: Ընդ որում, «անապահովություն» («խոցելիու-
թյուն») հասկացության հստակ սահմանում գոյություն չունի: Կարծում
ենք, որ սա բնական է, քանի որ յուրաքանչյուր երկրում անապահո-

վության մակարդակը և անապահովների թիվը կախված է երկրի զարգացման աստիճանից, պետության ֆինանսական հնարավորություններից, վարած սոցիալական քաղաքականությունից և, ընդհանուր առմամբ, երկրի կենսամակարդակից, հետևաբար անապահով խավի եզրագծերը ունեն ընդգրկվածության տարբեր սահմաններ:

Այսպես, դեռևս 1987թ.-ին Հելթ Աֆֆեյրսը (Health Affairs) հատուկ հինգերորդ հոբեյանական ամսագրում հրատարակեց հոդված առողջության և աղքատության վերաբերյալ, որում լուսաբանվել են բնակչության այն խմբերը, որոնք այսօր համարվում են անապահով (խոցելի)՝ համապատասխանելով «ֆիզիկապես անկարող», «պատրաստ պայքարելու» հասկացություններին: Ամսագրում գերակայությունը տրվում էր առողջապահական ծառայություններին և կենտրոնացած էր կարիքի մեջ գտնվող մարդկանց առողջապահական միջամտությունների վրա, ինչպես նաև խոսվում էր աղքատ, անտուն, չապահովագրված, ծեր և մի շարք խրոնիկ հիվանդություններով տառապող, կամ էլ ցածր եկամուտներով վետերանների մասին, այսինքն՝ մարդիկ, որոնց մեր օրերում էլ կարելի է համարել անապահով³:

Սակայն պետք է նշել, որ 1987թ.-ից որոշակիորեն փոխվել է անապահով մարդկանց նկատմամբ մոտեցումը, հետևաբար նաև այն ցուցակը, որի մեջ ընդգրկվում են հասարակության այն անդամները, որոնց համարում են անապահով կամ խոցելի: Այստեղից ելնելով՝ կարող ենք ասել, որ ներկայումս հասարակության կողմից իրականացվող սոցիալական բարեփոխումները, անօթևանության խնդիրները, ահաբեկչությունը, բնակչության շերտերի միջև բևեռացումը և այլ հանգամանքներ հանգեցրել են նրան, որ այսօր ընդլայնվել է անապահով խավի ցուցակը: Օրինակ, Յելի և Միչիգանի համալսարանների հետազոտողներն առանձնացնում են բնակչության հետևյալ անապահով խմբերը՝

³ David Mechanic and Jennifer Tanner "Vulnerable people, Groups, and Populations: Social View" Definitions and Determinants, HEALF AFFAIRS - Volume 26, N 5, September/October 2007, տե՛ս http://www.yale.edu/bioethics/contribute_documents/Resource-VulnerablePops.pdf

- ցածր եկամուտ ունեցող մարդիկ, երեխաներ,
- ռասայական և էթնիկ փոքրամասնություններ, գաղթականներ,
- խրոնիկ հիվանդությամբ տառապող անհատներ,
- կենսաթոշակային տարիքին մոտ անձինք,
- հոգեկան խանգարումներ ունեցողներ, թմրադեղեր և ոգելից խմիչքը չարաշահողներ:

Ըստ նրանց՝ անապահովության հիմքը մարդկանց վատ առողջության, հիվանդության և հաշմանդամության առկայությունն է: Եվ այս պայմաններում մարդիկ կանգնում են բուժման և կանխարգելիչ ծառայություններ ստանալու խոչընդոտների առջև: Վերջին հաշվով, հետազոտողները խնդրի լուծումը տեսնում են առողջապահական ապահովագրության ձեռք բերման հնարավորության մեջ⁴:

Հարկ ենք համարում նշել, որ անապահով խմբերին անհրաժեշտ է դասել նաև սոցիալական որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ինչպիսիք են ընտանիքը կերակրողին կորցրածները, ազատագրվածների ընտանիքները, նախկին բանտարկյալները, մարմնավաճառները, խուսրի ազատության և կամարտահայտության հետևանքով հետապնդվողները, ինչպես նաև գործազուրկները:

Անապահովությունը կարող է սահմանվել որպես անհատի կամ հասարակության թույլ կարողություն մի շարք սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրները ընկալելու, հաղթահարելու, դիմակայելու և վերականգնելու գործում: Հենց այդ կարողությունն է, որը կարելի է բնութագրել որպես անհատների, տնային տնտեսությունների և հասարակության կողմից ռեսուրսների ձեռք բերման հասանելիություն՝ հաղթահարելու սոցիալ-տնտեսական, ինչու չէ, նաև բարոյահոգեբանական բնույթի սպառնալիքները կամ դիմակայելու վտանգի ազդեցությանը:

Դ. Մեչանիքը և Զ. Թանները հանգել են այն եզրակացության, որ վերջին մեկ կամ երկու տասնամյակում խոցելիությունը կուտակվում է կյանքի ընթացքում: Վաղ կյանքի դժվարությունները և դրանց

⁴ Harold Pollack, Karl Kronebusch "HEALTH INSURANCE AND VULNERABLE POPULATIONS", Economic Research Initiative on the Uninsured Working Paper Series 5, տե՛ս www.umich.edu/~eriu/pdf/wp5.pdf

բացասական հետևանքները կապված են կյանքի հետագա իրադարձությունների հետ: Դեռահասների, երիտասարդ չափահասների և ծերերի բարօրությունը մեծապես կախված է անհատական զարգացման ուղիներից, ընտանիքի, հասարակության սոցիալական և տնտեսական փորձից (տե՛ս հղում թիվ 3):

«Անապահով խավ» հասկացության լիարժեք ընկալման, ծավալային գնահատման, դրա խնդիրների բացահայտման, վերլուծության ուղիների ներկայացման նպատակով այն պետք դիտարկել երկու հարթություններով՝ տարանջատելով հաստատուն և հավանական/ռիսկային անապահով խավեր հասկացությունները, տալ դրանց բնորոշումները, ինչպես նաև դրանց հոսունության և գնահատման ցուցանիշները:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ բնակչության, անհատի անապահովությունը մարդկային հարաբերությունների փոխազդեցության, առաջին անհրաժեշտության ռեսուրսների հասանելիության և կյանքի մարտահրավերներին դիմակայելու արդյունք է, որը պահանջում է տարբեր տեսակի քաղաքական, տնտեսական, սոցիալական միջամտություններ՝ սկսած առանձին քաղաքների, շրջանների և գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումից մինչև մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրության քաղաքականությունը:

Շատ հաճախ «անապահովություն» հասկացությունը կապվում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ կարիք, ռիսկ, վնասի կամ անտեսման զգացողություն, երկարակեցության ու ունեցվածքի, հարստության բացակայություն: Ուստի, տվյալ հասկացությունը հարաբերական է և շատ դինամիկ: Հետևաբար, «անապահովություն» հասկացությունը «աղքատություն» հասկացության բաղկացուցիչն է, քանզի այն ամենը, ինչ բնորոշ է աղքատին, զգալի չափով բնորոշ է նաև անապահով մարդուն:

Փամանակակից սահմանումներում ընդլայնվել է աղքատություն հասկացությունը, վերացվել է այն նեղ սահմանումը, ըստ որի՝ եթե նախկինում աղքատության մակարդակը գնահատելիս հիմք էին ընդունվում բացառապես եկամուտների և սպառման մակարդակները, ապա այժմ «աղքատություն» հասկացության մեջ ներառվում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթության և առողջապա-

հույան հասանելիությունը, սոցիալական և քաղաքական գործընթացներին քաղաքացու մասնակցության հնարավորությունը, անձի ազատությունը և անվտանգությունը, շրջակա միջավայրի որակը և այլն:

Աղքատությունը դիտարկվում է որպես բազմազան և փոխկապակցված պատճառների արդյունք, որոնք միավորվում են հետևյալ խմբերում⁵

- Տնտեսական (գործազրկություն, ցածր աշխատավարձ, ցածր արտադրողականություն, արդյունաբերության անմրցունակություն),
- Սոցիալ-բժշկական (հաշմանդամություն, ծերություն, հիվանդության բարձր մակարդակ),
- Ժողովրդագրական (միայնակ ծնողներ, ընտանիքում մեծ թվով խնամակալներ),
- Կրթական-որակավորման (կրթության ցածր մակարդակ, անբավարար մասնագիտական պատրաստվածություն),
- Քաղաքական (ռազմական հակամարտություններ, հարկադիր արտագաղթ, տարակարծություններ),
- Տարածաշրջանային-աշխարհագրական (տարածքների անհավասար զարգացում),
- Կրոնա-փիլիսոփայական, հոգեբանական (ասկեզա՝ որպես ապրելակերպ, խելահեղություն (ռուս.՝ юродство)):

Ակնհայտ է դառնում, որ աղքատություն և անապահովություն հասկացությունները միմյանց հետ սերտ կապված են, քանի որ, ըստ էության, աղքատությունը, ինչպես նաև անապահովությունը՝ զրկվածությունն է նյութական ու սոցիալական այն հնարավորություններից, որոնք ապահովում են մարդկանց երկար, առողջ ու բարեկեցիկ կյանք, հետևաբար վերոնշյալ պատճառները նույնպես կարելի է դասել անապահովություն առաջացնող պատճառների շարքը: Այլ խոս-

⁵ Бобков В.Н., Зинин В.Г., Разумов А.А. "Политика доходов и заработной платы". Доклад в рамках проекта МОТ "Преодоление бедности, содействие занятости и местное экономическое развитие в Северо-Западном федеральном округе.- М., 2004, 95ст.- ст. 10., տե՛ս <http://www.ilo.org/public/russian/region/eurpro/moscow/areas/gender/events/textwagesdeskrus.pdf>

քով՝ անապահովությունից դեպի աղքատություն ընդամենը «մեկ քայլ է»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որը երկրագնդի 85 գերհարուստ մարդիկ տնօրինում են 1,7 տրլն դոլար հարստություն, որը հավասար է աշխարհի աղքատ բնակչության 50%-ի ունեցվածքին, և ներկայումս աշխարհում առկա 1453 միլիարդատիրոջ ընդհանուր կարողությունը կազմում է 5,5 տրլն դոլար⁶, որը կարող է բավականացնել ամբողջ աշխարհում աղքատության հաղթահարմանը, ապա բնական է, որ աղքատության աճն ու հասարակության եկամուտների բևեռացումը կհամարվի համաաշխարհային տնտեսության զարգացման կարևոր մարտահրավերներից և ռիսկերից մեկը, որը պետք է գերակա խնդիր հանդիսանա յուրաքանչյուր երկրի կառավարության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերում: Վերջինս հրամայական է դարձնում այն հանգամանքը, որ այսօր տնտեսական աճը պայմանավորող կարևորագույն գործոնը մարդկային կապիտալն է, որի արդյունավետ վերարտադրությամբ է պայմանավորված ինչպես յուրաքանչյուր երկրի տնտեսության հետագա զարգացումը, այնպես էլ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի կյանքի որակի բարելավումը:

Բանալի բառեր՝ բնակչության շերտավորում, եկամուտների անհավասար բաշխում, անապահով խավ, աղքատություն, կենսամակարդակ, մարդկային կապիտալ, սոցիալապես խոցելի խավ:

Резюме

В статье обсуждаются и раскрываются сущность понятие "незащищенный слой", особенности, причины формирования этого слоя. Проанализированы и обобщены интерпретации отдельных

⁶ © 2014 Guardian News and Media Limited or its affiliated companies: Graeme Wearden, theguardian.com, Monday 20 January 2014 09.24 GMT "Oxfam: 85 richest people as wealthy as poorest half of the world", տե՛ս <http://www.theguardian.com/business/2014/jan/20/oxfam-85-richest-people-half-of-the-world>

экономистов про этого понятие, после чего дана наша интерпретация и отмечены лица с некоторыми социальными характеристиками в понятие "незащищенный слой". Для полного понимания понятия "незащищенный слой" предлагается рассмотреть на два измерения: стабильный и вероятно/рискованный незащищенный слой. В статье показаны связь между понятиями бедности и незащищенности.

Ключевые слова: расслоение населения, неравномерное распределение доходов, незащищенный слой, бедность, уровень жизни, человеческий капитал, социально незащищенный слой.

Resume

In the article discussed and discovered the essence of concept "vulnerable class", peculiarities, reasons for forming the layer. Were analyzed and summarized economist's interpretations about that concept, then was given our interpretation and was mentioned persons with certain social characteristics in "vulnerable class" concept. For full understanding "vulnerable class" concept was proposed to consider in two dimensions: constant and probable/risk vulnerable class. In the article was given the connection between the concepts of vulnerability and poverty.

Key words: population stratification, unequal income distribution, poverty line, poverty, standard of living, human capital, social class.

THE IMPORTANCE AND PROBLEMS OF RECONSTRUCTION OF LOGISTIC SYSTEMS ON THE WAY OF DEVELOPING COMPETITIVE BUSINESS IN CIS COUNTRIES AND GEORGIA

A. Mardoyan

Today logistics plays key role in the economy, and the market volume of logistics has already reached substantial in many economies as a result. Companies that are successful worldwide have recognized the critical role logistics plays in creating added value. In addition a close focus on the customer is a critical factor for companies working together in supply chain. Today market belongs to the consumer who demands high-quality product with right quantity, at the right place and in the right time in minimum cost. A product also contains numerous logistics services by the time it reaches the consumer. It is closely connected to organizing, monitoring and controlling the entire value chain called supply-chain.

An overview of the functions that logistics service providers (LSP) typically perform, based on a survey among buyers of logistics services, is provided in Table 1.

Table 1 Activities of logistics service providers¹

Function	Activities
Transportation	Shipping, forwarding, (de)consolidation, contract delivery, freight bill payment/audit, householdgoods, relocation, load tendering, brokering
Warehousing	Storing, receiving, assembling, returning goods, marking/labeling, knitting
Inventory management	Forecasting, location analysis, network consulting, slotting/layout design

¹ Gunasekaran A., Ngai E.W.T., (2003) "The successful management of a small logistics company", International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 33 Iss: 9, pp.825 – 842

Order processing	Order entry fulfillment
Information systems	EDI, e-commerce, Internet, WWW, routing/scheduling, expert systems
Packaging	Designing, recycling

Good organized logistics system and management is a background for developing competitive business and accordingly progressive economy. Although logistics is performed mainly by private operators, it has become a public policy concern of national governments and regional and international organizations. Supply chains are a complex sequence of coordinated activities. The performance of the whole depends on such government interventions as infrastructure, logistics services provision, and cross-border trade facilitation.

The capacity of developing countries to efficiently move goods and connect manufacturers and consumers with international markets is improving - albeit slowly.

Despite the government's best efforts logistics services continue to be slow, bureaucratic and unpredictable in post-soviet countries, a new World Bank report 2014 has found. LPI (Logistics Performance Index) 2014 ranks 160 countries on six dimensions of trade:

- The efficiency of customs and border management clearance ("Customs").
- The quality of trade and transport infrastructure (Infrastructure").
- The ease of arranging competitively priced shipments (Ease of arranging shipments").
- The competence and quality of logistics services—trucking, forwarding, and customs brokerage ("Quality of logistics services").
- The ability to track and trace consignments ("Tracking and tracing").

- The frequency with which shipments reach consignees within scheduled or expected delivery times ("Timeliness").²

The quality of Russia's and other former Soviet states' trade and transport related infrastructure is subpart. Russia occupies the unenviable place of 90th out of 155 countries, appearing between Shri Lanka and Uruguay, according to the regular Logistics Performance Index (LPI) compiled by the World Bank in 2014 and the 95th place in 2012. The leading states among post-Soviet countries, based on the assessment of the speed of cargo transit and registration, are Kazakhstan, which ranked 86th in 2012 and 88th in 2014, Uzbekistan was at the 117th place in 2012 and is at the 129th place in 2014, and Azerbaijan was in the 116th place in 2012 and is at 125th place in 2014. Ukraine occupies the 61st place and Georgia the 116th places in 2014 which have been investing heavily in surface-transportation infrastructure, and is in the process of expanding its railway network. In 2012 Armenia occupied the 100th place, and has risen up to the 92nd place in 2014.¹

As we see many of these countries could not improve their logistics systems according to LPI.

The problem is not only in absence of finance or in closed borders in some of these countries, but also in attitude of scientists and entrepreneurs towards logistic management. This problem is similar for CIS countries and Georgia, which are post-soviet states.

Entrepreneurs consider logistics as a performance of a number of operations (production, distribution, warehousing, etc.). Other scientists consider logistics as a theoretical and practical idea of management of flow processes taking place under flowing material resource up to final consumption with optimum balance of cumulative

² Connecting to compete 2014. Trade Logistics in Global Economy. The LPI and Its Indicators: World Bank Report 2014.

http://lpi.worldbank.org/sites/default/files/LPI_Report_2014.pdf

logistics expenses and consumer satisfaction.³ Such an interpretation results in undervaluation of importance of logistics, and misunderstanding its practical context.

As practices shows enterprises look for any ways of cutting in expenses. Top managers of companies use common methods: downsizing, utilization of cheaper and as a rule less qualitative raw, dismissal of staff and etc. Today more and more scientists connect definition of term logistics with performing functions of management of flows. It can conclude that logistics is comprehensive approach in managing business activities of enterprise. It helps to develop rational organization of flow processes to identify and implement possible managerial reserves, and to realize additional income. In this context minimization of total expenditure and maximization of consumer satisfaction are the key decisive factor of logistics. That is why logistics is important for success of particular enterprise, branch and the whole country.

In developed countries about 90 % of time of goods flow from source of raw materials to final customer is its passing through various channels of supply, sale and for the most part storage. Manufacturing goods takes only 2 % of total time, and external transportation – 5 %. Expenses connected with physical supporting and distributions are the main ones in logistic systems. World statistics shows that logistical costs become important component of production expenditure. In the USA logistics take about 10% of GNP, in Germany- 7%. Germany is a leader with its LPI.⁴

It is a great problem for enterprises in post-soviet countries to implement logistics tools. Some of these countries have got not bad manufacturing and transportation potential, but after corruption of the

³ Mark Johnson, Simon Templar, (2011) "The relationships between supply chain and firm performance: The development and testing of a unified proxy", *International Journal of Physical Distribution & Logistics Management*, Vol. 41 Iss: 2, pp.88 – 103

⁴ Connecting to compete 2014. Trade Logistics in Global Economy. The LPI and Its Indicators: World Bank Report 2014.
http://lpi.worldbank.org/sites/default/files/LPI_Report_2014.pdf

USSR they have become unable to arrange production, distribution, and marketing themselves, without governmental partnership, to act as free entrepreneurs who must solve problems of order process, warehousing, transportation optimizing resources and logistic functions. Inflation index is quite high and has trend of increasing in these countries. Goods reach consumer with high prices both from state and external producers. Logistic centers in these countries has not got optimized transportation and warehousing systems, or can not find their consumers in time because of undeveloped information system and marketing, or managers does not have quite knowledge and skills in this.

This field needs to be well analyzed scientifically, as the systems of logistics were seriously ruined, and these countries have not got even theoretical background and professionals to build new ones.

How to find the supplier of raw materials in less cost? How and where to find distributor who also supplies packaging and transport services? How to find my market segment? How to attract international partners in my business?

These are the main managerial problems of companies. 70 years companies were dictated what to produce, in what quantity and in which price. These processes were planed. There was not a motivation to spend much time and financial recourses on exploring market or looking for new ways of good's distribution.

After the USSR ruined the institute of manufacturing and logistics also broke down and till now can not stand up, though has quite cheap material, technical and human resource bases. This we can see clearly on the example of Gyumri economics which was the 2nd-largest and industrial city in Armenia. During the Soviet era Gyumri was considered the third largest trade and cultural centre in Trans-Caucasian after Tbilisi and Baku.

The economy of Gyumri mostly depended on industrial sector. 50 industrial companies acted there, where almost 40000 people worked. In these factories 700 types of goods were produced, 40 of them were exported to 35 countries, including France, Italy, GDR, Finland and etc.⁵

⁵ Official site of State Statistic Service, armstat.am

The most important industrial activities were the production of building materials (tufa and basalt), yarn and textile manufacturing and food industries.

Now Gyumri has few small and middle-sized industrial companies specialized in textile manufacturing, with empty warehouses. The city has variety of choosing transporting means. Especially I would like to stress on importance of railway junction and the airport. Now these infrastructures are not used completely for reorganization of logistic systems and for building international trade connections.

Some specialists think that high logistic costs are connected with far distance and numerous boards between partners, but reliability of the supply chain that is the most important contributor to those costs.

In the 21st century the reliability of supply chain is mostly connected to new information management and control, these processes are in turn associated with technologies and Internet. The Internet has been used as a dynamic medium of communication for channeling transactions between customers and firms in a virtual marketplace.

In particular, the WWW has emerged as a powerful new channel for distribution, eliminating many intermediaries and radically restructuring the value chain in several industries. The Internet has had an impact on channels of distribution in three major industries: retailing; banking, brokerage and financial services.

The Web platform has several advantages, which will allow a company to overcome some traditional logistics problems. These include: real-time information on inventories, single data entry to minimize human errors as inputting of the data is handled by customers themselves and there is no need to re enter the information, a real-time online ordering function, and multi-level password control so that different functions can have different access levels, controlled by the respective authorized people.

A mutual relationship exists between developments in identification and communications technology (I/C Technology) and logistics. On one hand, logistics is one of the most important commercial areas of application. With its growing needs, it acts as a catalyst for advances in IT. On the other hand, new technological opportunities form

the basis for new concepts in logistics. In this context, logistics advances include barcodes and RFID technology (Radio frequency identification). Thanks to this technology, real-time information can be stored and transmitted using the RFID tags on pallets. Pallet, containers and parcels to efficiently manage flows of goods. In addition, logisticians envision scenarios in which intelligent logistics objects find their own way through the material flow, managing and organizing the flow of goods by themselves in the process.⁶

The integration of various applications into software systems offers logistics further opportunities to optimize the processes of global trade. For instance, internal warehouse management system and IT systems such as track & trace systems. Tracking & tracing often are components of modern logistics. Electronic platforms are also becoming increasingly important. More and more shipping agents, freight forwarders and service providers are turning to the Internet in order to gain an additional way to offer their services.

All these above listed modern logistic IT systems are used for measuring the performance of, and controlling the operations in, a logistics value chain. Activities such as the collecting, processing, retrieving, reporting and storing of data are part of information management. Strategies/techniques such as groupware, IT/IS, shareware, data mining and data warehousing can be used for the purpose of managing information. The technologies of information include EDI, e-commerce, ERP, Internet, WWW, and artificial intelligence (AI) and expert systems. These information systems help to integrate various links along the logistics value chain.

The success of business especially in field of industry and sales is to rebuild, renew the systems of logistics management according to principals of market economy, as the logistics is the potential of improving of market power for many enterprises in

⁶ Seth N., S.G. Deshmukh, Prem Vrat, (2006) "A conceptual model for quality of service in the supply chain", International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 36 Iss: 7, pp.547 – 575

post - soviet countries. In a word logistization is a new term of progressive economy.

Logistization – a process of reorganization of current systems of flow logistics, integration and coordination of functions of all members of "raw material supply-manufacturing-sale-distribution" chain. In this context Logistization means not only implementation of principles of classic logistic in arranging process, but also adaptation of affective world practices to current home managerial system. It is a very slow process and to reach this aim the exact problems must be solved:

1. To change skeptic attitude of managers of enterprises to implementation of new managerial methods. It depends on unwillingness to recognize fundamental changes which took place in philosophy of shaping materials, financial and information flows
2. To arrange specialized logistic education, popularization of logistics as a science
3. To choose right methods and means of exploring and estimating real situation in business processes
4. To find investors and attract them into process of reengineering /to receive technical support from client companies/
5. To increase a good level of infrastructure.

Those I call the key aspects of reconstruction of logistic systems in small or middle-sized companies. At the same time small- and medium-sized companies are flexible and innovative when it comes to logistics operations. Because of the size of SML companies and the budget available to them for technology and skills, the forming of strategic alliances is a necessary means for them to be able to compete in logistics markets. In post-soviet alliance small and middle segment of business is quite wide, so using this strategy will result in success.

Logistics and supply chains are nothing new. But they are becoming more complex, and presenting companies with new challenges. Customers are becoming more and more demanding and quickly learn to transfer positive experiences in one submarket to others. For this reason, companies must be organized in a way that enables them to exactly address the needs of their customers. By providing differentiated problem solutions that are tailored to specific

market segments, companies can gain an edge on their competitors. To do this, increasing numbers of process innovations in logistics are necessary along with product innovation and reengineering present logistic infrastructures.

To a large extent, development depends on actions of national entrepreneurs. If enterprise does not apply logistic principles for own activity management it invites failure in system of flow movement, and in loss of time and resources.

Key words: Supply-chain, Logistics, Logistic management, Logistic systems, Ecommerce, Reengineering, Logistization, Infrastructure, Innovation, Identification and Communication technology, ERP (Enterprise Resource Planning)

References

1. Connecting to compete 2014. Trade Logistics in Global Economy. The LPI and Its Indicators: World Bank Report 2014. http://lpi.worldbank.org/sites/default/files/LPI_Report_2014.pdf
2. Gunasekaran A., Ngai E.W.T., (2003) "The successful management of a small logistics company", International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 33 Iss: 9, pp.825 – 842
3. Mark Johnson, Simon Templar, (2011) "The relationships between supply chain and firm performance: The development and testing of a unified proxy", International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 41 Iss: 2, pp.88-103
4. Official site of state statistic service, armstat.am
5. Seth N., S.G. Deshmukh, Prem Vrat, (2006) "A conceptual model for quality of service in the supply chain", International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 36 Iss: 7, pp.547 – 575
6. Skrypnychenko Yulia, "Problems And Horizons Of Business Processes Logistization In Ukraine", European Journal of Business and Economics, Vol. 4, 2012
7. Stanley E. Fawcett, Roger J. Calantone, Anthony Roath, (2000) "Meeting quality and cost imperatives in a global market",

International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 30 Iss: 6, pp.472 – 499

8. Frolova, L.V., (2005). "Logistic Management of Business: Theory and Methodology", Synopsis of Thesis of Doctor of Economics: 08.07.05, Donetsk State University of Economics and Trade Named after M. Tugan-Baranovski, Donetsk, 37 pp.
9. Zharik T.I., (2010). "Logistics in the Contest of Stable Development of Ukraine, Shaping Market Relations in Ukraine, N 11(114), pp. 19-22

Ամփոփում

Հոդվածում գնահատվում է լոգիստիկ համակարգերի զարգացման մակարդակը և դրանց նշանակությունը ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին ԱՊՀ երկրներում, որոնք նախկին խորհրդային հանրապետություններ են: Ներկայացվում է տնտեսության ենթակառուցվածքների համակարգային վերակառուցման անհրաժեշտությունը դրական տնտեսական արդյունքի հասնելու համար, որը հնարավոր է նոր տեխնոլոգիաների և կառավարման նոր մեթոդների ներդրմամբ և կիրառմամբ մակրո- և միկրոլոգիստիկ համակարգերում: Լոգիստիկ կոնցեպցիայի կիրառումը ձեռնարկատիրության ոլորտում ենթադրում է այնպիսի կառավարման համակարգերի ստեղծում, որոնք թույլ կտան ձևավորել կայուն կապեր հասարակական արտադրության, բաշխման և սպառման գործընթացների միջև:

Բանալի բառեր՝ մատակարարման շղթա, լոգիստիկա, լոգիստիկ կառավարում, լոգիստիկ համակարգեր, ինտերնետ կոմերցիա, ռեինժեներինգ, լոգիստիկացում, ենթակառուցվածք, նորամուծություն, նույնականացման և կոմունիկացիոն տեխնոլոգիաներ, կազմակերպության ռեսուրսների պլանավորում:

Резюме

В статье дана оценка современного уровня и роли логистических систем в развитии бизнеса в странах бывшего СССР. Подчеркивается значение комплексной реорганизации инфраструктур экономики для достижения положительного экономического

эффекта путем интегрирования информационных технологий и новых методов управления в микро- и макро логистических системах. Внедрение концепции логистики и комплексная реконструкция торгово-производственных и сервисных организаций предполагает такое взаимодействие с партнерами, при котором коммерческие процессы становятся частью общего целого технологического процесса производства, распределения и потребления конечного продукта.

Ключевые слова: цепочка снабжения, логистика, логистический менеджмент, логистические системы, интернет коммерция, реинжиниринг, логистизация, инфраструктура инновация технология коммуникаций и идентификации планирование ресурсов организации.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մուրադյան

Համաշխարհային տնտեսական համակարգին ինտեգրումը շարունակական գործընթաց է, որի նկատմամբ հատկապես զգայուն են փոքր պետությունները, մասնավորապես՝ մեր հանրապետությունը: Ազգային տնտեսությունների ներառումը «գետտոնտեսական տարածության»¹ մեջ ենթադրում է մի շարք պարամետրերի հաշվառում, որոնցից առավելապես կարևորվում են համաշխարհային տնտեսական համակարգի միասնականությունը, ամբողջականությունը, ինչպես նաև գետտոնտեսական տարածությունում ապրանքային արտադրության ձևափոխումը: Այս վերջինն անմիջականորեն կապված է աշխատանքի հասարակական բաժանման հետ, որը շատ կարևոր է մի շարք պատճառներով: Ժամանակի ընթացքում աճում է արտաքին տնտեսական կապերի մասնակիցների թիվը և նրանց առջև հառնում են ոչ պարզ հարցեր՝ գտնելու համար սեփական տնտեսական խորշը աշխատանքի բաժանման համաշխարհային համակարգում: Եթե համագործակցության մոդելը, որի հիմքում ընկած է արտաքին առևտուրը, ենթադրում է արտաքին շուկայի այնպիսի հատված, որը կարելի է հագեցնել համապատասխան ապրանքներով, ապա այժմ (համաշխարհային տնտեսական համակարգին միանալու ժամանակ) գնում է համարժեք տնտեսական կառուցվածքի փնտրտույթ՝ ապրանքների և ծառայությունների համատեղ արտադրության և համաշխարհային շուկայում համատեղ իրացման համար, այսինքն՝ գլոբալ մասշտաբներով, աշխատանքի հասարակական բաժանումը ստանում է նոր հնչեղություն:

¹ Մերօրաբանական կատեգորիա, գլոբալ տարածության ներկայացում ոլորտի տեսքով, որտեղ ծավալվում են գլոբալ տնտեսական համակարգի գործունեության օրինաչափությունները, որոնք արտահայտվում են համաշխարհային վերարտադրողական գործընթացի իրողություններում, տե՛ս Геоэкономический (глобальный) толковый словарь. Кочетов Э.Г.: М., 2002.

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երկու տարընթաց գործընթացների դիալեկտիկական միասնությունը: Մի կողմից՝ հասարակական արտադրության միջազգայնացման ուժեղացումը, մյուս կողմից՝ աշխատանքի բաժանման խորացումը: Այլ խոսքով, աշխատանքի բաժանումը որպես ապրանքների իրացման պայման գոյատևում է դրանց տնտեսական միավորման հիման վրա: Այս միասնության կարևորությունը հաստատում է այն հանգամանքը, որ անգամ եզակի ապրանքատեսակներ արտադրելիս հնարավոր է, որ դրանք չիրացվեն համաշխարհային շուկայում, քանի որ դրանք չեն հարմարվում իրենց համար օտար միջավայրին (տնտեսական, արտադրական, տեղեկատվական, տեխնոլոգիական, նորմատիվա-իրավական, մշակութային և այլն): ՀՀ արտահանման փոքր ծավալներն առավելապես խոսում են միջազգային շուկայում հայկական արտադրատեսակների հարմարվողականության ցածր մակարդակի մասին:

Վերարտադրողական գործընթացների փոխկախվածությունը, սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների ստեղծումը, միջազգային փոխանակման ինտելեկտուալացումը չէին կարող չներգործել համաշխարհային ապրանքաշրջանառության վրա: Առաջացել են միջազգային հարաբերությունների նոր օբյեկտներ և սուբյեկտներ: Արդի արտաքին կապերի կարևոր հարցերից է ապրանքի փոփոխության և աշխարհատնտեսական հարաբերությունների միջև փոխհարաբերությունների և փոխկախվածության հաշվառումը:

Մեր դարաշրջանում հասարակական կյանքը միջազգայնացվում է բոլոր ոլորտներում՝ հոգևոր, մշակութային, գիտատեխնիկական, արտադրական, տնտեսական: Տնտեսական կյանքի միջազգայնացման ժամանակակից մեխանիզմը ձևավորվում է ԳՏԱ-ի պայմաններում, հանդիսանալով դրա արտացոլումը և այդ պատճառով էլ բավականին շարժուն է և ճկուն: Ընդ որում, միջազգայնացման գործընթացն ունի ալիքային բնույթ՝ համաշխարհային տնտեսական ոլորտում ձևավորվում և տարածվում են նորանոր ալիքներ: Սա պայմանավորված է նրանով, որ ժամանակակից աշխարհի տեղեկատվական, կոմունիկացիոն, հրատարակչական գործի բարձր զարգացած համակարգերի պայմաններում նոր գիտական ձեռքբերումները, տեխնիկական լուծումները, աշխատանքի ձևերը համեմատաբար

հեշտ են հաղթահարում արգելքները: Բացի այդ, գիտական միտքը և մշակումներն ունեն իրենց յուրահատուկ արտաքին առևտրային ուղիները (լիցենզիաների վաճառք, նոու-հաուներ և այլն): Դրանց տարածմանը նպաստում են նաև անասելի չափերի հասած «ուղեղների հոսքը», արդյունաբերական լրտեսությունը և այլն: Ուղեղների զանգվածային արտահոսքի կանոնակարգման նպատակով ՀՀ-ում օրենսդրական նախաձեռնության, տարբեր պետությունների հետ երկկողմ կամ բազմակողմ պայմանագրերի կնքման անհրաժեշտություն է զգացվում, ինչը պետությանը հնարավորություն կտա գոնե մասնակիորեն փոխհատուցել բարձրորակ մասնագետների պատրաստման վրա կատարված ծախսերը այն երկրների հաշվին, դեպի ուր մեկնում են այդ կադրերը:

Բայց սա արտադրական միջազգայնացման ծագման միայն մեկ նախադրյալն է: Տվյալ գործընթացի հետագա զարգացումը կանխորոշված է նրանով, որ ժամանակակից գիտությունը առավել մեծ չափով է վերածվում հասարակական արտադրողական ուժի: Գիտության և արտադրության համակցումը հեղափոխականացնում է միջազգայնացման գործընթացը, քանի որ անցնելով ազգային սահմանները, գիտատեխնիկական մշակումները հանդես են գալիս որպես միջազգայնացման, արտադրական ենթակառուցվածքի պատասխան հակազդեցություն, հաջորդ էտապի հիմք և ուղենիշ: Այդ փոխազդեցությունն առանձնանում է հակասությամբ և բարդությամբ, քանի որ խոսքը գնում է ոչ միայն առանձին արտադրությունների վերաձևավորման, այլև հաճախ նոր տնտեսական կառուցվածքների ձևավորման մասին:

Տնտեսության միջազգայնացման գործընթացի վերափոխակերպումները կարելի է ներկայացնել որպես տեխնոլոգիական մտքի կողմից սահմանների հաղթահարում, նոր ազգային հողի վրա ժամանակակից արտադրական կառույցների առաջացում, որոնց զարգացման արդյունքում էլ ծնվում է միջազգային արտադրությունը: Միջազգայնացման այդպիսի յուրահատուկ շրջապատույթը նորից ու նորից է կրկնվում՝ շերտավորելով մի ենթակառուցվածքը մյուսի վրա: Ինդուստրիալիզմից ետինդուստրիալիզմի անցման հետ այդ գործընթացը արագանում է, իսկ ժամանակակից պայմաններում, ետինդուստրիալիզմի բարձրագույն տեխնոգեն փուլի շրջանակներում, այն

ծեռք է բերում կատաղի արագություն. նոր արտադրատնտեսական կառույցները սնանկացնում են հենց նոր ստեղծված, միանգամայն կենսունակ կառույցները, թուլացնելով ազգային տնտեսությունները:²

Միջազգայնացման արդյունքում համաշխարհային տնտեսությունը դառնում է ավելի համապարփակ և ամբողջական, ինչն էլ նպաստում է, որ արտաքին տնտեսական կապերի ոլորտում որևէ ուրուշում ընդունելիս միջազգայնացումը հանդես գա գլխավոր ուղենիշներից մեկի դերում: Եթե նախկինում արտադրական համագործակցությունը հեշտորեն անցնելով ազգային սահմանները օգտագործում էր նորանոր համաշխարհային տնտեսական գոտիներ, կենտրոններ, համալիրներ և այլն, ապա այժմ միջազգայնացման գործընթացն անցում է կատարում այլ հարթություն (գործընթացը գնում է ոչ թե ընդարձակման, այլ խորացման): Միջազգայնացման գործընթացը աշխարհատնտեսական ոլորտը բերեց որակապես նոր մակարդակի, հիմք դնելով համաշխարհային տնտեսության տեխնոլոգիական միասնությանը: Այս միջավայրում տարբեր ազգային տնտեսություններին վերաբերող տարանջատված մասերը միավորվում են միասնական համաշխարհային միջազգայնացված վերարտադրողական գործընթացում:

Գեոտնտեսական տարածությունում միջազգայնացման սրընթաց զարգացման գործընթացը միջնորդավորվում է համաշխարհային ապրանքային շուկայով: Իսկ «համաշխարհային շուկա» հասկացությունը ստացել է նոր բովանդակություն. այն արտացոլում է միջազգայնացված վերարտադրողական միջուկի աշխատանքի բաժանման միջնորդավորությունը: Թեև ազգային տնտեսությունները միասնական համաշխարհային տնտեսության անբաժանելի մասն են, և արդեն իսկ դրանով էլ կանխորոշված է նրանց մասնակցությունը համաշխարհային վերարտադրողական գործընթացին, սակայն պարադոքսն այն է, որ կարելի է հանդիսանալ ՀՏՀ մաս, բայց այնուամենայնիվ, չմասնակցել համաշխարհային վերարտադրողական գործընթացին:

Ազգային տնտեսությունների մեծ մասը պարբերաբար հայտարարում են իրենց ձգտումը համաշխարհային տնտեսական զարգաց-

² Кочетов Э.Г., Геоэкономика. Учебник для вузов.- М.: Норма, 2006. стр. 24.

ման իրողությունների հետ հաշվի նստելու, մշակում են երկարաժամկետ պլաններ (ռազմավարություններ) աշխատանքի միջազգային բաժանման առավելություններն օգտագործելու ուղղությամբ: Միջազգայնացումը ցանկացած ազգային տնտեսության մեջ ներմուծել է ժամանակակից համաշխարհային տնտեսության բաղադրիչներ, բայց դրանցից արդյունավետ օգտվել կարող է ոչ ամեն մի տնտեսություն: Պատճառները բազմազան են: Դրանցից շատ էականը այն հասկացության բացակայությունն է, որ ազգային տնտեսության շրջանակներում այդ բաղադրիչները պետք է համակարգել համաշխարհային համակարգի զարգացման արդի էտապին համարժեքորեն: Իսկ դա կապված է արտաքին տնտեսական կապերի, մեթոդաբանական մոտեցումների, կազմակերպակառավարչական ոլորտում լուրջ վերակառուցումների հետ: Այլ խոսքով, անհրաժեշտ է ուղենիշների մի ամբողջ համակարգ ազգային տնտեսությունները աշխարհատնտեսական ոլորտում ընդգրկելու համար: Այս ամենի իրացման համար ազգային արտաքին տնտեսական կապերի (ԱՏԿ) համակարգը բարեփոխումների կարիք է զգում: Բայց դրա համար պահանջվում է քաղաքական կամք և տնտեսության զարգացման որոշակի մակարդակ, իսկ ամեն մի ազգային տնտեսություն չէ, որ պատրաստ է դրան:

Միջազգայնացումն իր բնույթից ելնելով, առաջ է բերում նախկինում ձևավորված տնտեսական կառույցների փլուզում: Սակայն, այդ գործընթացը տեղի է ունենում ոչ տարերայնորեն, այլ ենթակա է նպատակասլաց կառավարման: Միջազգայնացման կառավարման գործընթացը կայանում է հետևյալ տարրերի ճիշտ ընտրության մեջ. ա/ միջազգայնացման գերակայող գիտատեխնիկական շերտի, բ/ դրա ազդեցության աստիճանի և տեմպերի, գ/ միջազգայնացման անբաժանելի բաղադրիչներ հանդիսացող կառավարման կառուցվածքի և համապատասխան կազմակերպատնտեսական ձևերի: Վերջին ուղղությունը մշտապես ետ է մնում և ոչ ամբողջովին է հաշվի առնվում:

Այժմ ՀՏ կապերի միջազգայնացման նոր միտումները արտահայտվում են անմնացորդ, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների, էներգիայի նոր աղբյուրների ստեղծման ոլորտում համագործակցության զարգացման մեջ: Սակայն, չնայած համագործակցությունը կարգավորվում է, կազմակերպակառավարչական օղակը թույլ է օգ-

տագործված միջազգային փոխազդեցության գործընթացում, ետ է մնում միջազգային հիման վրա գործող համապատասխան կազմակերպական և կառավարման կառույցների ստեղծումը:

Ժամանակակից փուլում աշխատանքի բաժանումը ընդունում է տարբեր փոխալսմանավորող ձևեր: Եթե վերցնենք ողջ համաշխարհային ապրանքային զանգվածը, ապա կարևոր է իմանալ, թե աշխատանքի ինչ բաժանում են արտացոլում այս կամ այն ապրանքները: Այլ խոսքով, ապրանքը կրում է աշխատանքի բաժանման, դրա ձևերի տարբեր երանգները: Համաշխարհային շուկայի կազմավորման տարբեր պատմական փուլերում, այդ կարգով երանգավորված ապրանքների միջև քանակական հարաբերակցությունները ժամանակի ընթացքում փոփոխվել են:

Մինչև անցյալ դարի 50-ական թթ. համաշխարհային ապրանքային շրջանառության մեծ բաժինը կազմում էին աշխատանքի ընդհանուր բաժանումն արտացոլող ապրանքները: Այնուհետ, սկսած 60-ական թթ.-ից, համաշխարհային ապրանքային շրջանառության աճի արագացումը բացատրվում է համաշխարհային տնտեսական ոլորտում կառուցվածքային փոփոխություններով, տնտեսավարող սուբյեկտների մոտեցմամբ, սկզբնապես մասնավոր (ներճյուղային), իսկ այնուհետ (70-ական թթ.) միավոր (հանգուցային և տեխնոլոգիական) աշխատանքի բաժանման ազգային սահմանների շրջանակներից դուրս գալը: Համաշխարհային շուկայում տեղի ունեցավ, այսպես կոչված, «ասորտիմենտային պայթյուն»՝ միավոր ապրանքների և դրանց կիրառման գործառնական ոլորտների արագորեն ընդլայնվող շարքերի ի հայտ գալու հետևանքով:

XX դարի 70-80-ական թթ. համաշխարհային թատերաբեմում խոշոր ներդրումային և արտադրական կորպորացիաների ի հայտ գալու հետ, հարց բարձրացավ այն մասին, որ աշխատանքի հասարակական բաժանման ոլորտում տեղաշարժերը չեն բերի արդյոք այնպիսի խորը որակական փոփոխությունների, որոնք կհանգեցնեն «աշխատանքի միջազգային բաժանում» հասկացության վերաիմաստավորմանը: Միջազգային ապրանքային շրջանառության դինամիկայի վրա զգացվեց աշխատանքի հասարակական բաժանման նոր, արտադրահրացվողական բնույթը. արտաքին առևտրային շրջանառության մեջ ներգրավվում է ոչ միայն պատրաստի արտադրանքը,

այլև ապրանքների հսկայական անվանացանկ, որոնք օգտագործվում են վերջնական արդյունքի ստեղծման համար:

Գիտատեխնիկական և արտադրական-ներդրումային խոշորամասշտաբ կոոպերացման ինտենսիվ զարգացումը տեղաշարժեց ապրանքների և ծառայությունների փոխանակման սահմանները և բերեց խոշոր արտադրական-ներդրումային համալիրների միջև միջֆիրմային փոխանակման ձևերի: Ձևավորվեց աշխատանքի միջանկլավային (միջկորպորացիոն) բաժանումը: Վերջինս վերազգային հիման վրա ձևավորված, արտադրակառավարչական պլանում որպես միջազգայնացված միջուկներ հանդես եկող տնտեսավարող սուբյեկտների մասնագիտացումն է:

Այս երևույթը միջազգային ոլորտում աշխատանքի հասարակական բաժանման ճակատագրի հասկացման համար այնքան կարևոր և համընդգրկուն է, որ դարձել է հանգուցային՝ գեոտնտեսական տարածության ձևավորման գործում: Ինքը «աշխատանքի միջազգային բաժանում» հասկացությունն իր մեջ արդեն ներառում է առավել բարդ բովանդակություն: Մի կողմից, այն ավանդորեն արտացոլում է ազգերի, որպես արտադրական միավորների, միջև արտադրական պարտավորությունների տարերայնորեն բաշխման գործընթաց, իսկ մյուս կողմից՝ արտադրական պարտավորությունները պլանաչափորեն բաշխվում են կոնցեռնների ներսում, դուրս չգալով դրանց շրջանակներից, բայց անցնելով պետական սահմանները: Աշխատանքի բաժանումը դուրս է եկել նոր հանգուցակետեր: Համաշխարհային քարտեզի վրա առաջացել են տնտեսական սահմաններ, որոնք չեն համընկնում ազգային սահմանների հետ: Սա էլ հենց աշխատանքի հասարակական բաժանման միջանկլավային գործընթացն է: Ազգային տնտեսությունները, որպես առանձին համալիրների օղակներ, բաժան-բաժան են լինում միանգամից մի քանի վերազգային ֆիրմաների կողմից:

Տնտեսական սահմանների առաջացումը կապված է արտադրաառևտրային ազլոմերացիաների (ԱԱԱ) ստեղծման հետ: Դրանք ժամանակավոր և հարաբերականորեն կայուն կառույցներ են, որոնք բնութագրվում են ընդհանուր արտադրական բազայով, տեխնոլոգիական և գիտատեխնիկական միասնությամբ, նոր ապրանքատեսակների (ապրանք-օբյեկտ, ապրանք-ծրագիր) ար-

տադրության և իրացման միասնական գործընթացով: Միջազգային ոլորտում աշխատանքի հասարակական բաժանման նոր տարատեսակի ծնունդը և արագացված զարգացումը հանդես է գալիս որպես աշխարհատնտեսական ոլորտում լուրջ կառուցվածքային փոփոխությունների պայմաններին ազգային տնտեսությունների հարմարվելու կարևորագույն նախադրյալ:

Աշխատանքի հասարակական բաժանման այս ենթահամակարգում ուժերի կիրառման ոլորտ են խոշորագույն օբյեկտների ի շահագործում հանձնումը, էներգետիկ մագիստրալների, գազատարների, մետալուրգիական, մեքենաշինական և նավթաքիմիական համալիրների, զբոսաշրջիկների սպասարկման, հյուրանոցային և առևտրային համալիրների, օդանավակայանների և այլնի կառուցումը: ԱԱԱ-ների ստեղծման արագացմանը նպաստել են ռազմական նշանակության արտադրատեսակների թողարկման ինտենսիվացումը և պետությունների ռազմաարդյունաբերական համալիրների միջև միջազգային կապերի ամրացումը: ԱԱԱ-ի շրջանակներում որոշ արտադրությունների ռազմականացումը, նրանց սերտաճումը ազգային ռազմաարտադրական համալիրների հետ, բերում են մի կարգավիճակի, երբ այդ գործընթացների հետագա զարգացումը էական ազդեցություն է ունենում ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և ռազմական գործոնների վրա:

Աշխատանքի հասարակական բաժանման բարդացումը բերում է ճյուղային կառուցվածքի մշտական վերանայման: Գիտատեխնիկական հեղափոխության արդի փուլի պայմաններում արտադրական գործընթացի բնութագրող գիծ է այն, որ շատ բազիսային ճյուղերի հետագա զարգացման շրջանակները և հեռանկարները կանխորոշվում են ԳՏԱ-ի ձեռքբերումների իրացման մակարդակով, կառուցվածքային ճգնաժամերով և շրջակա միջավայրի աճող աղտոտվածությամբ ձևավորված նոր պայմաններով: Օրինակ, էլեկտրոնիկայի հետագա զարգացման համար անհրաժեշտ են գերզգայուն նյութեր, որոնք կարող են ստացվել միայն տիեզերքի պայմաններում, ինչն էլ արդի էտապում որոշակի սահմաններ է ստեղծում ճյուղի զարգացման համար (փոքր պետությունների համար հրամայական է դառնում համագործակցությունը գերտերությունների հետ, տիեզերագնացության արդյունքներից օգտվելու համար): Պարբերաշրջա-

նային և կառուցվածքային ճգնաժամերի փոխներածման պայմաններում անհրաժեշտություն է առաջացել վերակառուցել ազգային տնտեսությունները էներգա-նյութախնայող տեխնոլոգիաների, միսի և մակրո ԷՀՄ-ների միկրոպրոցեսորների, անմնացորդ տեխնոլոգիաների կիրառման հիման վրա: Իր հերթին այն հանգեցնում է աշխարհի տարբեր երկրներում մի շարք նոր ճյուղերի արագընթաց զարգացմանը (շրջակա միջավայրի պաշտպանության համար սարքավորումների, կապի նորագույն էլեկտրոնային միջոցների, տեղեկատվական, աերոտիեզերական համակարգերի արտադրություն) և այնպիսի ճյուղերի ձևավորմանը, ինչպիսին բիոինժինիրինգն է:

Բանալի բաներ' միասնականություն, ձևափոխում, զարգացում, միջազգայնացում, տեխնոլոգիա, տնտեսություն, ազգային:

Резюме

При включении в геоэкономическое пространство национальные экономики должны учитывать единство мировой экономической системы и модификацию товарного производства. В конце XX века в мировом хозяйстве произошли качественные изменения в экономическом разделении труда: постепенно производственные обязанности планомерно распределяются внутри транснациональных структур. Субъекты мирохозяйственного общения претерпели организационные и структурные изменения, появились новейшие структуры: производственно-коммерческие агломерации, что явилось следствием интенсивного развития крупномасштабного научно-технического и производство-инвестиционного кооперирования.

Ключевые слова: единство, трансформация, развитие, интернационализация, технология, экономика, национальный.

Resume

In the cases of integration into the geo-economic space the national economics must take into account the unity of the world

economic system and modification of the commodity production. In the end of 20th century there were qualitative changes in the economic division of labor in the world economy: gradually productive obligations systematically are distributing within the transnational structures. The subjects of world-economical associations had organizational and structural changes, appeared new structures: the production-commercial agglomerations, which was result of intensive development of large-scale scientific-technological and production-investment cooperation.

Key words: unity, transformation, development, internationalize, technology, economics, national

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ա. Սիմոնյան

Բանկային համակարգի կատարելագործումը հանդիսանում է համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական գործոններից մեկը: Աշխարհի շատ երկրներում բանկային ոլորտի ընդլայնումը պայմանավորված է ազգային տնտեսությունների, երկրների արտաքին տնտեսական կապերի, միջազգային ֆինանսական շուկաներին ինտեգրման մակարդակի բարձրացման, ինչպես նաև բանկային գործունեության պետական կարգավորման համակարգի զարգացմամբ:

ՀՀ-ում ևս բանկային ոլորտը զգալի դեր ունի երկրի տնտեսական զարգացման և կայունության պահպանման գործում: Այդ մասին են վկայում ՀՀ տարածքում գործող բանկերի գրանցած տնտեսական ցուցանիշները [1]: Այսպես, 30.09.2013թ. դրությամբ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը կազմել է 428,7 մլրդ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր ակտիվները՝ 2 տրլն 718,2 մլրդ ՀՀ դրամ [2, 5-6]: 2013թ. առաջին ինը ամիսների ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը, հաշվարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով, կազմել է 35,3 մլրդ ՀՀ դրամ: Շահութաբերությունը ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) կազմել է համապատասխանաբար 1.8% և 11.6% [2, 8]:

Բանկային համակարգի կայունության պահպանման համար կարևորվում են նախ և առաջ տվյալ ոլորտում ներդրումների շարունակական իրականացումը, գործող ծառայությունների սպասարկման մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ժամանակակից ծառայությունների մատուցումը: Թեև նորագույն բանկային ծառայությունների մատուցումը բանկային համակարգի կատարելագործման գրավականներից է, այդուհանդերձ պետք է նշել, որ ավանդական բանկային ծառայություններն են ապահովում բանկային գործունեության հետագա զարգացումը:

Ավանդական բանկային ծառայություններից են վարկային, ավանդային և վճարահաշվարկային ծառայությունները, իսկ ժամանակակից ծառայությունների մեջ ներառվում են բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրումը, պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորումը, ֆակտորինգային և լիզինգային գործառնությունները, ֆինանսական և ներդրումային խորհրդատվության տրամադրումը, թանկարժեք մետաղների բանկային ծուլակտորների և հուշադրամների առքուվաճառքը և կառավարումը, թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունումը և այլն:

ՀՀ բանկային համակարգի զարգացման գործում ավանդական բանկային ծառայությունների դերը ներկայացնելու համար անդրադառնանք դրանց վերջին մի քանի տարիների շարժին:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ՀՀ առևտրային բանկերի ներգրաված ավանդների ծավալը 2000-2013թթ. ընթացքում աճել է ավելի քան 12 անգամ, 31.12.2013թ. կազմելով 1,6 տրլն ՀՀ դրամ: Ընդ որում, վերջին 14 տարիների ընթացքում ավանդների ծավալի աճի ամենամեծ տեմպերից մեկը գրանցվել է հենց 2013թ. ընթացքում՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 33%-ով: 2013թ. վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալի 71,2%-ը բաժին է ընկել ռեզիդենտներից, իսկ 28.8%-ը՝ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդներին:

**ՀՀ առևտրային բանկերի վարկերի և ավանդների ծավալները 2000-2013թթ. ընթացքում
(մլն ՀՀ դրամ) [3]**

	31.12.2000	31.12.2001	31.12.2002	31.12.2003	31.12.2004	31.12.2005	31.12.2006	31.12.2007	31.12.2008	31.12.2009	31.12.2010	31.12.2011	31.12.2012	31.12.2013
Ավանդներ, այդ թվում՝	128,002	131,974	153,613	184,765	230,201	267,215	310,352	427,014	496,145	642,291	761,505	1,023,114	1,212,145	1,612,442
Ռջ ուձգի- ուններինց	37,055	39,854	39,938	44,264	44,314	47,674	38,531	65,069	108,299	108,299	174,576	260,848	262,391	463,593
Բեզորենս- ներինց	90,947	92,120	113,676	140,501	185,887	219,541	271,821	361,945	387,846	533,992	586,928	762,266	949,754	1,148,849
Վարկեր, այդ թվում՝	105,044	86,588	93,985	107,536	143,506	194,418	243,456	426,047	634,366	749,552	949,139	1,268,789	1,605,680	1,798,255
Ռջ ուձգորենս- ներին	3,393	587	5,123	5,440	6,163	8,577	4,995	2,829	6,429	33,653	43,644	42,169	45,824	54,552
Բեզորենս- ներին	101,650	86,001	88,863	102,096	137,344	185,841	238,461	423,218	627,936	715,900	905,495	1,226,620	1,559,856	1,743,703

Աշխարհի շատ երկրներում առևտրային բանկերի կողմից ավանդային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը առաջին հերթին պայմանավորված է ավանդների երաշխավորման համակարգերի առկայությամբ: Այս առումով, ՀՀ-ում 2005թ.-ից գործում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, որը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հիմնադրված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է և երաշխավորում է ավանդատուների (ներկայում՝ միայն ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի) բանկում ներդրած դրամային և արտարժույթային բանկային ավանդները ներքոնշյալ չափերով:

1. Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը չորս միլիոն ՀՀ դրամ է,

2. եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն ՀՀ դրամ է,
3. եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ և դրամային բանկային ավանդի գումարը երկու միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև չորս միլիոն ՀՀ դրամով,
4. եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը երկու միլիոն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է դրամային ավանդը՝ երկու միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով [4]:

Կարծում ենք, որ ավանդների երաշխավորման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու և դրա արդյունքում առևտրային բանկերում ավանդների ներդրման ծավալներն ընդլայնելու համար անհրաժեշտ է.

1. երաշխավորել ոչ միայն ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի, այլև իրավաբանական անձանց ավանդները,
2. պարբերաբար մեծացնել ավանդների երաշխավորման չափերը (նշենք, որ մինչև 2010թ.-ը բանկային ավանդների երաշխավորության չափը կազմում էր դրամային բանկային ավանդների դեպքում՝ մինչև երկու միլիոն ՀՀ դրամ, իսկ արտարժութային բանկային ավանդների դեպքում՝ մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ):

Ինչ վերաբերում է ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող վարկային գործառնություններին, ապա նույն ժամանակահատվածում դրանց ծավալն աճել է 17 անգամ՝ 2013թ. վերջի դրությամբ կազմելով մոտ 1,8 տրլն ՀՀ դրամ, որի գերակշիռ մասը՝ 97%-ը, բաժին է ընկել ռեզիդենտներին, իսկ 3%-ը՝ ոչ ռեզիդենտներին տրված վարկերն են:

Նշենք, որ 2000-2013թթ. ընթացքում ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների գծով տարեկան աճի ամենամեծ տեմպը գրանցվել է 2011թ. (34.4%), ամենափոքր տեմպը՝ 2001թ. (3.1%):

Տրամադրված վարկերի գծով տարեկան աճի ամենամեծ տեմպն արձանագրվել է 2007թ.՝ (75%), ամենափոքր տեմպը՝ 2002թ. (8.5%):

Այսպիսով, աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների շարժընթացը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ավելի արագ տեմպերով մեծացել են հատկապես ավանդների ծավալները, ինչը վկայում է առևտրային բանկերի կայունության ամրապնդման և վերջիններիս նկատմամբ վստահության աճի մասին:

Պետք է նշել սակայն, որ թե ավանդների և թե վարկերի ծավալների աճը պայմանավորված է առաջին հերթին, այդ ծառայությունների մատուցման համեմատաբար առավել բարենպաստ դարձող պայմաններով: Այս առումով, մասնավորապես կարևորվում է ավանդների տոկոսադրույքների աճը, ինչպես նաև, վարկերի տոկոսադրույքների աստիճանաբար նվազումը:


Գծապատկեր 1-ում ներկայացված են մինչև մեկ տարի և դրանից ավել ժամկետով ավանդների և վարկերի տոկոսադրույքների փոփոխությունները նախորդ հինգ տարիների (2009-2013թթ.) ընթացքում: Գծապատկերներ 1.1-ից և 1.2-ից ակնհայտ է, որ, ընդհանուր առմամբ, թե իրավաբանակա և թե ֆիզիկական անձանց մինչև մեկ տարի և մեկ տարուց ավելի ժամկետով դրամային ավանդների տոկոսադրույքները բարձրացել են մոտ 2-3 տոկոսային կետով, մինչդեռ դոլարային ավանդների տոկոսադրույքների դեպքում էական փոփոխություն չի գրանցվել, ավելին, իրավաբանական անձանցից ներգրավված մինչև մեկ տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքները նույնիսկ նվազել են միջինը 1 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ դրամային ավանդների տոկոսադրույքի բարձրացումը արդյունք է նաև տնտեսության մեջ խնայողություններն ազգային արժույթով պահելու ՀՀ Կենտրոնական բանկի որդեգրած քաղաքականության, որի հիմքում ընկած է երկրում դոլարիզացիայի մակարդակի նվազեցման սկզբունքը:

Ինչ վերաբերում է վարկերի տոկոսադրույքներին, ապա 1.3 և 1.4 գծապատկերներից երևում է, որ կարճաժամկետ (մինչև մեկ տարի ժամկետով) վարկերի տոկոսադրույքները ևս նույն ժամանակահատվածում և իրավաբանական, և ֆիզիկական անձանց մասով նվազել են ավելի քան 2 տոկոսային կետով: Գրեթե նույն միտումն է գրանցվել նաև երկարաժամկետ վարկերի առումով, որտեղ ֆիզիկա-

կան անձանց և դրամային, և դոլարային վարկերի տոկոսադրույքները նվազել են մոտ 3 տոկոսային կետով: Բացառություն են կազմում իրավաբանական անձանց տրամադրված երկարաժամկետ վարկերի տոկոսադրույքները, որոնք, ընդհակառակը, աճել են մոտ 1 տոկոսային կետով: Նշենք, որ երկարաժամկետ վարկերի գծով տոկոսադրույքների ոչ էական նվազումը (հատկապես իրավաբանական անձանց մասով) պայմանավորված է բանկային համակարգում երկարաժամկետ ներդրումների ոչ բարձր մակարդակով, ինչպես նաև պետության կողմից իրավաբանական անձանց ցուցաբերվող աջակցության (վարկերի երկարաժամկետ վերաֆինանսավորում, տոկոսադրույքների սուբսիդավորում և այլն) գրեթե բացակայությամբ: Նույնը չի կարելի ասել ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի մասին, քանի որ վերջինների տոկոսադրույքների նվազումը պայմանավորված է նաև պետության կողմից իրականացվող վերաֆինանսավորման և սուբսիդավորման բազմաթիվ ծրագրերի (հատկապես հիպոթեկային շուկայի զարգացման գործում պետության դերի մեծացման) առկայությամբ, ընդ որում՝ այս դեպքում պետական աջակցությունն արտահայտվում է ոչ միայն ցածր տոկոսադրույքներով, այլև երկարաժամկետ վարկային ծրագրերի ներմուծմամբ:


Գծապատկեր 1.1

Մինչև 1 տարի ժամկետով ավանդների տոկոսադրույքները




Գծապատկեր 1.2

1 փարուց ավել ժամկետով ավանդների փոկոսադրույքները




Գծապատկեր 1.3

Մինչև 1 փարի ժամկետով վարկերի փոկոսադրույքները



1 տարուց ավել ժամկետով վարկերի տրոստադրույքները



Առևտրային բանկերի կողմից իրականացվող ավանդական մյուս ծառայությունները վճարահաշվարկային գործառնություններն են: Արդյունավետ գործող վճարահաշվարկային համակարգը յուրաքանչյուր պետության տնտեսության կարևորագույն տարրերից է, որը որոշակի առումով բնութագրում է նրա զարգացման մակարդակը: Երկրի ֆինանսական համակարգի կայունությունը ուղղակիորեն կապված է ներքին վճարահաշվարկային համակարգի կայունության հետ:

Անկանխիկ վճարային գործիքների մեջ ներառվում են.

1. կրեդիտային վճարային գործիքները (վճարման հանձնարարականներ, ուղղակի կրեդիտագրում),
2. դեբետային վճարային գործիքներ (չեկեր, վճարման պահանջագրեր, ուղղակի դեբետագրում, մուրհակներ),
3. վճարային քարտեր (դեբետային, վարկային, էլեկտրոնային փող),
4. ապրանքառաքման փաստաթղթերի դիմաց վճարման միջոցներ (ակրեդիտիվներ, փաստաթղթային փոխանցումներ, փաստաթղթային ինկասո) [5, 228, 231]:

Կայուն, հուսալի և արդյունավետ վճարահաշվարկային համակարգի ստեղծումը և զարգացումը << բանկային համակարգի

կարևորագույն խնդիրներից մեկն է: Այս առումով, հատկապես վերջին տասնամյակում, ՀՀ վճարահաշվարկային համակարգը դրսևորել է դինամիկ զարգացման միտումներ, ինչի մասին են փաստում անկանխիկ վճարումների անընդհատ աճող ծավալները: Աղյուսակ 2-ից երևում է, որ բանկային համակարգի միջոցով իրականացված անկանխիկ վճարումների միջին օրական ծավալը միայն վերջին 4 տարիների ընթացքում աճել է 4 անգամ՝ կազմելով մոտ 130 մլրդ ՀՀ դրամ: Զուգահեռաբար աճել է նաև Կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացվող վճարումների միջին օրական ծավալը՝ 2013թ. 3-րդ եռամսյակի վերջի դրությամբ հասնելով միջինը 104.8 մլրդ ՀՀ դրամի, որը ավելի քան 4.5 անգամ գերազանցում է 2010թ. 1-ին եռամսյակի համապատասխան ցուցանիշը: Նկատենք նաև, որ նշված գործարքները համապատասխանաբար աճել են ոչ միայն ծավալային, այլև քանակային առումով:

**ՀՀ վճարահաշվարկային համակարգի գարգացումները բնութագրող հիմնական ցուցանիշները
2010-2013թթ. ընթացքում՝ ըստ եռամսյակների**

	2010թ. 1-ին եռ.	2010թ. 2-րդ եռ.	2010թ. 3-րդ եռ.	2010թ. 4-րդ եռ.	2011թ. 1-ին եռ.	2011թ. 2-րդ եռ.	2011թ. 3-րդ եռ.	2011թ. 4-րդ եռ.	2012թ. 1-ին եռ.	2012թ. 2-րդ եռ.	2012թ. 3-րդ եռ.	2012թ. 4-րդ եռ.	2013թ. 1-ին եռ.	2013թ. 2-րդ եռ.	2013թ. 3-րդ եռ.
ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անվանիսկ վճարումների միջին օրական ծավալը (մլրդ ՀՀ դրամ)	32.8	43.0	52.3	59.1	51.5	60.9	59.7	69.2	70.0	84.4	120.1	113.6	132.2	137.6	128.5
ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անվանիսկ վճարումների միջին օրական քանակը (հազ)	18248	21846	21496	26634	22836	31708	32462	37615	30769	34066	48743	65000	58000	62000	65000
ԿԲ վճարային համակարգերով վճարումների միջին օրական ծավալը (մլրդ ՀՀ դրամ)	23.3	33.4	43.1	48.1	43.9	50.4	50.6	56.9	58.6	74.4	105.5	95.8	112.6	116.4	104.8
ԿԲ վճարային համակարգերով վճարումների միջին օրական քանակը (հազ)	7501	8907	9358	10998	9607	10529	11216	13176	9901	9681	15227	27000	20000	21000	23000

Ներկայումս ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերից 19-ը տրամադրում կամ սպասարկում են վճարային քարտեր: Ընդ որում, 19 առևտրային բանկերն էլ անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին: Աղյուսակ 3-ից երևում է, որ վերջին 6 տարիների ընթացքում շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակն աճել է ավելի քան 3 անգամ և 30.09.2013թ. դրությամբ կազմել մոտ 1.5 մլն: Պարզ է, որ վճարային քարտերի անընդհատ աճը ենթադրում է նաև դրանց սպասարկման սարքավորումների աճ: Այսպես, տվյալ ժամանակահատվածում ավտոմատ գանձման մեքենաների քանակը կազմել է 1213, իսկ POS-տերմինալների քանակը՝ 6822, ինչը համապատասխանաբար երկու և երեք անգամ գերազանցում է 2008թ. տարեվերջի ցուցանիշները:

Աղյուսակ 3

Վճարային քարտերի և դրանք սպասարկող սարքավորումների դինամիկ տվյալները 2008-2013թթ. ընթացքում [6]

	<i>31.12.2008</i>	<i>31.12.2009</i>	<i>31.12.2010</i>	<i>31.12.2011</i>	<i>31.12.2012</i>	<i>30.09.2013</i>
Քարտերի սպասարկման ավտոմատ գանձման մեքենաների քանակը	538	702	819	1009	1170	1213
POS-տերմինալների քանակը	2280	2720	3730	5155	6674	6822
Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի ընդհանուր քանակը (մլն.)	0.45	0.58	0.73	0.98	1.30	1.50

ՀՀ-ում վճարային քարտերի աճը պայմանավորված է դրանցով իրականացվող գործառնությունների անընդհատ աճող ծավալով, որի մասին տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում: Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվող գործառնությունները ևս գրանցել են անընդհատ աճի մի-

տում և դրանց ծավալը 2010-2012թթ. ընթացքում ավելացել է մոտ 1.8 անգամ՝ 2012թ. կազմելով մոտ 1 տրլն ՀՀ դրամ: 2013թ. առաջին ինը ամիսների ընթացքում այդ ցուցանիշը արդեն իսկ հասել է 787.1 մլրդ ՀՀ դրամի, այդ թվում՝ քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը կազմել է 75 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, նշված գործառնությունների 78.4%-ն իրականացվել է ավտոմատ գանձման սարքերի, 19.5%-ը՝ POS-տերմինալների/իմպրինտերների միջոցով, իսկ 2.1%-ը՝ ինտերնետ միջավայրում: Հատկանշական է, որ թեև ինտերնետ միջավայրում իրականացվող անկանխիկ գործառնությունների ծավալը դեռևս փոքր տեսակարար կշիռ է կազմում, սակայն վերջինս նախորդ երեք տարիների ընթացքում ունեցել է աճի ամենամեծ տեմպը (2.1 անգամ): Քարտերով կատարված անկանխիկ վճարումների ծավալը ևս ավելացել է ավելի քան 2 անգամ՝ 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմելով քարտային ընդհանուր գործառնությունների 9.5%-ը:

Աղյուսակ 4 [6]

**Վճարային քարտեր սպասարկվող սարքավորումների
միջոցով կատարված գործարքները**
մլն ՀՀ դրամ

	2010	2011	2012	2013 հունվար- սեպտեմբեր
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	439006	569723	767576	616748
<i>այդ թվում՝ անկանխիկ</i>	1871	1782	1790	1442
POS-տերմինալների/իմպրինտերների միջոցով	111833	157392	213412	153193
<i>այդ թվում՝ անկանխիկ</i>	29585	48682	71146	56449
Ինտերնետ միջավայրում	8753	12888	18420	17173
Ընդամենը	559592	740003	999408	787114
<i>այդ թվում՝ անկանխիկ</i>	40209	63352	91356	75064

Նշենք, որ 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով կատարված գործառնությունների 25%-ը բաժին է ընկել «ԱրՔա» քարտերին, իսկ 75%-ը՝ ՀՀ-ում

գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկվող միջազգային քարտերին, այդ թվում՝ 52.1%-ը՝ VISA, 16%-ը՝ MASTERCARD, իսկ 7%-ը՝ միջազգային այլ քարտերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներքին ֆինանսական շուկաներում մասնագիտացված վճարահաշվարկային կազմակերպությունների ի հայտ գալը և դրանց գործունեության հետագա ընդլայնումը կարող է հանգեցնել բանկերի կողմից համապատասխան ծառայությունների մատուցման ծավալների կրճատմանը, անհրաժեշտ է, որ առևտրային բանկերն ուշադրություն դարձնեն հատկապես այս ծառայությունների որակական բարելավման (արագ սպասարկում, մատչելիություն, զուգահեռ ծառայությունների տրամադրում) վրա:

Այսպիսով, չնայած բանկային համակարգում նոր և ժամանակակից ծառայությունների ի հայտ գալուն՝ հարկ է նշել, որ ավանդական բանկային ծառայությունները շարունակում են մնալ առևտրային բանկերի հիմնական գործառնությունները ոչ միայն քանակական, այլև նշանակության առումով, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր էական դերակատարումը բանկային համակարգի կայունության պահպանման և հետագա զարգացման գործում, մասնավորապես.

1. վարկերի տրամադրումը հանդիսանում է բանկերի եկամտի ստացման հիմնական աղբյուրը, որն էլ, իր հերթին, հանգեցնում է ֆինանսական շուկաներում վերջիններիս մրցունակության բարձրացմանը, միջազգային բանկային համակարգում գործող նորագույն ծառայությունների ներդրմանն ու մատուցմանը,

2. ավանդային գործառնությունների ընդլայնմամբ բանկերին հնարավորություն է ընձեռնվում ներգրավել ավելի շատ ազատ դրամական միջոցներ՝ դրանք տեղաբաշխելով առավել եկամտաբեր ակտիվների մեջ,

3. վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, հատկապես դրանց սպասարկման կատարելագործումը նպաստում է միջազգային վճարային համակարգերին առևտրային բանկերի ինտեգրմանը՝ դրանով իսկ ընդլայնելով հաճախորդների շրջանակը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում:

Բանալի բառեր՝ միջազգային ֆինանսական շուկաներ, ավանդական բանկային ծառայություններ, վճարահաշվարկային ծառայություններ, առևտրային գործարքների ֆինանսավորում, տոկոսադրույքների սուբսիդավորում, ներդրումային խորհրդատվություն, դոլարիզացիա, կրեդիտային վճարային գործիքներ, դեբետային վճարային գործիքներ, վճարային քարտեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. 30.09.2013թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 481 մասնաճյուղերով, և մեկ զարգացման բանկ (Համահայկական բանկը):
2. ՀՀ Կենտրոնական բանկի բանբեր, 2013թ. 3-րդ եռամսյակ, 45 էջ:
3. Կազմվել է
<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>
էլեկտրոնային կայքի տվյալների հիման վրա (22.02.2014):
4. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՕ-142-Ն ՀՀ օրենք /ՀՀ պաշտոնական տեղեկագիր. N72 (371), 28.12.2004թ.:
5. Ասատրյան Բ., Բանկային գործ, Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2004, 720 էջ:
6. Աղյուսակները կազմվել են ՀՀ Կենտրոնական բանկի բանբեր, 2010թ. 1-ին (60 էջ), 2-րդ (112 էջ), 3-րդ (73 էջ) և 4-րդ (64 էջ) եռամսյակների, ՀՀ կենտրոնական բանկի բանբեր, 2011թ. 1-ին (32 էջ), 2-րդ (60 էջ), 3-րդ (96 էջ) և 4-րդ (52 էջ) եռամսյակների, ՀՀ Կենտրոնական բանկի բանբեր 2012թ. 1-ին (31 էջ), 2-րդ (56 էջ), 3-րդ (42 էջ) և 4-րդ (76 էջ) եռամսյակների, ՀՀ կենտրոնական բանկի բանբեր 2013թ. 1-ին (30 էջ), 2-րդ (64 էջ) և 3-րդ (45 էջ) եռամսյակների պարբերականների տվյալների հիման վրա:

Резюме

В статье представлены роль банковской системы в экономическом развитии страны, необходимость внедрения института долгосрочных инвестиций, инновационных продуктов в сфере услуг, повышения уровня качества обслуживания в сфере традиционных банковских услуг. В контексте важности интегрирования банковской системы РА в международную финансовую систему, в работе рассмотрены направления развития основных видов услуг проводимых в действующих на территории РА коммерческих банков, а также предложены рекомендации по повышению эффективности предоставления услуг на основе сделанных анализов.

Ключевые слова: международные финансовые рынки, традиционные банковские услуги, платежно-расчетные операции, финансирование коммерческих сделок, субсидирование процентных ставок, консалдинговые услуги по инвестированию, долларизация, кредитные платежные системы, дебетовые системы платежей, платежные карты.

Resume

The article presents the role of banking system in the development of economy, long-term investments in it; the necessity to advance the level of traditional banking services and to introduce modern services. Pointing out the importance of integration of the Armenian banking system to the international market, the development trends of the main banking services performed by the commercial banks operating in the territory of the RA are introduced, and based on their analysis several ways to increase the effectiveness of their provision are suggested.

Key words: international financial markets, traditional banking services, payment and settlement operations, financing of the commercial transactions, interest rate subsidies, investment consulting, dollarization, credit payment instruments, debit payment instruments, payment cards.

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

L. Դոխյան

Ձեռնարկության հաջողությունը բնորոշվում է ձեռնարկության ղեկավարների ու նրա անձնակազմի ձեռնարկատիրական տնտեսական գործունեության նախաձեռնությամբ և շուկայի պահանջների լավ իմացությամբ:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ ձեռնարկատիրական գործունեության էությունը քննարկվում է 3 տեսանկյուններից.

1. Որպես տնտեսական կատեգորիա - հանդես է գալիս որպես սեփականության հարաբերությունների վրա հիմնված տնտեսավարման հարաբերությունների ենթահամակարգ:

Ձեռնարկատիրության՝ որպես տնտեսական կատեգորիայի, բովանդակությունն արտահայտվում է նրա օբյեկտով և սուբյեկտով: Ըստ ձեռներեցության սուբյեկտի՝ գոյություն ունի ձեռնարկատիրական գործունեության 3 ձև՝ անհատական, կոլեկտիվ և պետական, որոնք արտահայտում են սեփականության համապատասխան ձևին բնորոշ տնտեսական հարաբերությունները: Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտ է հանդիսանում արտադրության գործոնների արդյունավետ զարգացած եղանակների ընտրությունը՝ առավելագույն եկամուտ ստանալու նպատակով:

2. Որպես տնտեսավարման մեթոդ - տնտեսավարման ձևերի, եղանակների ամբողջություն է, որոնց նպատակը արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման շնորհիվ առավել եկամտի ստացումն է: Ձեռնարկատիրական գործունեության՝ որպես տնտեսավարման մեթոդի, կարևորագույն հատկանիշներն են՝

- տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնություն և անկախություն, որոշակի ազատությունների և իրավունքների առկայություն,
- ընդունված որոշումների և դրանով պայմանավորված տնտեսական ռիսկի համար պատասխանատվություն, որը պայմանավորված է շուկայի անորոշությամբ և անկանխատեսելիությամբ,

- առավելագույն կամ կայուն շահույթ ստանալու ձգտումը:

3. Որպես տնտեսական մտածողության տեսակ բնութագրվում է այն առանձնահատուկ հայացքների և ընդունակությունների ամբողջությամբ, որով օժտված է ձեռներեցի անձը: Ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսավարման յուրահատուկ արվեստ է, տնտեսական ու կազմակերպական բնույթի ստեղծագործական գործունեություն՝ հանուն շահույթի ստացման, որին բնորոշ է նախաձեռնության և նորարարության ազատությունը:

Հաճախ ձեռնարկատիրությունը մեկնաբանվում է որպես որևէ նոր արտադրանք թողարկելու կազմակերպական գործընթաց, որի շնորհիվ ապահովվում է եկամուտ, և որի կապակցությամբ ձեռնարկատերն իր վրա է վերցնում ֆինանսական, սոցիալական և բարոյական պատասխանատվությունը:

Գոյություն ունի նաև այլ տեսակետ, որի համաձայն՝ «ձեռնարկատիրական ունակությունը» արտադրության գործոնների համադրման և ռիսկի գնալու ունակությունն է:

Ձեռնարկատիրությունը սահմանվում է նաև որպես մարդկանց ինքնուրույն, նախաձեռնողական գործունեություն՝ ուղղված շահույթի կամ անձնական օգուտի ստացմանը:

Ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսավարման տեսակ է, տնտեսվարող սուբյեկտների տնտեսական վարքագծի յուրահատուկ եղանակ, որին բնորոշ են տնտեսական նորարարությունը, ճկունությունը, ռիսկի գնալու պատրաստակամությունը: Ձեռնարկատիրական գործունեության վերջնական նպատակը եկամուտ ստանալն է, ուստի այս իմաստով տնտեսվարման պրակտիկայում այն նույնացվում է «բիզնես» հասկացության հետ: Լայն իմաստով՝ ձեռնարկատիրությունը մի համալիր-ամբողջական տնտեսագիտական կատեգորիա է, որտեղ կենտրոնացված են պետության, հասարակության, սեփականատիրական և այլ շահեր՝ միկրո և մակրոմակարդակներում, և որոնք իրացվում են կոնկրետ ձեռնարկատիրական ունակություններ ունեցող անձի՝ ձեռնարկատիրոջ ունակությունների և արտադրության մյուս գործոնների այնպիսի համադրության դեպքում, որի արդյունքում ապահովվում է ձեռնարկատիրական շահույթ:

Այսպիսով, միանշանակ չի կարելի ասել, թե որն է ավելի լայն հասկացություն՝ «ձեռնարկատիրությունը», թե՛ «բիզնեսը», քանի որ,

մի կողմից, ոչ բոլոր շահավետ գործառնություններն են դասվում ձեռնարկատիրական գործունեության շարքը և, մյուս կողմից, բիզնես կարելի է համարել ձեռնարկատիրական գործունեության այն փուլը, որտեղ շահույթ է ստացվում:

Վերոնշյալ տեսակետները ձեռնարկատիրությունը ներկայացնում են որպես տնտեսական ակտիվության մի հատուկ ձև, տնտեսության առանձնահատուկ հատված կամ նորարարական գործընթաց, ռիսկի գնալու և որոշումներ ընդունելու ունակություն և այլն: Այդ բնորոշումներից յուրաքանչյուրն արտահայտում է ձեռնարկատիրությանը հատուկ և նրա անբաժան այս կամ այն մասը կազմող հատկանիշներ, բնութագրիչներ, սակայն ձեռնարկատիրությունը համալիր և դինամիկ մի հասկացություն է, որի բնորոշման համակողմանիության, լիարժեքության ապահովման նկատմամբ պետք է ցուցաբերել ցիկլային և նպատակային-ամբողջական մոտեցում:

Ցանկացած դեպքում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորություն պետք է ունենան բոլորը, ովքեր ցանկություն ունեն, և տվյալ հասարակության զարգացման մակարդակը կարելի է բնորոշել դրա համար ավելի բարենպաստ պայմանների ընձեռնամբ: Եվ որպես այդպիսի պայմանների և հնարավորությունների օգտագործման զանգվածային ոլորտ՝ հանդես է գալիս փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Ուստի այն երկիրը, որտեղ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն աջակցելու համար իրականացվում է պետական նպատակային քաղաքականություն, գործարարության բնագավառում կունենա հաջողություն¹:

Համաձայն տեսական վերլուծություններից մեկի՝ կարելի է ընդհանրացնելով ասել, որ ձեռնարկատիրությունը տնտեսական ակտիվության որոշակի ձև է, որը հիմնված է սեփական նախաձեռնության պատասխանատվության և նորամուծական ձեռնարկատիրական գաղափարների վրա: Տնտեսական ակտիվությունն իրենից ներկայացնում է անհատի մասնակցությունը հասարակական արտադրությանը և կենսագործունեության ապահովման համար ֆինանսական միջոցների ձեռք բերմանը:

¹ Մելքումյան Մ.Ս., «Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում», Զանգակ, Երևան, 2007 թ.

Խոսելով ձեռնարկատիրական գործունեության մասին՝ չի կարելի անտեսել այդ գործունեության հիմնական տարրերը: Դրանք են.

- Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ: Սրա տակ նկատի է առնվում ձեռնարկատերը կամ գործարարը, սակայն նա միակ սուբյեկտը չէ, որ պարտավոր է համագործակցել սպառողի հետ, պետության հետ, որը ցանկացած պարագայում կարող է հանդես գալ ինչպես օգնողի, այնպես էլ կանխարգելիչի դերում: Սուբյեկտների թվին կարելի է դասել նաև վարձու աշխատողներին, եթե այդպիսիք տվյալ արտադրությունը նախատեսում է:
- Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտ է հանդիսանում ապրանքը, արտադրանքը, ծառայությունը, որն առաջարկի ձևով հանդես է գալիս շուկայում և կոչված է բավարարելու որոշակի պահանջմունքներ:
- Ձեռնարկատիրական գործունեության նպատակը այնպիսի արտադրանքի արտադրությունն ու դրա առաջարկն է շուկային, որը մեծ պահանջարկ է վայելում և ձեռնարկատիրական եկամուտ ապահովում:
- Ձեռնարկատիրական շահույթը լրացուցիչ եկամուտն է, որը ստացվում է շնորհիվ ձեռնարկատիրոջ հմտությունների՝ գործի կազմակերպման, կառավարման, վերահսկողության և մոտիվացիայի սեկտորում:
- Ձեռնարկատիրական միջավայրը հասարակական տնտեսական այն իրավիճակ է, որ իր մեջ ներառում է տնտեսական անկախության աստիճանը, ձեռնարկատիրական կորպուսի առկայությունը, ձեռնարկատիրական կապիտալի ձևավորման հնարավորությունը, անհրաժեշտ ռեսուրսների օգտագործումը:

Այսպիսով, կատարված կանոնակարգումը հնարավորություն է տալիս հստակեցնել ձեռնարկատիրական գործունեության պատկերը գործարար հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա: Ձեռնարկատիրական գործունեության գոյության և զարգացման համար անհրաժեշտ է և պարտադիր մի շարք պայմանների առկայությունը: Դրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

- Շուկայական ազատ տարածության առկայություն.

- Զարգացած ապրանքափողային հարաբերություններ:

Ձեռնարկատիրական գործունեության վերջնական նպատակը եկամտաբեր ստացումն է: Այս իմաստով էլ տնտեսավարման պրակտիկայում այն նույնացվում է «բիզնես» հասկացության հետ: Իսկ ի՞նչ է բիզնեսը: Ինչո՞ւ են մարդիկ զբաղվում բիզնեսով: Բիզնես հասկացությունը կիրառվում է շահավետ, եկամտաբեր որևէ գործունեություն իրականացնելու իմաստով: Սակայն բիզնեսը ավելի լայն հասկացություն է, քան ձեռնարկատիրական գործունեությունը, որովհետև ոչ բոլոր շահավետ գործառնություններն են դասվում ձեռնարկատիրական գործունեության շարքին: Դա պայմանավորված է որոշակի հանգամանքներով: Նախ, ձեռնարկատիրական գործունեությունը արտադրատնտեսական բնույթի գործունեություն է, տնտեսավարման որոշակի եղանակ, իսկ բիզնեսը կարող է դուրս գալ տնտեսական գործունեության շրջանակներից:

Ժամանակակից տնտեսությունը պատմականորեն զարգացող սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման տարբեր ձևերի կատարելագործման արդյունք է, որի անբաժանելի բաղադրամասերից մեկը փոքր և միջին ձեռնարկատիրությունն (ՓՄՁ) է: Այն շուկայական տնտեսության արմատավորման և կայացման հիմնական երաշխիքն է: ՓՄՁ զարգացումը նպաստում է ներքին շուկայի ծավալների ընդլայնմանը, արտաքին շուկաներում տեղական ապրանքների և ծառայությունների մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև պարապուրդի մատնված արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը՝ ապահովելով երկրում քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունություն:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է:²

Ընդհանուր առմամբ փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնացումը պայմանական բնույթ է կրում և չի ենթարկվում պարզ բնորոշման: Ցանկացած դասակարգման մեջ պետք է նկատի ունե-

² Ягудин С.Ю., "Малые фирмы инновационной деятельности первичных организаций ВОИР/Теория и практика изобретательства и рационализации и патентно-лицензионной работы. М. "Российский Дом знаний", 1991г., 431

նալ այն պայմանը, թե ինչպես են իրականացվել ձեռնարկությունների չափորոշման գործընթացները և ինչ ցուցանիշներ են հաշվի առնվել ձեռնարկության չափերի որոշման և հետագայում նաև նրա դասակարգման համար: Հատկանշական է, որ տարբեր երկրներում ՓՄՁ բնութագրող միևնույն ցուցանիշը ունի տարբեր չափանիշներ: Սակայն գոյություն ունեն ընդհանուր տարածում գտած մի շարք չափանիշներ, որոնցով բնութագրվում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշման համար օգտագործվում են երեք տարբերակ կամ մոտեցում: Դրանք են՝

- ❖ քանակական,
- ❖ որակական,
- ❖ համակցված:

Փոքր և միջին ձեռնարկությունների չափորոշման ժամանակ, եթե օգտագործվում է քանակական մոտեցում, ապա շատ հաճախ վերլուծության համար որպես հիմնական չափորոշչային ցուցանիշ, որի հիման վրա տարբեր կազմակերպարկավական ձևի ձեռնարկությունները վերաբերում են փոքր և միջին ձեռնարկատիրությանը, հանդիսանում է հաշվետու տարում ձեռնարկություններում զբաղված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը: Որպես կանոն, առավել ընդհանուր քանակական չափորոշիչներից են աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, կանոնադրական կապիտալի չափը, ակտիվների մեծությունը, շրջանառության ծավալը:

Միաժամանակ մի քանի ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների որպես ՓՄՁ սուբյեկտ դասակարգվելը որոշվում է դրանց կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտի չափանիշներով: ՓՄՁ սուբյեկտ չեն համարվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատները և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները: Նշենք նաև, որ ներկայումս մշակման փուլում է օրենքի նոր նախագիծը, որը հնարավորություն կտա դասակարգել փոքր և միջին ձեռնարկությունները ոչ միայն ըստ աշխատողների թվաքանակի, այլև շրջանառության ծավալի և հաշվապահական հաշվեկշռում արտացոլված ցուցանիշների: Սա հնա-

րավորություն կտա ավելի հստակ տարանջատել փոքր և միջին ձեռնարկությունները:

Բանալի բաներ՝ ձեռնարկատիրական գործունեություն, ձեռնարկատեր, բիզնես, շահույթ, ձեռնարկատիրական միջավայր, փոքր և միջին ձեռնարկատիրություն, մրցունակություն, տնտեսական կայունություն, դրամական շրջանառություն:

Գրականության ցանկ

1. Մելքոնյան Մ. Ս., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, «Զանգակ», Երևան, 2007
2. Ягудин С.Ю., Малые фирмы инновационной деятельности первичных организаций ВОИР/Теория и практика изобретательства и рационализации и патентно-лицензионной работы, Российский Дом знаний, М. 1991

Резюме

Эта статья является попыткой исследовать различные аспекты предпринимательской деятельности, изучить его характер и основные характеристики. Предпринимательство является одной из форм экономической деятельности, которая основана на инновационных бизнес идеях по собственной инициативе и ответственности. Мы рассмотрели природу предпринимательской деятельности по трех разных точках зрения. как экономическая категория, как метод управления, как своего рода экономическое мышление. В предпринимательской деятельности необходимо учитывать следующие ключевые элементы: объект предпринимательской деятельности, субъект хозяйствования, бизнес цели, прибыли предприятия, бизнес среды. В статье в основном сосредоточен на малых и средних предприятиях, где в качестве основными единицами измерения используется количество, качественность и другие параметры. Малый и средний бизнес является

гарантией экономической и социальной стабильности каждой страны.

Ключевые слова: бизнес, малый бизнес, баланс спроса и предложение, переходная экономика, промышленность, валовой внутренний результат, бизнес-среда, рыночная экономика, налоговая и таможенная политика, кредитные гарантии.

Resume

This article is an attempt to explore the nature, the main characteristics and various aspects of business activity. Entrepreneurship is a form of economic activity, which is based on innovative business ideas and on the own initiatives and responsibilities of businessman. By three different perspectives the nature of entrepreneurial activity was examined: as an economic category, as a management method, as a kind of economic thinking. Entrepreneurial activity is necessary to consider the following key elements: the object of business activity, business entity, business purpose, business profits, business environment. The article mainly focuses on small and medium-sized enterprises, the basic unit of measurement of which the quantitative, qualitative and combined parameters are used. Small and medium-sized enterprises are of each country's economic and social stability guarantee.

Key words: gross domestic result, business environment, market economy, tax and customs policy, loan guarantees, venture funding, microfinance, leasing.

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

L. Դոկտյան

Ձեռնարկատիրական գործունեությունն իր կազմակերպման, մեկնարկի և զարգացման փուլերում անընդհատ հանդիպում է խոչընդոտների, որոնք ինքնուրույն լուծել չի կարող: Այդ նպատակին են ծառայում տարբեր տեսակի ձեռնարկատիրական գործունեության աջակցման ծրագրերը: Ուստի, այն երկիրը կունենա հաջողություն գործարարության բնագավառում, որտեղ նպաստավոր միջավայր է ստեղծված ձեռնարկատիրական գործունեության աջակցման տարբեր ծրագրերի իրականացման համար:

«Փոքր բիզնես» տերմինը, ընդհանուր առմամբ, տարածում է ստացել միայն անգլիախոս երկրներում: Մնացած արևմտաեվրոպական երկրներում և Ճապոնիայում ավելի հաճախ օգտագործում են «փոքր և միջին ձեռնարկություններ», իսկ Հնդկաստանում և մի շարք այլ ասիական երկրներում՝ «փոքր չափի արդյունաբերություն» տերմինները, որոնք, ըստ էության, արտահայտում են միևնույն բովանդակային իմաստը, կարող են օգտագործվել որպես հոմանիշներ, իրենց էությամբ և տնտեսական զարգացման գործընթացում ունեն միևնույն դերն ու նշանակությունը:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ-ները կազմում են տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը: Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալների՝ Ֆրանսիայում և Իտալիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ-ները կազմում են 99.8% Ճապոնիայում, 99.7% Շվեյցարիայում: ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր ունի նաև այդ երկրներում զբաղվածության կարգավորման, այսինքն՝ աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության պահպանման գործում: Օրինակ, Ֆրանսիայում ՓՄՁ-ում զբաղված են 7.9 մլն մարդ, որը կազմում է ակտիվ ազգաբնակչության 65 %-ը, իսկ Ճապոնիայում 31.2 մլն

մարդ, որը կազմում է աշխատատեղերի 69.5%-ը¹: Այս ցուցանիշը Շվեյցարիայում հասնում է 69.1%-ի, Գերմանիայում՝ 70%-ի, իսկ Իսպանիայում՝ 80%-ի:

Ինչ վերաբերում է անցումային տնտեսությամբ երկրներին, ապա վերջին տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ այնտեղ ՓՄՁ-ները որոշիչ դեր են խաղում տնտեսության կառուցվածքային բարեփոխման և արդյունաբերության վերականգնման գործում: Մասնավորապես, Հունգարիայում, Լեհաստանում, Սլովակիայում, Լիտվիայում, Չեխիայում, որտեղ իրականացվում է ՓՄՁ պետական աջակցության նպատակային քաղաքականություն, վերջին 5 տարիների ընթացքում ՓՄՁ սուբյեկտների ներդրումը վերը նշված երկրների ՀՆԱ-ում գրեթե քառապատկվել է: Ընդ որում, այս երկրներում ՓՄՁ-ներն ապահովում են աշխատատեղերի 45-60%-ը:

ՄԱԿ-ի փորձագետների տվյալներով, ՓՄՁ ոլորտում զբաղված է ամբողջ աշխարհի ազգաբնակչության մոտ 50%-ը: ՓՄՁ-ի քանակական աճն ու զարգացումը էապես նպաստում է ինչպես երկրների տնտեսական ու սոցիալական զարգացմանը, այնպես էլ քաղաքական կայունության ապահովմանը: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը առավել հրատապ է շուկայական տնտեսության անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի որ այն ապահովում է ուժեղ և դինամիկ մասնավոր հատվածի ձևավորում և հնարավորություն է տալիս կարճ ժամանակամիջոցում գրանցվել զգալի տնտեսական աճ՝ միաժամանակ մեղմացնելով անցումային փուլին բնորոշ անցանկալի երևույթները: Այդ մասին են վկայում հատկապես Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում իրականացվող ՓՄՁ-ի զարգացման ռազմավարության, քաղաքականության և ծրագրերի իրականացման և վերլուծության արդյունքները:

Ուսումնասիրված երկրներում մշակվել ու իրականացվել են ՓՄՁ զարգացման հստակ պետական քաղաքականություն և ռազմավարություն, իսկ մի շարք երկրներում, մասնավորապես նախկին սոցիալիստական երկրներում, ընդունվել են ՓՄՁ զարգացման վե-

¹ Small and Medium Enterprise Basic Law of Japan (Article 2, Paragraph 1) - www.sme.ne.jp

րաբերյալ հատուկ օրենքներ, որոնք կարգավորում են ու նպաստում գործունեությանը այդ ոլորտում:

Ընդհանուր առմամբ, եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ նրանցից շատերը չունեն ՓՄՁ զարգացմանն առնչվող հատուկ օրենքներ, ինչը պայմանավորված է կամ այդ երկրներում շուկայական տնտեսության բնականոն զարգացմամբ, կամ էլ նրանով, որ այդ երկրներում ՓՄՁ զարգացման քաղաքականությունը հանդիսանում է այդ երկրներում տարվող տնտեսական քաղաքականության անքակտելի մասը: Սակայն այդ երկրներում գործող մի շարք օրենքներում առկա է ՓՄՁ սուբյեկտների խրախուսման բաղադրյալը և դրսևորվում է ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ առանձնացված մոտեցում²:

Դիտարկված երկրներից շատերում ՓՄՁ պետական քաղաքականության մշակման հարցերով զբաղվում են արդյունաբերության և առևտրի, էկոնոմիկայի նախարարությունների ու այլ գերատեսչությունների համապատասխան ստորաբաժանումները, սակայն առանձին երկրներում ստեղծվել են ՓՄՁ պետական քաղաքականության իրականացման հարցերով զբաղվող առանձին պետական կամ կիսապետական կառույցներ:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դրանք այն երկրներն են, որտեղ ՓՄՁ ոլորտի զարգացման համար իրականացվում են պետական կարևորության լայնածավալ ծրագրեր, որոնց իրականացումը պահանջում է հատուկ մոտեցումների կիրառում և օպերատիվ կառավարում: ՓՄՁ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության համալիրը կազմված է 3 կարևոր բաղադրիչներից: Դա առաջին հերթին բարենպաստ գործարար միջավայրի ապահովումն է, որը ենթադրում է հարկային և մաքսային համապատասխան քաղաքականություն և այլն: Երկրորդը՝ տեխնիկական, այսինքն՝ գործարար տեղեկատվություն, խորհրդատվություն, կադրերի պատրաստում և վերապատրաստում, երրորդը՝ ֆինանսական, այսինքն՝ ֆինանսաբանկային համակարգ, վենչուրային և երաշխիքա-

² «ՌԴ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացման մասին» դաշնային օրենք՝ ընդունված 24.07.2007թ

յին հիմնադրամներ, միկրոֆինանսավորում, լիզինգ, ապահովագրություն, աջակցությունն է:

Անհրաժեշտ է նշել, որ այս բաղադրիչները փոխկապակցված են և փոխապայմանավորված են մեկը մյուսով: ՓՄՁ զարգացման համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ մի շարք երկրներում նշանակալի ձեռք բերումներ են գրանցվել ՓՄՁ ոլորտում և ընդհանուր առմամբ ամբողջ տնտեսությունում, ինչը պայմանավորված է այդ երկրներում վերոհիշյալ բոլոր բաղադրիչների առկայությամբ: Բացի պետական կառույցներից, բոլոր երկրներում գործում են նաև ՓՄՁ հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ՝ առևտրաարդյունաբերական պալատներ, ասոցիացիաներ, ֆեդերացիաներ, միություններ, ՓՄՁ զարգացման և աջակցման հիմնադրամներ և այլն:

Միջազգային փորձը վկայում է, որ ՓՄՁ զարգացումը մեծապես պայմանավորված է ՓՄՁ սուբյեկտների ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև ֆինանսական ապահովվածությամբ, ինչը հնարավոր է միայն ֆինանսական ծառայությունների շուկայի ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված պետական աջակցության, ինչպես նաև ֆինանսական շուկայի մասնակիցների միջև մրցակցության ինտենսիվության միջոցով:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՓՄՁ աջակցության պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող ֆինանսական աջակցության առավել լայն տարածում գտած և արդյունավետ գործող հիմնական ուղղություններն են վարկային երաշխիքների տրամադրումը, վենչուրային ֆինանսավորումը, միկրոֆինանսավորումը և լիզինգը: Այդ ուղղությամբ պետության կողմից իրականացվող միջոցառումները ներառում են որոշ երկրներում վարկային երաշխիքների, լիզինգային և վենչուրային կապիտալի հիմնադրամների ստեղծումը: Այդ երկրներից են Գերմանիան, Լեհաստանը, Էստոնիան և այլն³:

Ցանկացած երկրում, այդ թվում նաև ՀՀ-ում, ՓՄՁ առջև ծանացած կարևորագույն խնդիրներից մեկը շուկա մուտք գործելու ար-

³ SME-Promotion in Germany / an overview- Bettina Führmann, Duisburg, Juli 2006

գելքների հաղթահարումն է, ինչը պայմանավորված է ոչ միայն մասշտաբի էֆեկտի ընձեռած հնարավորություններով, այլև հարկային համակարգի «ճնշման» անհավասար բաշխմամբ և խոշոր կազմակերպությունների կողմից ագրեսիվ ճնշող քաղաքականության իրականացման հնարավորությամբ: Այստեղ մենք չենք բարձրաձայնում ՓՄՁ և խոշոր կազմակերպությունների մրցակցության անօրինական և քրեական պայքարի միջոցների հնարավոր կիրառման հնարավորության մասին, ինչը չնայած շատ կարևոր է, դուրս է սույն աշխատանքում դրված խնդիրների և նպատակների շրջանակներից: Սույն աշխատանքում դրված խնդիրների տեսակետից կարևոր է հարկային այնպիսի քաղաքականության իրականացման միջոցների բացահայտումը, որոնք հնարավորություն կտան ճիշտ նպատակաուղղել հարկային արտոնությունների և պարզեցված ռեժիմների հասցեականությունը, որպեսզի խոշոր կազմակերպությունները հնարավորություն չունենան արհեստական մասնատման միջոցով էլ ավելի շահեկան դիրքում հայտնվել ՓՄՁ նկատմամբ: Իհարկե, նման չարաշահումներից խուսափելու լավագույն և միանշանակ գործուն մեխանիզմը նման արտոնությունների իսպառ կասեցումն է, սակայն այդ դեպքում իրապես ՓՄՁ-ները, որոնք որևէ կերպ փոխկապակցված չեն խոշորների հետ, կհայտնվեն մրցակցային անհավասար պայմաններում: Այդ պատճառով չափազանց կարևոր են հարկային բեռի համաչափ բաշխման խնդիրները:

Շուկայական տնտեսության անցման շրջանում գտնվող երկրներում պետության միջամտությունը ձեռնարկատիրական գործունեության ոլորտին հատկապես արդարացված է, երբ թերզարգացած շուկայի առկայությունը մեծապես ներազդում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ֆինանսական և այլ կարգի աջակցություններ ստանալու վրա: Ահա թե ինչու անցման շրջանում գտնվող շատ երկրներում, գիտակցելով ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների որոշիչ դերը երկրի տնտեսական զարգացման գործում, ընդունել են ձեռնարկատիրության զարգացման ազգային քաղաքականություն և ռազմավարություններ, որոնց կիրառումը զգալի ազդեցություն է ունեցել երկրի տնտեսության վրա: Անհրաժեշտ է նշել նաև, որ այդպիսի երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրության քաղաքականության արդյունավետ իրականացումը մե-

ծապես կախված է համապատասխան ենթակառուցվածքի գոյությունից: Գրեթե բոլոր անցումային և զարգացող երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը ոչ միայն բաղկացած է հատուկ նպատակ ունեցող գործակալություններից և կենտրոններից, այլև ներառում է ավելի ընդհանրական տնտեսական կառուցվածքներ և մեխանիզմներ: Կարելի է առանձնացնել փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ենթակառուցվածքների երեք տարբեր մակարդակներ՝

1) Մակրոմակարդակ՝ ընդհանրական հաստատություններ, ինչպիսիք են կառավարությունը, համապատասխան նախարարությունները և նրանց ստորաբաժանումները,

2) Միջին մակարդակ՝ հասարակական և պետական հաստատություններ, ինչպիսիք են միությունները, առևտրի պալատները և ասոցիացիաները,

3) Միկրոմակարդակ՝ կազմակերպություններ, որոնք հիմնադրվել են փոքր և միջին ձեռնարկություններին հատուկ նպատակային օժանդակություն իրականացնելու համար:

Բանալի բաներ՝ գործարարություն, փոքր բիզնես, առաջարկի և պահանջարկի հավասարակշռություն, անցումային տնտեսություն, արդյունաբերություն, համախառն ներքին արդյունք, գործարար միջավայր, շուկայական տնտեսություն, հարկային և մաքսային քաղաքականություն, վարկային երաշխիքներ, վենչուրային ֆինանսավորում, միկրոֆինանսավորում, լիզինգ:

Գրականության ցանկ

1. «Ռուսաստանի Դաշնությունում փոքր և միջին բիզնեսի զարգացման մասին» դաշնային օրենք՝ ընդունված 24.07.2007թ.:
2. SME-Promotion in Germany / an overview- Bettina Föhrmann, Duisburg, Juli 2006
3. Small and Medium Enterprise Basic Law of Japan (Article 2, Paragraph 1) - www.sme.ne.jp

Резюме

Эта статья является попыткой изучить влияние опыта на предпринимательскую деятельность. Бизнес имеет успех, когда окружающая среда создается в поддержку бизнес-программ. В экономически развитых странах малые и средние предприятия составляют 97-99 процентов от общего числа хозяйствующих субъектов. Страны с переходной экономикой малые и средние предприятия играют решающую роль в восстановлении экономики. В секторе малого и средних предприятий заняты около половины населения земного шара. Многие европейские страны, где культивируется на малых и средних предприятий, нет никаких специальных планов их развития, а развивающиеся страны мельниц в штате политике в области развития малого и среднего бизнеса и стратегии. Международный опыт показывает, что малые и средние предприятия, в основном в связи с развитием в краткосрочной и долгосрочной финансовой безопасности субъектов хозяйствования. Меры, принимаемые правительством, включают кредитные средства, венчурные фонды и лизинг.

Ключевые слова: предпринимательство, предприниматель, прибыль предприятия, предпринимательская среда, малый и средний бизнес, конкурентоспособность, экономическая стабильность, движение денежных средств.

Resume

This article is an attempt to examine the effect of experience on entrepreneurial activity. Business have success in countries, where environment is created to support business programs. In economically developed countries, small and medium enterprises make up 97-99 percent of the total number of economic entities. In countries with economies in transition small and medium-sized enterprises play a decisive role in the economic recovery and in the structural reform of the industry. Small and medium-sized enterprise sector employed about half of the world's population. Many European countries, where it is

cultivated by small and medium-sized enterprises, there are no special plans for their development, while developing countries mills in the state of small and medium enterprises development policy and strategy. International experience shows that small and medium-sized enterprises, largely due to the development of short and long-term financial security of the business entities. Measures implemented by the government include loan funds, venture capital funds and leasing.

Key words: entrepreneurship, entrepreneur, business profits, entrepreneurial environment, small and medium Business, competitiveness, economic stability, cash flows.

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Ա.Հ. Դոնոյան

Ժամանակակից պայմաններում ապրանքային ռազմավարության իրագործման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական պրակտիկայում լայն կիրառություն ստացած հետևյալ այլընտրանքային տարբերակները.

- ապրանքի սպառողական հատկությունների ավելացում,
- թողարկվող արտադրանքի անվանացանկի և տեսականու ընդլայնում:

Հաշվի առնելով ապրանքի (արտադրանքի) սպառողական հատկությունների ավելացման ռազմավարության մշակման միջազգային փորձը և մեքենաշինության առանձնահատկությունները՝ մեր կողմից մշակվել է մրցակցային ռազմավարական մոտեցում, որը նախադրյալներ կստեղծի մեքենաշինական կազմակերպություններում թողարկվող արտադրանքի վերաբերյալ առաջարկությունների մշակման համար: Այդ մոտեցման հիմքում ընկած է տնտեսական ցուցանիշների համախումբը, որը սահմանում է արտադրանքի մրցունակությունը դրանց ձեռքբերման և շահագործման ժամանակ:

Նկատենք, որ կազմակերպության մրցունակության գնահատականը շուկայում սպառողն իրականացնում է միջնորդավորված՝ տվյալ արտադրողի արտադրանքը գերադասելով նրա մրցակցի արտադրանքից: Ուստի կազմակերպության ընդհանրական շուկայական մրցունակությունը նրա արտադրանքների ընդհանրական մրցունակությունն է: Հետևաբար մրցունակության գնահատումը ապրանք արտադրողին հետաքրքրում է և օգտակար է մրցակցային ռազմավարություն մշակելու և լավագույն արդյունք ստանալու համար:

Հարկ է նշել, որ կազմակերպության մրցունակության գնահատման ընդհանրական մեթոդաբանությունը ներկայումս բացակայում է, քանզի կազմակերպության մրցակցային դիրքը գնահատելու համար պետք է քանակապես որոշել, թե հաջողության հասնելու յու-

րաքանչյուր կարևոր գործոններից (մրցակցություն) որոնք են նրա տիրապետության տակ:

Ռազմավարական կառավարման տերմինաբանության մեջ հաջողության հասնելու կարևոր գործոնների ցանկը, ըստ Ա. Ստրիկ-լենդի և Ա. Տոմպսոնի, ներառում է.

- ապրանքի որակը և սպառողական բնութագիրը,
- հեղինակությունը կամ իմիջը,
- արտադրական հնարավորությունները,
- առաքման համակարգը (դիլերային ցանցը),
- մարքեթինգը և գովազդը,
- ֆինանսական կայունությունը,
- ծախսերի համեմատական մեծությունը,
- սպառողների սպասարկում (սերվիսը) և այլն:

Մեթոդաբանական տեսակետից կազմակերպության մրցունակության գնահատման համար կարևոր նշանակություն ունի մրցակցային առավելության հասնելու կարևոր գործոնների ցանկի ձևավորումը, որը սովորաբար սահմանվում է մասնագետների, տնտեսագետների և կազմակերպության ղեկավարների կողմից: Այդ գնահատականը իրականացվում է 10 բալանոց սանդղակով: Այնուհետև մրցունակության ընդհանուր վարկանիշը ստանալու համար որոշվում են յուրաքանչյուր մրցակցի անհատական վարկանիշի միջին գումարը կամ յուրաքանչյուր գործոնի կշիռը: Կազմակերպությունը, որն ունի ամենաբարձր ընդհանուր վարկանիշ, ապահովում է ամենակայուն մրցակցային դիրք: Ուստի որքան մեծ է կազմակերպության և նրա մրցակիցների ընդհանուր վարկանիշների տարբերությունը, այնքան մեծ է նրա մրցունակությունը:

Տվյալ մոտեցման առավելությունները՝ կապված գործոնների տարբերակման մոտեցման հետ, մեր կարծիքով պատասխանում է այն հարցին, թե ինչպիսի ծախսերով է ստացվում նման արդյունք: Ստացված արդյունքի և կատարված ծախսերի համեմատությունը թույլ է տալիս արտադրողին գնահատել իր ընտրած մարկետինգային ռազմավարության արդյունավետությունը:

Այսպիսով՝ կազմակերպության մրցունակությունը մի համեմատական բնութագիր է, որն արտացոլում է տվյալ կազմակերպության զարգացման գործընթացի առավելությունն իր մրցակիցներից ինչ-

պես սպառողների պահանջմունքի բավարարման մակարդակով, այնպես էլ արտադրատնտեսական գործունեության արդյունավետությամբ: Տվյալ բնորոշումից հետևում է, որ կազմակերպության մրցունակությունն իր մեջ ներառում է ինչպես արտադրանքի (ծառայությունների) մրցունակության ընդհանրական ցուցանիշը, այնպես էլ գործունեության տնտեսական արդյունավետությունը:

Արտադրանքի մրցունակության մակարդակը անհրաժեշտ է դիտարկել կազմակերպության կողմից թողարկվող բոլոր արտադրատեսակների համար

$$J_i = \sum J_i x \varphi,$$

որտեղ J_i -ն i -րդ արտադրանքի մրցունակությունն է, φ -ն որոշակի ժամանակահատվածում i -րդ արտադրանքի տեսակարար կշիռն է կազմակերպության կողմից թողարկվող ամբողջ արտադրանքի ծավալի մեջ:

Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա հարկ է նշել, որ արտադրության արդյունավետության գնահատումը կարելի է բնութագրել արտադրված արդյունքի և ծախսերի հարաբերությամբ: Արդյունքները և ծախսերը չափվում են բնեղեն, աշխատանքային և արժեքային արտահայտությամբ: Արդյունքները հանդես են գալիս տարբեր ձևերով՝ մրցունակ արտադրանքի ստեղծում, թողարկվող արտադրանքի ծավալի աճով պայմանավորված իրացումից հասույթ, նոր արտադրատեսակների քանակ:

Հարկ է նշել, որ ամեն մի կազմակերպության գործունեության արդյունավետությունը որոշելիս կառուցվում է ցուցանիշների՝ իրենց հատուկ համակարգ՝ ելնելով ունեցած տեղեկություններից և տնտեսական արդյունավետության բարձրացման խթաններից:

Ակնհայտ է, որ կազմակերպության մրցունակության վերլուծությունը ներառում է նաև ֆինանսական դրության ուսումնասիրությունը, ակտիվների կառուցվածքը, այն է՝

- բաժնետոմսերի շուկայական գինը,
- ներդրումային ռեսուրսները,
- դրամական հոսքերը,
- վաճառքի ծավալների և օգտագործվող ակտիվների հարաբերությունը,

- հիմնական և շրջանառու կապիտալի հարաբերակցությունը,
- նոր ներդրումներից շահույթը,
- սեփականության չափը,
- շահաբաժինների մեծությունը և այլն:

Ցուցանիշների դիտարկած համախումբը բազմակողմանի բնութագրում է արտադրական գործընթացի բազմաբնույթ արդյունքը: Դրա հետ մեկտեղ պրակտիկայում նշված ցուցանիշների կառավարումը նպատակահարմար է հանգեցնել մեկ ընդհանուր չափանիշի: Սակայն այդ չափանիշի ընտրությունը ներկայումս կապված է որոշակի դժվարությունների հետ, քանի որ լուծված չեն մի շարք տեսական և մեթոդական հարցեր:

Տնտեսական պրակտիկայում ո՛չ արտադրողականությունը, ո՛չ շահութաբերությունը և ո՛չ էլ ընդհանուր ծախսերի արդյունավետությունն առանձին վերցրած չեն բնութագրում արտադրության արդյունավետությունը, չնայած նրան, որ դրանք պրակտիկայում սերտ փոխկապակցված են և մեկի աճը պայմանավորված է մյուսներով: Մյուս կողմից կազմակերպության մրցակցային դիրքի բարելավումը շուկայական տնտեսության պայմաններում պահանջում է, որ այն իր տրամադրության տակ գտնվող պաշարները օգտագործի արդյունավետ: Հետևաբար ձեռնարկության գործունեության արդյունավետության փոփոխության վրա տարբեր գործոնների ազդեցությունը գնահատելիս մեր կարծիքով նպատակահարմար է կիրառել արտադրության արդյունավետության ինտեգրալային ցուցանիշը, որը բնութագրվում է թողարկված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների ծավալի և ծախսված ռեսուրսների հարաբերությամբ: Նշված հարաբերությունը, որով հնարավոր է գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը բխում է արդյունավետության բուն էությունից, որը հանգում է տրված ծախսերի դեպքում առավելագույն արդյունքի ստացմանը, որը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$J_{\text{э}} = \frac{\Pi_{\Sigma}}{3_{\Sigma}} \rightarrow \max$$

որտեղ $J_{\text{э}}$ - արդյունավետության ինտեգրալային ցուցանիշն է,

$\Pi \Sigma$ -ն ստացված արդյունքն է, 3Σ -ն՝ տվյալ արդյունքն ապահովող տարբեր տեսակի ընդհանրական ծախսերն են: Համաձայն այս մոտեցման արտադրության արդյունավետությունը կբարձրանա ի հաշիվ աշխատանքի արտադրողականության, ֆոնդահատույցի, նյութահատույցի, արտադրանքի որակի բարձրացման և թողարկվող արտադրանքի վրա կատարված ծախսերի նվազեցման:

Կազմակերպության գործունեության արդյունավետության գնահատման համար մեր կողմից խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ բանաձևը.

$$J_3 = \frac{Q}{L + M + A},$$

որտեղ Q - ն ապրանքային արտադրանքի ծավալն է, կամ էլ զուտ աշխույթի մեծությունն է,

L- ը՝ աշխատանքային ծախսումները,

M- ը՝ նյութական ծախսումները,

A-ն՝ տարեկան ամորտիզացիայի մեծությունը:

Կազմակերպության մրցունակությունը (արտադրության արդյունավետության մասով), համեմատած մոտակա մրցակցի հետ, կարելի է գնահատել ըստ արդյունավետության ինդեքսի, այսինքն՝

$$i = J_3 / J_{\text{մրցկ.}}$$

Առաջարկված մեթոդով մրցունակության գնահատման համար տեղեկատվական բազա են հանդիսանում կազմակերպության տարեկան հաշվետվությունները:

Հարկ է նշել, որ մեթոդաբանական տեսակետից նպատակահարմար չէ կազմակերպության մրցունակության գնահատման ինտեգրալային ցուցանիշը որոշել կազմակերպության կողմից թողարկվող արտադրատեսակների ինդեքսների և գործունեության արդյունավետության ցուցանիշի արտադրյալով, քանի որ այդ ցուցանիշները գտնվում են կորելացիոն կապի մեջ:

Մեր կարծիքով մեթոդաբանական տեսակետից կազմակերպության մրցունակությունը ընդհանուր տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$I_3 = \beta_1 J_t + \beta_2 i_3,$$

որտեղ J_i -ն ապրանքազանգվածի (կամ արտադրատեսակների) մրցունակության ինդեքսն է, i_s -ն մոտակա մրցակցի հետ համեմատած գործունեության արդյունավետության ինդեքսն է, β - կախվածության գործակիցն է:

Այսպիսով առաջադրված մոտեցումը հնարավորություն է ընձեռում կազմակերպություններին մշակելու արդյունավետ ռազմավարական քաղաքականության շուկայում նոր արտադրատեսակների առաջխաղացման համար:

Բանալի բառեր' արտադրանք, շուկա, մրցակցություն, մրցունակություն, առաջխաղացում, արդյունավետություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Светунков С.Г., Литвинов А.А., Конкуренция и предпринимательские решения. – Ульяновск, 2000. - 256 с.:
2. Спиридонов И.А., Международная конкуренция и пути повышения конкурентоспособности экономики России: Учебное пособие.-М., ИНФРА- М, 1997.- 304 с:
3. Хоминич И.П., Финансовая стратегия компаний: Научное издание. -М., Изд- во Рос. Экон. Акад., 1998.-156 с:
4. Юданов А.Ю. Конкуренция: теория и практика.-М.: АКААИС, 1996.-384 с.

Резюме

В статье рассмотрены современные проблемы разработки конкурентной стратегии. Выявлены современные подходы конкурентоспособности организации. Разработан метод оценки конкурентоспособности как для организации так и для новой продукции, который дает возможность организациям разрабатывать эффективный подход стратегической политики продвижения нового товара на рынок.

Ключевые слова: продукция, рынок, конкуренция, конкурентоспособность, продвижение, эффективность.

Resume

In the article there are discussed the modern problems of the competitiveness strategies, the modern approaches to the organization competitiveness are discovered. There is elaborated the competitiveness evaluation method both for the organization as well as for the product, which gives a possibility to the organizations to elaborate efficient strategy for market promotion of the new product.

Key words: product, market, competition, competitiveness, promotion, efficiency.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վ. Ա. Երանոսյան

Տնտեսությունում անհրաժեշտ է դրամական միջոցների վերաբաշխում՝ նրանցից, ովքեր տնօրինում են դրանք, դեպի նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Ավանդաբար դրամական միջոցները կուտակում է բնակչությունը, իսկ դրա կարիքը զգում են ձեռներեցները և պետությունը, այսինքն խոսքը գնում է խնայողությունների և ներդրումների փոխկապվածության մասին: Տնտեսական աճը կարգավորող հիմնական գործոնը ներդրումներն են, որոնք մեծացնում են ամբողջական պահանջարկը, հետագայում նաև ամբողջական առաջարկը:

Մյուս կողմից՝ «Այն չափով, որ չափով մարդիկ խնայում են, այսինքն՝ հրաժարվում են ընթացիկ սպառումից, հասարակությունը կարող է իր ռեսուրսները ուղղել նոր կապիտալագոյացությունների»:

Ներկայումս առավել տարածված է խնայողությունների սահմանումը՝ որպես անձնական եկամտի մասի, որը ընթացիկ սպառողական կարիքների համար չօգտագործված է մնում և կուտակվում է²:

Խնայողությունների և եկամտի կապն ակնհայտ է: Հենց եկամուտներն են ընտանիքի դրամական պահուստների ձևավորման և սպառման հիմնական աղբյուրը, սակայն չի կարելի խնայողությունները նույնացնել եկամուտների հետ: Խնայողությունների ձևավորումը, ինչպես եկամտի ուղղումը ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը, եկամտի օգտագործման եղանակներից է: Որոշակի պայմաններում եկամտի օգտագործումը կարող է եկամուտ բերել, օրինակ՝ ավանդադրել բանկում: Խնայողությունների ձևակերպումը՝ որպես անձնական եկամտի մասի, քննադատվում է այն տեսակետից, որ այդ բնույթի վիճակագրական ցուցանիշները վկայությունն են խնայողությունների աճի, ոչ թե ծավալի: Խնայողությունների այդպիսի մեկնաբանումը՝ որպես եկամտի սառեցված մասի, կատարյալ չէ և տեսական, և մեթոդաբանական իմաստով, քանի որ անտեսում

¹ П. Самуэльсон «Экономикс», М.. «Алфавит», 1993 г.

է եկամտի և խնայողությունների միջև եղած որակական սահմանը, շփոթում է երկու ինքնուրույն տնտեսագիտական հասկացություններ, զրկում է նրանց առանձնահատուկ էական գծերից:

Մեր կարծիքով, առավել հետաքրքրական է հետևյալ ձևակերպումը, ըստ որի բնակչության դրամական խնայողությունները աստիճանաբար ձևավորվող և ընթացիկ եկամուտների մի մասի հաշվին ձևավորված դրամական միջոցների ամբողջությունն են, որն անհրաժեշտ է բնակչությանը սպառման գործընթացի անընդհատության ապահովման և ավելացման համար:³

Խնայողությունների կապը սպառման հետ խնայողությունների էության կարևոր տարրն է, որը հետաքրքրում է հետազոտողներին: Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տարածված կարծիք է այն, որ խնայողությունները գոյանում են ընթացիկ սպառման սահմանափակման արդյունքում: Այս տեսակետն են հայտնում մի շարք տնտեսագետներ⁴: Այսպիսի տեսակետը, մեր կարծիքով, բավական վիճելի է: Խնայողությունների գոյացումը իսկապես կարող է կապված լինել ընթացիկ սպառման որոշակի սահմանափակման հետ: Սակայն այս կապը անխուսափելի և պարտադիր չէ և դրանով չի սահմանագծվում խնայողությունների ձևավորման մեխանիզմը: Դրամական կուտակումներ կարող են առաջանալ եկամտի շեշտակի ավելացմանը զուգընթաց կամ խոշոր, ոչ պարբերական վճարումների հաշվին (օրինակ՝ պարգևատրում, նվիրատվություն, ժառանգություն, վիճակախաղի շահում և այլն): Այս դեպքում խնայողությունների ձևավորումը կարող է և չուղեկցվել ընթացիկ սպառման ծավալի բացարձակ նվազմամբ: Այսպիսի մոտեցումը բավականաչափ հիմնավոր չէ նաև մեթոդաբանական առումով, քանի որ այս դեպքում խնայողություններին հատկացվում է պասիվ դեր, հաստատվում է նրանց ենթակայությունը սպառողական ծախսերի նկատմամբ: Այստեղ ենթադրվում է, որ ամբողջ եկամուտը, սովորական պայմաններում, պետք է օգտագործվի ընթացիկ սպառման վրա և եթե ինչ-որ պատճառներով դա տեղի չի ունենում, ապա դրա մի մասը խնայվում է: Խնայողությունների առաջացումն այսպիսի մեկնաբանմամբ դիտարկվում է որպես շեղում բնակչության եկամուտների և ծախսերի հավասարության «բնականոն» վիճակից: Այդ դեպքում, այսինքն՝ եթե սպառման ծախսերը տատանվեին եկամտի փո-

փոխությանը համանման, ապա խնայողությունների ձևավորումը իսկապես կարող էր տեղի ունենալ միայն ընթացիկ սպառման կրճատման հաշվին:

Եկամուտների և ծախսերի հավասարությունը դիտվում է միայն բնակչության ցածր եկամտային խմբերում, որոնց աշխատավարձը հազիվ է բավարարում առաջնային պահանջմունքների բավարարմանը: Որպես կանոն, նրանք չեն ձևավորում խնայողություններ, քանի որ չունեն դրամական միջոցների ազատ մնացորդ և հնարավորություն չունեն էականորեն կրճատելու իրենց սպառումը: Ընդհակառակը, եկամուտների աճին զուգընթաց հնարավորություն է առաջանում բարելավել իրենց սպառումը, եկամուտն օգտագործել ոչ միայն անհրաժեշտ պահանջմունքների բավարարման, այլև ավելի բարձր մակարդակի պահանջմունքների համար: Բազմաթիվ հետազոտողներ, նկատելով այս պահը՝ տարբեր պահանջմունքների բավարարման և եկամուտների հետ դրանց կապի օրինաչափությունները, փնտրում են խնայողությունների ձևավորման օբյեկտիվ պատճառները:

Փորձը ցույց է տալիս, որ եկամուտների աճին զուգահեռ, որը հենց խնայողությունների ձևավորման հնարավորություն է, տեղի է ունենում բնակչության սպառողական ծախսերի որոշակի աճ: Այն պայմանավորված է սպառման որակի բարելավմամբ և նոր պահանջմունքների յուրացմամբ: Այդ պատճառով, եկամուտների աճի դեպքում խնայողությունների ձևավորումը, որպես կանոն, ուղեկցվում է սպառման որոշակի ընդլայնմամբ: Բացառիկ են այն դեպքերը, երբ ամբողջ եկամտի հավելաճն ուղղվում է կամ սպառման ընդլայնմանը, կամ խնայողությունների ձևավորմանը: Բնակչության բարձր եկամտաբեր կամ մի խմբից մյուսին անցնող խմբերում խնայողությունների ձևավորման մասին կարելի է խոսել միայն ընթացիկ սպառման հարաբերական կրճատման հետ կապված, որն աճում է ավելի ցածր տեմպերով, քան եկամտի ավելացումը:

Եկամուտների և սպառողական ծախսերի անհամամասնական աճի մասին թեզը տնտեսագիտության տեսությանը հայտնի է վաղուց: Զ. Մ. Քեյնսը «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատության մեջ մեկնաբանելով սպառման ֆունկցիան, գրում է, «...իրական եկամտի աճին զուգահեռ, որպես կանոն,

ավելի բարձր է դառնում եկամտի այն մասի տեսակարար կշիռը, որն ուղղվում է խնայողություններին: Կլինի այդ մասը մեծ կամ փոքր՝ միևնույն է, մենք կարող ենք տեսնել հիմնական հոգեբանական օրենքը, որ հատուկ է ցանկացած հասարակության՝ իրական եկամտի աճին զուգընթաց այն չի մեծացնում իր սպառումը հավելաճի ամբողջ գումարի չափով և հետևաբար կխնայվի առավել նշանակալի բացարձակ գումար...»ⁱ:

Բացահայտելով կարևոր տնտեսական օրինաչափություն եկամտի աճի և բնակչության ծախսերի համամասնությունների վերաբերյալ, Ջ. Մ. Քեյնսը, այնուամենայնիվ, չի մանրամասնել իր բացահայտած հոգեբանական օրենքի գործունեության մեխանիզմը, ենթադրելով, որ յուրաքանչյուր անհատի խնայողությունները որոշվում են այս կամ այն չափով գումարի ծախսից հրաժարվելու «ազատ որոշմամբ»: Այս մեկնաբանմամբ, խնայողությունների ձևավորումը ներկայանում է որպես առանձնահատուկ օրենքի բնույթ ունեցող գործընթաց, սպառողների սուբյեկտիվ որոշումների տարերային արդյունք: Բացի դրանից, դժվար չէ նկատել, որ վերոնշյալ դատողությունները ներառում են միայն կուտակման գործընթացի մի մասը, այսինքն հատկապես խնայողությունների ձևավորման հնարավորությունը՝ կապված սպառողի եկամուտների աճի հետ:

Շուկայական տնտեսությունում խնայողություն կատարելը դառնում է տնտեսավարող սուբյեկտների տնտեսական վարքագծի անբաժանելի հատկանիշը: Հատկանշական է, որ տնտեսագիտական առումով ընդունված է այն մեկնակետը, թե խնայողությունը եկամուտների գերազանցումն է սպառմանը: Խնայողությունը եկամտի այն մասն է, որը տվյալ ժամկետում սպառման չի ենթարկվումⁱⁱ:

Խնայողությունների վերաբերյալ տեսությանը մշտապես եղել են տարբեր մոտեցումներ: Այսպես, համաձայն նոր դասական տեսության, սպառողը ձգտում է իր համար առավելագույն չափով մեծացնել ամբողջական օգտակարությունը: Ըստ Ի. Ֆիշերի, սպառող-

ⁱ Ջ. Մ. Քեյնս, «Զվաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն», Երևան, «Տիգրան Մեծ», 2006թ., էջ 107:

ⁱⁱ Курс экономической теории: Учеб. / Под ред. М. И. Плотницкого.- Мн.: «Интерпрессервис», «Миссанта», 2003., с 139

ները հոգ են տանում ոչ միայն տվյալ պահի օգտակարության, այլև որոշակի ժամանակահատվածի վերաբերյալ: Դրա համար էլ նրանք խնայողություն են կատարում՝ օգտակարության մի մասը տվյալ պահից փոխանցելով ապագայինⁱ:

Ինչպես հիմնավորվեց, սպառման և խնայողությունների վրա ազդող ամենակարևոր գործոնը եկամտի մակարդակն է: Տնային տնտեսության եկամուտը բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշ է: Տնային տնտեսության ամբողջական եկամուտների ներքո հասկացվում են դրամական և ոչ դրամական եկամուտները: Միանշանակ է, որ տնային տնտեսությունների խնայողություններ կատարելու ներուժն ուղիղ համեմատական է վերջիններիս դրամական եկամուտների աճին:

«Ազգային հաշիվների համակարգում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են առևտրային բոլոր կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և չկազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարանային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության առևտրային հիմնարկներում սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը, ինչպես նաև այն ծախսերը, որոնք ուղղված են տնային տնտեսությունների՝ սեփական սպառման համար արտադրած և որպես աշխատանքի վարձատրություն բնեղեն տեսքով ստացած ապրանքների և ծառայությունների սպառմանը (բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայություններ)»ⁱⁱ:

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամտի վերաբերյալ, մեր կողմից կատարված վերլուծությունները վկայում

ⁱ Экономическая теория: Учеб. пособие для преподавателей вузов и аспирантов /Под ред. Н.И.Базылева, С.П.Гурко.- Мн.: «Интерпрессервис», 2002., с 201

ⁱⁱ «ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2012, Վիճակագրական ժողովածու, Երևան 2012, էջ 237

են՝ որ ՀՀ-ում 2006-2010 թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը համախառն տնօրինվող եկամտում ունեցել է հետևյալ պատկերը՝ 92.1%, 95.5%, 93.2%, 107.0% և 114.2%: Հատկանշական է, որ վերջնական սպառման ծախսերի շարունակական աճի և համախառն տնօրինվող եկամտի դանդաղ աճի արդյունքում՝ 2006-08թթ. արձանագրվել է համախառն խնայողությունների բավական ցածր մակարդակ, իսկ արդեն 2009-10թթ. արձանագրվել է բացասական համախառն խնայողություն, քանի որ վերջնական սպառման ծախսերը գերազանցել են համախառն տնօրինվող եկամուտը՝ համապատասխանաբար 165.1 մլրդ դրամով և 353.6 մլրդ դրամով:

Ըստ էության՝ տնային տնտեսությունների խնայողությունների վերաբերյալ առկա 20 տարվա վիճակագրությունից¹⁰ պարզ է դառնում, որ գրեթե 14 տարի ՀՀ-ում տնային տնտեսություններն ունեցել են բացասական խնայողություններ, ինչը բացասական ազդեցություն է ունեցել ինչպես տնային տնտեսությունների կենսամակարդակի, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացման վրա:

Տնային տնտեսությունների համախառն խնայողությունների ցածր և հատկապես բացասական մեծությունը վկայում է, որ վերջնական սպառման ծախսերի շարունակական աճը չի ուղեկցվել դրամական եկամուտների ավելացմամբ, իսկ այն, որ վերջնական սպառման ծախսերը գերազանցում են համախառն տնօրինվող եկամուտը, արդեն իսկ վկայում է, որ տնային տնտեսություններն իրենց սպառումն ավելացրել են հիմնականում մասնավոր տրանսֆերտների, փոխառությունների և բանկային վարկերի հաշվին:

Այսպիսով, դիտարկելով, մի կողմից, տնային տնտեսությունների խնայողությունների վերաբերյալ առկա պաշտոնական վիճակագրությունը, իսկ մյուս կողմից՝ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց ավանդների դինամիկան, կարելի է նշել, որ թեև 2008-12թթ.ⁱⁱ տնային տնտեսությունների խնայողություններն ունեցել են ցածր և նույնիսկ բացասական մակարդակ, այնուամենայնիվ առևտրային


ⁱ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2012, Վիճակագրական ժողովածու, Երևան, 2012, էջ 97:

ⁱⁱ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, էջ 103:

բանկերում արձանագրվել է ֆիզիկական անձանց հատկապես արտարժույթային ավանդների ծավալի աճ, որի արդյունքում տնային տնտեսությունների բանկային ավանդները շարունակում են դիտարկվել որպես բանկերի կողմից ներգրավման կարևորագույն աղբյուր:

Գծապատկեր 1

Տնային տնտեսությունների համախառն տնօրինվող եկամտի, վերջնական սպառման ծախսերի և համախառն խնայողությունների դինամիկան 2008-2012թթ.¹²



Սակայն առևտրային բանկերում տնային տնտեսությունների ավանդների մակարդակի աճը դեռևս չի կարող համարվել վերջիններիս դրամական եկամուտների ավելացման արդյունք, քանի որ, ինչպես երևում է 2007-11թթ. տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական ամբողջական եկամուտների, սպառողական ծախսերի կազմի և կառուցվածքի վերաբերյալ առկա վիճակագրությունից, բնակչության մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների և սպառողական ծախսերի նման մակարդակի պայմաններում, ըստ էության, տնային տնտեսությունների խնայողություններ կատարելու ներուժը <<-ում թույլ է:

Սպառումն ու խնայողությունը փոխկապակցված են, ուստի սպառման մակարդակի վրա ազդող գործոնները միաժամանակ ազդում են նաև խնայողությունների վրա: <<-ում տնային տնտեսությունների խնայողությունները դեռևս հեռու են երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների վերարտադրության աղբյուր համարվելուց, իսկ ա-

նաջիկա տարիներին ՀՀ տնտեսության ներքին ռեսուրսների վրա հիմնված զարգացման ապահովման նպատակը ենթադրում է առաջին հերթին բնակչության դրամական եկամուտների ավելացում:

Բանալի բառեր՝ խնայողություններ, սպառում, եկամուտ, ավանդ, տնային տնտեսություն, վերջնական սպառման ծախսեր, դրամական եկամուտներ:

Резюме

Представлены подходы различных ученых на счет потребления и сбережения, о том что сбережения представляют собой превышение доходов над потреблением. Обсуждая связь между потреблением и сбережениями было представлено, что основным фактором, влияющий на них является уровень доходов. Сбережения населения были рассмотрены как целостность денежных средств, образованные постепенно и от части текущих доходов. Анализируя статистические данные РА было указано, что сбережения домохозяйств еще не превратилась в долгосрочный источник воспроизводства для финансовых ресурсов.

Ключевые слова - сбережения, потребление, доход, депозит, домашнее хозяйство, расходы конечного потребления, денежная доходы.

Resume

Consumption and savings approaches of different scholars were presented, on hypothesis that savings are exceed of income over consumption. Discussing the connection between consumption and savings it is presented that the main factor affecting the above mentioned is the income level. Household savings were considered as integrity of funds formed gradually from the incomes of population and on the basis of one part of current earnings. By the analysis of statistical data of RA t has been shown, that household savings haven't yet turned into long-term reproduction source for financial resources.

Key words: savings, consumption, income, deposit, household, final consumption costs, monetary income.

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հ.Կ. Դավթյան, Է.Հ. Նասիլյան

Շուկայական տնտեսության պայմաններում արտադրանքի մրցունակության ապահովումը համարվում է ձեռնարկության կենսունակության կարևորագույն պայմանը: Ձեռնարկությունը կարող է ընդլայնել իր արտադրական պոտենցիալը միայն այն դեպքում, երբ նրա կողմից արտադրված բարիքները մրցունակ են: Մրցունակության կարևոր բաղկացուցիչ տարրերից է արտադրանքի որակը: Որակի սահմանման հարցում չկա ընդհանուր մոտեցում: Այստեղից հետևում է, որ որակն ունի սուբյեկտիվ բնութագիր:

Սովորաբար որակը սահմանվում է որպես՝

- օգտագործման պիտանիություն,
- պահանջների բավարարում,
- արտադրանքին, ծառայությանը ներկայացվող պահանջներին համապատասխանություն,
- շահութաբերություն և պատվիրատուի բավարարվածություն,
- սպառողի սպասումներին համապատասխանություն,
- շուկայի սպասելիքները բավարարող մակարդակ[1]:

Որակը բազմաբնութագիր հասկացություն է, որն ուսումնասիրվում է փիլիսոփայության, տնտեսագիտության և գիտության այլ ճյուղերի կողմից:

Փիլիսոփայության տեսանկյունից «որակ» կատեգորիան մեկնաբանվում է որպես օբյեկտի (առարկաներ, երևույթներ) գոյությունից անբաժանելի նրա այն էական որոշակիությունը, որի շնորհիվ նա համարվում է հատկապես այդ, այլ ոչ թե ուրիշ օբյեկտ: Որակն արտացոլում է օբյեկտի բաղադրիչ տարրերի առանձնահատկությունները բնութագրող այն կայուն փոխհարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս մի օբյեկտը տարբերելու մյուսից: Այսինքն, որակը առարկաների և երևույթների հարաբերական կայու-

նությունն է, նրանց ինքնությունը, այն, ինչով դրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից:

Որպես տնտեսագիտական կատեգորիա՝ օբյեկտի (արտադրանք, ծառայություն) որակն արտացոլում է գիտատեխնիկական առաջընթացի և հասարակության տնտեսական զարգացման միտումները: Տնտեսագիտության մեջ ներկայումս ընդունված է բավականաչափ ունիվերսալ բնորոշում, համաձայն որի որակը սահմանվում է որպես օբյեկտի (արտադրանք, ծառայություն) այն հատկությունների ու բնութագրերի համախումբ, որոնք վերաբերում են սահմանված կամ ենթադրվող պահանջմունքներ բավարարելու նրա ունակությանը: Այս սահմանումից բխում է, որ տնտեսագիտական առումով արտադրանքի որակը նրա նշանակությանը համապատասխան որոշակի պահանջմունքների բավարարման պիտանիության հատկությունների ամբողջությունն է: Դա նշանակում է, որ արտադրանքի որակը չի կարող բնութագրվել կամ գնահատվել նրա՝ թեկուզև շատ կարևոր որևէ մեկ հատկությամբ: Դրա համար հարկավոր է դիտարկել արտադրանքի սպառողական հատկությունների ամբողջությունը [2]: Ներկա պայմաններում արտադրանքի որակի կառավարումը կազմակերպության կարևորագույն խնդիրներից է: Արտադրանքի որակի կառավարում ասելով հասկանում ենք համակարգված գործողություններ, որոնք իրականացվում են արտադրանքի ստեղծման, շահագործման կամ սպառման ընթացքում՝ դրա որակի սահմանման, ապահովման և անհրաժեշտ մակարդակի պահպանման համար:

Սպառվող արտադրանքի նկատմամբ շուկայի բարձր պահանջները, ինչպես նաև արտադրության մեջ կատարվող գործընթացների՝ որակի ապահովման նկատմամբ մոտեցումները ձեռնարկություններից պահանջում են ստեղծել որակի համակարգ, որն ընդգրկի արտադրանքի արտադրության բոլոր ստադիաները՝ մատակարարների հետ ռեսուրսների գծով պայմանագիր կնքելուց մինչև պատրաստի արտադրանքի կամ ծառայության իրացումը:

Արտադրանքի որակի կառավարումը պետք է իրականացվի համակարգային կարգով, այսինքն՝ ձեռնարկություններում գործի արտադրանքի որակի կառավարման համակարգ՝ կազմակերպական կառուցվածք, որն իր անդամների մեջ բաժանում է պատասխանատու-

վությունը տեխնոլոգիական յուրաքանչյուր օղակի նկատմամբ և հետևում է արտադրական այդ գործընթացների կատարմանը:

Որակի համակարգը պետք է ապահովի որակի կառավարումն արտադրության բոլոր օղակներում, ներգրավի կոլեկտիվի բոլոր խմբերին, կազմակերպի ռեսուրսների խնայողաբար օգտագործման ու միավոր արտադրանքին ընկնող ծախսերի իջեցման խնդրի կատարումը, բացահայտի թերությունները և վերացնի դրանց պատճառները [3]: Որակի կառավարման համակարգի գլխավոր նպատակն է գիտատեխնիկական, արտադրական և սոցիալ-տնտեսական հնարավորությունների պլանային օգտագործումը արտադրանքների բոլոր տեսակների որակի բարելավման մշտական բարձր տեմպերի ապահովում:

Որակի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ.

1. Շուկայում արտադրանքի իրացումը կախված է սպառողի գնելու պատրաստակամությունից, կոնկրետ արտադրանքից և այն պահանջներից, որոնք նա ներկայացնում է որակին: Եթե սպառողին պետք է բարձր դասի ավտոմեքենա, նա երբեք չի գնի փոքրածավալ, հասարակ մեքենա, և հակառակը: Հետևաբար պետք է կատարվի հնարավորին չափ կանխատեսում:

2. Աշխատանքային ռեսուրսները. որակի ապահովման հիմնական պայմանը անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատակազմի առկայությունն է և այն պահանջների հստակ ձևակերպումը, որոնք ներկայացվում են կոնկրետ աշխատողներին:

3. Սարքավորումները. դրանք պետք է համապատասխանեն տեխնիկական պայմաներով նախատեսված պահանջներին, չգերազանցեն ճշգրտության թույլատրելի շեղումները, լինեն հասանելի:

4. Հումքը. նախագծային-կոնստրուկտորական փաստաթղթերում պետք է հստակ ձևակերպվեն նյութերին և գնովի առարկաներին ներկայացվող պահանջները՝ հաշվի առնելով իրական հնարավորությունները: Դրանք ընդունման, մուտքագրման ժամանակ պետք է ենթարկվեն հսկողության [4]:

Ձեռնարկությունում արտադրանքի որակի բարձրացման պայմաններ են հանդիսանում արտադրության համակենտրոնացման բարձր մակարդակը, արտադրության տեխնիկական զինվածության ապահովումը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների գոր-

ծաղրումը արտադրությունում, ինչպես նաև աշխատանքի և արտադրության առաջավոր փորձի կիրառումը:

Արդյունավետ որակի կառավարման համակարգ են համարվում Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող ISO 9000 շարքի որակի ստանդարտները:

Այս ստանդարտները հանդիսանալով միջազգային՝ հնարավորություն են տալիս թողարկելու արտադրանք, որն իր որակական հատկանիշներով ընդունելի է համաշխարհային շուկայում և նախընտրելի սպառողների կողմից:

Ստանդարտների կիրառումը հեշտացնում է երկրների կողմից այլ երկրների շուկաներ թափանցելը և սեփական արտադրանքով հանդես գալը այդ շուկաներում:

Որակի կառավարման համակարգի հիմքում դրված է 8 սկզբունք՝

1. դեպի սպառողը կողմնորոշվածություն,
2. ղեկավարի լիզերություն,
3. աշխատողների ներգրավում,
4. գործընթացային մոտեցում,
5. կառավարման մեջ համակարգային մոտեցում,
6. մշտական բարելավում,
7. որոշումների կայացում փաստերի հիման վրա,
8. փոխշահավետ հարաբերություններ մատակարարների

հետ[5]:

ISO 9000 շարքի միջազգային ստանդարտների ներդրումը կազմակերպություններում ապահովում է.

1. կազմակերպության շրջանակներում.
 - արտադրանքի որակի նկատմամբ ղեկավարության վստահությունը,
 - խոտան արտադրանքի առաքման կանխարգելումը,
 - արտադրական ժամանակի խնայողությունը,
 - ֆինանսական և մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործումը,
 - ուղղիչ միջոցառումների կատարումը,
 - բողոքարկումների նվազեցումը,
 - ներքին առողջ մթնոլորտի ստեղծումը,

- արտադրանքի որակի նկատմամբ իրավաբանական պատասխանատվությունը,
 - ստանդարտների, տեխնիկական պայմանների պահանջների ճիշտ կատարումը,
 - համապատասխան տեխնիկական փաստաթղթերով սահմանված վերահսկման և փորձարկումների կատարումը:
2. կազմակերպության շրջանակներից դուրս.
- թողարկվող արտադրանքի և մատուցված ծառայության որակի նկատմամբ սպառողների վստահությունը,
 - կնքված պայմանագրի պահանջների հետևողական կատարման և պահպանման նկատմամբ վստահությունը,
 - համապատասխան կարծիքի ձևավորումը,
 - երրորդ կողմի միջոցով իր հիմնախնդիրները որոշելու պատվիրատուի հնարավորությունը[1]:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ISO որակի համակարգի ներդրումը կազմակերպությանը կայուն մրցակցային առավելություն է ապահովում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Արտադրանքի որակի բարձրացման կարևոր ուղիներից մեկն էլ հանդիսանում է պետության կողմից համապատասխան վերահսկողության սահմանում ու քայլերի ձեռնարկումը:

Որակի բարձրացման գործընթացում մեծ է նաև սպառողների միության դերը: Սպառողների միությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը պայքարն է ապրանքների և ծառայությունների պատշաճ որակի ապահովման համար: Որակի հիմնահարցը մշտապես գտնվում է սպառողների ուշադրության կենտրոնում և շոշափում է նրանց շահերը՝ տնտեսական, սոցիալական, տեխնիկական և այլ կողմերով:

Շուկայական տնտեսության պայմաններում ապրանքների և ծառայությունների սպառողական հատկությունների ապահովման հիմնական գործոնի դերում հանդես է գալիս ոչ միայն որակի կարգավորման և ստուգման վարչաիրավական համակարգը, այլև առաջին հերթին մրցակցային պայքարը, որը արտադրողներին ստիպում է մշտապես հետևելու սպառողների վարքագծին: Միաժամանակ այն չի կարող բոլոր դեպքերում արգելք հանդիսանալ ցածրորակ, երբեմն էլ խոտան ապրանքների իրացմանը, վաճառքին:

Խոտան և ցածրորակ ապրանքներ արտադրողներին հայտնաբերելու, կարգի հրավիրելու և հաճախ էլ պատժելու գործում անգնահատելի է սպառողների շահերը պաշտպանող տարբեր բնույթի հասարակական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների նշանակությունը:

Հայաստանի Հանրապետությունում անկախություն հռչակվեց տնտեսապես շատ ծանր պայմաններում: Հումքային վառելիքաէներգետիկ ռեսուրսների սակավությունը, հաղորդակցության ճանապարհների անհուսալիությունը, արտադրական կարողությունների թերբեռնվածությունը, գործազրկությունը, բնակչության պահանջարկի բավարարման ցածր մակարդակը, իրացման նախկին շուկաների կորուստը հանգեցրին հանրապետության տնտեսության կազմալուծմանը: Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու միակ ելքը բոլորի կողմից ընդունվում էր անմիջական անցումը շուկայական հարաբերություններին:

Հանրապետությունում լայն սպառման ապրանքների արտադրության ծավալը շատ դանդաղ էր աճում: Դրան զուգահեռ՝ թողարկվող ապրանքների և ծառայությունների որակի հարցը հետին պլան էր մղվել: Ցածրորակ, ստանդարտներին չհամապատասխանող ապրանքների թողարկման պատճառներն էին արտադրության տեխնոլոգիական ռիթմի խախտումները, նորմատիվային տեխնիկական փաստաթղթերի պահանջները չկատարելը, արտադրության կազմակերպման ցածր մակարդակը, հումքի, նյութերի ցածր որակն ու անկանոն մատակարարումը:

Ներկայումս բավականին աշխատանքներ են կատարվել և օրենսդրական տեսանկյունից, և կառավարման միջազգային փորձի ակտիվ կիրառման ուղղությամբ այնուամենայնիվ դեռևս հայրենական արտադրողների մեծ մասի կողմից թողարկվող արտադրանքը և ներքին շուկայում, և արտաքին շուկայում աչքի չի ընկնում իր բարձրորակությամբ, որի արդյունքում էլ ներքին և արտաքին շուկայում հայրենական արտադրանքը դժվար է կարողանում մրցակցել օտարերկրյա արտադրանքի հետ:

Երկրում արտադրվող ապրանքների ոչ լիարժեք որակով հանդես գալը մասնավորապես պայմանավորված է որակի կառավար-

ման գործընթացում թույլ տրվող մի շարք թերություններով և առկա հիմնախնդիրներով:

Դրանցից են.

- արտադրության կազմակերպման գործընթացում արտադրողների կողմից որակյալ արտադրանք թողարկելը չի դիտարկվում որպես առաջնային նպատակ:
- Արտադրողների մի մասի կողմից ձեռնարկություններում չեն մշակվում անհրաժեշտ որակի կառավարման համակարգեր, իսկ վերջինս որակյալ արտադրանք ստանալու գլխավոր գործիքն է:
- Արտադրության անհրաժեշտ հումքի, նյութերի մեծ մասի բացակայությունը երկրում՝ արտադրողներին ստիպում է օգտվել օտարերկրյա մատակարարներից, որի արդյունքում էլ արդեն իսկ հումքի և նյութերի ձեռքբերումը բավականին մեծ ծախսեր են պահանջում, և արտադրողները երկրորդ պլան են մղում ամենատրակյալի ձեռք բերումը ու բավարարվում են միջին որակ ունեցող, հարմար արժեքի հումքով և նյութերով:
- Ոչ բոլոր արտադրողների կողմից են կիրառվում միջազգային փորձի հաջող օրինակները և ընդունվում միջազգային ստանդարտները:
- Պետության ոչ լիարժեք ջանքերի գործադրումը դեպի հայրենական արտադրանքի որակի ապահովումը:
- Արտադրանքի արտադրության տեխնիկական բազայի կատարելագործման համար անբարենպաստ պայմանները, իսկ ինչպես գիտենք, որակյալ արտադրանք ստանալու պայմաններից մեկը արտադրությունում գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան տեխնիկայի կիրառումն է: Այդ անբարենպաստ պայմաններից է մասնավորապես անհրաժեշտ տեխնիկական թողարկող ձեռնարկությունների բացակայությունը, իսկ ներմուծման դեպքում՝ բարձր մաքսատուրքերը: Ընդ որում շատ քիչ դեպքերում են ձեռնարկությունները օգտվում պետական աջակցությունից:
- Արտադրողների մեծ մասի կողմից դեռևս լիարժեք չի գնահատվում աշխատուժի արժեքը որակյալ արտադրանք թո-

ղարկելու և ընդհանրապես կազմակերպության արդյունավետ գործունեության մեջ: Դրանից ելնելով էլ չի կիրառվում համապասխան մոտիվացիոն համակարգ:

Կազմակերպությունում որակը որպես նպատակ սահմանելը պայմանավորված է նրա ղեկավարության պատրաստվածությամբ և խոր գիտակցությամբ, որ այսօր որակը այն կարևոր բաղադրիչներից մեկն է, որը շուկայում լայն հնարավորություններ կընձեռնի կազմակերպությանը:

Իսկ կազմակերպությունները, որոնք դեռևս չեն գիտակցում որակի դերը ու երբեմն «որակի կառավարման համակարգ»-ը ներդնում են շուկայի թելադրանքով ու սպառողների ճնշման տակ և ուղղակի դա դիտում են, որպես պարտականություն, ապա այն լիարժեք իր արդյունքները չի կարող ունենալ:

Իհարկե, վերը նշված խնդիրները առկա են մի շարք ձեռնարկություններում, սակայն հարկ է նաև նշել, որ դրանց կողքին կան նաև ձեռնարկություններ, որոնք հնարավորին չափ կիրառում են միջազգային հաջող փորձը, հետևում են միջազգային ստանդարտներին և ապահովում են իրենց մրցունակությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում, սակայն դրանց թիվը դեռևս զգալի չէ:

Հարկ է նշել, որ երկրում արտադրված ապրանքները, որոնք համապատասխանում են միայն տեղի ստանդարտներին, վստահություն չեն ներշնչում սպառողներին և հիմնականում նրանք նախընտրում են ձեռք բերել այն ապրանքները, որոնք համապատասխանում են միջազգային ստանդարտներին և միջազգայնորեն ճանաչվում են որակյալ:

Այսօր երկիրը ունի արտահանման ծավալների ավելացման և միջազգային շուկայում պատշաճ որակի արտադրանքով հանդես գալու խնդիր, և այդ խնդրի լուծումը կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Միջազգային չափանիշներին համապատասխան արտադրանք թողարկելու, որակի կառավարման վերը նշված թերությունները վերացնելու և ազգային ու օտարերկրյա սպառողների կողմից պահանջարկի ձևավորման նպատակով առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

- կիրառել ՀՀ ձեռնարկություններում միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման միջազգային փորձը և ընդունել միջազգային ստանդարտները,
- ձևավորել գործարարների մոտ այն գիտակցությունը, որ որակյալ արտադրանքի թողարկման ապահովումը գործարարության անհրաժեշտ և պարտադիր պայմաններից է: Որակին ուղղված խնդիրների լուծումը պայմանավորված է ոչ միայն պետության կողմից որակի ենթակառուցվածքի բարելավումով և միջազգային ճանաչում ստանալու միջոցով երկրի ստանդարտների նկատմամբ վստահություն ձևավորելով, այլ նաև ձեռնարկատերերի մոտ այդ գիտակցության բարձրացմամբ:
- Ցուցաբերել աջակցություն պետության կողմից այն ձեռնարկություններին, որոնք փորձում են որակյալ արտադրանքի ստացման նպատակով քայլեր ձեռնարկել:
- Ակտիվացնել ապառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցների գործունեությունը, որն էլ իր անմիջական ազդեցությունը կունենա արտադրողների կողմից որակին առավել մեծ նշանակություն տալու գործում:
- Բարձր որակ ապահովող կազմակերպությունների որակի կառավարման համակարգի հիմքի վրա ձևավորել տարբեր ուսուցման, փորձի փոխանակման միջոցառումներ ներգրավելով գովազդային բոլոր արդյունավետ միջոցները:

Բանալի բաներ' որակ, որակի կառավարում, որակի կառավարման համակարգ, որակը ապահովող գործոններ, որակի ստանդարտներ, մրցակցություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մալխասյան Գ., «Ստանդարտացում և սերտիֆիկացում», Երևան, 2003, էջ 258-260, 263-264:
2. Мишин В.М., "Управление качеством". Второе издание. Москва. 2005, ст. 8-9.

3. Խաչատրյան Գ., «Ձեռնարկության էկոնոմիկա և կառավարում», Երևան, 2009, էջ 438-439:
4. Սուվարյան Յու., «Մենեջմենթ», Երևան, «Տնտեսագետ», 2002, էջ 378-379:
5. А. Д. Шадрин, "Менеджмент качества. От основ к практике", Москва, 2004, стр. 90-93.

Резюме

В статье изучена сущность качества и выдвинуты необходимые условия для выпуска качественной продукции. Выявлены проблемы управления качеством в Республике Армения и их последствия, а также представлены возможные методы решения существующих проблем.

Ключевые слова: качество, управление качеством, система управления качеством, факторы обеспечивающие качество, стандарты качества, конкуренция.

Resume

This article touches upon the analyses of quality essence, it represents necessary conditions for producing useful output. The problems of quality management in the RA and consequences ensuing it are also revealed here as well as there are represented ways of solution of the existent problems.

Key words: quality, quality management, system of quality management, factors providing quality, standards of quality, competition.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծ. Կարապետյան

ՀՀ-ում նորամուծական գործունեությունը կարգավորվում է «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ նորամուծությունը (ինովացիա) սահմանվում է որպես տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի կամ ծառայության տեսքով իրացում գտած վերջնական արդյունք: Գոյություն ունեն նորամուծության տարբեր բնորոշումներ, սակայն բոլորում էլ նշվում է, որ նորամուծությունների յուրահատուկ բովանդակությունն են կազմում փոփոխությունները:

Նոր ժամանակները բնութագրվում են անորոշության և միջավայրի բարձր փոփոխականությամբ, որի դեպքում պահանջվում են ընկալման և գործողությունների ճկունություն, հանդուրժողականություն այլընտրանքին, մեկից ավելի հնարավոր սահմանումներ, ուստի և լուծումներ:

Անկախ տնտեսվարման եղանակից՝ ժամանակակից պայմաններում ցանկացած երկրի տնտեսության զարգացման խնդիրների համակարգում նորամուծությունների վրա հիմնված տնտեսական գործունեության ապահովումն իր կարևորությամբ և ռազմավարական նշանակությամբ դառնում է առավել առաջնային: «Այսօրվա փոխսերտաճող և ապանյութականացվող համաշխարհային տնտեսության մեջ երկրների ինովացիոն ներուժի կայացման և զարգացման կարողությունը երկարաժամկետ տնտեսական աճի և մրցակցության տեսանկյունից դառնում է գերկարևոր խնդիր»¹:

Ներկայում տնտեսության հետճգնաժամային վիճակի վերականգնումը և անցումը տնտեսության նորամուծական զարգացման

¹ K. Marius S., *Drivers of national innovative systems in transition: an Eastern European cross-country analysis*, Munich Personal RePEc Archive, Rensselaer Polytechnic Institute, March 2008, NY, USA, p. 2.

գործնականում իրականացվում է այն պայմաններում, որոնք լիովին հարմարեցված չեն նորամուծական գործունեության արդյունավետ իրականացմանը: Նորամուծական գործունեության իրականացման համար ոչ պակաս անհրաժեշտ է նաև նորամուծությունների համար բարենպաստ տնտեսական և սոցիալական միջավայրի առկայությունը: Տնտեսության արդիականացումը պայմանավորված է հասարակության տարբեր շերտերում ընթացող դինամիկ փոփոխություններով: Այդ փոփոխությունը հնարավոր չէ առանց հասարակության լայն շերտերի ներգավժանության նորամուծական գործընթացներում: Դժվարությունը կապված է նորամուծությունների օբյեկտիվ անհրաժեշտության ըմբռնման և նորամուծական գործընթացների նկատմամբ հասարակության ցածր պատրաստակամության ու հետաքրքրությունների պակասի հետ:

Երկրի շարժիչ ուժը, հաջողությունների հասնելու բանալին նրա տեխնիկական, տեխնոլոգիական և տեղեկատվական համակարգերի զարգացման մակարդակն է և, որ առավել կարևոր է, արագընթաց ժամանակի մարտահրավերների ընդունումը և դրանց դեմ իրական միջոցառումներ կազմակերպող ներուժը, որն իրացնում են նոր, կրեատիվ գաղափարներով, հեղափոխական, նորամուծական մտածելակերպով, ռիսկի դիմելու կարողությամբ օժտված, նորամուծական կրթության ստանդարտներին համապատասխանող մասնագետները: Պատահական չէ, որ զարգացած երկրների շարժիչ ուժը, համաշխարհային շուկայի մուտքի այցեքարտը այսօր դարձել են նորամուծությունները: Նորամուծական գործընթացը որպես ազգային տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություն իրականացնելիս պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այն ոչ միայն տեխնոլոգիական է, այլև սոցիալական, ուստի ինովացիոն տնտեսական համակարգի ձևավորումը, մեր կարծիքով, նախ անհրաժեշտ է սկսել նորամուծական գաղափարախոսության ձևավորումից ու տարածումից: Հարկ է ընդգծել, որ նորույթը ներդնելու համար անհրաժեշտ է հաղթահարել բազմատեսակ արգելքներ: Նորամուծական գործունեությանը խոչընդոտող գործոններից կարելի է առանձնացնել սոցիալ-տնտեսականները և հոգեբանականները: Հոգեբանական գործոններից են փոփոխությունների երկյուղը, անտարբերությունը, մտածողության պահպանողականությունը, ռիսկի չդի-

մելու ցանկությունը և այլն: Սոցիալ-տնտեսական գործոններ են՝ կորուստի վախը, ճյուղում մենաշնորհային դիրքը, նորամուծությունների պատճառով աշխատատեղերի կրճատումը, գործազրկությունը, աշխատուժի մշակութային ցածր մակարդակը, սովոր կենսաձևը փոխել չցանկանալը, կազմակերպության մեջ ոչ ստեղծագործական մոտեցում ունեցող աշխատողների գերակշռությունը և այլն: Եվ այս արգելքները վերացնելու հարցում կարևոր նշանակություն ունի ինովացիոն մշակույթը, որն ապահովում է նոր գաղափարների ընդունումը մարդկանց կողմից, նրանց պատրաստակամությունը և ունակությունը՝ ընդունել և կիրառել նորոյթներ կյանքի բոլոր ոլորտներում: Նորամուծական մշակույթի ստեղծումը կապված է մարդու ստեղծագործ ունակությունների զարգացման և կրեատիվ ներուժի իրացման հետ:

Ինովացիոն (նորամուծական) մշակույթը ձևավորված նորմերի, կանոնների կայուն համակարգ է, որը ցույց է տալիս, թե ինչպես իրականացնել նորամուծություններ հասարակության տարբեր ոլորտներում ըստ սոցիալ- մշակութային առանձնահատկությունների: Պատմականորեն հարմարեցված տվյալ հասարակության կառուցվածքին, ինովացիոն մշակույթը սոցիալ-մշակութային մեխանիզմի դեր է խաղում՝ կարգավորելով սոցիալական սուբյեկտների ինովացիոն վարքագիծը²:

Ինովացիոն մշակույթը իրականացնում է տարբեր գործառույթներ³.

1. Փոխանցող - փոխանցում անցյալից ներկա, ներկայից ապագա՝ սոցիալական սուբյեկտների ինովացիոն վարքագծի կայուն դրսևորումները, որոնք ժամանակի ընթացքում անցել են ճանապարհ և հասարակության համար որոշակի արժեք են ներկայացնում:

2. Ընտրանքային - նորաստեղծ կամ համակարգված ինովացիոն վարքային մոդելների ընտրություն, որոնք առավել համապա-

² Николаев А. Инновационное развитие и инновационная культура // Вопросы культурологи. – 2006. - № 3. – с. 86-90

³ <http://bulgarlar.ru/> Социология. Сто главных вопросов. Какие функции выполняет инновационная культура,

տասխանում են հասարակության պահանջմունքներին իրենց զարգացման որոշակի փուլում,

3. Նորամուծական - նկարագրված սոցիալ-մշակութային մեխանիզմի ստեղծագործական հնարավորությունների բացահայտում, նոր տեսակի ինովացիոն վարքի մշակում:

Ինովացիոն մշակույթի ձևավորումը և կառավարումը հասարակությանը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել իր ինովացիոն ռազմավարությունը և արագ արձագանքել արտաքին և ներքին միջավայրի փոփոխություններին:

Ինովացիոն մշակույթը, որոշ իմաստով, մարտահրավեր է ավանդական մշակույթին, որը զսպում է սոցիալ-տնտեսական և տեխնիկա-տեխնոլոգիական նորարարությունների ներթափանցումը նոր սերունդների մշակութային արժեքներ: Չնայած դրան՝ նորամուծությունների ընկալունակությունն ու ավանդապաշտությունը իրար հետ փոխկապակցված են արտադրության, գիտության, տեխնոլոգիաների, տնտեսության, ինչպես նաև հասարակական զարգացման տեսանկյուններից⁴:

Ինովացիոն մշակույթի ուսումնասիրման և ձևավորման տեսանկյունից շատ կարևոր է այն գործոնների վերլուծությունը, որոնք ազդում են այս գործընթացի վրա, քանի որ ցանկացած նոր գործողություն իր հետ բերում է ընդդիմություն: Պետք է նշել, որ այդ գործոնները կարող են լինել ներքին (ազգի մենթալիտետը, ավանդույթները, մոտիվացիան) և արտաքին (ազգային ինովացիոն համակարգ) և դրանով իսկ նպաստել կամ խոչընդոտել ինովացիոն մշակույթի զարգացմանը: Նաև ինովացիոն մշակույթի ձևավորման հետ կապված խնդիրների շարքում կարելի է առանձնացնել ինովացիոն մշակույթի գնահատման մեթոդաբանության և կազմակերպատնտեսական մեխանիզմի տարրերի ձևավորման բացակայությունը:

Անհատի ու հասարակության, կազմակերպության ինովացիոն մշակույթի արժևորումը, ընդհանուր առմամբ, ենթադրում է հաղթահարել բոլոր տեսակի խոչընդոտները, որոնք հանդիպում են արդյունավետ նորամուծական մտածողության ճանապարհին, քանի որ

⁴ Поскрjakов А.А Инновационная культура

<http://lib.druzya.org/innovatica/poskrjakov/view-poskrjakov-inn-kult.txt.full.html>

ըստ Կ.Է. Ֆիոլկովսկու՝ «նորամուծությունների, հայտնագործությունների և գյուտերի հանդեպ թյուր վերաբերմունքի հիմնական պատճառը մարդկային թուլություններն են»⁵:

Ինովացիոն գիտակցության ձևավորումը որպես ինովացիոն մշակույթի գեներացնող հիմնական արժեք, որը սահմանում է տնտեսության գործունեության ուղղությունը և հասարակության ինովացիոն վարքագիծը, կարող է տեղի ունենալ միայն համապատասխան տեղեկատվական միջավայրում: Տեղեկատվական-կոմունիկացիոն միջավայրը ապահովում է մարդկային գործունեությունը տեղեկատվական ռեսուրսներով՝ ինտերակտիվ, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով: ՀՀ-ում ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի 39 խոշոր ընկերությունները (1 միլիոն ԱՄՆ դոլար և ավել շրջանառությամբ), որոնք կազմում են գործող ձեռնարկությունների ընդամենը 12%-ը, ձևավորում են ոլորտի ընդհանուր հասույթի 60%-ը: Փոքր ընկերությունների քանակը վերջին 5 տարիների ընթացքում աճել է 19%-ով, իսկ նրանց մասնաբաժինը ոլորտի ընդհանուր հասույթում աճել է 3%-ով: Չնայած փոքր ընկերությունները չունեն զգալի ազդեցություն ոլորտի վրա, նրանց քանակի աճը վկայում է տեղական շուկայի հետզհետե զարգացման մասին: Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող մասնագիտացումներով սովորող ուսանողների թիվը 2011-2012 ուսումնական տարում կազմել է 9882, որը բուհերում սովորողների 10.4%-ն է: ՏՀՏ-ին առնչվող մասնագիտություններ առաջարկող հինգ առաջատար բուհերում դասախոսական անձնակազմում հաշվվում է 1090 մասնագետ⁶:

Տեղեկատվական հասարակություն զաղափարը բնութագրում է հասարակության տեսակ, որտեղ տեղեկատվության և գիտելիքի ստեղծումը, օգտագործումը և մշակումը հանդիսանում են կարևոր

⁵ Характерные особенности инновационной культуры пост-совестского менеджмента// Инновации в постсоветской промышленности / под редакцией В.И. Кабалиной. Часть 1. Сыктывкар: изд-во Сыктывкарского унта, 2000. с. 259.

⁶ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ, «Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2012թ.», էջ 68, էջ 19:

տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններ: Այս տեսակետից, հայաստանյան ձեռնարկությունների ինովացիոն ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակում: Դրա պատճառներից մեկը կրեատիվ միջավայրի բացակայությունն է: Եվ եթե Հայաստանի Հանրապետությունը, որպես անցումային տնտեսությամբ պետություն, նպատակ ունի հաջողությամբ ինտեգրվել գլոբալ կամ տարածաշրջանային շուկաներին, ապա ստիպված է որոնել նոր և արդյունավետ մոտեցումներ ինովացիայի աջակցման և խթանման գործում և, առաջին հերթին, քայլեր կատարել մրցակցային դաշտի ձևավորման համար: Նորամուծական գործընթացը ակտիվացնելու համար կարևոր է ոչ միայն կրթության, գիտության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծումը ինովացիաների վրա հիմնված աճ արձանագրելու համար, այլև հասարակության մեջ քաղաքակիրթ տնտեսական արժեքների, նորամուծական ձեռներեցությանը համապատասխան վերաբերմունքի և, այսպես կոչված, զանգվածային ինովացիոն մշակույթի ձևավորումը: Խնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ինովացիոն մշակույթը գրեթե ուսումնասիրված չէ ՀՀ-ում և չկան հետազոտություններ և փորձ այն տարածելու կազմակերպություններում, հետազոտական համալսարաններում, հասարակության մեջ և տնտեսությունում: Ինովացիոն մշակույթը, որն իրենից ներկայացնում է ինովացիոն գործունեության մոդելների կառուցվածք և ալգորիթմների ամբողջություն, պետք է հարմարեցված լինի տվյալ հասարակությանը, նրա նորամուծական վարքագիծը կարգավորելու համար: Սակայն, ինովացիոն ռազմավարությունը Հայաստանում կանգնած է դժվարին խնդրի առաջ՝ ինովացիոն զարգացմանը հասնելու համար բանկչության մոտ ցածր է ընկալունակությունը և հետաքրքրվածությունը:

Ինովացիոն մշակույթի զարգացման ժամանակակից պայմաններում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդու ներաշխարհի ուսումնասիրության վրա՝ որպես փոխհարաբերությունների սուբյեկտի, որպես գիտելիքների կրողի, ինչպես նաև որպես անհա-

տի, որն ունի իր արժեքները և նախապատվությունները և որը ժամանակակից հասարակության ձևավորողն է⁷:

ՀՀ-ում ինովացիոն մշակույթի ձևավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է և չափազանց կարևոր՝ երկրում առավել արդիական այնպիսի խնդիրների լուծման համար, ինչպիսին են տնտեսական լճացումը և գործազրկության բարձր մակարդակը, հատկապես բարոյական ճգնաժամի հաղթահարումը, բնակչության վստահության ձեռք բերումը, որը կապահովի կայուն և շարունակական տնտեսական զարգացում:

Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ստեղծումը և արդյունավետ գործունեությունը սկզբունքային նշանակություն ունի ՀՀ-ում գիտելիքի վրա հիմնված տնտեսություն, հետևաբար նաև հասարակություն ստեղծելու տեսլականն իրականություն դարձնելու հարցում: Այդպիսի ինքնավերարտադրվող համակարգն է հնարավորություն տալիս հասարակության մեջ ձևավորելու ստեղծագործ, կրեատիվ միջավայր, և դրա արդյունավետ գործունեության շնորհիվ է, որ գիտելիքը և մասնագիտական հմտությունը (որակավորումը), նորամուծական կրթությունը դառնում են տնտեսական զարգացման ամենակարևոր ռազմավարական ռեսուրսը, այլ ոչ թե՛ պարզ վերարտադրությունը: Ինովացիոն մշակույթը հզոր հակաբյուրոկրատական, ինչպես նաև ստեղծագործական լիցք է հանդիսանում պետության՝ ժամանակին համընթաց զարգացման համար:

Ժամանակակից գիտական մտածողները կարծում են, որ նորամուծական գործընթացների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է, որ նորամուծությունների զարգացումը՝ նրանց պահպանման նախապայմանը լինի⁸:

Հասարակական զարգացման ընթացքում տեխնոլոգիական առաջադիմության ընթացքն արագանում է, կրճատվում է ապրանքների և ծառայությունների կենսաշրջանը և հատկապես հետազոտությունների իրականացման, մշակման և նորամուծությունների ներդր-

⁷ Негодаев И.А. Информатизация культуры. – 2008, с. 25

⁸ Пригожин А.И. Нововведения: стимулы и препятствия (Социальные проблемы инноватики) [Текст]. – М.: 1989.

ման ժամկետները: Ամենագլխավորը՝ անհրաժեշտ է անել հնարավորը գիտությունը դեպի տնտեսության և հանրության պահանջմունքները կողմնորոշելու, դրան գործնական ուղղվածություն հաղորդելու համար: Նորամուծական տնտեսությունը այլ, յուրօրինակ, ինքնատիպ, առանձնահատուկ, դինամիկ, կրեատիվ գործելակերպով օժտված համակարգ է, որը ջանք ու ճիգ չի խնայում նոր պահանջմունքի ձևավորման, նոր ապրանքների թողարկման, արտադրության, նոր և արդյունավետ ուղիներով արդեն արտադրվածը իրացնելու համար: Հետևաբար դինամիկ աշխարհում, ուր ցանկացած վայրկյան նորի, արդյունավետի, տնտեսապես շահավետի կարիքն է զգացվում, կարևորվում է նորամուծական տնտեսության անհրաժեշտությունը, որը պատրաստ է կրել նորամուծական գործունեության հետ կապված ռիսկերը, ֆինանսական, բարոյական, սոցիալական պատասխանատվությունը: Հետևաբար, կրեատիվ և նորամուծական գաղափարների ծագումը, ձևավորումը և կիրառումը պրակտիկ գործունեության մեջ մրցունակության ապահովման միջոց են: Այդպիսի գաղափարները ծնվում են գիտելիքներից, անձնական և մասնագիտական փորձից, երբեմն անգամ անիրականանալի թվացող մտքերից:

Յուրաքանչյուր պատմական դարաշրջան, երբ որևէ բան ստեղծվում է առաջին անգամ, սկսվում է նոր մարդկանց փնտրտուքը, որոնց շրջանակում այդ նորամուծությունը պահանջարկ կվայելի: Այսօր տնտեսությունների նորամուծամետ ուղղվածությունը, գիտելիքահենք տնտեսության ձևավորումը կարիք ունի նոր մարդկանց՝ կրեատիվ մտածելակերպի, նորամուծական կրթության և նորամուծական մշակույթի կրողների:

Բանալի բաներ՝ ինովացիա, ինովացիոն համակարգ, ինովացիոն գաղափարախոսություն, ինովացիոն մշակույթ, ինովացիոն վարքագիծ, կրեատիվ:

Резюме

Обеспечение образования инновационной экономики, с его важностью и стратегическим значением является первичным, и оно должно начинаться с формирования и распространения инновацион-

ной идеологии и инновационной культуры. Формирование инновационного сознания определяет инновационное поведение общества. Инновационная культура играет важную роль в устранении барьеров на пути создания национальной инновационной системы, обеспечивающей принятие новых идей обществом. Формирование и управление инновационной культуры позволяет обществу более эффективно осуществлять свою инновационную стратегию.

Ключевые слова: инновация, инновационная система, инновационная идеология, инновационная культура, инновационное поведение, креатив.

Resume

The innovative economy formation provision, with its importance and strategic significance is primary, and it has to be started with the designing and distribution of innovative ideology and innovative culture. Innovative consciousness defines the innovative behavior of society. Innovative culture plays an important role in eliminating barriers to the formation of the national innovative system, which ensures the adoption of new ideas by public. The formation and management of innovative culture will enable the public to carry out its innovation strategy more efficiently.

Key words: innovation, innovative system, innovative ideology, innovative culture, innovative behavior, creative.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ա.Վ. Մարդոյան

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է հանքային ռեսուրսներով և կախված հաշվարկման մեթոդներից առկա է մոտ 700 հանքավայր: Դրանք գտնվում են տարբեր վիճակում՝ զարգացման, օգտագործման կամ քայքայման: Այսօր Հայաստանի Հանրապետության արտահանման մոտավորապես կեսը հանքարդյունաբերության ոլորտն է իրականացնում:

Հանքերի շրջակա տարածքներում ծանր մետաղների առկայությունը գյուղատնտեսական տարբեր ապրանքների մեջ ազդում է մարդկանց առողջության վրա: Առհասարակ արդյունաբերական հասարակություններում հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում աշխատողները և հարակից համայնքների բնակիչներն ունենում են լուրջ առողջական խնդիրներ: Ամբողջ աշխարհում քաղցկեղային հիվանդությունների մոտ 19 տոկոսը կարելի է համարել շրջակա միջավայրի առաջացրած ռիսկերի հետևանք: Տարեկան մոտ 1,3 միլիոն մարդ է մահանում այդ պատճառով[5]:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների՝ ՀՀ ընդերքի հետազոտության արդյունքում հայտնաբերվել է օգտակար հանածոների ավելի քան 480 հանքավայր: Երկրի տարածքում հայտնաբերվել է մետաղների ավելի քան 38 տեսակ, սակայն պաշարների պետական հաշվեկշռում հաշվառվել, հետազոտվել և նախնական գնահատման են ենթարկվել միայն 18 տեսակ մետաղների պաշարներ:

Նույն աղբյուրի համաձայն երկաթի հանքաքարի արդյունաբերական պաշարները հաշվվում են մոտ մի քանի հարյուր միլիոն տոննա, պղնձի, կապարի և ցինկի պաշարները՝ մի քանի միլիոն տոննա, մոլիբդենինը՝ մի քանի հարյուր հազար տոննա, ոսկունն ու արծաթինը միասին՝ մի քանի հազար տոննա: Երկաթի հանքավայրերում հանքաքարում երկաթի միջին պարունակությունը կազմում է 30 տոկոս, պղնձինը՝ պղինձ պիրիտային հանքավայրերում՝ 3.5 տոկոս,

իսկ պղինձ-մոլիբդենային և ոսկի-բազմամետաղային հանքավայրերում՝ համապատասխանաբար կազմում է 1.1 և 2.8 տոկոս: Ոսկու միջին պարունակությունը ոսկու հանքավայրում կազմում է 7 գ/տ, իսկ արծաթինը՝ 13.5 գ/տ[4]:

Մետաղական հանքավայրերում առկա են նաև հազվադեպ հանածոների՝ ռենիումի կադմիումի, բիսմութի, գալիումի, թալիումի, գերմանիումի, ինդիումի, սելենիումի, թելուրիումի և ծծմբի զգալի պաշարներ:

Հատկանշական է, որ ՀՀ հետախուզված հանքավայրերի մեծ մասի երկրաբանատնտեսական գնահատումը և հաշվառումը իրականացվել են ավելի քան 15 տարի առաջ՝ խորհրդային տնտեսական համակարգի պայմաններում[2]: Այդ իսկ պատճառով այժմ հանքավայրերի վերադիտարկման և վերագնահատման անհրաժեշտություն կա: Նշված հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ վերազինման և հետազոտություններ սկսելու ու վերսկսելու նպատակով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առանձնացվել և դասակարգվել են հանքավայրերի հետևյալ խմբերը.

Աղյուսակ 1

ՀՀ-ում առկա հանքավայրերի դասակարգումն ըստ շահագործման վիճակի[4]

Հանքավայրի տեսակը	Քանակ			Տոկոսներով			
	Ընդհ.	Մետաղ-հանք.	Ոչ մետաղ. հանք.	Ընդհ.	Մետաղ. հանք.	Ոչ մետաղ. հանք.	
Արդյունաբեր. նշանակությ. կամ բավականաչափ արդյունաբերական պաշարներով	84	3	79	29.8	33.3	29.6	Շահագործումը տնտ. ցանկալի է, մրցունակ է
Սահմանափակ արդյունաբերական պաշարներով	143	5	138	50.7	33.3	51.7	Շահագործումը հնարավոր է հավ. ներդրումների դեպքում և լրահատկացումների պայմաններում

Շահութաբերության սահմանի մոտ	55	5	50	19.5	33.4	18.7	Շահագործումը հնարավոր է տնտեսական, տեխնիկական և ֆինանսական ներդրումների ապահովման դեպքում
------------------------------	----	---	----	------	------	------	---

Ինչպես տեսնում ենք, հատկապես մետաղական հանքավայրերի դեպքում առկա է ներդրումների ընդգծված անհրաժեշտություն, միայն շատ քիչ մասն է գտնվում արդյունավետ օգտագործման լավագույն մակարդակի վրա, մյուս դեպքերում առկա է տնտեսական, տեխնիկական և ֆինանսական ներդրումների, պետական լրահատկացումների կարիք:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շահագործման ծախսերը մի քանի անգամ փոքր են, քան շահագործումից ստացված մասնավոր եկամուտները և տնտեսական արդյունքը, վերոնշյալ ներդրումներն ու պետական լրահատկացումն ավելի քան արդարացված կարելի է համարել: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել են գունավոր, ազնիվ, ռադիոակտիվ և սև մետաղների մոտ 300 երևակումներ[4]: Դրանցից շատերը համարվում են հեռանկարային: Ներկայումս առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հանքաքարի բարձր որակով և տնտեսաաշխարհագրական, ինչպես նաև լեռնաերկրաբանական բարենպաստ պայմաններով աչքի ընկնող փոքր հանքավայրերը: Շուրջ 150 այդպիսի հանքավայրերի առկայություն է ենթադրվում սև և գունավոր մետաղների բազմաթիվ երևակումներում:

«Հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ընդերքի շահագործման լիցենզիա, որ տրամադրվում է 12 տարին չզերազանցող ժամկետով: Լիցենզիա տրամադրելու պայմաններն են. հանքարդյունահանման հատուկ լիցենզիա՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել հանքարդյունահանում: Այն տրամադրվում է ավելի քան 12 տարի, բայց 25 տարին չզերազանցող ժամկետով, և ձեռք բերողի առաջարկությամբ կարող է կնքվել սույն օրենքով սահմանված կոնցեսիոն պայմանագիր. ընդեր-

քի ուսումնասիրություն՝ օգտակար հանածոների հանքավայրերի որոնման, հետախուզման և գնահատման աշխատանքներ, ինչպես նաև շահագործվող հանքավայրերի լրահետախուզման և շահագործական հետախուզության աշխատանքներ՝ օգտակար հանածոների լրացուցիչ պաշարների հայտնաբերման, դրանց քանակի, որակի ճշգրտման, ինչպես նաև շահագործման ընթացքում պաշարների շարժի հաշվառման և ռացիոնալ օգտագործման նպատակով. ուսումնասիրության լիցենզիա՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել ընդերքի ուսումնասիրություն: Այն տրամադրվում է 3 տարին չգերազանցող ժամկետով. ուսումնասիրության հատուկ լիցենզիա՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնել ընդերքի ուսումնասիրություն: Այն տրամադրվում է ավելի քան 3 տարի, բայց 5 տարին չգերազանցող ժամկետով, ձեռք բերողի առաջարկությամբ կարող է կնքվել օրենքով սահմանված Կայունացման պայմանագիր[1]:

Նկատի ունենալով հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունն ու կարևորությունը, ինչպես նաև շահութաբերության մակարդակը, կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում սահմանված են բավական ցածր հարկային և լիցենզիոն վճարներ: Համաշխարհային բանկի մասնագետների կարծիքով՝ ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտի հարկային դաշտը բավական մեղմ է: Նրանք համարում են, որ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտից ստացվող պետական եկամուտները համարժեք չեն ոլորտի եկամուտներին, հատկապես մետաղների միջազգային գների բարձրացման պայմաններում: Համաշխարհային բանկի մասնագետները նշում են, որ փոփոխությունները պետք է վերաբերեն հատկապես բնապահպանական վճարներին՝ ըստ միջազգային գների փոփոխության (ընդ որում՝ և աճման, և նվազման դեպքերում):

Հանքարդյունաբերությունն ու արդյունահանող արդյունաբերությունը որոշ երկրներում նշանակալից դեր են խաղացել՝ ապահովելով երկարաժամկետ աճ, մասնավորապես՝ Նորվեգիայում, Ավստրալիայում և Բոտսվանայում: Առանց հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող համապատասխան քաղաքականության ու զսպող լծակների Հայաստանի Հանրապետությունը կշարունակի քայլել

հանքարդյունաբերական մի ճանապարհով, որը հարստացնում է մի քանի անձանց, իսկ ներկա և ապագա սերունդների մեծամասնությանը զրկում է իրենց ժառանգությունից օգտվելու հնարավորությունից:

Համաձայն Հայաստանի վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013 թվականին հանքարդյունաբերության ոլորտում աշխատել է 15 500 մարդ. ինչը կազմել է երկրի ընդհանուր զբաղվածության 1 տոկոսը[6]:

Շահագործվում են մի քանի հարյուր ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր, որոնց գերակշիռ մասը գտնվում է Արարատյան գոտահովտի և Արագածի նախալեռնային գոտու տարածքում:

Նշենք, որ ներկայումս լեռնահանքային արդյունաբերությունը ամենամեծն է երկրում իր մասնաբաժնի առումով: Մետաղական օգտակար հանածոների գծով այժմ շահագործվող բոլոր հանքավայրերը՝ պղնձամոլիբդենային, պղինձ-հրաքարային, ոսկի-բազմամետաղային, ոսկեբեր՝ ոսկի-սուլֆիդային կազմավորման բոլոր հանքավայրերը, առանց բացառության, շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ:

Չի կորզվում Քաջարանի հանքավայրում տարածված սկանդիում մետաղը և երբ այդ բոլորը, ինչպես նաև դրանց 30-40 տոկոսի թերկորզման հետևանքով պոչամբարներ են թափվում հարյուրավոր և հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունավոր տարրեր, դրանք առաջացնում են բնապահպանական աղետներ:

ԽՍՀՄ օրոք հանքավայրերի շահագործման հանքահարստացման փուլում պարտադիր պայման էր օգտակար տարրերի կորզումների պահպանումը տեխնոլոգիական մշակումների արդյունքով նախագծով նախատեսված չափաքանակների գծով: Սակայն շատ հաճախ հանքահարստացնող ձեռնարկությունները, ի վիճակի չլինելով ապահովելու այդ կորզումները, դիմում էին խաբեության՝ արդյունահանում և մշակում էին ավելի շատ հանքաքարեր և դրանց կորզումները վերագրում էին նախագծով նախատեսված քանակներին: Ստացվում էր, որ խաբեությամբ կատարվում էր կորզումների պլանը, որի համար էլ աշխատողներից ոմանք պարզվեցին էին ստանում:

Չի բացառվում, որ այժմ ևս այդպես է կատարվում որոշ ձեռնարկություններում: Այժմ դա ավելի դյուրին է և ձեռնտու լեռնահանքային ձեռնարկությունների սեփականատերերին, քանի որ նրանք ընդերքօգտագործման համար վճարներ են կատարում (որքան քիչ ցույց տրվի հանքաքարի արդյունահանումը, այնքան քիչ կվճարվեն բնօգտագործման և բնապահպանական վճարները):

Լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունների արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ պետք է գործի հանքահարստացման տեխնոլոգիական լաբորատորիա, որի կողմից մշակումներ պետք է կատարվեն հանքահարստացման ընթացքում կորզելի օգտակար բոլոր տարրերի կորզումների բարելավման (կորզումների տոկոսների գերազույն աստիճանի բարձրացման, համաշխարհային չափաքանակներին համապատասխանեցման և բնական միջավայրի անվտանգ պահպանման) առումով:

Ներկայումս լեռնահանքային ձեռնարկությունները ստանում են սպասվող հասույթի մոտ 25 տոկոսը, իսկ մետալուրգիական գործարաններ ունենալու պարագայում դրանց հասույթը կարող է կրկնապատկվել և անգամ եռապատկվել:

Հանքարդյունաբերությունն այն եզակի ոլորտներից է, որտեղ յուրաքանչյուր մասնակցի ի հայտ գալը կարող է էական դեր խաղալ՝ ապահովելով հարյուրավոր աշխատատեղեր, հարկային լրացուցիչ եկամուտներ և ուղղակի ու անուղղակի խթան հանդիսանալով երկրի տնտեսական աճի համար: Հենց այս նկատառումներով է, որ հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է պետական մակարդակով, ինչն առավել ակնհայտ դարձավ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում հանքարդյունաբերության ոլորտին ցուցաբերված պետական մեծ աջակցությամբ: ՀՀ կառավարությունը 2009 թ. մոտ 40 մլն. դոլարի վարկ տրամադրեց այս ոլորտի 4 խոշոր ընկերությունների, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս հաղթահարելու ժամանակաշրջանի խնդիրները և շարունակելու արտադրությունը՝ ապահովելով կայուն աճ[3]:

Այժմ մեր հանրապետության հիմնական խնդիր են հանդիսանում Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագիրը, Լեռնային

Ղարաբաղի Կաշենի հանքային դաշտում իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքներն ու դրանց ակնկալիքները, Դրմբոնում այս պահին իրականացվող շինարարական աշխատանքները՝ պայմանավորված թափոնների վերամշակման արտադրամասի կառուցման հետ:

Պղնձաձուլարանի եկամուտները, ըստ էության, ձևավորվում են վերամշակման այդ վճարից, որը հաստատուն մեծություն է: Այդ գումարի չափի որոշումն ուղղակի որևէ առնչություն չունի պղնձի գների հետ: Այդ գումարը որոշվում է կախված այն հանգամանքից, թե տվյալ պահին միջազգային շուկաներում խտանյութի առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը ինչպիսին է: Եթե մեկ տարվա կտրվածքով դիտարկելու լինենք, ապա Ալավերդու պղնձաձուլարանի գործարանը Զանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատից և Դրմբոնի «Բեյզ Մեթըլզ» ընկերության լեռնահանքային կոմբինատից ստանում է վերամշակման նույն գումարը, որքան էլ որ տարվա ընթացքում ռաֆինացված պղնձի գները բարձրանան, ինքնարժեքը փոխվի, շաքարավազի, հացի և այլ գներ ՀՀ-ում բարձրանան և այլն, վերամշակման գումարը փոփոխության ենթակա չէ:

Այսինքն, որքան բարձր են պղնձի գները, այնքան աշխարհի պղնձաձուլարանները, այդ թվում նաև Ալավերդու պղնձաձուլարանը իրականում տուժում է, քանի որ բարձր գների պայմաններում վերամշակման նույն վճարը ստանալու համար ձուլարանը ստիպված է լինում անհամեմատ ավելի մեծ շրջանառու միջոցներ ներգրավել հումքի գնումները ֆինանսավորելու նպատակով:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչն արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Արտահանման մեջ մեծ տեղ է գրավում թանկարժեք մետաղների և քարերի արտահանումը, ընդ որում անհրաժեշտ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքը, որպես կանոն, արտահանվում է մշակման ցածր մակարդակով, հետևաբար՝ ցածրորակ է ու միջազգային շուկայում սպառվում է ցածր գնով: Այլ կերպ ասած՝ արտահանման մեծ գումարային ծավալներն ապահովվում են քանակական և ոչ թե որակական ցուցանիշների բարելավման հիման վրա:

ՀՀ տնտեսության համար արտաքին և ներքին առևտրի սալ-

դոն տարիներ շարունակ մնում է բացասական ոչ միայն ամբողջ երկրի տնտեսության մակարդակով, այլև, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտում: Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող արտաքին առևտրի սալդոն թույլ է տալիս եզրակացնել նաև, որ արտահանվող որոշ ապրանքային խմբեր ոչ թե արտահանման, այլ ներքին շուկայում սպառման և որպես սպառողական արտադրանք ձևավորվելու խնդիր ունեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է երկրի ներսում զարգացնել սեփական հումքի օգտագործման հնարավորությունները:

Հանքարդյունաբերության հնարավորությունները, բացի տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունից, հագեցվածությունից և որակից, նախ և առաջ կախված են երկրի հանքահումքային ռեսուրսների առկայությունից, այլ կերպ ասած՝ երկրի ընդերքում առկա հումքից և դրա քանակից: Ուստի, ոլորտի զարգացման հեռանկարները դիտարկելիս, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել առկա հանքերի օգտագործման աստիճանը, ընդերքօգտագործման ներկա վիճակը, զարգացման հնարավոր ուղիները:

Այդ իսկ պատճառով այժմ հանքավայրերի վերադիտարկման և վերագնահատման անհրաժեշտություն կա: Նշված հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է իրականացնել ներդրումներ վերագինման և հետազոտություններ սկսելու ու վերսկսելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շահագործման ծախսերը մի քանի անգամ փոքր են, քան շահագործումից ստացված մասնավոր եկամուտները և տնտեսական արդյունքը՝ վերոնշյալ ներդրումները և պետական լրահատկացումն ավելի քան արդարացված կարելի է համարել:

Բանալի բառեր՝ մատակարարման շղթա, լոգիստիկա, լոգիստիկ կառավարում, լոգիստիկ համակարգեր, ինտերնետ կոմերցիա, ռեինժեներինգ, լոգիստիկացում, ենթակառուցվածք, նորամուծություն, նույնականացման և կոմունիկացիոն տեխնոլոգիաներ, կազմակերպության ռեսուրսների պլանավորում:

Գրականություն

1. «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենք, ընդունված 05.11.2002թ.
2. Ա. Գրիգորյան, Բնօգտագործման էկոլոգացման հիմնախնդիրների շուրջ, Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, Ներկան և ապագան, Երևան, 2006թ.
3. Հ. Ավագյան, Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2011թ., 325 էջ
4. Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումների դասակարգում, Երևան, 1998թ.
5. URL:<http://www.worldbank.org/reference/>
6. URL:<http://armstat.am/file/doc/99477623.pdf>

Резюме

В рамках статьи исследуются современные проблемы, существующие в сфере рудопромышленности РА, которые мешают эксплуатировать этот важнейшего значения отрасль более эффективно и целенаправленно.

Представлены общее описания существующих металлических и безметалловых полезных ископаемых РА и подчеркнуты злоупотребления произошедшие во время их эксплуатации.

В исследовании основной акцент ставится на описании причиненного экологического ущерба в процессе эксплуатации рудников и даны некоторые предложения по направлению урегулирования этой сферы.

Ключевые слова: цепочка снабжения, логистика, логистический менеджмент, логистические системы, интернет коммерция, реинжиниринг, логистизация, инфраструктура инновация технология коммуникаций и идентификации планирование ресурсов организации, горнодобывающая промышленность, аренда, экономический рост, сбор налогов, хвосты, металлические минералы.

Resume

The article studies the current problems in the field of underground resource management in RA which prevent the more effective and purposeful utilization of this mostly important industrial sector. The article presents the general description of metal and non-metal minerals in Armenia and discusses the abuses emerging during their utilization.

The research is mainly concentrated on the description of damages caused to the environment during the utilization of underground resources and makes certain suggestions for the regulation of that sector.

Key words: underground resource management, rent, economic growth, tax collection, tailings, metal minerals.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԱՌԿԱ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ**

Ա.Խ.Մարկոսյան, Ա.Վ.Մարդոյան

Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտն ազգային տնտեսությունում ունի առանցքային մասնաբաժին: Վերջին տարիներին հանքարդյունաբերության ոլորտում դրսևորվում է չափազանց մեծ ակտիվություն, և եթե նկատի ունենանք, որ առաջիկայում շահագործման են հանձնվելու նորանոր հանքավայրեր, ապա այս ոլորտի հետ կապված տնտեսագիտական և բնապահպանական հիմնախնդիրները դառնում են խիստ արդիական, հետևապես պարտադիր պայման է դառնում ուսումնասիրել ՀՀ ընդերքի հիմնական հատկությունները, առանցքային հանքավայրերի առկա և կանխատեսումային պաշարները:

Այսօր Հայաստանի Հանրապետությունից արտահանվող նյութերի առնվազն կեսը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը, որոնցից 22-ը՝ մետաղական [4]:

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, ալյումին և այլն:

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր: Գործող հանքարդյունաբերական կազմակերպությունների ապահովվածությունը տարբեր մետաղական օգտակար հանածոների պաշարներով, արտադրական հզորությունների ընդլայնման հաշվառմամբ, բնութագրվում են հետևյալ մեծություններով.

- 1) պղնձամոլիբդենային հանքաքարով՝ ավելի քան 100-120 տարի,
- 2) ոսկու հանքաքարով՝ 25-30 տարի,

3) կապար-ցինկային հանքաքարով՝ 20-25 տարի [2]:

Պաշարների ապահովվածության նշված ժամկետները հաշվարկված են առավել խոշոր հանքավայրերի տվյալներով: Ակնհայտ է, որ այդ ընթացքում արդեն սպառված կլինեն փոքր և միջին մասշտաբի հանքավայրերի պաշարները, ինչը կհանգեցնի հանքարդյունաբերական համալիրի համախառն հանքարտադրանքների կրճատմանը:

Այսօր շահագործվող 22 հանքավայրերի ընդհանուր մակերեսը կազմում է 4060,05 հա, իսկ ներկայումս չշահագործվող 8 մետաղական հանքավայրերից 7-ը ուսումնասիրվել են ընդերքօգտագործողների միջոցների հաշվին: Դրանցից 5 հանքավայրերի հիմնական օգտակար բաղադրիչը հանդիսանում է ոսկին (6061,5 հազ. տ հանքաքարում ոսկու պարունակությունը կազմում է 21474,5 կգ), 2-ինը՝ պղինձ-մոլիբդենը, իսկ Թեժսարի նեֆելինային սիենիտների հանքավայրի պաշարները հաստատվել են դեռևս 1959 թվականին՝ որպես այլումինի հումք [1]:

Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից, բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն: Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ, որոնցից 95-ը, ընդգրկվելով ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարփակող 51 տեղամասերում, 2007-2010 թվականների ընթացքում աճուրդային կարգով տրամադրվել էր երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու համար՝ համաձայն «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի: Ուսումնասիրության տրամադրված տեղամասերից 32-ում արդեն իսկ իրականացվում են ոսկու հետախուզական աշխատանքներ:

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հաշվառված մետաղական օգտակար հանածոների երևակումներում մետաղների C2 կարգով հաստատված և կանխատեսումային պաշարները բերված են աղյուսակ 1-ում.

Մետաղների C2 կարգով հաստատված և կանխատեսումային պաշարները ՀՀ-ում

Հ/Հ	Մետաղի անվանումը	C2 կարգով հաստատված պաշարներ	Կանխատեսումային պաշարներ
1	2	3	4
1	Ոսկի /կգ/	25339.5	85239.61
2	Արծաթ /տ/	313.021	17004.488
3	Ցինկ /հազ.տ/	726.89	313.822
4	Կապար /հազ.տ/	1487.58	220.989
5	Պղինձ /հազ.տ/	1847.4	6196.4
6	Երկաթ /հազ.տ/	581842	1213626
7	Մոլիբդեն /տ/	66696	117830
8	Մանգան /հազ.տ/		17612.9
9	Ծարիր /տ/		170
10	Բիսմութ /տ/		54.79
11	Նիկել /տ/		50
12	Թելուր /տ/		21428
13	Կադմիում /տ/		66.9
14	Քրոմ /հազ.տ/		2.65
15	Տիտան /հազ.տ/		6014
16	Մկնդեղ /տ/		95
17	Կոբալտ /տ/		5
18	Երկրորդային կվարցիտ /հազ.տ/	613.2	

Պետական հաշվեկշռում գրանցված մետաղական երևակումներից 20-ը ներկայումս ուսումնասիրության համար տրամադրված չեն, որոնցում կանխատեսումային պաշարները կազմում են.

- 1) երկաթ՝ 278855 հազ. տ,
- 2) պղինձ՝ 162 հազ. տ,
- 3) ցինկ՝ 238.68 հազ. տ,
- 4) մանգան՝ 8770.36 հազ. տ,
- 5) կապար՝ 74.44 հազ. տ:
- 6) սնդիկ՝ կանխատեսումային պաշարները գնահատված չեն[3]:

Փաստենք, որ 2012 թվականի տվյալներով արդյունաբերության մեջ հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործումից ստացված արտադրանքի ծավալը կազմել է 193326.4 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է 14.9 տոկոսով, արդյունաբերության մեջ հանքարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 17.2 տոկոս, որն 2011 թվականի նկատմամբ աճ է արձանագրել 0.2 տոկոսով: 2012 թվականին բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարները կազմել են 26131.1 մլն դրամ (ՀՆԱ-ի 0.7 տոկոս), որը 2011 թվականի նկատմամբ աճել է 115 տոկոսով: Հանրապետության խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների քանակը հանքագործական արդյունաբերությունում կազմել է 15: Բնապահպանական և բնօգտագործման վճարները ևս աճել են և կազմել 17313.6 մլն դրամ (բնապահպանականը՝ 546.5 մլն դրամ, բնօգտագործմանը՝ 16767.1 մլն դրամ), որը 2011 թվականի նկատմամբ ավելացել է գրեթե 300 տոկոսով[5]:

Մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների համար պայմանագրային պարտավորություններով նախատեսված է կատարել 123,3 մլն. դրամ ներդրումներ: Որոշակի կայունացում և աճ է արձանագրվել արդյունաբերության առաջանցիկ ոլորտում՝ հանքարդյունաբերությունում, որն ավելի ակնհայտ է գունավոր և թանկարժեք մետաղների արդյունահանման մեջ, իսկ ոչ մետաղական հանածոների, մասնավորապես շինարարական հանածոների մի մասի մոտ (քար, ավազ և այլն) դեռևս պահպանվում են նվազման միտումները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրի տնտեսական ներուժը: Հայաստանի Հանրապետությունում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծումը,

հնարավորություն կտա բարձր արժողությամբ արտադրանքի ստացման, որն էլ կապահովի ՀՆԱ-ի աճ:

Ստորև (աղյուսակ 2, գծ.1) ներկայացվում է ՀՆԱ-ի աճը ապահովող մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից ստացվող արտադրանքի կանխատեսումային արժեքը:


Աղյուսակ 2

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից ստացվող արտադրանքի կանխատեսումային արժեքը [2]

Մետաղի անվանումը	Հանքային իրավունքով տրամադրված տարեկան արդյունահանվող հանքաքարում մետաղի միջին պարունակությունը	Ընդամենը հանքաքարից կորզվող մետաղի քանակը	Արտադրանքի կանխատեսումային արժեքը /ԱՄՆ մլն դոլար/
1	2	3	5
Ոսկի /գ/	23235597	14127242.98	496.1
Արծաթ /գ/	378099941	158045775.3	90.0
Պղինձ /տ/	80785.1	58710.6	409.9
Մոլիբդեն /տ/	27239.7	18632	467.0
Ցինկ /տ/	13750	8360	19.8
Սելեն /տ/	46.9	24.98	1.5
Ռենիում /տ/	7.7	4.1	2.2
Ընդամենը			1486.5

**Արտադրանքի կանխատեսումային արժեքը
(ԱՄՆ մլն դոլար)[2]**

Գծապատկեր 1



Հանքային իրավունքով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում մետաղական օգտակար հանածոների վերամշակման արդյունքում ստեղծվելիք պատրաստի արտադրանքի մոտավոր կանխատեսումային արժեքը կկազմի 1486,5 մլն ԱՄՆ դոլար[2]:

Ոչ մետաղական հանքային պաշարների հարստությամբ ու բազմազանությամբ Հայաստանի Հանրապետությունն աշխարհում առաջատար տեղ է գրավում: Հանրապետության տարածքում հանդիպում են աշխարհում հայտնի գրեթե բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում Հայաստանի տարածքում հրաբխային պրոցեսների արդյունքում առաջացած լեռնային ապարները, որոնցից են թեթև ապարները՝ տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները և այլն: Տարատեսակ բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները հսկայական են: Հայաստանի Հանրապետության ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի ընդհանուր թիվը գերազանցում է 600-ը, որոնցից ներկայումս շահագործվում են մոտ 400-ը: Այս պաշարները կբավարարեն խոշորամասշտաբ արդյունաբերության կազմակերպ-

ման համար հարյուրավոր տարիներ: Ոչ մետաղական հանքավայրերում օգտակար հանածոների հաստատված պաշարները կազմում են՝ հրաբխային խարամ՝ 345 մլն խոր. մ, պեռլիտ և օբսիդիան՝ 165 մլն խոր. մ, պեմզա՝ 100 մլն խոր. մ, կավեր՝ 435 մլն տ, դիատոմիտ՝ 16 մլն խոր. մ, տուֆեր՝ 541,34 մլն խոր. մ, մարմար և մարմարացված կրաքար՝ 72,92 մլն խոր. մ, բազալտ՝ 334,07 մլն խոր. մ, գրանիտ՝ 25,66 մլն խոր. մ, ավազակոպճային նյութեր՝ 23 մլն խոր. մ, ցեմենտի հումք՝ 630 մլն տ[1]:

Ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը և վերամշակումը 1991 թվականի համեմատ տասնապատիկ կրճատվել է: Միևնույն ժամանակ 1991 թվականից առայսօր ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների հետախուզված հանքավայրերի քանակը, հատկապես երեսպատման և շինարարական քարերի, կտրուկ աճել է. հետախուզվել և հաստատվել են 75 այդ տիպի նոր օբյեկտների պաշարներ: Սկսած 2001 թվականից երեսպատման և շինարարական քարերի հանքավայրերը շահագործվում են մասնավոր ընկերությունների կողմից: Այսպիսի հակասությունը բացատրվում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

«Ոչ մետաղական հանքային ռեսուրսների օգտագործում» նպատակային պետական համալիր ծրագրում, որը 2009 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած տնտեսության զարգացմանը նպաստող ծրագրերի աջակցության օպերատիվ շտաբի նիստի արձանագրության 5-րդ կետի 1-ին ենթակետով հավանության է արժանացել, առաջարկվել էր մի շարք հումքերի իրացման և արտահանման չափազանց մեծ շուկա, արտահանելու արտադրատեսակների գամմա՝ մեծ ավելացված արժեք ստեղծող: Այսօր կարող ենք փաստել, որ բացի ցեմենտի, երեսպատման սալիկների, շինաքարի արտադրությունից, ոչ մետաղական օգտակար հանածոները այլ նպատակներով չեն վերամշակվում, բացառությամբ շատ քիչ ծավալի արտադրական հզորությունների: Բարձր տեխնոլոգիաների ներդրման համար տարվող աշխատանքները, առ այսօր գործնականում արդյունք չեն տվել: Այժմ շահագործվող բոլոր հանքավայրերը՝ պղնձամոլիբդենային, պղինձ-հրաքարային, ոսկի-բազմամետաղային, ոսկեբեր՝ ոսկի-սուլֆիդային կազմավորման բոլոր հանքավայրե-

րը, առանց բացառության, շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ:

Նախ՝ թողարկվում են միայն ու միայն կիսաարտադրանքներ (չհաշված մաքուր երկաթի գործարանում վերամշակվող մոլիբդենի խտանյութերը), որոնց պարունակած հիմնական մետաղները խտանյութերի վաճառքի ժամանակ գնահատվում են գրեթե կես գներով:

Երկրորդ՝ խտանյութեր անցած հիմնական տարրերին հարակից տարածված շատ ու շատ և խիստ արժեքավոր տարրեր վաճառքի ժամանակ չեն գնահատվում և դրանց արժեքները չեն փոխհատուցվում, փաստորեն նվիրվում են օտար գնորդներին: Չեն գնահատվում նույնիսկ այնպիսի արժեքավոր տարրեր, ինչպիսիք են մոլիբդենի հետ սերտորեն կապված և մոլիբդենից մոտավորապես 125-130 անգամ թանկ ռենիումը: Չեն գնահատվում և նվիրվում են խտանյութեր անցած սելենը, տելուրը, բիսմութը, կադմիումը, գալիումը, գերմանիումը, ինդիումը, ծծումբը, երկաթը և այլն:

Երրորդ՝ հանքաքարերի մշակման նախնական՝ հանքահարստացման փուլում տեղի են ունենում զգալի (մինչև 30-40 տոկոս) կորուստներ ոչ կատարյալ տեխնոլոգիաների պատճառով: Հիմնական օգտակար տարրերի կորզումները կազմում են 60-70, լավագույն և բացառիկ դեպքերում՝ 80-82 տոկոս:

Չորրորդ՝ հանքավայրերում, կարելի է փաստել՝ բոլոր կազմավորումների հանքավայրերում, հանքաքարերի հարստացման գործընթացներում չեն կորզվում և պոչամբարներ են թափվում առատորեն տարածված պիրիտ, իսկ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում նաև մագնետիտ հանքանյութերը, որոնց հետ սերտորեն կապված են ոչ միայն դրանց հիմնական երկաթ և ծծումբ տարրերը, այլև ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, տելուր, վանադիում, տիտան և այլ տարրեր:

Չի կորզվում նաև Քաջարանի հանքավայրում տարածված սկանդիում մետաղը, և երբ այդ բոլորը, ինչպես նաև դրանց 30-40 տոկոսի թերկորզման հետևանքով պոչամբարներ են թափվում հարյուրավոր և հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունավոր տարրեր, դրանք առաջացնում են բնապահպանական աղետներ:

ԽՍՀՄ օրոք հանքավայրերի շահագործման հանքահարստացման փուլում պարտադիր պայման էր օգտակար տարրերի կորզում-

ների պահպանումը տեխնոլոգիական մշակումների արդյունքով նախագծով նախատեսված չափաքանակների գծով: Սակայն շատ հաճախ հանքահարստացնող ձեռնարկությունները, ի վիճակի չլինելով ապահովելու այդ կորզումները, դիմում էին խաբեության. արդյունահանում ու մշակում էին ավելի շատ հանքաքարեր և դրանց կորզումները վերագրում էին նախագծով նախատեսված քանակներին: Ստացվում էր, որ խաբեությամբ կատարվում էր կորզումների պլանը: Բացի այդ, Խորհրդային Միության պահանջները բավարարելու համար հատկապես ոսկի, պղինձ, մոլիբդեն և այլ հազվագյուտ մետաղներ արդյունահանվում էին մեծ քանակությամբ, այն էլ բարոյապես մաշված տեխնիկայով: Հենց այդ պատճառով հանքանյութը լրիվ չի կորզվել, շատ հանքատեսակների թափոններից գոյացել են հանքանյութերով հարուստ լեռնաբլուրներ, ինչպես նաև չեն կորզվել ուղեկից հանքանյութերը, որոնք աղետաբեր ազդեցություն են թողել շրջակա միջավայրի ու բուսական աշխարհի վրա:

Չի բացառվում, որ այժմ ևս այդպես է կատարվում որոշ ձեռնարկություններում: Ընդ որում, այժմ դա ավելի դյուրին է: Բացի դրանից, ներկայումս լեռնահանքային ձեռնարկությունները ստանում են սպասվող հասույթի մոտ 25 տոկոսը, իսկ մետալուրգիական գործարաններ ունենալու պարագայում դրանց հասույթը կարող է կրկնապատկվել և եռապատկվել:

Չնայած այս խնդիրներին՝ ներկայումս լեռնահանքային արդյունաբերությունը ամենամեծն է երկրի բյուջեում իր մասնաբաժնի առումով: Բացի այդ, 2013 թվականին, չնայած գործարար միջավայրում տնտեսական տրամադրության որոշակի անկմանը, Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտը շարունակել է համեմատաբար գրավիչ մնալ օտարերկրյա ներդրողների համար: Այս մեկ տարվա ընթացքում ՀՀ հանքարդյունաբերության ոլորտ գումարներ են հոսել Կանադայից, Ռուսաստանից, Գերմանիայից, ԱՄՆ-ից, Միացյալ Թագավորությունից, Շվեյցարիայից և անգամ Կիպրոսից ու Լիխտենշտեյնից: Մասնավորապես, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, կանադացի ներդրողներին մեր հանրապետությունում գրավել է մետաղական հանքաքարերի արդյունահանումը: Վերջիններս այս ոլորտ են ուղղել 25840,0 հազար ԱՄՆ դոլար: Հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահա-

գործման այլ ճյուղերում զգալի ներդրումներ են կատարել Գերմանիայի, Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի և Կիպրոսի գրանցում ունեցող ներդրողները: Վերջիններիս կողմից կատարված ներդրումների համախառն ծավալը կազմել է 32858,7 հազար ԱՄՆ դոլար: 2012 թվականի արդյունքներով հիմնային մետաղների արտադրության ոլորտում օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 10330,9 հազար ԱՄՆ դոլար [5]: Այս ոլորտի համար որպես դոնոր երկրներ առանձնացել են ՌԴ-ն և Լիխտենշտեյնը: Միևնույն ժամանակ, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ոլորտում ներդրումներ են կատարել ԱՄՆ-ն, ՌԴ-ն և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը: Ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 3423,0 հազար ԱՄՆ դոլար[6]:

Քանալի բառեր' լեռնահանքային արդյունաբերություն, արտադրողականություն, կառավարում, շրջակա միջավայր, ներդրումներ, բյուջե, ծախսեր, եկամուտներ:

Գրականություն

1. Հ.Ավագյան, Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2011թ., 325 էջ:
2. Ա.Ճաղարյան, ՀՀ ընդերքի ռեսուրսային ներուժը և դրա տնտեսական գնահատումը, Երևան, 2004թ., 198 էջ:
3. 2007-2011թթ. նախարարական զեկույց, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Երևան, 2011թ., 111 էջ:
4. URL:<http://www.minenergy.am/hy/en/endpasharner>
5. URL:<http://armstat.am/file/doc/99477623.pdf>
6. URL:<http://armstat.am/file/doc/99477378.pdf>.am/file/doc/99477623.pdf p www.minenergy.am/hy/en/en

Резюме

В пределах статьи поднимают существующие проблемы в сфере недропользования в РА, которые мешают эксплуатировать (использовать) эту сферу более продуктивно и целенаправленно. Особо представлены рентовые соотношения между государством-как собственник недр, и пользователями полезными ископаемыми, что в экономической теории пока что не получил свои соответствующие комментарии.

Ключевые слова: горнодобывающая промышленность, производительность, управление, окружающая среда, инвестиции, бюджет, расход, доход.

Resume

The article discusses the major problems pertaining the field of RA underground resource management, which prevent the more effective and purposeful utilization of the resources. It particularly presents the rent relationships of the State as a proprietor of the underground resources and the once using the minerals: this issue hasn't yet got its explanation in the field of Economics.

Key words: mining, productivity, management, environment, investment, budget, expenditure, income.

ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՇԱՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ն. Հ. Էվոյան

Առևտրի ոլորտում ֆինանսական հաշվառման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում ապրանքային պաշարների հաշվառումը, որի հիմնարար մոտեցումները տրված են ՀՀՄՍ թիվ 2 «Պաշարներ» ստանդարտում: Ներքին վերահսկողության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում ապրանքաշրջանառության արտահայտումը վաճառքի գներով:

Ապրանքի կազմի մեջ մտնում են մի շարք տարրեր. պատրաստի արտադրանքը, սեփական արտադրության կիսապատրաստուկները, արդյունաբերական նշանակության աշխատանքները և ծառայությունները¹:

Պատրաստի արտադրանք են հանդիսանում իրերն ու պատրաստուկները, որոնք անցել են տեխնոլոգիական գործընթացի բոլոր փուլերը, կոմպլեկտավորված են անհրաժեշտ բոլոր պահեստամասերով և պիտույքներով, ստուգված և ընդունված են պատվիրատուի (համաձայն պայմանագրի) ներկայացուցչի կողմից և ապահովված են համապատասխան ստանդարտները, տեխնիկական պայմանները, սպառողական պահանջները վկայող սերտիֆիկատներով կամ այլ փաստաթղթերով²:

Կիսապատրաստուկները հիմնական ու օժանդակ արտադրության և օժանդակ տեղամասի արտադրանք են: Դրանց մտցնում են պատրաստի արտադրանքի կազմի մեջ կողմնակի սպառողներին, ձեռնարկության ոչ արտադրական տնտեսություններին, սեփական կապիտալ շինարարությանը բաց թողնելու պահից՝ անկախ դրանց արտադրության ժամկետից:

¹ Հ. Խաչատրյան, Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածուն, Երևան, 2007թ., էջ 100:

² Հ. Խաչատրյան, Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածուն, Երևան, 2007թ., էջ 90:

Արդյունաբերական բնույթի են այն աշխատանքները, որոնք իրականացվում են կողմնակի կազմակերպությունների պատվերներով, ինչպես նաև՝ ձեռնարկության սարքավորումների և տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման ու մոդեռնացման աշխատանքները: Արդյունաբերական բնույթի ծառայությունները այն աշխատանքներն են, որոնք կատարվում են կողմնակի պատվիրատուների համար:

Պատրաստի արտադրանքի հաշվառումը տարվում է բնաիրային և արժեքային արտահայտությամբ: Պատրաստի արտադրանքի քանակական հաշվառումը, ըստ արտադրատեսակների և պահելու տեղերի, իրականացվում է նույն սկզբունքով, ինչ-որ նյութական արժեքներինը, այսինքն՝ ձեռնարկության, ընկերության կողմից ընտրված կամ մշակված համապատասխան սկզբնական փաստաթղթերի հիման վրա:

Նորանկախ պետություններում ձեռնարկությունները, ընկերությունները կազմում կամ մշակում են պատրաստի արտադրանքի հաշվառման տեղեկագիր ըստ արտադրանքի առանձին տեսակների, դրանք պարունակող արտադրամասերի և պահելու տեղերի: Հատուկ ուշադրություն են դարձնում պատրաստի արտադրանքի մուտքագրման, դուրս գրման և մնացորդների տվյալների հաշվեկշռման վրա: Արտադրանքի հաշվառման պատշաճ կազմակերպման պարտադիր պայման են հանդիսանում անվանացուցակները: Այստեղ նշվում են յուրաքանչյուր արտադրանքի տեսքը և բնորոշ հատկանիշները (մոդելը, ապրանքատեսակը, մակնիշը, ձևը և այլն), դրանց ծածկանշանները, հանրագումարը, անվանացուցակային թիվը և միավոր արտադրանքի ինքնարժեքը³:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտները կանխորոշում են պաշարների չափման մեխանիզմները, սահմանում են ինքնարժեքի բանաձևերը, իրացման զուտ արժեքի գնահատման եղանակները:

Միավոր արտադրանքի թողարկման ինքնարժեքի ազդեցությունը որոշվում է հետևյալ կերպ.

³ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 37:

$$S^{II} = \frac{\varepsilon Q_1 \Delta C_1}{\varepsilon Q_1 \Delta P_0} - \frac{\varepsilon Q_1 \Delta C_0}{\varepsilon Q_1 \Delta P_0}$$

Q-ն՝ թողարկված արտադրանքի քանակ (հատ)

P-ն՝ միավոր արտադրանքի իրացման գինը (դրամ)

C-ն՝ միավոր արտադրանքի թողարկման ինքնարժեքը (դրամ):

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք՝

- պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար,
- արտադրության ընթացքում են՝ վաճառքի համար,
- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների տեսով, արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցելու ընթացքում օգտագործելու համար⁴:

Ծառայությունների ոլորտի կազմակերպություններում պաշարները ներառում են այն ծառայությունների մատուցման ծախսումները, որոնց գծով հասույթը դեռևս չի ճանաչվել (օրինակ՝ աուդիտորների, իրավաբանների և ճարտարապետների դեռևս չավարտած աշխատանքները):

Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով՝ հաշվենկատության սկզբունքի համաձայն⁵:

Ապրանքային պաշարների ինքնարժեքի որոշման մեթոդները սահմանված և նկարագրված են ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտում:

Պաշարների ինքնարժեքի չափման մեթոդները, ինչպիսիք են ստանդարտ ծախսումների մեթոդը կամ մանրաձախ մեթոդը, կարող են օգտագործվել նպատակահարմարությունից ելնելով, եթե արդյունքները մոտավորապես հավասար են ինքնարժեքին⁶:

Ինքնարժեքը իրենից ներկայացնում է արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) արտադրման համար ձեռնարկության հանրագումար ծախսերի դրամական արտահայտությունը:

⁴ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 4:

⁵ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., տես՝ նույնը էջ 4:

⁶ Ա. Գ. Ճուղուրյան, Ա. Հ. Սարգսյան, «Հաշվապահական հաշվառում, (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2006թ., էջ 67:

Սրանից ելնելով կարելի է ձևակերպել արտադրանքի ինքնարժեքը կազմավորող ծախսերի հետևյալ կազմը՝ հումք, նյութեր, վառելիք, էներգիա և այլ պաշարներ, արտադրական բնույթի աշխատանքներ և ծառայություններ, որոնք կատարում են ձեռնարկության արտադրական պրոցեսը սպասարկող մասնագիտական ձեռնարկությունները, հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և աշխատանքի այլ միջոցներ, իրենց արժեքը մաշվածքի մասհանման տեսքով մաս-մաս արտադրանքի արժեքի մեջ փոխանցելու ժամանակ, աշխատանքի ծախսեր աշխատավարձի տեսքով, պարզևատրումներ և աշխատանքի այլ տեսակի վարձատրումներ, ինչպես նաև բանվորական ուժի օգտագործման հետ կապված այլ ծախսեր, որոնք չնայած ուղղակիորեն կապված չեն արտադրանքի արտադրման և իրացման հետ, բայց պայմանավորված են արտադրության հասարակական բնույթով (թոշակային ֆոնդի հատկացումներ, կադրերի պատրաստման ծախսեր, բնական պաշարների համար վճար և այլն)՝:

Ստանդարտ ծախսումների մեթոդով պաշարների չափման դեպքում, ընդունվում է հոսանքի և նյութերի՝ աշատուժի, տնտեսական ու արտադրական հզորությունների օգտագործման նորմատիվային մակարդակը: Դրանք պարբերաբար վերլուծվում են և անհրաժեշտության դեպքում վերանայվում են ելնելով արդի պայմաններից⁸:

Մանրածախ մեթոդը, որպես կանոն, օգտագործվում է մանրածախ առևտրի կազմակերպություններում, մեծ քանակության արագ փոփոխվող միավորներով, պաշարները գնահատելու համար, որոնք ունեն հավելագնի մոտավորապես նույն տոկոսը և դրանց նկատմամբ կիրառելի չէ ինքնարժեքի որոշման այլ մեթոդներ: Պաշարների ինքնարժեքը որոշվում է դրանց վաճառքի գնով, հաշվարկված արժեքը ընդհանուր հավելագնի համապատասխան տոկոսով նվազեցնելու միջոցով: Տոկոսը որոշելիս պետք է հաշվի առնել մանրածախ վաճառքի գնի փոփոխությունները: Մանրածախ առևտրում ապրանքատեսակների յուրաքանչյուր խմբի համար սովորաբար կիրառվում է

⁷ Հ. Խաչատրյան և Հ. Վարդապետյան, «Առդիտը և գործնական հաշվապահական հաշվառումը Հայաստանում», Երևան, 1998թ., էջ 64:

⁸ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 5:

միջին տոկոս: Այս մեթոդը կիրառվում է այն դեպքերում, երբ ինքնարժեքի չափման մյուս մեթոդների կիրառումը նպատակահարմար չէ⁹:

Սովորաբար փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների միավորների ինքնարժեքը պետք է հաշվարկվի կոնկրետ արտադրանքի որոշման ճանապարհով: Կոնկրետ արտադրանքի որոշում նշանակում է, որ կոնկրետ ծախսումները վերաբերում են պաշարների նույնականացվող (իդենտիֆիկացվող) միավորներին: Այս մոտեցումը ընդունելի է այն միավորների համար, որոնք նախատեսված են հատուկ ծրագրերի համար, անկախ նրանից դրանք գնվել են, թե արտադրվել:

Պաշարների ինքնարժեքի չափման վերևում բերված մեխանիզմները, որոնք սահմանված են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով, նորանկախ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, գործող կարգի հետ համեմատելիս նկատվում է որոշակի տարբերություն, որը անհրաժեշտ է հաղթահարել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման հետ կապված:

Նորանկախ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, հաշվապահական հաշվառման մեջ արտադրանքը կարող է գնահատվել¹⁰

1. արտադրանքի արտադրական ինքնարժեքով (հաշվարկային կամ փաստացի), որը հավասար է իրերի պատրաստման բոլոր ծախսերի գումարին,
2. միջին եռամսյակային և միջին տարեկան ինքնարժեքով,
3. ձեռնարկության կոմերցիոն գներով (առանց ավելացված արժեքի հարկի),
4. շուկայական գներով:

⁹ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 5:

¹⁰ Հ. Խաչատրյան, Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածուն, Երևան, 2007թ., էջ 119:

Պատրաստի արտադրանքը մտնում է ձեռնարկության շրջանառու միջոցների կազմի մեջ և հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է արտադրական ինքնարժեքով:

Անկախ վերևում բերված գնահատման տարբերակներից, հաշվետու ժամանակաշրջանի ավարտին (ամիս, եռամսյակ), պահանջվում է հաշվել արտադրանքի փաստացի ինքնարժեքը: Այս պատճառով, պատրաստի արտադրանքի ամենօրյա շարժը արտացոլելու համար (թողարկում, բեռնում, բացթողում և իրացում) օգտագործում են հաշվարկային գները:

Արտադրանքի բացթողման, բեռնման և իրացման փաստացի ինքնարժեքը, ինչպես նաև նրա պահեստի մնացորդը ամսվա վերջին հաշվարկելու համար արտադրությունում օգտագործում են առևտրային, շուկայական գները և հաշվարկային ինքնարժեքը, որպեսզի որոշեն հաշվարկային գների և արտադրանքի փաստացի ինքնարժեքի շեղումները: Եթե պատրաստի արտադրանքը գնահատվում է ընթացիկ հաշվառման մեջ, հաշվարկային ինքնարժեքով հայտնաբերվում են փաստացի ինքնարժեքի շեղումները հաշվարկայինից:

Պատրաստի արտադրանքը առևտրային գներով գնահատելու ժամանակ փաստացի ինքնարժեքի շեղումը կոմերցիոն գների արժեքից հաշվառման մեջ արտացոլվում է առանձնացված, բացի դրանից՝ հայտնաբերում է փաստացի ինքնարժեքի շեղումը հաշվարկայինից: Բոլոր դեպքերում հաշվառումը տարվում է ըստ առանձին պատվերների (արտադրատեսակների) կամ ըստ համասեռ արտադրատեսակների խմբերի:

Հաշվարկն իրականացվում է միջին կշռված տոկոսով, որը որոշվում է որպես ամսվա սկզբի արտադրանքի մնացորդի և տվյալ ամսվա ընթացքում արտադրության թողարկած արտադրանքի փաստացի ինքնարժեքի հաշվարկային գներով՝ որոշված այդ նույն արտադրանքի արժեքի հարաբերությամբ¹¹:

Հաշվարկված գներով գնահատված պատրաստի արտադրանքի արժեքից փաստացի ինքնարժեքի շեղումը գտնում են դրանց համալրման միջոցով: Ավելի ճշգրիտ արդյունքներ են ստացվում, երբ

¹¹ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Համառոտ ուղեցույց, Երևան, 2007թ., էջ 26:

միջին կշռված գործակցի հաշվարկն իրականացվում է ըստ պատրաստի արտադրանքի առանձին խմբերի (արտադրատեսակների):

Պահեստում պատրաստի արտադրանքի և բեռնված ապրանքների շարժի հաշվառումը տարվում է յուրաքանչյուր արտադրատեսակի համար: Այս կտրվածքով նաև պետք է հաշվել յուրաքանչյուր արտադրանքի (աշխատանքի և ծառայության) հաշվարկված արժեքի և փաստացի ինքնարժեքի հարաբերակցությունը, միավոր արտադրանքի ինքնարժեքը:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտները սահմանում են, որ կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշումը նշանակում է, որ կոնկրետ ծախսումները վերաբերում են պաշարների նույնականացվող (իդենտիֆիկացվող) միավորներին: Այս մոտեցումը ընդունելի է այն միավորների համար, որոնք նախատեսված են հատուկ ծրագրերի համար, անկախ այն բանից, դրանք գնվել են, թե արտադրվել:

Սակայն ընդունելի չէ կոնկրետ ծախսումների նույնականացումը այն դեպքերի համար, երբ առկա է պաշարների միավորների մեծ քանակություն, որոնք սովորաբար հանդիսանում են փոխադարձ փոխարկելի: Այդպիսի հանգամանքներում հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի կանխորոշված արդյունքի ստացման համար կարող է օգտագործվել պաշարներում մնացող միավորների ընտրության մեթոդը:

Այնուհետև, հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտները սահմանել են, որ պաշարների ինքնարժեքը պետք է որոշվի «Առաջինը մուտք՝ առաջինը ելք»՝ ԱՄԱԵ (ՖԻՖՈ), «Վերջինը մուտք՝ առաջինը ելք»՝ ՎՄԱԵ (ԼԻՖՈ), կամ «Միջին կշռված արժեք»-ի բանաձևով:

ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել կամ արտադրվել են առաջինը, ելքագրվում են առաջինը, և հետևաբար, միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածները կամ արտադրվածներն են:

ՎՄԱԵ (ԼԻՖՈ) բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել կամ արտադրվել են վերջինը, ելքագրվում են առաջինը, հետևաբար, միավորները, որոնք մնում են պաշարներում

հաշվետու ժամանակաշրջանի վերջում, առաջին գնվածները կամ արտադրվածներն են:

ԿՄ (Միջին կշռված) արժեքի բանաձևով յուրաքանչյուր միավորի արժեքը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ նույնատիպ միավորների և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գնված կամ արտադրված նույնատիպ միավորների միջին կշռված արժեքով, ուր որպես կշիռներ են հանդես գալիս պաշարների քանակները: Միջին կշռված արժեքը կարող է հաշվարկվել պարբերականության հիմունքով կամ լրացուցիչ ապրանքաքանակների ստացմանը զուգընթաց՝ կախված կազմակերպության իրավիճակից¹²:

Եթե ընդունենք, որ կազմակերպության նյութերի մուտքը վեց ամսվա ընթացքում կազմել է.

Աղյուսակ 1.

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՇԱՐՃԸ

ԱՄԻՍ	ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՃԵՔ	ԳՈՒՄԱՐԸ
I	300	2.0	600
II	400	2.50	1000
III	300	2.50	750
IV	450	2.20	990
V	430	2.70	1161
VI	440	3.0	1320
ԸՆԴՀԱՄԵՆԸ	2320		5821

ապա հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է 1800 միավոր, իսկ մնացորդը մնացել է 520, այսինքն՝

$$2320 - 1800 = 520$$

ԱՄԱԵ (ՖԻՖՈ) մեթոդ.

$$440 * 3.0 = 1320$$

$$80 * 2.70 = \frac{216}{1536}$$

Ծախսը՝ $5821 - 1536 = 4285$

¹² Թ. Մովսիսյան, Հաշվապահական հաշվառման համակարգը Հայաստանում, Երևան, 2004թ., էջ 51-52:

ՎՄԱԵ (ԼԻՖՈ) մեթոդ.

$$300 * 2.0 = 600$$

$$220 * 2.50 = \frac{550}{1150}$$

Ծախսը՝ $5821 - 1150 = 4671$

ԿՄ (Միջին կշռված)

$$5821:2320 = 2.50$$

$$520 * 2.50 = 1300$$

Ծախսը՝ $5821 - 1300 = 4521$

Միավոր արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը ընդունված է անվանել կալկուլավորում: Պատշաճ կալկուլյացիա կազմելու համար անհրաժեշտ է հաշվապահական հաշվառման մեջ արտացոլել ուղղակի ծախսերը, ըստ արտադրանքների և ծառայությունների տեսակների:

Շուկայական հարաբերությունների խորացման ու ընդլայնման պայմաններում, երբ արտադրողների և վաճառողների միջև ծավալվում է մրցակցություն, առանձին արտադրատեսակների կալկուլյացիան դառնում է մարկետինգայի գործունեության իրականացման կարևոր գործոն:

Կարծում ենք, որ կարիք չկա ապացուցել ծախսերի նորմալավորման անհրաժեշտությունը: Հաշվառման նորմատիվային մեթոդի կիրառումը, միավոր արտադրանքի ինքնարժեքի որոշման համար առաջարկում է կիրառել հաշվապահական հաշվառման ստանդարտները: Հաշվառման նորմատիվային մեթոդի կիրառման անխախտելի պայմանները հանդիսանում են նյութական, աշխատանքային, արտադրական ու ֆինանսական պաշարների ծախսման նորմերը, վերադիր ծախսերի նախահաշիվները, այդ նորմերից ու նորմատիվներից փաստացի ծախսեր շեղումների հաշվառման կազմակերպումը:

Անկախ այն հանգամանքից, թե հաշվապահական հաշվառման գործընթացը իրականացվում է նորանկախ պետություններում, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում, գործող հրահանգների, թե հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտների հիման վրա, մի քանի և ավել անվանացանկ ունեցող և բարդ արտադրանք թողարկող զանգվածային բնույթի արտադրություններում պահանջվում են ծախսերի գրանցման ու հաշվառման յուրահատուկ եղանակներ և ինքնարժեքի հաշվարկման

համապատասխան մեթոդներ, որոնց բնութագրող հատկանիշը կոնկրետ արտադրանքի ուղիղ ծախսերի հաշվառումն է: Այդ մեթոդներից է նորմատիվային մեթոդը, որի էությունը կայանում է հետևյալում. առաջին տեսակի արտադրանքի փաստացի ինքնարժեքի կալկուլյացիայի հիմքում դրվում է նյութական և աշխատանքային ծախսերի՝ գործող (ընթացիկ)՝ նորմերով նույն արտադրանքի համար նախօրոք հաշվված նորմատիվային ինքնարժեքի կալկուլյացիան:

Փաստացի ինքնարժեքը որոշվում է հետևյալ կերպ. նորմատիվային ինքնարժեքին գումարում են (գերաձախսի ժամանակ) կամ նրանից հանում են (տնտեսման ժամանակ) ընթացիկ նորմերի նկատմամբ հայտնաբերված շեղումների չափը ըստ յուրաքանչյուր հողվածի և արտադրանքի տեսակի: Այդ դեպքում առանձին տեսակի արտադրանքի կամ համասեռ արտադրատեսակների խմբերի կտրվածքով, ըստ ուղղակի ծախսերի սահմանված նորմերի շեղումների չափը արտացոլվում է ձեռնարկության ընթացիկ հաշվառման մեջ՝ փաստացի ծախսերից առանձնացված:

Գոյություն ունի ծախսերի որոշման հասարակ մեթոդ, որի էությունը կայանում է նրանում, որ ուղղակի և անուղղակի ծախսերը կալկուլյացիայի սահմանված հողվածներով հաշվարկվում են թողարկված ամբողջ արտադրանքի համար: Այս դեպքում միավոր արտադրանքի միջին ինքնարժեքը որոշում են ամսվա ընթացքում կատարած բոլոր ծախսերի ընդհանուր գումարը ամբողջությամբ և ըստ նրա առանձին հողվածների բաժանելով այդ նույն ժամանակաշրջանի թողարկված պատրաստի արտադրանքի քանակի վրա: Ծախսերի հաշվառման և միավոր արտադրանքի որոշման այս կարգը կիրառում են զանգվածային բնույթի արտադրություններում, որոնք թողարկում են կամ արտահանում բաղկացուցիչ մանրամասներ կամ կիսաֆաբրիկատներ չունեցող հասարակ, միասեռ արտադրանք: Այդ արտադրությունում անավարտ արտադրանքի մնացորդը ծայրահեղ փոքր է, կամ էլ ընդհանրապես գոյություն չունի:

Բավականին լայն տարածում ունի ծախսերի հաշվառման և կալկուլյավորման պատվերային մեթոդը, որի կիրառման հիմնական պայմանը հանդիսանում է ձեռնարկության կողմից սահմանված կարգով պատվերի բացումը: Այդ մեթոդի կիրառման դեպքում բոլոր ուղղակի ծախսերը (նյութերը և աշխատավարձը) կալկուլյացիայի

թերթի օգնությամբ հաշվառվում են նախօրոք որոշված արտադրանքի տեսակի և քանակի համար: Մնացած ծախսերը, համաձայն ծախսերի բաշխման ընտրված բազայի, մտցվում են յուրաքանչյուր պատվերի ինքնարժեքի կալկուլյացիայի մեջ: Այս մեթոդի կիրառման ժամանակ ծախսերի հաշվառման և հոդվածագրման օբյեկտը հանդիսանում է առանձին արտադրական պատվերը, որի փաստացի ինքնարժեքը որոշվում է պատվերի կատարումը ավարտելուց հետո:

Մինչև պատվերի կատարումը դրա բոլոր ծախսերը համարում են անավարտ արտադրության ծախսեր: Պատվերի մասին ստացած տեղեկատվության հիման վրա այդ պատվերի համար հաշվապահությունը կազմում է վերլուծական հաշվառման քարտ:

Աշխատանքները ավարտելուց հետո պատվերը փակում են: Պատվերը փակելու մասին ծանոթացում ստանալուց հետո այդ պատվերով նյութերի բաց թողում և աշխատանքի վճարում չպետք է լինեն: Այս դեպքում որոշում են պատվերների ոչ թե միջին, այլ անհատական արժեքը: Փոքր սերիական արտադրանքի պատրաստման դեպքում, այդ պատվերի պատրաստման համար, գրանցված ընդհանուր գումարը բաժանում են պատվերի քանակի վրա և որոշում միավոր արտադրանքի փաստացի ինքնարժեքը:

Ծախսերի հաշվառման պատվերային մեթոդը, շուկայական հարաբերությունների խորացման և ընդլայնման պայմաններում, լայն կիրառություն է գտնում շնորհիվ իր պարզության: Չնայած այս մեթոդը նախատեսված է անհատական արտադրության համար, սակայն այն հնարավոր է կիրառել նույնիսկ սերիական արտադրությունների արտադրանքի ծախսերի հաշվառման և կալկուլյացիան իրականացնելու գործընթացում:

Պաշարների ինքնարժեքի որոշման նորմատիվային և պատվերային մեթոդները որպես նրա հաշվառման սկզբնական փուլ ընդունելիս հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտները սահմանում են¹³.

1. պաշարների ինքնարժեքը չի կարող փոխհատուցվել (վերականգնվել), եթե դրանք մասամբ կամ ամբողջությամբ օգտագործելի

¹³ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 37

չեն. վնասվել, փչացել, հնացել են կամ դրանց վաճառքի գինը նվազել է,

2. պաշարների ինքնարժեքը չի կարող փոխհատուցվել (վերականգնվել) նաև այն դեպքում, եթե համալրման ենթարկվող ծախսումները կամ այնպիսի ենթադրվող ծախսումները, որոնք պետք է կատարվեն վաճառքը կազմակերպելու համար բարձրացել են,

3. պաշարների ինքնարժեքի մասնակի դուրս գրումը՝ իրացման զուտ արժեքի մակարդակի իջեցնելու պրակտիկան, համապատասխանում է այն տեսակետին, որ ակտիվները չպետք է արտացոլվեն ավելի բարձր գումարով քան ակնկալվում է նրանց վաճառքից կամ օգտագործումից,

4. պաշարների ինքնարժեքը սովորաբար իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ ապրանքների և ծառայությունների տեսակների,

5. յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանում կատարվում է իրացման զուտ արժեքի նոր գնահատում:

Տնտեսավարման արդի պայմաններում անհրաժեշտություն է ծագում նոր մոտեցումներ ցուցաբերելու կազմակերպությունների պաշարների հաշվեկշռային գնահատմանը: Հաշվապահական հաշվետվություններում դրանք արտացոլվում են դրամական միջոցների այն գումարով, որը ստացվում է տվյալ պահին առկա ակտիվներն իրացնելիս: Հետևաբար, անհրաժեշտություն է ծագում նաև պահպանելու հաշվենկատության սկզբունքը, երբ կազմակերպությունների ակտիվներն ու եկամուտները չեն գերազնահատվում¹⁴:

Ելնելով վերոհիշյալ սկզբունքներից, կազմակերպություններում ակտիվների գնահատման ժամանակ կիրառվում է իրացման զուտ արժեքի ցուցանիշը, որը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Համաձայն ՀՀ Հաշվապահական հաշվառման օրենքի 10-րդ հոդվածի հաշվետվություններ կազմելու հաշվենկատության սկզբունքի, պաշարները չպետք է գերազնահատվեն և հետևաբար ՀՀՀՀ 2 ստանդարտի 5-րդ կետի պահանջով պետք է չափվեն ինքնարժեքից

¹⁴ Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենք, հոդված 10, կետ է.:

և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Այսինքն՝ պաշարների ինքնարժեքի մասնակի դուրս գրումը իրացման զուտ արժեքի մակարդակին համապատասխանում է այն տեսակետից, որ ակտիվները չպետք է արտացոլվեն ավելի բարձր գումարով, քան ակնկալվում է, որ պետք է ստացվի նրանց վաճառքից կամ օգտագործումից¹⁵:

Իրացման զուտ արժեքի հաշվարկը հիմնվում է պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ *հաշվարկի պահին եղած առավել վստահելի փաստի վրա*¹⁶: Այս հաշվարկները կատարելիս հաշվի են առնվում գների տատանումները, համալրման և վաճառքի իրացման ծախսումների անկայունությունը: Իրացման զուտ արժեքի նախնական հաշվարկի ժամանակ ուշադրություն է դարձվում պաշարների նշանակվածությանը: Օրինակ, եթե պայմանագրով վաճառքը փոքր է առկա պաշարների քանակից, ավելցուկի իրացման զուտ արժեքը հիմնվում է վաճառքի ընթացիկ գների վրա¹⁷:

Պատրաստի արտադրանքի ինքնարժեքը որոշելիս ծախսերը բաժանվում են ըստ տնտեսական տարրերի և ծախսերի հոդվածների (կալկուլյացիայի հոդվածների): Ծախսերը ըստ տարրերի բաժանելը հնարավորություն է տալիս, անկախ ծախսերի կատարման նպատակից, ցույց տալ ծախսի տեսակի գումարը ձեռնարկության կտրվածքով, իսկ կալկուլյացիայի հոդվածի առումով՝ որոշվում է թողարկված արտադրանքի ինքնարժեքի կազմի մեջ մտնող ծախսի չափը: Առանձնահատուկ նշանակություն ունի նյութական ծախսերը արտադրանքի ինքնարժեքի կազմի մեջ հաշվառված գործընթացը: Պաշարների արտադրության մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ պատրաստի արտադրանքը, որում դրանք ընդգրկվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով: Սակայն, երբ նյութերի գների անկումը այնպիսին է, որ պատրաստի արտադրանքի ինքնարժեքը գերազանցելու է իրացման զուտ արժեքին, նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև ի-

¹⁵ ՀՀՀՀՍ 2-ի 23-րդ կետ:

¹⁶ Ա. Գ. Ճուղուրյան, «Հաշվապահական հաշվառումը կազմակերպություններում», Երևան, 2004թ. էջ 65:

¹⁷ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները, Երևան, 2009թ., էջ 37:

րացման զուտ արժեքը: Նյութերի և այլ պաշարների արժեքը պատրաստի արտադրանքի կազմի մեջ հաշվի առնելու վերոհիշյալ մեթոդը առաջարկվում է հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտներով:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտները սահմանում են, որ երբ պաշարները վաճառվում են դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ընդունվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հատույթ: Պաշարների ինքնարժեքը, մինչև իրացման զուտ արժեք, ցանկացած դուրս գրում և բոլոր կորուստները պետք է ճանաչվեն որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ կատարվել է վնասը: Պաշարների նախկինում դուրս գրված գումարի ցանկացած վերագնահատում, որը առաջանում է իրացման զուտ արժեքի բարձրացումից, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում է բարձրացումը:

Ապրանքի կազմի մեջ մտնում են մի շարք տարրեր՝ պատրաստի արտադրանքը, սեփական արտադրության կիսաֆաբրիկատները, արդյունաբերական նշանակության աշխատանքները և արդյունաբերական նշանակության ծառայությունները: Հոդվածում վերլուծվում են ապրանքի տարրերի յուրահատկությունները և նրանց տնտեսական բովանդակությունը: Հոդվածը նախատեսված է ապրանքանյութական պաշարների կառավարման գործընթացները կիրառելու համար: Հետազոտությունը նախատեսված է «Պաշարներ» թիվ 2 միջազգային ստանդարտի կիրառումը Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման գործընթացում իրականացնելու համար:

Հոդվածը նախատեսված է ապրանքանյութական պաշարների կառավարման գործընթացները կիրառելու համար և նվիրված է «Պաշարներ» թիվ 2 միջազգային ստանդարտի մեկնաբանմանը և ՀՀ-ում ներդրման եղանակների խորհրդատվությանը:

Բանալի բառեր՝ պատրաստի արտադրանք, արտադրանքի ինքնարժեք, արտադրական ծախս, առևտրային գներ, ուղղակի ծախս, անուղղակի ծախս, հաստատուն ծախս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Խաչատրյան, «Ֆինանսական կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածու», Երևան, 2007թ.:
2. Հ. Խաչատրյան, «Ֆինանսական հաշվետվություններում միջազգային ստանդարտների ձևերի կիրառման խորհուրդատվություն», Երևան, 2012թ.:
3. «Հաշվապահական հաշվառում», Երևան, 2003թ.:
4. Թ.Մովսիսյան, «Հաշվապահական հաշվառման համակարգը Հայաստանում», Երևան, 2004թ.:
5. Թ.Մովսիսյան, «Հաշվապահական հաշվառման դասընթաց», Երևան, 2003թ.:
6. Լ. Հ. Բադանյան, «Արտադրական կազմակերպության ֆինանսներ», Երևան, 2008թ.:
7. «Հաշվապահական հաշվառում», Ա.Ս Սարգսյան, Ռ. Ժ. Համբարձումյան և ուրիշներ, Երևան, 2009թ.:
8. Ա. Գ. Ճուղոյրյան, Ա. Հ. Սարգսյան, «Հաշվապահական հաշվառում, (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2006թ.:
9. Ա. Գ. Ճուղոյրյան, «Հաշվապահական հաշվառումը կազմակերպություններում», Երևան, 2004թ.:
10. Р. Метьюс, М.Перера, "Теория бухгалтерского учета, Москва", 1993г;
11. Auditing: Principles and Practice, R. Kumar, V.Sharma, PHI Learning Pvt. Ltd., 2006- 639 p. 13. "Financial & Managerial Accounting". Belverd E. Needles, Marian Powers, Susan V. Crosson, Cengage Learning, 2010 - 1392 p. 14. International Financial Reporting Standards: A Practical Guide, Hennie van Greuning, Darrel Scott, Simonet Terblanche, World Bank Publications, 2011 - 434 p. 15. Retail Accounting And Financial Control, Robert M. Zimmerman, Published May 7th 1990 by John Wiley & Sons. 16. 1С: Управление торговлей 8.2 с нуля. 100 уроков для начинающих, Гладкий Алексей Анатольевич, 2011. 17. Бухгалтерский учет и документооборот в оптовой и

розничной торговле, практ. пособие, Марина Николаевна Агафонова, ГроссМедиа, 2008, 701 с.

12. Бухгалтерский учет в торговле, Ольга Соснаускене, Екатерина Шредер, Елена Невешкина, Litres, 2013, 313. 19. Бухгалтерский учет в розничной торговле, А.Р. Радианов, Изд-во Приор, 1999, 255 с. 20. Управленческий учет в розничной торговле: контроль над товарными запасами, Светлана Вячеславовна Яковлева, РИА-КМВ, 2011 -203 с.

Ինտերնետ ռեսուրսներ և տվյալների բազա

1. <http://www.armsoft.am>
2. <http://www.accountingtools.com/retail-inventory-method>, Article: The Retail Inventory Method

Резюме

Как известно, продукция включает в себя ряд элементов, из которых готовый продукт будет представлен в данной статье. Готовым продуктом называют изделия и полуфабрикаты, которые прошли все стадии технологического процесса.

Как правило, себестоимость готового продукта рассчитывается и формируется в производстве. Такой метод называется калькуляцией (определение себестоимости 1 единицы продукта).

Расходы себестоимости - это самые большие расходы в производстве. В производстве есть производственные затраты, которые классифицируются как прямые и косвенные затраты, а также на постоянные и переменные затраты.

Статья представлена для определения процессов управления материальными ресурсами.

Ключевые слова: готовый продукт, себестоимость продукта, производственные затраты, торговые цены, прямые затраты, косвенные затраты, постоянные затраты, переменные затраты.

Resume

As we know the word product includes a number of various elements, one of which, the end product, will be represented in the article. The end products are the products and semi-products that have passed all the stages of the technological process.

The prime cost of the end product, as a rule, is calculated and generated in the production. This method is called calculation (determination of the cost per 1 unit of the product).

The expenses of the prime cost are the largest expenses of the production itself. It is known, that there are production expenses, which are classified into direct and indirect costs, as well as fixed and variable costs.

The main goal of the current article is to determine the processes of material resources management.

Key words: end product, prime cost of the product, production expenses, trade expenses, direct costs, indirect costs, fixed costs, variable costs.

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ն. Հ. Էվոյան

*Ոչ մի արժութային ռեժիմ չի կարող
բոլոր ժամանակներում ընդունելի
լինել բոլոր երկրների համար:*

Ջեֆրի Ա. Ֆրանկել¹

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեծ հարված հասցրեց աշխարհի գրեթե բոլոր պետություններին. վնաս կրեցին համաշխարհային տնտեսության բոլոր ոլորտները: Ու չնայած, որ վերջին շրջանում նկատվող որոշ դրական փոփոխությունները կարող են հիմք տալ ենթադրելու, թե ճգնաժամն արդեն ավարտվել է, այնուամենայնիվ առկա փաստերը վկայում են, որ այս ճգնաժամը համակարգային է և չի կարող վերանալ, եթե չկատարվեն համակարգային փոփոխություններ: Ներկայումս իրականացվող միջոցառումներն իրենց բնույթով ավելի շուտ նպատակ ունեն մեղմել ճգնաժամի հետևանքները՝ առանց վերացնելու ճգնաժամ ծնող պատճառները: Իսկ ճգնաժամի պատճառը նախ և առաջ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական ոչ արդյունավետ համակարգն է, իսկ մյուս երկրները տուժեցին, քանի որ ֆինանսական թելերով ամուր շաղկապված էին ԱՄՆ-ին:

Բացի այդ, ճգնաժամերը գրեթե անխուսափելի են ու ժամանակ առ ժամանակ բռնկվում ու մարում են, և եթե դիտարկենք, օրինակ, 20-րդ դարում տեղի ունեցած ճգնաժամերը, ապա պարզ կդառնա, որ դրանք ընթացել են ալիքաձև: Յուրաքանչյուր անկման հաջորդում է վերելք, իսկ վերելքին՝ նոր անկում:

Վերջին ժամանակներս տեղի ունեցած ճգնաժամերի վերլուծությունների ընթացքում դիտորդներն ու փորձագետները ավելի ու ավելի են կարևորում փոխարժեքի ռեժիմներն ու ընդհանրապես արժութային քաղաքականության դերը և ավելի հաճախակի ասոցիաց-

¹ Jeffrey A. Frankel, National Bureau of Economic Research 1999, page 1:

նում դրանք ճգնաժամերի առաջացման պատճառների հետ: Եվ հետևաբար հարց է առաջանում, թե պատմության ընթացքում տեղի ունեցած ճգնաժամերն ինչքանով են պայմանավորված արժույթային քաղաքականությամբ և հատկապես ո՞ր քաղաքականություններն ու արժույթային ռեժիմներն են առավել «ճգնաժամային»:

Արժույթային այս կամ այն ռեժիմն ընտրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փոխարժեքը կամ արժույթային քաղաքականությունը երկրի ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և որ այն պետք է համապատասխանի մյուս քաղաքականությունների բնույթին:

Սկսած 1992-1993 թթ. Եվրոպական փոխարժեքի մեխանիզմի փլուզումից և վերջացրած Մեքսիկայի (1994թ.), Ասիայի (1997թ.), Ռուսաստանի (1998թ.), Բրազիլիայի (1998թ.), Էկվադորի (1999թ.), Թուրքիայի (2001թ.) և Հայաստանի (2008) ճգնաժամերով, մինչ նախաճգնաժամային ժամանակահատվածը գործել է փոխարժեքի որոշակի ռեժիմ կամ կոշտ կարգավորվող արժույթային ռեժիմ²:

Միջազգային պրակտիկայում հանրահայտ քաղաքականության «նպատակների ընտրության տրիլեման» մշտապես կանգնած է ցանկացած երկրի կենտրոնական բանկի (ԿԲ) առջև, ենթադրվում է, որ ԿԲ-ն միջին ժամկետում կարող է ընտրել և արդյունավետ ապահովել քաղաքականության երեք նպատակներից միայն երկուսը: Օրինակ, եթե երկիրն ընտրում է անկախ դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը կապիտալի ազատ հոսունության պայմաններում, ապա պետք է թույլ տրվի, որ փոխարժեքը լողա: Այն երկրները, որոնք միաժամանակ փորձել են ապահովել երեք նպատակները, հանգել են ճգնաժամի: Ցայտուն օրինակ են Բրազիլիայի, Ռուսաստանի ճգնաժամերը:

Այս ճգնաժամերի խորությունը և մասշտաբները, որոնք հաճախ ուղեկցվում էին բանկային համակարգի փլուզմամբ և տնտեսական ակտիվության կտրուկ անկմամբ, ուղղակի ապշեցնող էին: Արդյունքում մեծ աջակցություն է ստացել այն տեսակետը, համաձայն որի կոշտ կապ կա միջանկյալ ռեժիմների և լողացող փոխարժեքի

² Andrea Bubula and Inci Otker-Robe, 2004, "The Continuing Bipolar Conundrum", page 2:

միջև, հետևաբար գոյություն ունեն փափուկ (թույլ) կապի և կոշտ (կարգավորվող լողացող) փոխարժեքի ռեժիմներ, որոնք չեն կարող գոյատևել երկար ժամանակ հատկապես այն երկրներում, որոնք միջազգային կապիտալի հոսքերի համար ունեն առավել թափանցիկ տնտեսություն:

Փոխարժեքի ռեժիմների «երկբևեռ» տեսակետի համաձայն, որը առաջինը առաջ է քաշել Ստենլի Ֆիշերը³, ֆինանսական շուկաների ինտեգրման ներկա մակարդակի ժամանակ շղթայակցման ռեժիմը չի կարող կայուն լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ երկիրը վճռականորեն հավատարիմ է այդ ռեժիմին և պատրաստ է պաշտպանելու այն անհրաժեշտ քաղաքականության և ինստիտուտների միջոցով (ինչպես կոշտ շղթայակցման դեպքում):

Այս տեսակետի իրականացման միակ այլընտրանքային ձևը լողացող փոխարժեքն է, որի շնորհիվ երկիրը ստանում է ավելի մեծ անկախություն դրամավարկային ոլորտում և հնարավորություն՝ սահմանափակելու սպեկուլյատիվ կապիտալի հոսքերը, որոնք հաճախ առաջանում են հստակ կանխատեսելի փոխարժեքների պայմաններում:

«Երկբևեռ» տեսակետի կողմնակիցները նաև պնդում են, որ երկրները հեռանում են ճգնաժամի ենթարկված միջանկյալ ռեժիմներից: Սակայն երկբևեռ տեսակետը վիճարկվում է մի քանի ասպեկտներով:

Նախ, փասացի («դե-ֆակտո») երկրի փոխարժեքի ռեժիմը հաճախ տարբերվում է իր պաշտոնական («դե-յուրե») կամ պաշտոնապես հայտարարված քաղաքականությունից, ինչը հարց է առաջացնում՝ արդյո՞ք միջանկյալ փոխարժեքով ռեժիմներից հեռանալու դիտարկվող միտումը սխալ չէ: Բացի այդ, փոխարժեքի ռեժիմների ծայրահեղ տարբերակները (միջանկյալ ռեժիմների վերաբերյալ) նույնպես կարող են ենթարկվել շուկայի ճնշմանը, ինչի մասին է վկայում, մասնավորապես, 2001թ.-ի վերջին Արգենտինայում արժութային կառավարման ռեժիմի փլուզումը կամ 2001թ.-ին Բրազիլիայի արտաքին բորսայական շուկայի կազմալուծումը ազատ լողացող փոխարժեքի

³ Andrea Bubula and Inci Otker-Robe, 2004, "The Continuing Bipolar Conundrum", page 2:

պայմաններում: Բացի այդ, չկան որևէ համոզիչ էմպիրիկ տեսակետներ, որ ի վերջո, միջանկյալ ռեժիմները վերանալու են⁴: Որոշ դիտորդներ նշում են, որ ոչ մի արժույթի ռեժիմ ընդունելի չի լինի բոլոր երկրների համար բոլոր ժամանակներում և դրա հիման վրա պնդում են, որ պահպանվի միջանկյալ ռեժիմների դերը:

Սակայն եթե հաշվի առնենք, որ երկրների արժույթների ռեժիմները հիմնված են իրենց փաստացի, այլ ոչ պաշտոնական քաղաքականության վրա, արդյո՞ք, երկբևեռ տեսակետը կմնա արժանահավատ:

Վերլուծությունը հիմնված է ԱՄՀ անդամ «Դե-ֆակտո» ռեժիմ ունեցող մի շարք երկրների տվյալների վրա:


Օրինակ, եթե հաշվի չի առնվում արժութային կապի՝ պետության կողմից ոչ պաշտոնական օգտագործման հնարավորությունը՝ լողացող փոխարժեքի պաշտոնապես հայտարարված լինելու դեպքում, դա կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների այն մասին, որ արժութային փոխարժեքի ռեժիմները զարգանանում են դեպի ավելի մեծ ճկունություն, կամ որ լողացող փոխարժեքի ռեժիմները նույնպես հակված են ճգնաժամի, ինչպես արժութային կապը՝ արժույթի վրա սպեկուլյատիվ ճնշում գործադրելու դեպքում:

Որ ռեժիմներն են ավելի քիչ ենթարկվում ճգնաժամի: Փոխարժեքի ռեժիմների ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ ավելի քան 150 երկրներում արժութային կապի ռեժիմները (կոշտ և փափուկ կապի ռեժիմների խումբը), իսկապես, ավելի շատ են հակված արժութային ճգնաժամի քան լողացող փոխարժեքի ռեժիմները (այդ թվում՝ կարգավորվող և ազատ լողացող փոխարժեքները), հատկապես այն երկրներում, որոնք ավելի ինտեգրված են միջազգային շուկաներում:

Բոլոր երկրների 12 տարվա ճգնաժամային դրվագների մոտ 3/4-ը (միջինը) տեղի է ունեցել արժութային կապի ռեժիմների պայմաններում, և ճգնաժամի հաճախականությունը, կապված արժութային կապի ռեժիմների հետ, ավելի բարձր էր, քան լողացող փոխարժեքի ռեժիմների դեպքում:

⁴ Masson, Paul R., 2001, "Exchange Rate Regime Transitions," *Journal of Development Economics*, Vol. 64 (April), pp. 571-86:

Արժութային ճգնաժամերը՝ կապված արժութային քաղաքականության ռեժիմներից:



Աղբյուրը՝ *Andrea Babula, Inji Otker-Roub*⁵

Զարգացող երկրների շարքում, համեմատաբար փակ կապիտալի շուկաների համար (այսպես կոչված՝ երկրներ ոչ զարգացած շուկայով) լողացող փոխարժեքի և արժութային կապի ռեժիմները ճգնաժամի են ենթարկվում հավասարապես:

Նույն ժամանակահատվածում երկրների բոլոր խմբերում միջանկյալ ռեժիմները ավելի են հակված ճգնաժամերի, քան երկու բևեռային այլընտրանքային ռեժիմները:

Զարգացող երկրների խմբում միջանկյալ ռեժիմները ավելի էին հակված ճգնաժամի, քան լողացող փոխարժեքի մյուս ռեժիմները: Երկու բևեռային ռեժիմները համեմատելիս պարզվում է, որ կոշտ արժութային կապի ժամանակ ճգնաժամերը տեղի են ունենում ավելի

⁵ Andrea Babula and Inci Otker-Robe, 2004 "The Continuing Bipolar Conundrum," page 34:

հազվադեպ, սակայն մի խումբ զարգացած երկրների և զարգացող շուկա ունեցող երկրների համար չի կարելի բացառել, որ այս երկու բևեռային ռեժիմները հավասարապես հակված են ճգնաժամի:

Հնարավոր է արդյոք, որ այդ արդյունքները հիմնականում պայմանավորված էին «դե ֆակտո» արժութային փոխարժեքի առաջարկվող դասակարգմամբ: Պարզվում է, որ ճգնաժամի ենթարկված արժութային կապի ռեժիմները կամ միջանկյալ ռեժիմները հիմնականում համապատասխանում են վերջին ուսումնասիրության արդյունքներին,⁶ որտեղ օգտագործված է այլընտրանքային տվյալների բազա «դե ֆակտո» ռեժիմներով: Այս ուսումնասիրության մեջ մակրոտնտեսական լուրջ լարվածության դրվագները վերագրվում են առանձին կատեգորիայի ռեժիմների (անկախ գործող դրամավարկային համակարգի), իսկ ռեժիմները դասակարգվում են՝ միայն հիմք ընդունելով արժութային փոխարժեքի պաշտոնական կամ համապատասխան շուկաներում փոխարժեքի դինամիկան (անկախ նրանից, թե համապատասխան շուկան պաշտոնապես ճանաչված է, թե դրա գոյությունը միայն թույլատրվում է): Ուսումնասիրությունը տալիս է եզրակացություն այն մասին, որ 1990-ական թվականներին զարգացող շուկաներով երկրներում արժութային կապերը և արժութային փոխարժեքների սահմանափակ ճկունությամբ ռեժիմները ենթակա էին շատ ավելի բարձր արժութային ճգնաժամի ռիսկի:

Կարո՞ղ էր արդյոք երկրի անցումը միջանկյալ ռեժիմի լինել վերահաս ճգնաժամի նշան: Հաշվի առնելով, որ նման տարածված սխալը պայմանավորված է էնդոգեն գործոններով, կարևոր է փոխարժեքի ռեժիմների գործածության արդյունքները համեմատել ցանկացած փորձի ժամանակ: Սակայն պարզվեց, որ նման սխալի առավել ակնհայտ ձևը չի նկատվում ընտրանքի մեջ, քանի որ միջանկյալ ռեժիմներով քիչ երկրներ են տեղաշարժվել մինչև ճգնաժամը. 143 ճգնաժամային դրվագներից միայն 2-ը, որոնք կապված էին միջանկյալ ռեժիմների հետ, նման ռեժիմներով երկրում գործում էին մեկ տարուց քիչ՝ մինչ ճգնաժամը, իսկ 143 դրվագներից 12-ում՝ երկու

⁶ Rogoff, Kenneth and others, 2003, "Evolution and Performance of Exchange Rate Regimes," IMF Working Paper 03/243 (Washington: International Monetary Fund).page 7:

տարուց քիչ՝ մինչ ճգնաժամը: Չնայած այդ արդյունքները ընդհանուր առմամբ հաստատում են երկբևեռ տեսակետի հեռանկարները, սակայն նման ապացույցները միանշանակ չեն: Իսկապես, ճգնաժամերի հաճախականությունը շատ ավելի բարձր է միջանկյալ ռեժիմների պայմաններում, քան երկու բևեռային ռեժիմների պայմաններում: Միևնույն ժամանակ, փոխարժեքի ռեժիմի սպեկտրի ծայրահեղ տարբերակները նույնպես հակված են ճգնաժամի:

Նշվել են շուկայական ճնշման բազմաթիվ դրվագներ՝ ճնշում հարավ աֆրիկյան ռենդի վրա (1998 և 2001թթ.), իտալական լիրայի վրա (1995թ.) և կանադական դոլարի վրա (1992թ.). սրանք միայն մի քանիսն էին նման դրվագներից: Նմանօրինակ հարձակումներ կային նաև կոշտ կապի ռեժիմների վրա, օրինակ՝ Արգենտինայի արժույթային կառավարման փլուզումը (2001թ.), Հոնգ Կոնգի արժույթային կառավարման սպեկուլյատիվ ճնշումը (1998 թ.) և աֆրիկյան ֆրանկի արժեզրկումը Արժույթային միության պայմաններում (1994թ.)⁷: Սակայն պետք է նշել, որ ճգնաժամերը շատ ավելի հաճախ տեղի էին ունենում, երբ փափուկ կապը առավել կոշտ ձևերում էր (ավանդական ֆիքսված կապը մեկ արժույթին), քան ֆիքսված կապը՝ կոշտ կապի պարտավորություններով (արժույթային կառավարում):

Արդյո՞ք երկրները անցնում են այնպիսի ռեժիմների, որոնք քիչ էին հակված ճգնաճամի: «Դե ֆակտո» ռեժիմների էվոլյուցիան 1990-2001թթ. ընկած ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, համապատասխանում է տարբեր ռեժիմների ճգնաժամային բնութագրերին. երկրները վստահ անցնում էին այն ռեժիմներին, որոնք ավելի քիչ են հակված ճգնաժամերի: Չնայած 2001թ. վերջում բոլոր երկրների ավելի քան կեսը դեռևս պահպանում էր կապի տարբեր ձևեր, այնուամենայնիվ նման ռեժիմների քանակը զգալիորեն նվազեց (շուրջ 80% 1990 թ.-ին), իսկ նրանց կազմում նկատվեց զգալի տեղաշարժ փափուկ կապից (որը ավելի շատ էր հակված ճգնաժամի) դեպի կոշտ կապի (որը ավելի քիչ է հակված ճգնաժամի), որի մասնաբաժինն ավելի քան կրկնապատկվեց: Այլ կերպ ասած՝ երկրները հրաժարվում էին միջանկյալ ռեժիմներից, որոնք ավելի շատ էին

⁷ Andrea Bubula and Inci Otker-Robe 2004 "The Continuing Bipolar Conundrum," page 34:

հակված ճգնաժամերի, ի նպաստ ավելի մեծ ճկունության կամ ավելի մեծ կոշտության, իսկ վերջին տասնամյակում բոլոր երկրներում միջանկյալ ռեժիմների մասնաբաժինը նվազել է 30 տոկոսով: Այս նվազումը ավելի ակնառու է զարգացած երկրներում և զարգացող երկրներում (մոտ 50 տոկոս), իսկ շատ զարգացող երկրներ չզարգացած շուկայով, շարունակում են հավատարիմ մնալ նման ռեժիմների⁸: Մեծ ճկունության անցումը մասամբ տեղի է ունեցել պարտադրաբար: (օրինակ՝ Բրազիլիայում, Ինդոնեզիայում, Մեքսիկայում, Թաիլանդում և Թուրքիայում), մինչդեռ այլ երկրներում այդ անցումը ուներ ավելի կանոնակարգված բնույթ և իրենից ներկայացնում էր կանխամտածված փորձ՝ կապիտալի կառավարման հոսքերի մեջ դրամական անկախության հասնելու համար, և գնաճի նպատակադրումը դարձնելու միակ խնդիրը դրամավարկային քաղաքականության համար (օրինակ՝ Հայաստանում, Լեհաստանում և Չիլիում)⁹:

Որևէ ճգնաժամի սոցիալական ազդեցությունը (տնային տնտեսությունների վրա) ներկայացնելիս՝ ընդունված եղանակ է դիտարկել երկրի ներսում ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման «փոխանցման ուղիներ»: Սակայն քանի որ, կախված նրանից, թե երկիրը զարգացման որ մակարդակում է գտնվել, փոխանցման մեխանիզմները, որոնց միջոցով համաշխարհային տնտեսական ճգնաժամը ներթափանցել է տվյալ երկիր, իրարից տարբերվել են, հետևաբար առաջ էր գալիս երկրի ներսում ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման ուղիների հստակեցման անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր հստակեցնել, թե Հայաստանում տեղի ունեցած ճգնաժամը որ տիպի ճգնաժամին էր դասվում՝ դրանից բխող համապատասխան փոխանցման ուղիները որոշելու համար:

2008թ. ընթացքում միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա հիմնականում դրսևորվել է ստացվող մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի կրճատմամբ,

⁸ Andrea Bubula and Inci Otker-Robe 2004 "The Continuing Bipolar Conundrum," page 34:

⁹ Andrea Bubula and Inci Otker-Robe 2004 "The Continuing Bipolar Conundrum," page 34:

գլոբալ տնտեսական աճի տեմպերի դանդաղման և համաշխարհային շուկաներում հումքային ապրանքների գների նվազման հետևանքով արտահանման տեմպերի էական կրճատմամբ, ինչպես նաև Հաստատան ներհոսող ուղղակի ներդրումների ծավալների նվազմամբ:

Աղյուսակ 1

**Ճգնաժամի սոցիալական ազդեցության փոխանցման ուղիները
ՀՀ-ում¹⁰**

<p>Համաշխարհային բանկ (2010)</p>	<p>ՀՊԾ-ի (ՄԱԿ-ի Համաշխարհային պարենի ծրագիր) պարենային անվտանգության վերլուծություն (2009)</p>
<p>Ամենակարևոր փոխանցման ուղիները</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքի շուկաներ (զբաղվածության մակարդակի կրճատում, աշխատավարձերի նվազում) • Միգրացիայի նվազում և տրանսֆերտների կրճատում (պայմանավորված եկամտի աղբյուր հանդիսացող երկրների տնտեսական աճի տեմպերի անկմամբ) • Գների փոփոխություն և փոխարժեքի կայունացում ճգնաժամի պարագայում 	<p>Փոխանցման ուղիները</p> <ul style="list-style-type: none"> • Արտահանում/ օտարերկրյա կապիտալ հոսքեր • Գների փոփոխություն և գնաճ • Աշխատանքի շուկա և զբաղվածություն • Տրանսֆերտներ և միգրացիա • Պետական ծախսեր և սոցիալական ապահովություն
<p>Ազդեցություն տնային տնտեսությունների վրա</p>	
<ul style="list-style-type: none"> • Տնային տնտեսությունների եկամուտներ • Տնային տնտեսությունների սպառողական ծախսեր 	<p><i>Գոյատևման ռազմավարությունների միջոցով</i></p> <ul style="list-style-type: none"> • Պարենային ապահովություն/թերսնուցում

¹⁰ Վ. Վ. Խաչատրյան, Ա. Ռ. Մակարյան, «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա՝ սոցիալական ազդեցություն», 2011թ.

<ul style="list-style-type: none"> • Աղքատություն և բաշխման ազդեցություն 	<ul style="list-style-type: none"> • Կրթության և առողջության հետ կապված փոփոխություններ • Սոցիալական խնդիրների աճ • Հաղթահարման ռազմավարությունների ընտրության սահմանափակում
---	---

Գլոբալ ճգնաժամի հետևանքները մեղմելու համար կառավարությունը որդեգրել էր քաղաքականության հետևյալ սկզբունքները՝

- Ապահովել մակրոտնտեսական կայունություն՝ ֆինանսական շուկաների կայունության ապահովման և ամրագրման միջոցով:
- Իրականացնել փոխարժեքի այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կտա զերծ մնալ տնտեսության մեջ խեղաթյուրումներից:

Փոխարժեքի անարդյունավետ քաղաքականությունը տնտեսության մեջ առաջ է բերում խեղաթյուրումներ և սխալ սպասումներ, որը հղի է լինում ճգնաժամային ռիսկերով: Հայաստանում մարտ ամսին թույլ տրվեց, որպեսզի փոխարժեքը ճշգրտվի՝ լիովին ապահովելու համար ներքին և արտաքին հաշվեկշռվածությունները: Մինչ այդ՝ փոխարժեքի ֆիքսումը բխում էր ֆինանսական կայունության ապահովման նպատակից և միտված էր հնարավորություն ընձեռել ֆինանսական շուկայի մասնակիցներին՝ ճշգրտելու արտարժույթային դիրքերը և ամրացնելու լիկվիդայնությունը: Արդյունքում փոխարժեքի ազատականացումը չհարվածեց ֆինանսական կայունությանը, քանի որ տնտեսության այս հատվածն արդեն լավ նախապատրաստված էր: Հետագայում թույլատրվեց, որ փոխարժեքը լողա և կլանի տնտեսության ի հայտ եկող բացասական ռիսկերը, իսկ արժույթային շուկայի միջամտությունը եղավ էական միայն տատանողության հարթման և սպեկուլյատիվ դրսևորումներին հակազդման տեսանկյունից:


Որոշ երկրներ շարժվում էին հակառակ ուղղությամբ՝ մասամբ կամ ամբողջությամբ հրաժարվելով դրամական անկախությունից, հուսալով այդ կերպ բարձրացնել արժանահավատությունը իրենց քաղաքականության նկատմամբ (օրինակ, Բուլղարիա, Էկվադոր և Սալվադոր), կամ երկարաժամկետ պլանավորված միջոցառումների շրջանակներում հասնելու քաղաքական և տնտեսական ինտեգրմանը (Եվրո գոտի):

ՀՀ-ում 2009թ.-ին ազգային արժույթի արժեզրկման չափը դուրսի նկատմամբ համապատասխանում էր Ռեյնհարթի և Ռոզոֆֆի (2009թ.) արժույթային ճգնաժամի սահմանմանը¹¹: Հետևաբար՝ Հայաստանում արձանագրվել է արժույթային ճգնաժամ, որը պայմանավորված է եղել արտաքին շուկերով:

2009 թ.-ին նախորդ տարվա նկատմամբ ՀՀ-ից դուրս գտնվող բարեկամներից ստացվող տրանսֆերտները պահպանեցին իրենց մասնաբաժինը հիմնականում մեծ գումարներ ստացողները, մինչդեռ փոքր գումարներ ստացողները տուժել են¹³:

Գծապատկեր 2.

Դրամական եկամուտների կառուցվածքը մեկ շնչի հաշվով (միջին ամսական), 2009թ.¹⁴



Աղբյուրը՝ ԱՎԾ, 2009 իրապարակում

¹¹ Reinhart, Carmen M. and Kenneth S. Rogoff. 2009, "The Aftermath of Financial Crises." American Economic Review, 99(2): 466–72

Միջանկյալ ռեժիմների ոչ բոլոր տեսակներն էին նույնքան արագ կորցնում իրենց գրավչությունը: Որոշ երկրներ շարժվում էին դեպի ավելի ճկուն միջանկյալ ռեժիմներ՝ փորձելով նվազագույնի հասցնել քաղաքականության մրցակից նպատակների միջև հնարավոր փոխզիջումները կապիտալի բարձր տեղաշարժի պայմաններում: Սղացող միջանցքները, որոնք բոլոր միջանկյալ ռեժիմների միջև համեմատաբար քիչ էին ենթակա ճգնաժամերի, ապահովում էին ավելի մեծ ճկունություն երկրների համար, որը թույլ էր տալիս կարգավորել կապիտալի հոսքերը և խուսափել փոխարժեքի լուրջ անհավասարակշռությունից, միաժամանակ որոշ չափով պահպանելով փոխարժեքի դերը՝ որպես «խարիսխ», հերթական փոքր արժեզրկման օգնությամբ: Կոշտ կարգավորվող լողացող փոխարժեքի ռեժիմների մասնաբաժինը նույնպես աճել է, քանի որ իշխանությունները փորձում էին փոխարժեքի դերը պահել որպես «խարիսխ»՝ առանց որոշակի նպատակային հետազոծի, հավատարիմ մնալու պարտավորությունը իրենց վրա վերցնելով:

Այսպիսով, վերը նշվածը, ընդհանուր առմամբ, պաշտպանում է երկբևեռ տեսակետը: Արդյունքները ցույց են տալիս, որ երկրները իսկապես ավելի հակված էին ճգնաժամային ռեժիմներից դեպի այն ռեժիմները, որոնք ավելի քիչ էին հակված ճգնաժամի: Արդյո՞ք սա նշանակում է, որ, ի վերջո, միջանկյալ ռեժիմները պետք է անհետանան, և իրո՞ք կանհետանան: Ոչ այդքան:

Կոշտ կապի ռեժիմների, միջանկյալ ռեժիմի և լողացող փոխարժեքի ռեժիմի միջև անցման հավանականությունների գնահատման վերլուծությունը 1990-2001թթ.-ին չի ապահովում համոզիչ ապացույցներ, որ միջանկյալ ռեժիմները, ի վերջո, կանհետանան, և եթե թույլ տանք, որ այդ համակարգում չառաջանան կառուցվածքային փոփոխություններ, ապա կարող ենք ակնկալել, որ նման ռեժիմները կկազմեն երկարաժամկետ բաշխման փոխարժեքի տարրերից մեկը: Միևնույն ժամանակ կան ընտրանքի տեղաշարժի ապացույցներ, որ դիտարկվող բևեռացումը կարող է առաջանալ նրանից, որ տասնամյակի ավարտին երկրները սկսեցին ավելի քիչ հավանականությամբ հեռանալ երկու բևեռային ռեժիմներից, միջանկյալ ռեժիմների տապալումից հետո: Այսպիսով, նախքան մենք կարող ենք ըն-

դունել երկբևեռ տեսակետի հաղթանակը, կպահանջվեն փոխարժեքի ռեժիմների հետագա էվոլյուցիայի վերաբերյալ տվյալներ:

Բացի այդ, ամենատարածված եղանակները լիովին պաշտպանված չէին ճնշումից: Շատ դեպքերում այդ ճնշմանը հնարավոր է դիմակայել առանց գործող ռեժիմի փոփոխության (օրինակ, Հոնգ Կոնգի Խորհրդի փոխարժեքի կառավարումը 1998թ.-ին): Որոշ հազվադեպ դեպքերում այն հանգեցրել է մեկ բևեռային ռեժիմից մյուսին անցնելուն (Արգենտինայի հրաժարվելը փոխարժեքի կառավարումից և անցում լողացող փոխարժեքի ռեժիմի, կամ Էկվադորի դոլարիզացիան լողացող փոխարժեքը սողացող միջանցքով փոխարինելուց հետո) կամ տեղաշարժվել այս կամ այն միջանկյալ ռեժիմների ուղղությամբ, երբ իշխանությունները այլևս չեն կարողացել անտեսել արժույթային փոխարժեքի տատանումները (1998թ. Մալայզիայի անցումը ֆիքսված կապին 1997թ. լողացող փոխարժեքի ռեժիմի ներդրումից հետո): Հետևաբար, ավելի արմատական դիրքորոշմամբ անհնար է բացատրել ճգնաժամերի թիվը և դիտարկվող ռեժիմների էվոլյուցիան երկրում բացառապես գործող փոխարժեքի ռեժիմներով: Իհարկե, գործող ռեժիմների որոշ ասպեկտներ նպաստում էին վերջին տասնամյակում ճգնաժամերի առաջացմանը (օրինակ, «սխալ կապի» ընտրությունը, որը ոչ ճշգրիտ արտացոլում էր արտաքին առևտրի կառուցվածքը, կամ փոխարժեքի բարձր կանխատեսելիությունը, որը գրավում էր սպեկուլյատիվ կապիտալի հոսքերը, որոնք կարելի էր հեշտությամբ ետ շրջել):

Խոսելով ճգնաժամերից՝ չենք կարող չխոսել Հունաստանի 2009-2012թթ.-ի խորը տնտեսական ճգնաժամից: 2009թ.-ի վերջում Հունաստանի տնտեսությունը կանգնեց խորը ճգնաժամի առաջ: 2010թ.-ի սկզբներին բացահայտվեց այն փաստը, որ Գոլդման Սաքս, Ջեյ Փի Մորգան Չեյս¹² և բազմաթիվ այլ բանկերի օգնությամբ ֆինանսական միջոցներ են մշակվել, որոնք թույլ են տվել Հունաստանին, Իտալիային և, հնարավոր է, այլ երկրների՝ թաքցնել իրենց պարտքը: Տասնյակ նմանատիպ համաձայնագրեր են կնքվել Եվրոպայում, որտեղ բանկերը պարտքով կանխիկ գումար են տվել կառավարություններին: Սա թույլ տվեց հունական կառավարություններին

¹² <http://hy.wikipedia.org/wiki/>

ծախսել ավելի շատ՝ դուրս չգալով Եվրոմիության դեֆիցիտի թիրախների սահմաններից: 2010թ.-ի մայիսին Հունաստանի կառավարության դեֆիցիտը կրկին վերանայվեց և գնահատվեց 13.6%, որն աշխարհի երկրորդ ամենաբարձր ցուցանիշն էր, առաջինը Իսլանդիան էր՝ 15.7%: Իսլանդիան կարիք ուներ վարկերի, որի համար դիմեց նույնիսկ Ռուսաստանին, սակայն վարկեր ստացավ ԱՄՀ-ից: Իսլանդիայի՝ երկիրը ճգնաժամից փրկելու հաջորդ քայլը եղավ սեփական արժույթի մոտ երեք անգամ արժևորումը, սակայն ճգնաժամի ալիքն արդեն բարձրացել էր: Ֆինանսական ճգնաժամը շատ արագ տեմպերով հասավ Եվրոգոտու բոլոր երկրներին, իսկ այնուհետև՝ ԵՄ ամբողջությամբ: «Որքանով է հունական սցենարով ճգնաժամը հնարավոր այն երկրներում, որոնք ի տարբերություն Հունաստանի և եվրոպական այլ պարտապան երկրների, ունեն իրենց սեփական արժույթը և, բացի այդ, որդեգրել են արժույթի «լողացող» փոխարժեքի քաղաքականություն»¹³: Տնտեսագետը նկատում է, որ պատմության ընթացքում դեռևս չի գրանցվել որևէ դեպք, երբ սեփական արժույթ ունեցող երկիրը հայտնվի պարտքային ճգնաժամում: Նրա գնահատականով՝ 1990-ականների վերջին սկսած ասիական ճգնաժամը սուվերեն պարտքի ճգնաժամ չէր: Այդտեղ որոշիչ գործոն էր ասիական «վագրերի»՝ արտարժույթով ունեցած խոշոր պարտքը: Վերը նշված խնդիրներին Եվրոպական Միության արձագանքը միանշանակ չէր: Ամենասկզբում խնդիր առաջացավ Հունաստանին արագ ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու:

Դեռևս 2010թ.-ի փետրվարից արդեն հստակ կար դրա պահանջը, սակայն չկային բավականաչափ միջոցներ: Հենց այդ ժամանակ էր, որ ԱՄՀ-ն առաջարկեց իր օժանդակությունը: Բայց այն երկար բանակցություններից հետո նոր ընդունվեց: Այսպես՝ Եվրոմիության ֆինանսների նախարարները և Արժույթի միջազգային հիմնադրամը որոշեցին Հունաստանին առաջիկա երեք տարիների ընթացքում տրամադրել 110 մլրդ եվրո, ինչը համարժեք է 146 մլրդ ամերիկյան դոլարի: Սակայն սա առաջին քայլն էր: Եվրոպայի ֆինանսների նախարարների առջև կար նաև եվրոյի ամրապնդման խնդիրը: Այդ նպատակով Բրյուսելում երկար ժամանակ ընթանում էին հանդիպումներ, և ի վերջո հաստատվեց օժանդակության մեխանիզմ՝ մոտ 500 մլրդ եվրո արժողությամբ վարկերի և երաշխիքների

տեսքով: Սակայն Եվրոպան այսքանով չբավարարվեց: Եվրոպական տնտեսագետները շուտով եկան այն եզրակացության, որ համաշխարհային ճգնաժամի պատճառներից մեկը հեջ-ֆոնդերի (ներդրումային կազմակերպություններ) գործունեությունն է, մասնավորապես վերջինիս նկատմամբ անարդյունավետ վերահսկողությունը:

Եվրոպական Միության ճգնաժամի հետևանքը պակաս զգալի չէր նաև Հայաստանի համար: Մի կողմից՝ որպես «Արևելյան գործընկերության» անդամ, մյուս կողմից՝ Հայաստան-ԵՄ (Եվրոմիություն) առանձին երկրի ֆինանսատնտեսական համագործակցության առումով: Ինչ վերաբերում է Հայաստան-ԵՄ առանձին երկիր ձևաչափին, 2008թ.-ից հետո Հայաստանի առևտրաշրջանառության ծավալները միաժամանակ կրճատվել են:

Ի տարբերություն ֆիքսված կամ գրեթե ֆիքսված փոխարժեքի ռեժիմ վարող երկրների՝ Հայաստանը, բացի ներքին տնտեսությունում պահանջարկի կառավարման քաղաքականություններին աջակցելուց, զգալի հաջողությունների է հասել նաև երկրի արտաքին մրցունակության բարելավման ուղղությամբ մինչև 2004թ.-ը: Դա մեծապես պայմանավորված էր ՀՀ դրամի իրական փոխարժեքի վարքագծով, որն ի տարբերություն ֆիքսված ռեժիմ վարող երկրների իրական փոխարժեքների արժեքավորման միտումի՝ հիմնականում արժեզրկվել է՝ նպաստելով Հայաստանի առևտրային հաշվեկշռի բարելավմանը¹³:

Զարգացող երկրների մեծ մասը, այդ թվում նաև ՀՀ-ն, իրականացնում է կապիտալ ներդրումները խթանող քաղաքականություն, սա շատ կարևոր է երկրի զարգացման համար, սակայն զարգացող երկրների փորձը ցույց է տալիս, որ կապիտալի ներհոսքը, լինելով արդյունավետ երկրի զարգացման համար, միաժամանակ վտանգավոր է ֆինանսական ճգնաժամերի տեսանկյունից, ինչպես տեղի ունեցավ, օրինակ, Ասիայում 1997-1998թթ.: Սա վտանգավոր է հատկապես թույլ բանկային համակարգ, փոքր ֆինանսական շուկա ունեցող երկրների

¹³ Սակայն քանի որ ներքին արտադրության մեջ մրցունակ ապրանքների տեսակարար կշիռը ցածր է, իրական փոխարժեքի արժեզրկման բարձր տեմպերը արտահանման և ներմուծման ցուցանիշների վրա ունենում են փոքր ազդեցություն: Երկարաժամկետ հատվածում արժեզրկման նման տեմպերի պահպանումը կնպաստի հաշվեկշռի զգալի բարելավմանը:

համար և հատկապես, երբ փոխառությունները հիմնականում կարճա-
ժամկետ են և չհեջավորված, ինչպես ՀՀ-ում է:

Ներկայումս նման ֆինանսական ճգնաժամեր ՀՀ-ում չեն սպասվում նաև այն պատճառով, որ «տաք փողերի» հոսքը ՀՀ-ում մեծ չէ, իսկ արտարժույթային ներհոսքը, որի պատճառով ՀՀ-ում տե-
ղի է ունենում դրամի արժևորում, ուղղվում է սպառմանը, այլ ոչ թե ներդրումներին, ինչի հետևանքով էլ բացառվում է այդ կապիտալի հանկարծակի արտահոսքը: Թեև մյուս կողմից՝ այն փաստը, որ կա-
պիտալը չի ներդրվում տնտեսությունում, այլ ուղղվում է ներմուծված ապրանքների սպառմանը, բավականին բացասական երևույթ է և պետք է միջոցառումներ ձեռնարկել նաև այդ ուղղությամբ:

Այնուամենայնիվ, ռեժիմների երկարակետության տարբերու-
թյունները, ընդհանուր առմամբ, կարելի է կապել փոխարժեքի քա-
ղաքականության անհետևողականության և առնչվող մակրոտնտե-
սական քաղաքականության միջոցառումների հետ, ինչը նշանակում է՝ հավասարակշռված տնտեսական քաղաքականության և կառուց-
վածքային բարեփոխումներ, որոնք ուղղված են մեղմելու արժույթա-
յին կապի հնարավոր հետևանքները, լավագույն երաշխիքը մնում է ճգնաժամի ճնշման տակ դեմ գնալ գործող ռեժիմին:

Հարկ է նշել, որ այլընտրանքային ռեժիմների միջև տարբերու-
թյունները. ճգնաժամերի ենթարկվածության տեսակետից այնքան մեծ չեն եզրակացություն անելու համար, որ փոխարժեքի քաղաքա-
կանություն որոշելիս չպետք է հաշվի առնել նաև այլ նկատառումներ: Ընդհանուր առմամբ, փոխարժեքի ռեժիմի ընտրության վրա ազդում են շատ գործոններ՝ հաշվի առնելով երկրի կառուցվածքային ա-
ռանձնահատկությունները, ինչպես նաև կարճաժամկետ կամ գոր-
ծառնական նկատառումները: Չնայած ճգնաժամերի ենթարկվածու-
թյանը՝ արժույթային կապի ռեժիմները կարող են մնալ լավագույն տարբերակ այն երկրի համար, որի համար անհրաժեշտ է արագ ի-
ջեցնել գնաճը, կամ այն երկրի համար, որն ունի սերտ տնտեսական, քաղաքական և ֆինանսական կապեր այն երկրի հետ, որի արտար-
ժույթը նա ընտրում է որպես խարիսխ: Նմանապես՝ զարգացած ֆի-
նանսական շուկաների բացակայությունը և քաղաքականության ի-
րականացման սահմանափակ պոտենցիալը կարող են լողացող փո-

խարժեքի ռեժիմը դարձնել աննպատակահարմար շատ զարգացող երկրներում:

Այն հարցին, թե ինչու այդ դեպքում Հունաստանը հայտնվեց դեֆոլտային իրավիճակում, Նորբեյան մրցանակի դափնեկիր ամերիկացի հայտնի տնտեսագետ Փոլ Քրուզմանը պատասխանել է. «Տնտեսական հաջողության բանալին արժույթային անկախությունն է: Իսպանիան և Մեծ Բրիտանիան կարող են ունենալ պետպարտքի և բյուջետային պակասորդի միևնույն մակարդակը, սակայն դեֆոլտը, որպես իրական վտանգ, կսպառնա միայն Իսպանիային: Իսկ դա նշանակում է, որ ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության և սեփական արժույթ ունեցող մյուս երկրների քաղաքական գործիչները պետք է վերջապես հասկանան, որ սարսափի հեքիաթներից վախենալն անիմաստ է», - եզրահանգում է Քրուզմանը:

Որպես ճգնաժամը հաղթահարելու տարբերակ՝ կարող է լինել բազմարժույթային ֆինանսական համակարգի ստեղծումը՝ յուանի, եվրոյի, ռուբլու և այլ ռեգիոնալ արժույթների հավասարաչափ ընդգրկմամբ՝ բացառելով որևէ արժույթի գերակայությունը աշխարհում: Դա պետություններին հնարավորություն կտա դիվերսիֆիկացնել ֆինանսական քաղաքականությունը և ավելի ճկուն գործելու պայմաններ ստեղծել՝ զգալիորեն խուսափելով ցնցումային իրավիճակներից:

Այդ իմաստով ՀՀ 2012-2014թթ. դրամավարկային քաղաքականության հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր, որոնցից հատկանշական է **փոխարժեքի ռիսկը**: Փոխարժեքի ռիսկը էական է, քանի որ պետական պարտքի գերակշիռ մասը արտարժույթով է: Այս ռիսկը որոշ չափով մեղմանում է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարության արտաքին պարտքի մեծ մասը արտահայտված է SDR-ով (2010թ. տարեվերջի դրությամբ կազմել է մոտ 59%), որն իրենից չորս ազատ փոխարկելի արժույթների զամբյուղ է ներկայացնում, հետևաբար՝ ավելի քիչ տատանողական է:

**ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքը
2009-2011թթ.¹⁴**

	2009 փաստ.	2010 փաստ.	2011 փաստ.
USD	24.6	23.8	22.8
SDR	60.6	58.9	57.9
ERU	4.0	3.7	7.9
JPY	10.9	13.6	11.8
Այլ	0.001	0.03	0.09

Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի փոխարժեքների 1% շեղումը միջին հաշվով կփոփոխի ՀՀ կառավարության արտաքին պարտքը 23 մլն ԱՄՆ դոլարով: Փոխարժեքի ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչները կօգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարբեր մոտեցումներ:

Ճգնաժամի պայմաններում հարկերի կրճատման պարագայում կառավարությունը ստիպված եղավ գնալ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշի բարձրացմանը, սակայն առաջիկա տարիներին (սկսած 2011թ.-ից) կառավարության հստակ քաղաքականությունն է կրճատել պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշը:

Իսկ այն հարցին, թե ի՞նչ է կատարվում ռուսական ռուբլու հետ 2014 թվականին և ի՞նչ հետևանքներ կլինեն, դեռ վաղ է կանխատեսել, ուղղակի ներկա իրավիճակը գնահատելով՝ կարող ենք ասել, որ ռուբլու արժեզրկման գործընթաց է գնում: Ներկայումս Մոսկվայի փոխանակման կետերում և բանկերում անհնար է դարձել մեծ քանակությամբ արտարժույթի ձեռք բերումը: Այդ պատճառով ռուբլով կատարված իրենց խնայողությունները, որոնք օր օրի արժեզրկվում են, մարդիկ աշխատում են արագ վերածել ապրանքների, որի հետևանքով աճում են ինտերնետ վաճառքների, ինչպես նաև բիտկոին էլեկտրոնային արժույթի կիրառման ծավալները: ՌԴ իշխանություններն իհարկե խուսափում են հայտարարել, որ տեղի ունեցողը

¹⁴ Ներառված է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից տրամադրված արտարժույթային պարտքը:

ռուբլու դեվալվացիա է: Փորձ է արվում ռուբլու արժեզրկումը ներկայացնել որպես ֆինանսների նախարարության և Կենտրոնական բանկի կողմից փոխարժեքի և ինֆլյացիայի մակարդակի միջև հավասարակշռության հաստատմանն ուղղված համաձայնեցված քաղաքականության հետևանք:

Դեվալվացիան լինում է երկու տեսակի՝ *պաշտոնական*, երբ դրա մասին հայտարարվում է և շրջանառությունից հանվում են արժեզրկված թղթադրամները (կամ դրանք փոխարինվում են նորերով), և *թաքնված*, երբ պետությունը իջեցնում է դրամական միավորի իրական արժեքը՝ առանց շրջանառությունից արժեզրկված փողերը հանելու: Ներկայումս Ռուսաստանի Կենտրոնական բանկի կողմից իրականացվող միջոցառումները նման են սահուն կերպով թաքնված դեվալվացիա իրականացնելու փորձերի: ՌԴ Կենտրոնական բանկը պլանավորում է 2014 թ. ընթացքում ամբողջությամբ նախապատրաստվել 2015թ. լողացող կուրսի և ինֆլյացիայի զսպման քաղաքականությանն անցնելուն: Այդ նպատակով նախատեսվում է դեմոնտաժի ենթարկել արժութային միջակայքի մեխանիզմը, որով որոշվում է բաց շուկայում արժութային ինտերվենցիաների ծավալը: Նախկինում ռուբլու կայունությունը պահվում էր արտարժութային պահուստների հաշվին ինտերվենցիաներ իրականացնելու միջոցով: Հիմա իշխանությունները, փաստորեն, հրաժարվել են այդ գործելաոճից: Ընդհանրապես կարելի է նկատել, որ Ռուսաստանին ավելի շատ սարսափեցնում է ոչ թե ռուբլու, այլ դոլարի արժեզրկումը: Իսկ ո՞ւմ կարող է ձեռնտու լինել ռուբլու արժեզրկումը: Իհարկե, վառելիքային սեկտորի արտահանողներին: Բացի դրանից, դեվալվացիան անհրաժեշտ է կառավարությանը՝ բյուջետային պլանավորման նպատակներով: Բյուջեի եկամուտների շուրջ 60%-ը ձևավորվում է նավթադոլարների հաշվին: Բնական է, որքան դոլարը թանկ լինի, այնքան հնարավոր է ավելի շատ ռուբլով մուտքեր ապահովել զանձարան:

Այս զարգացումները Հայաստանի տնտեսության վրա կլինեն բացասական նախ և առաջ մասնավոր տրանսֆերտների ծավալների էական կրճատման առումով: Ռուսաստանի իշխանությունները նոր մեխանիզմներ կմշակեն իրենցից կախյալ երկրների շահագործումը

մեծացնելու, ինչպես նաև աշխատանքային միգրանտների վրա ծանրաբեռնվածության մի մասը տեղափոխելու ուղղությամբ¹⁵:

Forbes.ru-ի լրագրողները հետաքննություն են անցկացրել և պարզել, թե ինչով է պայմանավորված միջազգային արժույթների նկատմամբ ռուսական ռուբլու գների անկումը և որոշ փոխանակման կետերում արտարժույթի դեֆիցիտը: Հետազոտությունների արդյունքում ի հայտ է եկել պատճառների համալիր, սակայն ռուբլու արժեքի իջեցման կատալիզատորը հանդիսանում է ուկրաինական ճգնաժամը: Գլխավոր պատճառը, սակայն ռուսական բանկի կողմից արտարժույթային միջամտությունից հրաժարվելն է, պահուստային ֆոնդի համար արտարժույթի մեծ չափով գնումները, տնտեսական աճի ցուցանիշների նվազումը և ինֆլյացիայի աճը: Իսկ Forbes-ի կանխատեսումներով, սպասվում է ռուսական արժույթային շուկայի փլուզում: Շատ երկրներ Ռուսաստանի նկատմամբ «զգուշավոր» մոտեցում են որդեգրել, որը կապված է Ղրիմում հնարավոր պատերազմի սկսվելու հետ: Հանդեսի կանխատեսումներով, եթե քաղաքական հարցերը չլուծվեն, ապա մոտ ապագայում մի շարք զարգացող երկրներ կխզեն տնտեսական կապերը Ռուսաստանի հետ:

Բազմաթիվ և հատկապես զարգացող երկրներում վերջին շրջանում դրսևորվում է ազգային արժույթների թուլացման միտում: Այդպիսին է իրավիճակը ինչպես Ռուսաստանում կամ ԱՊՀ-ում, այնպես էլ շատ այլ երկրներում, որը հիմնականում պայմանավորված է կապիտալի արտահոսքով: Հայաստանի դեպքում դժվար է խոսել նույն երևույթի մասին, որովհետև վերջին երկու տարիներին ներքին տնտեսության մեջ, որպես այդպիսին, ներդրումային կապիտալի քիչ թե շատ էական հոսքեր չեն եղել: Ավելին՝ դրանց ծավալները նույնիսկ նվազել են: Այնպես որ, Հայաստանի արժույթային շուկայում նկատվող տարադրամային ճնշումների պատճառները հարկավոր է փնտրել այլ տեղում¹⁶:

¹⁵ <http://www.Iragir.am>

¹⁶ «Հայոց աշխարհ» թերթ

Բանալի բառեր՝ արժութային ճգնաժամ, փոխարժեքի ռեժիմ, միջանկյալ ռեժիմ, հաստատագրված ռեժիմ, լողացող ռեժիմ, լիկվիդայնություն, դեֆիցիտ, փոխարժեքի արժեզրկում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ Գիտական հրապարակումներ, գրքեր

1. Վ.Վ.Խաչատրյան, Ա. Ռ.Մակարյան, «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա՝ սոցիալական ազդեցություն», 2011թ.:
2. Jeffrey A. Frankel "National Bureau of Economic Research", 1999;
3. Masson, Paul R., 2001, "Exchange Rate Regime Transitions," Journal of Development Economics, Vol. 64 (April);
4. Andrea Bubula and Inci Otker-Robe, 2004, "The Continuing Bipolar Conundrum";
5. Rogoff, Kenneth and others, 2003, "Evolution and Performance of Exchange Rate Regimes," IMF Working Paper 03/243 (Washington:International Monetary Fund).;
6. Reinhart, Carmen M. and Kenneth S. Rogoff. 2004. "The Modern History of Exchange Rate Arrangements: A Reinterpretation. "Quarterly Journal of Economics, 119(1)
7. Reinhart, Carmen M. and Kenneth S. Rogoff. 2009, "The Aftermath of Financial Crises."
8. Paul Krugman: "Currency regimes, capital flows and crises." 2012թ.
9. ԱՎԾ, 2009թ. հրապարակում:

Ինտերնետ ռեսուրսներ և տվյալների բազա

1. Վիքիպեդիա, <http://hy.wikipedia.org/wiki/>
2. Արժույթի միջազգային հիմնադրամ, www.imf.org;
3. ՀՀ Կենտրոնական բանկ, www.cba.am
4. «ԱԶԳ օրաթերթ», <http://www.azg.am>
5. «Հայոց աշխարհ» օրաթերթ, <http://www.lragir.am>
6. "FORBES"- ամերիկյան ֆինանսների և էկոնոմիկայի ամսագիր, <http://www.forbes.ru/>
7. «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ, <http://www.armbanks.am>

Резюме

Глобальный кризис затронул почти все страны мира, сильно пошатнув все отрасли мировой экономики. Некоторые положительные изменения в экономике за последнее время могут дать основу полагать, что кризис уже заканчивается, но имеющиеся статистические данные свидетельствуют о том, что сам по себе кризис носит системный характер и не может быть окончательно устранен, если не будут произведены финансовой системные изменения. Осуществляемые меры устранения кризиса по своему характеру скорее всего направлены на смягчение последствий кризиса без устранения причин, порождающих его. Кризис, в первую очередь, является результатом неэффективной финансово-экономической системы США, а другие страны в свою очередь страдают из-за сильных финансово-экономических связей с США.

Один из вариантов преодоления кризиса может быть создание мультивалютной финансовой системы - юань, евро, рубль, и равное вовлечение других региональных валют, исключая превосходство какой-либо валюты над другой на мировом уровне.

Это позволит государствам диверсифицировать финансовую политику и создать более гибкие условия работы, значительно избегая шокирующих ситуаций.

В данной статье рассматриваются режимы денежно-кредитной политики, их характеристики, сильные и слабые стороны каждого режима. Кроме этого, также рассматривается опыт многих стран в области денежно-кредитной политики. Главным вопросом статьи является то, какие режимы более или менее подвержены кризису. При рассмотрении режимов валютных курсов «де-факто» в более чем 150 странах оказалось, что режимы валютной привязки (группа режимов жесткой и мягкой привязки) фактически более подвержены валютным кризисам, чем режимы плавающих валютных курсов (включая регулируемые и свободно плавающие курсы), особенно в странах, которые в наибольшей степени связаны с международными рынками. В среднем во многих странах примерно три четверти эпизодов кризисов из 12-летней выборки произошли в

условиях режимов валютной привязки, и частота кризисов, связанных с режимами валютной привязки, была выше, чем при режимах плавающего курса.

Ключевые слова; валютные кризис, режимы валютного курса, промежуточные режим, фиксированный режим, плавающий режим, ликвидность, дефицит, снижение обменного курса;

Resume

The global crisis has hit almost every country in the world, strongly affecting all the areas of the global economy. Latest positive changes may provide a basis to believe that the crisis is coming to its end, but the available evidence proves that this crisis is systemic and cannot be absolutely eliminated unless systematic changes are made. The measures, by their nature, are likely to mitigate the effects of the crisis without liquidation of the causes, leading to the crisis. First of all, the crisis is the result of ineffective financial and economic system of the United States, and other countries are also suffering because of the strong financial ties with the U.S.

One of the effective options for overcoming the crisis may be to create a multi-currency financial system (for example Yuan, Euro, Rouble) and equal involvement of all other regional currencies, excluding the superiority of any currency in the world. This may allow the countries to diversify their financial policy and create more flexible working conditions, significantly avoiding unexpected situations.

This article is about the modes of monetary policy, their main features, strengths and weaknesses. Moreover, the experience of many countries in the field of monetary policy is also discussed in the provided article. The main question of the subject is Which mode is more or less prone to crisis.

While considering the exchange rate regimes "de facto " in more than 150 countries, it was found that peg exchange rate regime (regime of hard and soft binding) is more prone to currency crises than floating exchange rate regime (including regulated and freely floating rates),

especially in those countries, that are more connected to international markets. On average, in most countries, about three-quarters of crises episodes within 12-year period occurred under pegged exchange rate regime, and the frequency of the crises, associated with pegged exchange rate regime, was higher than under the floating regime.

Key words: currency crisis, exchange rate regime, intermediate regime, fixed regime, floating regime, the liquidity, deficit, exchange rate depreciation.

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ

S.U. Վարդումյան, Է.Հ. Նասիյան

Սոցիալ-մշակութային համակարգը սոցիումի հասարակական կյանքի կարևոր բաղադրամասն է, որը նպատակաուղղված կատարում է բազմաթիվ գործառույթներ՝ մշակութապահպան, մշակութաստեղծագործական, լուսավորչական, ուսումնական և դաստիարակչական, սոցիալ-պաշտպանողական, հետազոտական, նախագծային, հաղորդակցական, գովազդային և այլն:

Սոցիալ-մշակութային գործունեությունը (ՍՄԳ) մեծ դեր է խաղում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և մարդու կյանքի որակի բարձրացման գործում: Այն պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. Բավարարում է մարդու մի խումբ կարևոր պահանջմունքներ: Երկրի տնտեսության զարգացումն ուղղված է դեպի մարդկանց պահանջմունքների բավարարումը: Պահանջմունքների ուսումնասիրությանն անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ: Դրանցից առավել ճանաչվածը ամերիկացի հոգեբան Ա. Մասլոուն է, որն առաջարկել է մարդկային պահանջմունքների հետևյալ խմբավորումները՝

- Կենսաբանական (մարդկային վերարտադրության, սննդի, ապրելատեղի, հագուստի, ֆիզիկական վարժանքներ, հանգիստ և այլն);
- Էկզիստենցիալ (սեփական գոյության անվտանգություն, հարմարավետություն, կենսագործունեության պայմաններ, զբաղվածության երաշխիք և այլն);
- Սոցիալական (սոցիալական կապեր, շփումներ, կապվածություններ, հոգատարություն, համատեղ գործունեություն և այլն);
- Հեղինակային (ինքնահարգանք, հարգանք շրջապատի կողմից, հաջողության նվաճում, բարձր գնահատական, ծառայողական աճ);
- Հոգևոր (ինքնազարգացում, ինքնաարտահայտում)[1]:

Ինչպես տեսնում ենք, պահանջմունքների մեծ մասը կրում է սոցիալ-մշակութային բնույթ: Սոցիալ-մշակութային գործունեությունն ուղղված է այդ պահանջմունքների բավարարմանը:

2. Ձևավորում և արտացոլում է երկրի մշակութային քաղաքականությունը: Սոցիալ-մշակութային մենեջմենթը հանդիսանում է մշակութային քաղաքականության բաղադրամաս: Քաղաքական գաղափարները և դրանց համապատասխանող կազմակերպությունները երկրի տնտեսական համակարգի արտացոլումն են: Ինչպես հայտնի է, պետության քաղաքականությունը տարածվում է հասարակությունում մարդու կյանքի բոլոր ոլորտների վրա և չի կարող չընդգրկել այնպիսի կարևոր ոլորտ, ինչպիսին մշակույթն է: Պատմության բոլոր փուլերում մշակույթի զարգացման գործում պետության դերը միշտ էլ մեծ է եղել, քանի որ մշակույթն ընդգրկում է հասարակության հոգևոր կյանքի շատ մեծ սպեկտր:

Մշակութային քաղաքականությունը, որպես պետական քաղաքականության մաս, իր աշխարհայացքով, տեսություններով մտցված է երկրի տնտեսական, սոցիալական, հոգևոր զարգացումների հայեցակարգի մշակման համակարգում:

Մշակութային քաղաքականությունը պատմական երևույթ է: Պատմության ժամանակային տարբեր փուլերում այն կարող է փոփոխվել՝ միաժամանակ հաշվի առնելով նաև պատմական ավանդույթները: Այսօր մշակութային քաղաքականությունը պետք է կառուցվի հետևյալ սկզբունքներով՝

- մշակութային քաղաքականությունը յուրաքանչյուր սոցիալ-քաղաքական համակարգի արտացոլումն է և պետք է գոյություն ունենա որպես ընդհանուր պետական քաղաքականության համակարգային մաս,
- մշակութային քաղաքականության ազատականացման կամ ավտորիտացման աստիճանը համապատասխանում է հասարակությունում ընդունված ժողովրդավարական սկզբունքների և ազատությունների զարգացման մակարդակին,
- մշակութային քաղաքականությունն ունի իր մշակութային առաջնայնությունների և արժեքների իրականացման մշակված տիպային մեխանիզմները,

- պետության մշակութային քաղաքականության սոցիալ-արժեքային կողմնորոշիչները ձևավորվում են տվյալ հասարակության նորմերի, արժեքների և գաղափարների հիման վրա,
- պետության մշակութային քաղաքականության էությունը պետք է լինի ոչ այնքան դրա ֆինանսավորման և նյութական բազայի ամրապնդումը, որքան սոցիալական արժեքների ամրապնդման և անհատի մշակութային զարգացման համար պայմանների ստեղծումը[2]:

3. Պատկանելով տնտեսական գործունեության ծառայությունների ոլորտին՝ բնութագրում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Սոցիալ-մշակութային գործունեության կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նա իր արտադրանքային բնույթով մտնում է ծառայությունների ոլորտի մեջ, որոնց տնտեսական ցուցանիշները երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բնութագրիչներն են:

XX դարի երկրորդ կեսից համաշխարհային տնտեսությունը անցում կատարեց դեպի հետինդուստրիալ ժամանակաշրջան, որի չափորոշչային հատկանիշներից էր հասարակության սպասարկման մոդելի ձևավորումը, համաձայն որի ազգային տնտեսությունում գերակշռում է ծառայությունների ոլորտի դերը, ինչն էլ հիմք է հանդիսանում ժամանակակից տնտեսությունը անվանելու որպես «ծառայությունների տնտեսություն», և շրջանառության մեջ մտավ «ծառայությունների ոլորտ» տերմինը: Այսօր ծառայությունների ոլորտի զարգացման աստիճանը դարձել է հասարակության զարգացման չափորոշիչը[3]:

Ուստի, կարևորելով ոլորտի դերը և նշանակությունը, առաջ է քաշվում դրա արդյունավետ կառավարման հիմնախնդիրը, որին անմիջականորեն նպաստում են կառավարման մի շարք կարևոր տարրեր: Դրանք են՝

- կազմակերպության ձևավորման և կառուցվածքային առանձնահատկությունները,
- ֆինանսական կառավարումը,
- անձնակազմի կառավարումը,
- մարկետինգը,

- նորամուծությունների կառավարումը տվյալ ոլորտում:

Անհրաժեշտ է նշել, որ նորամուծությունները կառավարման այն ոլորտն են, առանց որի անհնարին է խոսել կառավարման արդյունավետության մասին: Նորամուծությունները և դրանց կառավարումը բավականին լայն ձևով ներկայացված են կառավարման գրականությունում: Մանրամասն ներկայացված են նաև կառավարման ընդհանուր սկզբունքները, նպատակներն ու խնդիրները: Սակայն յուրաքանչյուր ճյուղ, այդ թվում և սոցիալ-մշակույթը, ունի իր առանձնահատկությունները և ներկայացնում է իր պահանջները նորամուծությունների կառավարման հանդեպ: Ներկայացված հոդվածում ուսումնասիրված են նորամուծության կառավարման առանձնահատկությունները սոցիալ-մշակութային ոլորտում:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը և գլոբալացումը հաճախ ստիպում են յուրաքանչյուր ոլորտին վերանայել կառավարման մեթոդը՝ կիրառելով նոր մոտեցումներ: Այս ամենին նպաստում է նաև գիտության և տեխնիկայի զարգացումը (օրինակ՝ մշակութային ոլորտում մշակույթը սպասարկող նոր, կատարելագործված տեխնիկական միջոցներ): ՍՄԳ-ի կառավարման նորամուծություններն ավելի արդիական են մեր երկրում, քանի որ այն, լինելով վարչահրամայական համակարգում, անցավ շուկայական հարաբերություններին, ինչը պահանջեց դրան համապատասխան մոտեցումներ: Ընդհանրապես ՍՄԳ-ն իր զարգացման մեջ անընդհատ փոփոխության է ենթարկել իր հիմնական հարացույցը, կառավարման և գործունեության սկզբունքները, իր ֆինանսների կառավարման առանձնահատկությունները, նաև իր կազմակերպչական կապերը մշակույթի կառավարման մարմնի, բնակչության և այլ կազմակերպությունների հետ: Ելնելով դրանից՝ մշակույթի կառավարման մարմինը, ինչպես նաև մշակութային կազմակերպությունը ձեռք են բերում նոր կարգավիճակ՝ դառնալով հասարակության մշակութային նախաձեռնությունների կենտրոն: Սոցիալական և մշակութային գործընթացների հասարակական դինամիկությունը պարտադրում է սոցիալ-մշակութային կազմակերպություններին արագ արձագանքել մշակութային արդի պահանջմունքներին և, ելնելով դրանից, վերանայել կառավարման մոդելները:

ՍՄԳ կառավարման տեսությունում առաջարկվում է նորամուծությունների կառավարման ժամանակակից մոդելի ձևավորման ժամանակ հաշվի առնել հետևյալ 3 հիմնական գործոնները՝

1. Կառավարման նորամուծական մոդելի մշակումը կլինի առավել արդյունավետ, եթե այն համապատասխանի սոցիալ-տնտեսական վերափոխումների և շուկայական հարաբերությունների մակարդակներին, ունենա գործունեության իրավական և ֆինանսական ինքնուրույնություն, ժողովրդավարական ազատություն, անձի ստեղծագործական ազատություն:

2. Կառավարման մոդելը պետք է համապատասխանի սոցիալ-մշակութային ոլորտի իրական պայմաններին և ձևավորված իրավիճակին:

3. Սոցիալ-մշակութային ոլորտի բոլոր մակարդակների աշխատողները պետք է գիտակցեն իրական օբյեկտիվ ձևավորված հարացույցը: Այսինքն՝ ՍՄԳ-ի կառավարման մոդելը մշակվում է կառավարման վերին օղակներում: Իսկ ներքին օղակները համաձայնեցնում են նաև նրանց շահերը, որոնց համար մշակվել է տվյալ մոդելը:

ՍՄԳ-ի նորամուծական կառավարման մոդելի կարևոր օղակը մշակութային գործունեության սուբյեկտներն են, այսինքն՝ այն ֆիզիկական անձինք և կազմակերպությունները, որոնք ունեն սեփական նպատակներ, ինքնուրույն որոշում են իրենց միջոցներն ու մեթոդները և գտնում սոցիալ-մշակութային իրավիճակի դրական փոփոխման ուղիներ:

Սոցիալ-մշակութային գործունեության կառավարումը բոլոր մակարդակներում պետք է ուղղված լինի դեպի անձի սոցիալ-մշակութային ինքնորոշման հնարավորությունների լայնացումը, պետք է հաշվի առնի հասարակության պահանջմունքները և նախագծի գործունեության այնպիսի ձևեր, որտեղ ինքը կարող է ներկայանալ որպես սուբյեկտ:

Կառավարչական մոդելի կարևոր սկզբունքներից է առաջադրված նպատակների իրականացումը:

Տարբեր տարածքային կառուցվածքների միջև գոյություն ունեցող քանակական ու որակական մշակութային տարբերությունն իրենից ներկայացնում է օբյեկտիվ իրականություն և իրավիճակ, որը պետք է հաշվի առնվի մոդելը մշակելու և իրականացնելու գործըն-

թացում: ՍՄԳ-ի տարածքային քանակական ու որակական տարբեր մակարդակների պատճառ կարող են լինել նյութական բազան, մշակութային կազմակերպությունների առկայությունը, կադրային ապահովումը, բնակչության սոցիալ-մշակութային ճկունությունը և ընդհանրապես երկրի մշակութային քաղաքականությունը: Նշված տարբերությունները պետք է հաշվի առնվեն կառավարման մոդելի ձևավորման համար, ուստի, համախմբելով դրանք միասնական իրավիճակային սկզբունքով, առաջարկված են դրանց համապատասխան կառավարման հետևյալ մոդելները՝

Տարբերակ 1. Տարածաշրջանում կամ քաղաքում մշակութային կազմակերպությունները քիչ են, նրանց գործունեությունը իներտ է, հասարակությունը՝ պասիվ, բացակայում են համաձայնեցված գործողությունները (նման իրավիճակը բնորոշ է գյուղական տարածքներին): Այս իրավիճակում անհրաժեշտ է ճշտել մշակույթի առաջնայնությունն ինչպես պետական, այնպես էլ ռեգիոնալ մակարդակում: Այսինքն, պետք է պետությունից և տարածքներից կուտակել ռեսուրսը և ուղղել դեպի «թույլ» օղակներ: Այդ նպատակի համար առաջարկվում է ստեղծել նոր ամբողջական համակարգող մշակույթի կենտրոն (օրինակ՝ բաժին, կոմիտե, նոր կառույց), որը պետք է աշխատի պայմանագրային սկզբունքով: Կենտրոնի հիմնական գործառույթը կլինի բացահայտել թույլ կողմերը, մշակել ծրագիր, ձևավորել ծրագրի իրականացման նյութատեխնիկական ռեսուրսները, ծավալել գործունեություն և վերահսկել այն: Խորհուրդ է տրվում աշխատանքում ներգրավել կամավորների, հասարակությանը:

Տարբերակ 2. Բնորոշվում է մշակութային կազմակերպությունների ցածր ակտիվությամբ: Տվյալ իրավիճակը նախատեսում է այնպիսի կառավարչական որոշումների ընդունում, որոնք ուղղված կլինեն տվյալ տարածքում բոլոր ռեսուրսների բացահայտմանը և այս գործունեությանն աջակցող սուբյեկտների ներգրավմանը:

Այս տարբերակում նախատեսում են հետևյալ աշխատանքները՝

- մշակութային ծրագրերի մշակում և իրականացում,
- ՍՄԳ ոլորտի նյութական և ֆինանսական ռեսուրսների ընդլայնում (օրինակ՝ բարեգործություն), պետության հատկացրած միջոցների ուղղում դեպի առաջնային գործունեություն,

- Նախաձեռնողական, ստեղծագործական խմբերի ձևավորում և դրանց ներգրավում ծրագրերի իրականացման գործում:

Տվյալ կառավարման մոդելը հաճախ կարող է հանդես գալ որպես ինքնուրույն ամբողջական ստեղծագործական համալիր և այն կարող է դրականորեն ազդել տարածքի սոցիալ-մշակութային ոլորտի զարգացման վրա:

Տարբերակ 3. Իրավիճակը հետևյալն է՝ տարածքում գոյություն ունեն ռեալ և պոտենցիալ մշակութային գործունեության սուբյեկտներ, որոնք կարող են հանդես գալ որպես մշակութային քաղաքականություն ձևավորողներ: Այս իրավիճակում են գտնվում այն տարածքները, որոնցում ստեղծագործական հանրության մշակույթում ղեկավար անձանցից բացի կան նաև ակտիվ, դեպի մշակույթը կողմնորոշված անձինք, որոնք կարող են մտցնել նոր գաղափարներ, որոնք համապատասխանում են հասարակության պահանջմունքներին, կարող են նպաստել մշակույթի գործիչների համախմբմանը: Այս իրավիճակում անհրաժեշտ է խրախուսել նախաձեռնողականությունը, որի համար պետք է հայթայթել ֆինանսական ու նյութական ռեսուրսներ: Նման գործունեության ակտիվության համար անհրաժեշտ է ուժեղացնել գովազդային գործունեությունը, դիմել միջնորդական ծառայություններին, ակտիվ մասնակցել հանրապետական և մարզային մշակութային ծրագրերին, որոշ դեպքերում դիմել անգամ բանկային վարկերի: Յուրաքանչյուր մշակույթի կազմակերպության առաջնային աշխատանք պետք է համարվեն նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը (շինարարական, վերանորոգման), ժամանակակից սարքավորումների ձեռք բերումը, քանի որ դրա միջոցով կարելի է ակտիվացնել մշակութային գործունեությունը տվյալ տարածքում[4]:

Այսպիսով, ամփոփելով նորամուծական մոդելի ձևավորման սկզբունքները, կարող ենք նշել՝

1. մոդելը պետք է հաշվի առնի երկրի և տարածքի սոցիալական և տնտեսական իրավիճակը, երկրում ընդունված կառավարական համակարգին համապատասխան,
2. մոդելը պետք է հաշվի առնի տվյալ ռեգիոնի մշակութային իրավիճակը, նյութական, ֆինանսական բազան, բնակչության ակտիվությունը, կադրերի առկայությունը,

3. կառավարման կառույցը չի կարող իրականացվել հին վարչական ձևերով: Այն պետք է հաշվի առնի նաև տարածքային և պետական մարմինների մասնակցությունը:

4. Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է մշակել մշակույթի զարգացման իրական ծրագիր և ներգրավել բոլոր հնարավոր ռեսուրսները:

5. Բացի պետականորեն գործող կառույցներից, արդյունավետ է նաև տարբեր կոմիտեների, կենտրոնների, խորհուրդների ձևավորումը՝ զուտ մշակութային ուղղվածությամբ:

Ընդհանուր առմամբ կառավարման համակարգում դժվար է գտնել այնպիսի մոդել, որը կիրառելի լինի տվյալ դեպքի համար: Հաճախ կառավարիչներից պահանջվում է, օգտվելով կառավարման սկզբունքներից, ցուցաբերել ճկուն մոտեցում և տվյալ իրավիճակի համար առաջարկել հիմնավորված նոր, նորամուծական մոտեցումներ:

Բանալի բաներ՝ նորամուծություն, նորամուծությունների կառավարում, սոցիալ-մշակութային գործունեություն, սոցիալ-մշակութային գործունեության կառավարում, սոցիալ-մշակութային ոլորտ, ծառայությունների ոլորտ, մշակույթի ոլորտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յու. Սուվարյան- Մենեջմենթ, Երևան, 2003թ., էջ 165
2. Востряков Л. Е., Государственная культурная политика: понятия и модели: монография. – СПб.: Издательство СЗИ РАХНиГС, 2011., с. 35-42
3. URL:<http://www.hse.ru/pubs/lib/data/access/ram/ticket/3/14031072342e12f41ef3cdd5c17a892399ef5146e8/>
(дата обращения:16.03.2014).
4. Учебник по дисциплине "Управление в социольно-культурной сфере" с. 54-60

Резюме

В статье была изучена сущность социально-культурной сферы и ее функции, факторы, определяющие ее значимость в процессе социально-экономического развития страны. А также анализированы особенности управления новшествами в сфере культуры, модели управления и представлены предложения об увеличении результативности управления инноваций.

Ключевые слова: инновация, менеджмент инноваций, социально-культурная деятельность, менеджмент социально-культурной деятельности, социально-культурная сфера, сфера услуг, сфера культуры.

Resume

This article explores the essence and functions of socio-cultural sphere and the factors which give importance to the process of socio-economic development of the country. It investigates the features of management of innovations in the cultural sphere and governing models as well. There are also made some suggestions to increase the efficiency of innovations management.

Key words: Innovation, innovation management, socio-cultural activity, management of socio-cultural activity, socio-cultural sphere, sphere of services, cultural sphere.

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Վ.Ա. Երանոսյան

Բանկերի դերը բնակչության խնայողությունների շուկայում չի սահմանափակվում պարզ միջնորդությամբ: Առևտրային բանկերը այդ շուկայում հանդես են գալիս նախ որպես դրամական ռեսուրսների սպառողներ: Բանկի գործունեությունը բնակչության խնայողությունների ներգրավման ուղղությամբ բաղմակողմ է և ոչ միանշանակ: Ներկայումս, ինչպես հայտնի է, բանկային համակարգում առկա է վարկային ռեսուրսների լուրջ պահանջ, որի արդյունքում շուկայում նկատվում է մրցակցության աճ և բանկերի համար լրացուցիչ հիմնախնդիրներ են ստեղծվում:

Այդ պայմաններում առաջանում է բնակչության միջոցների ներգրավման ուղղությամբ բանկի գործունեության կատարելագործման օբյեկտիվ անհրաժեշտություն, որպեսզի կանխվի ռեսուրսների արտահոսքը և ապահովվի ռեսուրսների այնպիսի կառուցվածքի ձևավորում, որը թույլ կտա դրանք օգտագործել առավել արդյունավետ՝ չնվազեցնելով բանկի իրացվելիությունը:

ՀՀ բանկային համակարգի օրենսդրական կարգավորման մեջ կարևոր նշանակություն ունի 17.06.2008թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է բանկերի կողմից քաղաքացիների ավանդների ներգրավման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանումն ու այդ կանոնների միջոցով սպառողների իրավունքների պաշտպանությունը¹:

ՀՀ-ում ավանդների նկատմամբ բնակչության վստահության բարձրացման վրա մեծ ազդեցություն ունի ավանդների երաշխավորման համակարգի ներդրումը ՀՀ ԿԲ-ի կողմից: Հիմնադրամի գործունեության նպատակը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետու-

¹ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=3337&lang=arm>


թյան օրենքով սահմանված ավանդների հատուցման երաշխավորումն ու ավանդատուների շահերի պաշտպանությունն է:

Հիմնադրամի գործունեությունը նպաստում է բանկային համակարգի հուսալիության, բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը, ինչպես նաև ուղղված է ֆինանսական ոլորտի վերաբերյալ ցածր իրազեկություն ունեցող ավանդատուների շահերի պաշտպանությանը:

Ավանդների երաշխավորման համակարգին 2005թ.-ից մասնակցում են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր 21 բանկերը: Սկսած 2010թ. հուլիս ամսից ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի երաշխավորված բանկային ավանդների չափերը կրկնապատկվել են և այժմ երաշխավորվում են ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային ավանդները (հաշիվները). դրամային ավանդների համար երաշխավորման առավելագույն չափը 4 մլն դրամ է, իսկ արտարժութային ավանդների համար՝ 2 մլն դրամ:

Մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ բանկային համակարգում բնակչության կողմից ներդրված ավանդների և ավանդատուների թվի դինամիկան: Այսպես, ինչպես և նախորդ տարիներին, 2012թ. ընթացքում ևս ՀՀ բանկային համակարգում գրանցվել է ավանդատուների թվի և ավանդների կայուն աճ: 2012թ. վերջին ֆիզիկական անձանց ընդհանուր բանկային ավանդների գումարը կազմել է 755.63 միլիարդ ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց բանկային ավանդները՝ 708.39 միլիարդ ՀՀ դրամ՝ բացառությամբ չերաշխավորված ավանդների գումարների, իսկ երաշխավորված ավանդները՝ 217.93 միլիարդ ՀՀ դրամ: 2011թ. համեմատ 2012թ. ֆիզիկական անձանց բանկային ավանդներն աճել են շուրջ 32%-ով, իսկ երաշխավորված ավանդները՝ շուրջ 27%-ով:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների և երաշխավորված ավանդների գումարները 2005-2012թթ. (միլիարդ ՀՀ դրամ)²



2012թ. ընթացքում բանկային ավանդների եռամսյակային միջին աճը կազմել է 7.3%, իսկ երաշխավորված ավանդների միջին աճը՝ 6.26%, ընդ որում 2-րդ և 4-րդ եռամսյակներում գրանցված աճը գերազանցում է մյուս եռամսյակների համանման ցուցանիշը:


2012թ. վերջին, 2011թ. վերջի համեմատ, երաշխավորված ավանդների կշիռը ֆիզիկական անձանց ավանդներում նվազել է և կազմել 30.8%, որը երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուներին բաժին ընկնող ավանդի գումարների մեծացման հետևանքն է:

2012թ. ընթացքում պահպանվել է ՀՀ բանկային համակարգում ավանդատուների թվի աճի միտումը: 2012թ. վերջի դրությամբ ՀՀ բանկերում ավանդատուների թիվը կազմել է 1,366,512 ավանդատու, ինչը գերազանցել է 2011թ. վերջի դրությամբ ՀՀ բանկերում ավանդատուների թիվը շուրջ 16%-ով:

2012թ. ՀՀ բանկային համակարգում ավանդատուների գերակշռող մասը կազմում են միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուները³:

² <http://www.adgf.am/index.php?al=reports&catid=89>

ՀՀ բանկային համակարգում 2012թ. վերջի դրությամբ միայն դրամային, միայն արտարժութային և միաժամանակ դրամային և արտարժութային ավանդներ ունեցող ավանդատուների կշիռները⁴



2011թ. համեմատ 2012թ. ՀՀ դրամով ավանդների կշիռը ավանդների ընդհանուր գումարում ավելացել է և կազմել 29.51%: Այսպիսով, կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում բնակչությունը սկսել է ավելի շատ վստահել բանկերին և խնայողությունները ներդնել այնտեղ որպես ավանդ՝ ապագայում տոկոսներ ստանալու ակնկալիքով:

Խնայողությունների քաղաքականության էության բնորոշմանը չի կարելի մոտենալ միակողմանիորեն: Որպես ամբողջական հասկացություն «խնայողությունների քաղաքականությունը» բանկային գործի վերաբերյալ գրականության մեջ գրեթե չի ներկայացվում: Աշխատանքների մեծ մասում օգտագործվում է պասիվների կառավարում հասկացությունը, ընդ որում այն դիտարկվում է որպես բանկի իրացվելիության քաղաքականության մի մաս: Պասիվների կառավարումը, բազմաթիվ գիտնականների կարծիքով, հանդիսանում է ակտիվների և պասիվների համակարգում բանկի կառավարման բաղկացուցիչ մաս, այսինքն առանձին (առանց ակտիվների գործառնությունների) չի դիտարկվում: Բանկային մենեջմենթի վերաբերյալ Պիտեր Ռուոզի հայտնի գրքում գոյություն ունի առանձին բաժին՝ «Դեպոզիտների վարման գծով ծառայությունների կառավարում»:

³ <http://www.adgf.am/index.php?al=reports&catid=89>

⁴ <http://www.adgf.am/index.php?al=reports&catid=89>

րում» որտեղ դիտարկվում են միայն դեպոզիտների շուկայում բանկի հաջող աշխատանքի տեսանկյունները:⁵ Խնայողությունների քաղաքականությունը հիշատակվում է Ա.Յու.Վիտտի կողմից, երբ նա նշում է, որ «ամբողջ քաղաքականությունը խնայողական դրամարկղների գործում պետք է ուղղված լինի դրանց հետագա զարգացմանը աղքատ շերտերում խնայման գործընթացի, ինչպես նաև փոքր խնայողությունների գումարով պետական ձեռնարկությունների գործունեության իրականացման ամրապնդմանը»:⁶

Խնայողությունների քաղաքականության էությունը և նպատակները փոփոխվում են կախված դրա սուբյեկտից: Այդ պատճառով, կարելի է տարբերել պետական, առևտրային բանկերի և հենց խնայողների խնայողությունների քաղաքականությունները:

Մեր կարծիքով, առևտրային բանկի կողմից խնայողությունների ներգրավման քաղաքականությունն իրենից ներկայացնում է վերադարձելիության և վճարելիության սկզբունքով բնակչության խնայողությունները ներգրավելու բանկի ռազմավարությունն ու մարտավարությունը:

Խնայողությունների բանկային քաղաքականությունը պետք է ներառի՝

- խնայողությունների ներգրավման ուղղությամբ բանկի գործունեության իրականացման ռազմավարության մշակումը՝ հենված շուկայի համակողմանի ուսումնասիրության վրա,
- խնայողություններ իրականացնողների համար նոր բանկային արտադրատեսակների մշակման, առաջարկման և զարգացման գծով բանկի մարտավարության ձևավորումը (ապրանքային, գնային, վաճառահանման և հաղորդակցության քաղաքականությունների ոլորտում),
- մշակված ռազմավարության և մարտավարության իրականացումը, վերահսկողության սահմանումը քաղաքականու-

⁵ См.: Роуз Питер С. Банковский менеджмент. Пер. с англ. - М.: Дело, 1997.С.359

⁶ См.: Петров- Ю.А., Калмыков С.В. Сберегательное дело в России: Вехи истории. - М.: К.И.Т., 1995С.60-68.

թյան իրականացման նկատմամբ և դրա արդյունավետության գնահատումը,

- բնակչության խնայողությունների ներգրավման ուղղությամբ բանկի գործունեության մոնիտորինգը, խնայողությունների քաղաքականության նպատակների ձեռք բերման համար բանկի տարբեր բաժանմունքների համագործակցության միջոցառումների մշակումը:

Խնայողությունների քաղաքականության դերը կայանում է այն գերակա ուղղությունների սահմանման մեջ, որոնք արտացոլում են բնակչության խնայողությունների ներգրավման և հանրագումարման, խնայողությունների դեպոզիտային և ոչ դեպոզիտային ձևերի կազմակերպման ուղղությամբ բանկի գործունեության զարգացումն ու կատարելագործումը:

Խնայողությունների քաղաքականության դերակատարումը տարբեր է՝ կախված այն որոշող սուբյեկտներից: Այդ պատճառով էլ կարելի է խոսել խնայողությունների քաղաքականության մակրո և միկրոմակարդակների գոյության մասին: Մակրոտնտեսական մակարդակում խնայողությունների քաղաքականությունը հանդիսանում է պետական քաղաքականության մի մասը: Դրա հիմնական նպատակն է բնակչության խնայողությունների ներգրավումը տնտեսության կապիտալացման գործընթացում, այդ պատճառով այն ունի խոշոր նշանակություն վարկային գործընթացի համար, քանի որ խնայողությունները ներդրումների հիմնական աղբյուրներից են և կապիտալի շուկայի մաս: Միկրոտնտեսական մակարդակում խնայողությունների քաղաքականությունը հանդես է գալիս որպես բնակչության խնայողությունների ներգրավման ուղղությամբ բանկի գործունեության կարգավորիչ և որպես կուտակված արժեքի պահպանման ուղղությամբ խնայողի գործողությունների հիմք: Որոշակի բանկի մակարդակում՝ խնայողությունների քաղաքականության դերը երևում է բանկի կայունության, շահութաբերության, իրացվելիության ապահովման մեջ, ինչպես նաև հաճախորդների՝ ֆիզիկական անձանց, պահանջմունքներին դրա գործունեության համարժեքության մեջ: Տնային տնտեսությունների մակարդակում՝ դրա դերն արտահայտվում է ընտանիքի կամ անձի կայուն նյութական վիճակի, բարե-

կեցության բարձրացման և սպառման կայունության ապահովման մեջ:

Խնայողությունների քաղաքականությունը բանկի գործունեության կառավարման գործընթացի բաղկացուցիչներից մեկն է: Ինչպես ցանկացած տնտեսական գործընթացի կառավարում, բնակչության խնայողությունների ներգրավման հետ կապված դեպոզիտային և ոչ դեպոզիտային գործառնությունների կառավարումը պետք է ներառի դրա բոլոր բաղկացուցիչները՝ նպատակների և խնդիրների ընտրություն, հաշվառում, պլանավորում, վերլուծություն, մոնիտորինգ, վերահսկողություն, կարգավորում:

Առևտրային բանկում խնայողությունների քաղաքականության հիմնական խնդիրները բնակչության խնայողությունների ներգրավման մասով պետք է լինեն՝

1. խնայողությունների շուկայի մարկետինգային հետազոտությունների անցկացում,

2. խնայողությունների ներգրավման համար նոր բանկային արտադրատեսակների ներդրում,

3. այնպիսի գնային քաղաքականության վարում, որը թույլ կտա նվազեցնել տոկոսային ծախսումները ներգրավվող ռեսուրսների գծով և չի իջեցնի բանկային արտադրատեսակների գրավչությունը խնայողություններ կատարողների համար,

4. բանկի վաճառահանման ցանցի զարգացում և հաճախորդների սպասարկման որակի բարձրացում,

5. մարկետինգային հաղորդակցությունների օգտագործումը սեփական արտադրատեսակների առաջխաղացման, խնայողություններ կատարողների տեղեկացվածության մակարդակի և բանկի նկատմամբ վստահության բարձրացման համար,

6. բնակչության խնայողությունների ներգրավման ուղղությամբ բանկի գործունեության նկատմամբ մոնիտորինգի իրականացում:

Խնայողությունների բանկային քաղաքականության վրա ազդեցություն է ունենում ոչ միայն երկրի տնտեսական իրավիճակը, այլև տարածաշրջանային գործընթացները: Այդ քաղաքականության վրա նշանակալի ազդեցություն ունի նաև ներքին բանկային միջավայրը, ինչպես՝ դեպոզիտների կայունությունը, իրականացվող գոր-

ծառնությունների և ծառայությունների տեսականին, բանկի աշխատակազմի որակավորումը և փորձառությունը, բանկի հաճախորդների ձևավորված կազմը, բանկի գնային քաղաքականությունը, և իհարկե, բանկի կորպորատիվ ռազմավարությունը:

Կարծում ենք, որ մշակելով խնայողությունների ներգրավման ռազմավարության ուղղությունները, բանկը պետք է հենվի ընդհանուր կորպորատիվ ռազմավարության վրա:

Բանալի բառեր' խնայողություններ, ավանդ, ներգրավում, առևտրային բանկ, քաղաքականություն, պասիվներ:

Резюме

Значение банков на рынке депозитов было подчеркнuto, представляя их в первую очередь как потребителей финансовых ресурсов. Представлено многосторонняя деятельность банков в привлечении сбережений населения. Выявлены роль, характеристики и цели сберегательной политики. Изучены различные изменения вкладов населения в банковской системе РА. Оказалось, что население начал больше доверять банкам, делать вклады в ожидании будущих доходов.

Ключевые слова: сбережения, вклад, привлечение, коммерческий банк, политика, пассивы

Resume

The importance of banks in the deposits market has been underlined, presenting them first of all as consumers of financial resources. The multilateral activity of banks in the attraction of population savings has been shown. Characteristics of the nature and goals of deposits policy were given. The role of deposits policy was exposed. Various changes of population deposits in RA banking system were studied. It turned out that population has started to trust banks more, to make deposits in anticipation of future returns.

Key words: savings, deposit, commercial bank, attraction, policy, liabilities.

ՀՀ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. Եղիազարյան

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ հյուրանոցային տնտեսությունը ներառում է հյուրանոցները, մոթելները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան և մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային, մանկապատանեկան և ճամբարային բնակատեղիները (համալիրները), զբոսաշրջային տները: Սրանք հանդիսանում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներ [1, էջ 23-25]:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների շարքում մեծ նշանակություն ունեն հյուրանոցային տնտեսության օբյեկտները: Հյուրանոցային բարձրակարգ ցանցերի ձևավորումն ու զարգացումն այսօր առաջնային և արդիական խնդիրներից է, հատկապես այն պայմաններում, երբ Հայաստանի տարբեր մարզերում բացակայում են անգամ տարրական պայմաններով հյուրանոցային օբյեկտները:

Հարկ է ընդգծել, որ առհասարակ զբոսաշրջային բոլոր ենթակառուցվածքները գերազանցապես կենտրոնացված են միայն Երևանում: Հանրապետության մարզերում և քաղաքներում բացակայում են զբոսաշրջության զարգացմանն անհրաժեշտ ռեստորանային, ժամանցային, մշակութային ենթակառուցվածքները: Դա հիմնականում պայմանավորված է հասարակական պահանջարկի բացակայությամբ, որն էլ իր հերթին բնակչության չափազանց ցածր կենսամակարդակի հետևանք է:

Զբոսաշրջիկների շրջանում դժգոհություն է առաջացնում այն փաստը, որ մարզերում հյուրանոցների բացակայության պատճառով նրանք ստիպված են իրենց շրջագայությունները կազմակերպել մեկ օրվա ընթացքում:

Հաշմանդամների ազատ տեղաշարժի նորմերին չհամապատասխանող շենքերի, հասարակական օբյեկտների կառուցումը Հայաստանում ոչ միայն ոտնահարում է Հայաստանում ապրող հաշման-

դամների իրավունքները, այլ նաև ինչ-որ առումով խոչընդոտում է զբոսաշրջության զարգացմանը:

Հաշմանդամների բնակության համար անհրաժեշտ նվազագույն պայմաններին հարմարեցված է հայաստանյան ընդամենը մեկ հյուրանոց՝ «Մարիոթը», մնացած հյուրանոցները հաշմանդամ զբոսաշրջիկներ ընդունելու համար բոլորովին պիտանի չեն: Ցանկացած արտասահմանցի, անգամ ոչ հաշմանդամ, երբ տեսնի այդ պայմանները, կմտածի, որ Հայաստանը բավականին հետամնաց երկիր է: Մինչդեռ, զբոսաշրջության մասին օրենքում կա հստակ կետ, որտեղ նշվում է, որ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում քաղաքացին պետք է ապահովված լինի նվազագույն հյուրանոցային ծառայություններից օգտվելու հնարավորությամբ: Սա արդեն օրենքի պահանջ է, և հյուրանոցային տնտեսություններին ընձեռնվում է որոշակի ժամանակ՝ իրենց ծառայությունները հարմարեցնելու հաշմանդամների տեղաշարժի համար նախատեսված նվազագույն պահանջներին [1]:

Հայաստանում և անգամ Երևան քաղաքում առանց լուրջ թերության ոչ մի հյուրանոց չկա: Համաձայն M-Info մարկետինգային ընկերության մասնագետների կողմից 2012թ. իրականացված սոցիալական հարցումներից ստացված տվյալների՝ Հայաստանը զբոսաշրջության զարգացման գործում դեռևս շատ լուրջ անելիքներ ունի: Մասնավորապես, հարցման ենթարկված զբոսաշրջիկների մեծ մասը դժգոհություն է հայտնել ռեստորաններում և հյուրանոցներում մատուցվող կերակուրների որակի և տեսականու առնչությամբ, հատկապես այս հարցում տուժում են բուսակերները, որոնց սննդի նկատմամբ նախասիրությունները հաշվի չեն առնվում հյուրանոցների ռեստորաններում: Հյուրանոցներում շրջանցում են նաև այն հանգամանքը, որ օդի մաքրությունը հատկապես կարևոր է չժխող հաճախորդների համար, վերջիններս դժգոհություն են հայտնել չժխողների համար հարկաբաժինների բացակայության առնչությամբ, հյուրանոցների միջանցքներում ծխախոտի ծուխը գրեթե անպակաս է: Այսպես օրինակ, համաձայն սոցիալական հարցումների տվյալների՝ «Մարիոթ Արմենիա» հյուրանոցում իջևանած 55 զբոսաշրջիկների ընդամենը 18%-ն է գոհ հյուրանոցի ծառայություններից, 8%-ը դժգոհ է բարձր գներին չհամապատասխանող սպասարկումից, սակայն

հիմնական դժգոհությունն առնչվում է նաև լողավազանի բացակայությանը: «Անի պլազա» հյուրանոցում իջևանած զբոսաշրջիկների հիմնական դժգոհությունն առնչվում է փոքր սենյակներին և բարակ միջնապատերին, ինչի հետևանքով աղմկոտ հարևանների առկայության պայմաններում դժվար է քնել: «Անի» հյուրանոցի զբոսաշրջիկների 10%-ը դժգոհ է հիմնականում սննդից: Ի տարբերություն «Մարիոթի»՝ «Անի» հյուրանոցում կա լողավազան, սակայն զբոսաշրջիկներին չի գոհացնում այն հանգամանքը, որ հյուրանոցի տնօրինությունը դրանից օգտվելու համար լրացուցիչ վճար է պահանջում: «Կոնգրես» հյուրանոցի գլխավոր թերությունը փողոցից եկող անվերջ աղմուկն է, և սպասարկումն էլ, հարցման մասնակիցների կարծիքով, պարզվում է այնքան էլ բարձր մակարդակի վրա չէ: «Մետրոպոլ» հյուրանոցում զբոսաշրջիկները կցանկանային զործ ունենալ ավելի ճշտապահ, պատասխանատու անձնակազմի հետ: «Գոլդեն Թուլիփ» հյուրանոցում, հարցման մասնակիցների կարծիքով, չափազանց աղքատ է կերակուրների տեսականին [6]:

Հայաստանի հյուրանոցային տնտեսության մասին խոսելիս անհնար է շրջանցել անհամապատասխան ու չափազանց բարձր գները: Այսօր նույնիսկ 40000-70000 ՀՀ դրամով կարելի է հանգիստը կազմակերպել հարևան Վրաստանում՝ գումարած ծովի առկայությունը: Փոքր-ինչ վճարունակները նախընտրում են նաև ամռան սեզոնին հանգստի մեկնել Անթալիա, ուր առաջարկվող տուրփաթեթների միջին արժեքը մեկ անձի համար 180000-250000 ՀՀ դրամ է, ներառյալ ավիատոմսը և երկանգամյա սնունդը: Հայերը նախընտրում են նաև հանգստանալ Բուլղարիայի Վառնա քաղաքում և Հունաստանում, որտեղ 1 անձի համար նախատեսվող գումարը 250000-350000 ՀՀ դրամի սահմաններում է: Եվրոպայի սրտում՝ Փարիզում, օրինակ, ամռան սեզոնին հանգստանալու համար մեկ անձի համար նախատեսվող մեկշաբաթյա փաթեթն սկսվում է 450000 ՀՀ դրամից, իսկ էկզոտիկ երկրներում՝ Թաիլանդում և Մալդիվյան կղզիներում՝ 600000-1000000 ՀՀ դրամ [7]:

Ի հակադրություն սրան՝ Հայաստանում՝ Դիլիջանի և Ծաղկաձորի լավագույն հանգստյան տներում գները մեկ օրվա համար տատանվում են 28000-40000 ՀՀ դրամի, իսկ ընտանեկան փաթեթների դեպքում՝ մինչև 90000 ՀՀ դրամի սահմաններում: Զերմուկում

գները փոքր-ինչ ավելի բարձր են, քանի որ ներառում են առողջարարական և վերականգնողական գործառույթներ: Այստեղ գները 40000-100000 ՀՀ դրամի սահմաններում են: Սևանի ամենաթանկ հյուրանոցային համալիրում, որը վերակառուցվել և հիմնանորոգվել է վերջերս, մեկ օրվա դիմաց արժաթե և յուրքս համարներն առաջարկվում են 250000 ՀՀ դրամով, Գորիսում մեկ անձի համար կարելի է հանգստյան տուն գտնել 17000-38000 ՀՀ դրամի, Իջևանում՝ 16000-30000 ՀՀ դրամի, իսկ Մեղրիում՝ 15000-45000 ՀՀ դրամի սահմաններում, ընդ որում դրա մեջ մտնում է միայն նախաճաշը [8]:

Ուսումնասիրելով վերը ներկայացված գնացանկը՝ կարելի է ասել, որ զբոսաշրջիկը Հայաստանում անցկացնելով 10 օր (տուրփաթեթով) միջինը ծախսում է 1600 ԱՄՆ դոլար կամ 660800 ՀՀ դրամ, այսինքն, օրական 66080 ՀՀ դրամ, այն էլ առանց տրանսպորտային ծախսերի [8]: Մինչդեռ Հայաստանից մեկնող երկու զբոսաշրջիկի համար երկշաբաթյա հանգիստն Անթալիայում, ծովի ափին գտնվող 4-աստղանի հյուրանոցում, ներառյալ ինքնաթիռի տոմսը, կարժենա ընդամենը 3400 ԱՄՆ դոլար: Պարզ թվաբանական գործողություններ կատարելով՝ կատանանք, որ մեկ անձի համար մեկ օր Անթալիայում հանգստանալն արժի մոտ 49000 ՀՀ դրամ կամ 120 ԱՄՆ դոլար: Ընդ որում, եթե 4-աստղանի հյուրանոցի փոխարեն զբոսաշրջիկները նախընտրեն ավելի էժան հյուրանոց, ապա գումարը շատ ավելի քիչ կլինի [9]:

Ելնելով վերոշարադրյալից՝ ներկայացնում ենք Հայաստանում զբոսաշրջային ծառայությունների, մասնավորապես հյուրանոցային համալիրների բարձր գներն այլ երկրների նմանօրինակ ծառայությունների գների հետ համեմատած [7].

Աղյուսակ 1

Զբոսաշրջիկներին առաջարկվող տուրփաթեթների գնացանկերի համեմատական բնութագիրը

Հ/Հ	Երկիր/զբոսաշրջավայր	Մեկշաբաթյա տուրփաթեթի միջին արժեքը մեկ անձի համար /ՀՀ դրամ
1.	Վրաստան	40000-70000
2.	Բուլղարիա (Վառնա)	250000-350000

3.	Փարիզ	սկսած 450000
4.	Թաիլանդ	600000 – 1000000
5.	Մալդիվյան կղզիներ	600000-1000000
6.	Թուրքիա (Անթալիա)	351050
7.	Հայաստան	463000

Փաստը մնում է փաստ, որ Հայաստանում գները ոչնչով չեն զիջում արտասահմանյան երկրներում առաջարկվող գներին և այդ պատճառով էլ զբոսաշրջիկները ձգտում են, նույն գինը վճարելով, հանգստի մեկնել եվրոպական երկրներ: Իսկ ծովի սիրահարները, որոնք, ի դեպ, մեծ զանգված են կազմում, նախընտրում են, հայաստանյան գների կեսից ավելի քիչ վճարելով, հանգիստը վայելել հարևան Վրաստանում: Թերևս գնային այս անբացատրելի քաղաքականությունն է նաև պատճառը, որ հանրապետություն ժամանած զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը նախընտրում է հանգրվանել ոչ թե հյուրանոցներում, այլ բարեկամի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլ ժամանակավոր կացարաններում: Այս կապակցությամբ նշենք, որ միայն 2012թ. ընթացքում Հայաստան այցելած օտարերկրյա զբոսաշրջիկների ընդհանուր թիվը կազմել է 843330 մարդ, որից ընդամենը 136644-ն է հանգրվանել հյուրանոցային համալիրներում, իսկ մնացած գերակշիռ հատվածը՝ 706686-ը, բարեկամի տանը կամ էլ վարձով բնակարաններում: Եթե համեմատենք նշված ցուցանիշները նախորդ տարիների հետ, ապա կստացվի հետևյալ պատկերը [3, էջ 82-83].

Աղյուսակ 2

«Հայցելած օտարերկրյա զբոսաշրջիկների տեղաբաշխումը 2010-2012թթ. ընթացքում»

	2010թ.	2011թ.	2012թ.
Հյուրանոցների քանակը, որոնք ընդունել են օտարերկրյա զբոսաշրջիկների	50	58	54
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՀՀ-ի միջազգային մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ	687229	757935	843330
որոնցից տեղավորվել են՝			

հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	70209	124113	136644
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	617020	633822	706686

Ինչ վերաբերում է ՀՀ հյուրանոցային տնտեսության շրջանառությանը, ապա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում 2010թ. ընթացքում հյուրանոցային տնտեսության օբյեկտների կողմից վաճառվել է 524200 ննջատեղ, իսկ 2011թ. ընթացքում՝ 556900 ննջատեղ, այն դեպքում, երբ Հայաստանում հյուրանոցների թիվը կազմում է 149: Ինչ վերաբերում է զբաղվածության ցուցանիշին, ապա 2010թ. ՀՀ-ում հյուրանոցային տնտեսության օբյեկտների զբաղվածությունն ընդհանուր առմամբ կազմել է 30,5%, իսկ 2011թ. այս ցուցանիշը բավականին նվազել է նախորդ տարվա համեմատ՝ կազմելով 26,76% [4, էջ 102]: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ մեր երկրում հյուրանոցային տնտեսության գործունեությունն իրեն գրեթե չի արդարացնում:

Կադրային առումով նույնպես Հայաստանի հյուրանոցային համակարգը բավականին անմխիթար վիճակում է գտնվում: Խիստ փոքր է զբոսաշրջության ոլորտում մասնագիտական որակավորում ունեցող աշխատողների թիվը, ոմանք պարզապես անտեղյակ են ոլորտին և անգամ չեն էլ պատկերացնում, թե ինչ ասել է լինել սպասարկման ոլորտի աշխատող: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 13 ուսումնական հաստատություններ, որոնք պատրաստում են զբոսաշրջային գործի բարձրակարգ մասնագետներ. դրանց թվում են Երևանի պետական համալսարանը, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիան, Ռուս-հայկական սլավոնական համալսարանը, Մոսկվայի սերվիսի ինստիտուտը, Զբոսաշրջության հայկական ինստիտուտը և այլն [10]:

Այնուամենայնիվ, սա ևս բավարար չէ, որպեսզի խոսենք Հայաստանում զբոսաշրջության ոլորտի աշխատողների մասնագիտական որակավորման մասին, քանի որ զուգահեռ պետք է կազմակերպվեն որակավորման և վերապատրաստման դասընթացներ թե տեղում, թե արտասահմանում:

Հյուրանոցային տնտեսության զարգացումը Հայաստանի Հան-

րապետությունում կարևորվում է ոչ միայն հյուրընկալության ոլորտում որակյալ մասնագիտական կադրերի ներգրավման, այլ նաև առհասարակ աշխատանքի շուկայի կարգավորման տեսանկյունից: Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության տեղեկատվական աղբյուրների՝ աշխարհում զբոսաշրջության ոլորտում զբաղված մոտ 100 մլն մարդկանց կեսից ավելին աշխատում է հյուրանոցային համալիրներում [2, c. 220-221]: Կարևորելով այն հանգամանքը, որ զբոսաշրջության և, մասնավորապես, հյուրընկալության ոլորտին բաժին է ընկնում աշխարհում յուրաքանչյուր 3-րդ աշխատատեղը՝ ներկայացնենք տարածաշրջանային կտրվածքով զբոսաշրջության ոլորտում բնակչության զբաղվածության ընդհանուր պատկերը: Հարկ է միաժամանակ նշել, որ համաձայն Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային կազմակերպության (World Travel & Tourism Council /WTTC/) տվյալների՝ զբոսաշրջության ոլորտն ուղղակիորեն հանդիսանում է գործատու շուրջ 1655500 մարդու համար հետևյալ երկրներում՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Ուկրաինա և Ղազախստան: Զբոսաշրջության ոլորտում զբաղվածության ամենամեծ բաժինը 2012թ. գրանցվել է Վրաստանում՝ (4%), որին հաջորդել է Ադրբեջանը՝ (2%) և այս առումով տարածաշրջանային երկրների շարքում 3-րդ տեղում է Հայաստանը (1,9%): Մեր երկրի հյուրընկալության ոլորտում վերջին տարիներին հատկապես մեծացել է կանանց ներգրավվածությունը, ուր վերջիններիս տեսակարար կշիռն ընդհանուր աշխատողների թվաքանակում կազմում է 65-70%: Համաձայն Զբոսաշրջության և ճանապարհորդությունների համաշխարհային կազմակերպության կանխատեսումների, սակայն, 2013թ. Հայաստանում այս ցուցանիշը կարձանագրի աննշան աճ (0,8%), որի արդյունքում մեր երկիրը համաշխարհային վարկանշային աղյուսակում հիշյալ ցուցանիշով կզբաղեցնի 182-րդ տեղը [5].

Բնակչության զբաղվածությունը զբոսաշրջության ոլորտում.

Երկիր	2012թ. ներդրումների ընդհանուր ծավալում զբոսաշրջային ներդրումների բաժինը, %	Վարկանշային տեղը		Աճը 2013թ.	Վարկանշային տեղը	Ներդրումների ընդհանուր ծավալում զբոսաշրջային ներդրումների բաժինը %
		%-ային համեմատությամբ	Բացարձակ նշանակությամբ			
Հայաստան	1,9%	153	142	0,8%	182	-1,7%
Ադրբեջան	2,0%	148	92	6,9%	166	0,4%
Ղազախստան	1,5%	167	73	0,2%	174	-0,2%
Ռուսաստան	1,4%	172	17	4,4%	163	0,6%
Ուկրաինա	1,9%	151	35	5,8%	175	-0,5%
Վրաստան	4,0%	77	100	1,5%	160	0,6%
Միջինն աշխարհում	5,4%			1,3%		2,0%

Չնայած ոլորտում առկա թերություններին ու բացթողումներին՝ ՀՀ հյուրանոցային համակարգում վերջին տարիներին արձանագրվել են բավականին լուրջ տեղաշարժեր: Հատկանշական է, որ 2010-2012թթ. ընթացքում հյուրանոցների թիվը մեր երկրում գրեթե կրկնապատկվել է՝ 76-ից հասնելով 149-ի: Մինևույն ժամանակ հյուրանոցային համարներում մահճակալների թիվն աճել է ընդամենը 1,4 անգամ, որը դեռ բավականին ցածր ցուցանիշ է: Հյուրանոցային տնտեսությունը բավականին մեծ զբաղվածություն է ապահովել հատկապես 2011թ.՝ ընդհանուր հաշվով 2560 աշխատող [11]:

Արդեն 2012թ. մեր երկրում բացվել են 5 նոր հյուրանոցներ՝ «Թուֆենկյան» հյուրանոցային համալիրը, «Նացիոնալ» բուտիկ-հյուրանոցը, «Նաիրի» հյուրանոցը, «Սիլաչի» հյուրանոցի նոր համալիրը և Marriott Hotel հյուրանոցային համալիրը Ծաղկածորում: 2012թ.

գրոսաշրջային օբյեկտների կտրուկ աճ է նկատվել մեր երկրում՝ հասնելով 280-ի, որոնք ընդհանուր առմամբ տեղավորում են 98500 մարդ: 2013թ. նախատեսվում է բացել ևս 2 նոր հյուրանոց՝ Hyatt հյուրանոցային ցանցը Ջերմուկում և Երևանում, ինչպես նաև Golden Palace հյուրանոցը Ծաղկաձորում [12]:

Ստորև բերված է ՀՀ գրոսաշրջային կենտրոնների մանրամասն նկարագիրն ու բնութագիրը [11].

Աղյուսակ 4

ՀՀ հանգստյան գոտիների բնութագիրը 2012թ. դրությամբ

Հանգստյան օբյեկտների տեսակները 2012թ. դրությամբ	Քանակը	Տարողությունը (հազ. Մարդ)
Առողջարաններ	31	6,4
Հանգստյան տներ, պանսիոններ, սպորտային կենտրոններ	128	26,3
Զբոսաշրջային տներ	19	5,2
Դպրոցական ճամբարներ	102	60,6
Ընդամենը	280	98,5

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ սեյակների զբաղվածության տեսանկյունից առաջատարն են բարձր դասի հյուրանոցները, որտեղ համարների զբաղվածության միջին տարեկան ցուցանիշը կազմում է 60%: Վերջին տեղում են այս ցուցանիշով էկոնոմ դասի հյուրանոցները՝ (44%) [13]:

Հյուրանոցային և ռեստորանային բիզնեսը 2011թ. կազմել է Հայաստանի ծառայությունների ոլորտի 5,1%-ը՝ արձանագրելով 7,5% աճ նախորդ տարվա համեմատ: 2012թ. հյուրանոցային բիզնեսի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 0,66%, և ակնկալվում է, որ 2015թ. այդ ցուցանիշը կհասնի 0,8%-ի [13]:

Կատարված հետազոտություններից պարզվում է, որ բիզնեսի շահութաբերությամբ Հայաստանում երկրորդ տեղում են էկոնոմ դասի հյուրանոցները (13,1%), երրորդում՝ միջինից բարձր դասի հյուրա-

նոցները (12.2%), իսկ շահութաբերության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է բարձր դասի հյուրանոցներում (11,8%), որն, ինչ խոսք, պայմանավորված է հյուրանոցային սպասարկման չափազանց բարձր գներով [13]:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ չնայած վերջին տարիներին արձանագրված լուրջ տեղաշարժերին՝ հյուրանոցային տնտեսության արդիականացման ու զարգացման գործում մեր երկիրը դեռևս շատ անելիքներ ունի: Ոլորտում առկա բացթողումները վերացնելու նպատակով հարկ է մշակել հստակ կադրային ռազմավարություն՝ զբոսաշրջության և, մասնավորապես, հյուրանոցային տնտեսության աշխատողների մասնագիտական ուսուցման և վերապատրաստման նպատակով, բացի այդ, անհրաժեշտ է Հայաստանի հյուրանոցային համակարգը վերազինել նորագույն տեխնոլոգիաներով, վերահսկողություն սահմանել սանիտարահիգիենիկ նորմերի նկատմամբ, վերանայել առկա գներն ու դրանց կարգավորման ուղղությամբ մշակել հստակ գնային ռազմավարություն, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի միջոցով ինտեգրվել համաշխարհային հյուրանոցային ցանցերին:

Վերը թվարկված խնդիրները խիստ արդիական են մեր երկրում և հանդիսանում են կարևորագույն նախապայման Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար:

Բանալի բառեր՝ հյուրանոցային համալիրներ, զբոսաշրջային ծառայություն, զբոսաշրջային ենթակառուցվածքներ, մասնագիտական կադրեր, հյուրանոցային սպասարկում, հյուրանոցային շրջանառություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 8-11: ՀՀՊՏ № 6(305), Ե., 29.01.2004, էջ 23-25:
2. Папирян Г.А., Международные экономические отношения: Экономика туризма (Финансы и статистика, М. 2000, с. 208),

- Гуляев Б. Г., Туризм: Экономика и социальное развитие (Финансы и статистика, М. 2003, с. 220-221).
3. www.armstat.am ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվարին» վիճակագրական հրապարակում, էջ 82-83:
 4. www.armstat.am ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-ապրիլին» վիճակագրական հրապարակում, էջ 102:
 5. World Travel & Tourism Council /WTTC/ Report 2012.
 6. www.arminfo.info
 7. www.tripadvisor.com
 8. www.hyurservice.am
 9. www.hotelscombined.com
 10. www.mineconomy.am
 11. www.haycurort.info.am
 12. www.1in.am
 13. www.banks.am

Резюме

Гостиничный бизнес является одной из главных предпосылок развития туризма в РА. Несмотря на установленные серьезные сдвиги последних лет в деле модернизации и развития гостиничного бизнеса нашей страны необходимо еще много работать в этом направлении. С целью борьбы с упущениями в данной сфере, необходимо разработать кадровую стратегию в туристическом и, в частности, гостиничном хозяйстве, обеспечить профессиональную подготовку и переподготовку работников, также помимо этого необходимо обеспечить оснащение новыми технологиями гостиничный бизнес Армении, определить контроль над санитаро-гигиеническими нормами, пересмотреть действующие цены, а также разработать четкую ценовую стратегию для урегулирования данного вопроса, помимо этого необходимо интегрироваться в международные гостиничные системы с помощью международных соглашений.

Ключевые слова: гостиничные комплексы, туристические услуги, туристические подструктуры, профессиональные кадры, гостиничное обслуживание, гостиничный оборот.

Resume

Hospitality is one of the main preconditions of development of tourism in Armenia. Despite the established major shifts in recent years in the modernization and development of the hotel industry in our country there is a need in a lot of work in this direction. In order to combat the failings in this area, it is necessary to develop a human resource strategy in the tourism and, in particular, the hotel industry, to provide professionally trained and retrained workers. Also beyond that it's necessary to equip hotel business in Armenia with new technologies, to determine the control of sanitary hygienic standards, review the current rates, and to develop a clear pricing strategy to regulate this issue, and additionally to integrate into the international hotel's system with the help of international agreements.

Key words: hotel complexes, tourist services, tourist substructures, professional staff, hotel services, hotel turnover.

ՀԻՂՐՈՍՈՂՈՒԼԻ ԳՐԱՖԻԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ԼՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

Ռ. Խաչատրյան, Դ. Մանուչարյան

Ներածություն

Գիտատեխնիկական առաջընթաց զարգացումը նպաստում է բոլոր ոլորտներում մարդկանց ծանրաբեռնվածության թեթևացմանը: Գյուղատնտեսության պլանավորման մեջ կան շատ աշխատանքներ, որոնք բարդ են և աշխատատար: Նմանատիպ աշխատանքների կատարումը համակարգչի միջոցով կլինի բավական հեշտ և արագ:

Այդօրինակ բարդ աշխատանք է հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումը և լրակազմավորումը: Հիդրոմոդուլի գրաֆիկի կառուցման և լրակազմավորման աշխատանքների ավտոմատացումը կհեշտացնի աշխատանքն այս ոլորտում, մասնագետից պահանջելով միայն տվյալները ճշգրիտ ներմուծել ծրագրի մեջ՝ արդյունքում ուղղելով ստացված գրաֆիկը:

Հիմնական մաս

Հիդրոմոդուլի գրաֆիկի կառուցումը բավականին բարդ աշխատանք է: Այն ցույց է տալիս տվյալ դաշտում մշակվող մշակաբույսերը ջրելու ժամկետները և դրա համար անհրաժեշտ ջրի քանակությունը: Բնականաբար կլինեն մշակաբույսեր, որոնց ջրման ժամկետները կհամընկնեն, արդյունքում կստացվի այնպես, որ վեգետացիայի ընթացքում ջրի քանակությունը էապես կտատանվի, ինչը կդժվարացնի ջրանցքների, պոմպակայանների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների ստեղծումը և շահագործումը: Դրա համար մշակաբույսերի ջրման ժամկետների թույլատրելի սահմաններում փոփոխումով հնարավորություն է ստեղծվում բարելավելու (կոմպլեկտավո-

րելու) գրաֆիկը և կարգավորելու միանգամից պահանջվող ջրի ծավալը: Այդ գործընթացը կոչվում է հիդրոմոդուլի գրաֆիկի լրակազմավորում և կատարվում է ելնելով հետևյալ նկատառումներից՝

- առավելագույն օրդինատի իջեցում,
- ջրումների միջև ընկած ընդհատումների վերացում,
- գրաֆիկի հնարավորինս հավասարեցում:

Այդ ամբողջ աշխատանքը կատարվում է ձեռքով՝ միլիմետրային թղթի վրա: Նախ հաշվվում է ամեն մի ջրման համար պահանջվող ջրի ծավալը մեկ հեկտարի համար մեկ վայրկյանի ընթացքում: Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$q = \frac{m\alpha}{86.4t}$$

որտեղ՝ q -ն հիդրոմոդուլի օրդինատն է, l/v հա, m -ը՝ ջրման չափաբաժինը (մեկ ջրման համար պահանջվող ջրի քանակությունը), $m^3/հա$,

α -ն մշակաբույսի տարածքի մասն է ընդհանուր ցանքատարածությունից,

86.4-ը օրվա վայրկյանների թվի $1/1000$ մասն է,


t -ն ջրման տևողությունն է օրերով:

Ունենալով տվյալ ջրումների համար անհրաժեշտ ջրի քանակությունները և ջրման ամսաթվերը՝ կառուցվում է հիդրոմոդուլի գրաֆիկը: Կառուցման համար տեղադրվում են պահանջվող ջրի քանակությունը օրդինատների առանցքի վրա և ջրման ամսաթվերը, արսցիսների առանցքի վրա (նկ.1):

Համակարգչային ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս օգտվել կիրառական ծրագրային փաթեթներից՝ հաշվարկներ կատարելու և գրաֆիկը գծելու համար:


ջրման սկիզբը տարվա օրերով, չորրորդ սյունակում՝ մշակաբույսի ջրման վերջը: Ծրագիրը վերը նշված պարամետրերը (անհրաժեշտ ջրի քանակությունը, ջրման սկիզբը և վերջը) ներմուծելուց, հաստատելուց և այդ նույն տողի վրա ավելի աջ գտնվող կոճակը գործարկելուց հետո հաշվում է այդ մշակաբույսին տվյալ ջրման ընթացքում բաժին ընկնող օրական ջրի քանակությունը: Իսկ ներքևում բերված պատկերում երևում է այդ ջրումների գրաֆիկական տեսքը, որտեղ առանձին-առանձին պատկերավոր երևում են ամիսները, օրերը և այդ օրերին բաժին ընկնող ջրի քանակությունը:

Աղյուսակում գրված են. վերևի տողում՝ տարվա օրերի համարները, դրանից ներքև՝ ամիսները, հետո՝ ամիսների օրերը, որից ներքև՝ ջրումների համար անհրաժեշտ ջրի քանակությունները տվյալ օրվա համար, ապա ամենաստորին տողում՝ անհրաժեշտ ջրի գումարային քանակությունը:



Նկ. 3. Հիդրոմոդուլի չլրակազմավորված գրաֆիկը Excel-ի միջավայրում

Ծրագրից օգտվողին մնում է միայն ճշգրիտ ներմուծել անհրաժեշտ ջրի քանակությունը, ջրման սկիզբը և վերջը, որից հետո սեղմել Enter ստեղծը և ծրագրում ստեղծված վիրտուալ ստեղծը գործարկելուց հետո ստացվում է աշխատանքի արդյունքը: Լրակազմավորման համար թույլատրելի ժամկետներում փոխվում են ջրումների սկիզբներն ու վերջերը, այնուհետև ծրագրում ստեղծված տվյալ մշակաբույսին վերաբերող կոճակը գործարկելուց հետո ստացվում է հիդրոմոդուլի լրակազմավորված գրաֆիկը (նկ.4):



Նկ. 4. Հիդրոմոդուլի լրակազմավորված գրաֆիկը Excel-ի միջավայրում

Եզրակացություն

Այս ծրագրի միջոցով հնարավոր է դառնում հիդրոմոդուլի գրաֆիկի կառուցման և լրակազմավորման բարդ և խճճված աշխատանքը կատարել համակարգչով, ինչի արդյունքում խնայվում է էական ժամանակ: Այս ծրագիրը գյուղատնտեսական արտադրության մեջ առավել կիրառելի և բոլոր դեպքերում օգտագործելի դարձնելու նպատակով պետք է կատարվեն հավելյալ աշխատանքներ:

Ցանկության դեպքում կարելի է ներկայացնել նաև ծրագրի պարզեցված տեսքը:

Առաջարկություն

Առաջարկվում է կիրառել այս ծրագիրը գյուղատնտեսական արտադրության մեջ՝ հիդրոմոդուլի գրաֆիկի կառուցման և վերակարգավորման աշխատանքներում:

Քանալի բառեր՝ հիդրոմոդուլի գրաֆիկ, գրաֆիկի կառուցման ավտոմատացում, գրաֆիկի լրակազմավորում, առավելագույն օրդինատ:

Գրականության ցանկ

1. Տեր-Ջաքարյան Պ. Վ., Ա. Ֆ. Ռադկո, Գ. Մ. Մելիքյան. Գյուղատնտեսական մեխորացիա և ջրամատակարարում, Արմուչնեգիզ, Երևան -1962, 407 էջ:
2. Квстяков А.Н, Основы мелиорации 6-е изд. М., Селхозгиз, 1960:
3. Мухаэль Райтингер, Геральд. Му, Visual Basic 6.0, Киев, 2001
4. Гарнаев А. Ю. Использование MS Excel и VBA в экономике и финансах. СПб.: БХВ, 2005.

Resume

With the help of this program one can easily create a hydro-modular graph of preparation and work completion. This is conducted mechanically and we may encounter a series of unnecessary obstacles.

The project consists of Visual Basic For Applications programming system, and on the Excel application window we see the plan of linear graph layout and the calculation results.

A specialist only needs to input precise data into the program.

Key words: hidromodular graph, automatization of obtaining the graph, completion of the graph maximum ordinate.

Резюме

Сформирована программа, с помощью которой можно легко сделать гидромодульный график подготовки и комплектирования работ, которые проводя механическим способом наталкиваемся на серию лишних препятствий.

Проект состоит из Visual Basic For Applications системы программирования, а на окне Excel мы видим план расположения линейных графиков и результаты расчетов.

Специалисту остается только ввести точные данные в программу.

Ключевые слова: гидромодульный график, автоматизация получения графика, комплектирование графика, максимальный ординат.

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ**

4. Սարգսյան

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կառավարչական որոշումներ ընդունելիս, չունեն դրա համար բավարար տեղեկատվություն և գնահատման ցուցանիշներ: Ավելին, ոչ միշտ է, որ եղած տեղեկատվական բազան համակարգված է և կարող է ծառայել որպես տվյալների պարբերաբար թարմացվող աղբյուր՝ հիմք դառնալով վերլուծությունների և կանխատեսումների համար: Ըստ էության, և՛ վերլուծության, և՛ կանխատեսման գործընթացները ինչպես համայնքներում, այնպես և ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունում ֆորմալիզացված և ձևավորված չեն՝ բացակայում են նույնատիպ խնդիրներ լուծելու ընդհանրական մոտեցումներ: Հենց այս հանգամանքով է պայմանավորվում տարածքային կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, որի անբաժան մասն է գնահատման և մոնիտորինգի ցուցանիշների ենթահամակարգը:

Համայնքային տեղեկատվական բազայի ստեղծման կարևոր քայլերից մեկը համայնքի որպես գնահատման, վերլուծության և ծրագրավորման օբյեկտի, գնահատման համապատասխան համակարգի ձևավորումն է, որի կարևորագույն բաղադրիչը (ենթահամակարգը) համայնքի բնութագրերի և դրանց համապատասխանող ցուցանիշների ամբողջականությունն է:

Համայնքների գնահատման՝ մասնագիտական գրականությունում հանդիպող կամ գործնական հետազոտություններում կիրառված այդպիսի ցուցանիշների ցուցակները զգալիորեն տարբերվում են միմյանցից ինչպես բնութագրերի ընդգրկման աստիճանով, կազմով, քանակով, այնպես և ցուցանիշների քանակական գնահատման մեթոդական մոտեցումներով: Համայնքների հետազոտությանը

նվիրված գործնական և կիրառական աշխատանքներում¹ ցուցանիշների բազմության ձևավորումը կամ առավել կարևորություն ունեցող ցուցանիշների ընտրությունը հիմնականում, որպես կանոն, կատարվում է հետազոտողների կողմից, այսինքն՝ դրանց հիմնավորումը մեծամասամբ սուբյեկտիվ բնույթ ունի և, կիրառելիության պահանջից ելնելով, հիմնվում է տվյալ երկրում գործող ազգային վիճակագրության համակարգում ընդունված ցուցանիշների վրա: Այդպիսի մոտեցումը գործնական ու կիրառական նպատակահարմարության հետ մեկտեղ ունի այն լուրջ թերությունը, որ այդ հիմքի վրա ձևավորված ցուցանիշների համակարգը, որպես կանոն, թերի է համայնքի գնահատման համար կարևորություն ներկայացնող ցուցանիշների ընդգրկման տեսանկյունից:

Մեր կողմից մշակվել է ՀՀ համայնքների բազմակողմ գնահատման համակարգ, որի մասին որոշակի պատկերացում կազմելու համար թվարկենք ցուցանիշների խոշորացված խմբերը ըստ ոլորտների և գործունեության ուղղությունների:

Տարածքային և ժողովրդագրական ցուցանիշների խումբ. ներառված են համայնքի տարածքը բնութագրող ցուցանիշները, համայնքի բնակչության, նրա բնական և մեխանիկական փոփոխությունների և սոցիալական կազմի, ինչպես նաև տնային տնտեսությունների բնութագրերը:

¹ Տես օրինակ՝ Եղիազարյան Բ., Սարգսյան Լ. Տարածաշրջանային տնտեսական համակարգերի ընդհանրացված գնահատման հարցի շուրջ, «Պետական կառավարման արդի հիմնահարցերը (գիտաժողովի նյութերի ժողովածու)», գիրք 1, Երևան, 1999, «Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում» UNDP/Հայաստան, Երևան, 2002: Ղազարյան Է., Տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսական և բյուջետային խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2002, 80 էջ: Սարգսյան Լ., ՀՀ համայնքների տիպաբանությունը որպես տարածքային քաղաքականության մշակման հիմք: Анализ тенденций развития регионов России в 1991-1996гг. Проект ТАСИС (контракт BIS 96/369/056), М., Экспертный институт, 1997.

Ռեսուրսային ապահովության ցուցանիշների խումբ. առանձնացված են բնական, նյութական, ֆինանսական, ռեսուրսների գնահատման ցուցանիշների ենթախմբերը:

Աշխատանքային գործունեության գնահատման ցուցանիշների խումբ. համայնքի բնութագրման համար առավել մեծ կարևորություն ունի, ըստ այդմ ներառում է, մյուս բնութագրերի համեմատությամբ, առավել մեծ թիվ կազմող, համայնքի ամբողջ տնտեսության և գործունեության առանձին ոլորտների համար տարբերակված ցուցանիշների համալիրը, այդ թվում՝ մակրոտնտեսական, գործունեության նյութատեխնիկական ապահովության, դրա օգտագործման, պահպանման և վերարտադրության, արտաքին կապերի և այլ բնութագրերի ցուցանիշները: Առանձնացված են արտադրական, ծառայությունների, ֆինանսաբանկային հիմնարկները, սոցիալական, բնապահպանության ոլորտները:

Բնակչության բարեկեցության մակարդակը բնութագրող ցուցանիշների խումբ. ներառում է բնակչության կենսամակարդակի և եկամուտների, ինչպես նաև ծախսերի ցուցանիշները:

Համայնքի ունեցվածքի գնահատման ցուցանիշների խումբ. ներառված են համայնքի սեփականություն համարվող օբյեկտների արժեքի գնահատումներն ըստ առանձին ոլորտների, այդ թվում՝ կրթօջախներ, մշակույթի և հանգստի օջախներ, առողջապահական հիմնարկներ և այլն: Առանձնացվում է ցուցանիշների ենթախումբ՝ համայնքային ենթակայության շինությունների և կառույցների՝ բնակելի շենքերի, հանրակացարանների, բյուջետային հիմնարկների, վարչական շենքերի, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ավտոտրանսպորտային հավաքակալանների, շուկաների, կամուրջների, հրապարակների, փողոցների, այլ շինությունների և համայնքի այլ ունեցվածքի գնահատման համար:

Հարկ եղած դեպքում ցուցանիշների ցանկը կարող է ճշգրտվել, ինչի մասին տեղեկացվում են տարածքային կառավարման տեղեկատվական համակարգի բոլոր օղակները:

Տարածքային կառավարման տեղեկատվական համակարգի հիմնական բաղադրիչներից է վերլուծության, հիմնախնդիրների բացահայտման, կանխատեսման ենթահամակարգերի ձևավորումը, ինչպես նաև չափորոշիչների սահմանումը:

Վերլուծության ենթահամակարգը բաղկացած կարող է լինել էլեկտրոնային հաշվետվություններից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և հնարավորությունները: Օրինակ, որպես այդպիսին կարելի է առանձնացնել հաշվետվությունների, «Մոնիտորինգ», «Վերլուծություն» և «Այլ» խմբերը:

Տարածքային քաղաքականության և կառավարման հիմնական նպատակներից մեկը սոցիալ-տնտեսական տարածքային ենթահամակարգի՝ համայնքների կայուն զարգացումն ու բնականոն գործունեությունն ապահովելն է: Այդ նպատակի իրագործման արդյունավետ ուղին խոչընդոտող հանգամանքների հաղթահարումն է, ինչը հնարավոր է իրականացնել խորապես ուսումնասիրելով դրանց էությունը, ազդեցության մասշտաբները, պատճառահետևանքային կապերը և այլ բնութագրեր: Այդպիսի հավաստի տեղեկատվություն ստանալու և համակարգելու գործին մեծապես կնպաստեր, որպես տարածքային կառավարման տեղեկատվական-խորհրդատվական հիմք, տարածքային մոնիտորինգի համակարգի ստեղծումը:

Տարածքային հիմնախնդիրների մոնիտորինգը համայնքային մակարդակով առկա հիմնախնդիրների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, հիմնախնդիրների առաջնահերթության որոշման, հաշվետվությունների ձևավորման մշտական գործող համակարգ է, որը պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.

- ✓ համայնքներում առկա հիմնախնդիրների մասին տեղեկատվության հավաքագրում և պահպանում,
- ✓ օպերատիվ մոնիտորինգ և տեղեկատվության դինամիկ վերլուծություն,
- ✓ համայնքների տիպաբանության ձևավորում ըստ առկա հիմնախնդիրների,
- ✓ ձևավորված տիպատեսակների միջև համեմատական վերլուծություն,
- ✓ անբարենպաստ և ճգնաժամային իրավիճակում գտնվող համայնքների առանձնացում,
- ✓ լրացուցիչ տեղեկատվական-խորհրդատվական հետազոտությունների իրականացում (հարցումներ, փորձագիտական հետազոտություններ և այլն):

Մոնիտորինգի համակարգի կառուցվածքում պետք է առանձնացվեն երկու՝ տարածքային և համերկրային ենթահամակարգեր, որոնց ենթակառույցները պետք է ձևավորվեն յուրաքանչյուրում իրականացվող գործառույթներին համապատասխան:

Տարածքային ենթահամակարգի գործառույթների ցանկում պետք է ընդգրկվեն.

- մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության բազայի ձևավորումը,
- հիմնախնդիրների վերլուծությունը, դրանց առաջնահերթության գնահատումը համայնքային և մարզի կտրվածքով,
- մակրոմակարդակում ընդունված որոշումների իրականացման հետևանքների կանխատեսումը մարզի և այդ մարզի առանձին համայնքների համար,
- հիմնախնդիրների դինամիկայի վերլուծությունը,
- մարզի կտրվածքով հաշվետվությունների ձևակերպումը:

Համերկրային ենթահամակարգի գործառույթներ պետք է համարել.

- մարզերից ստացված տեղեկատվության հիման վրա համերկրային տեղեկատվական բազայի ձևավորումը,
- տեղեկատվության վերլուծությունը, դինամիկ շարքերի ձևավորումը,
- հաշվետվությունների կազմումը,
- համայնքների տիպաբանության ձևավորումն ըստ առկա հիմնախնդիրների,
- տիպատեսակների համեմատական վերլուծությունը,
- հիմնախնդիրների առաջնահերթության գնահատումը և կրիտիկական վիճակում գտնվող համայնքների առանձնացումը:

Հասկանալի է, որ պետք է օգտագործվեն ընդհանրացման բարձր աստիճան ունեցող ցուցանիշներ: Սակայն, այդպիսի ցուցանիշների առանձնացումը մեկ կենտրոնական ենթահամակարգում դեռ չի լուծում միարժեք գնահատման խնդիրը, քանի որ այդ ցուցանիշները բազմաթիվ և բազմաբնույթ են, տարբեր բովանդակության ու չափողականության, տարբեր կարևորության ու ուղղվածության,

ուստի դրանց միավորումն ու միարժեք, միասնական գնահատումը մնում է դժվարին խնդիր: Այս պայմաններում համայնքը ամփոփ և միարժեք գնահատելու համար անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու մեկ ամփոփ ցուցանիշ՝ դրանում միաժամանակ օգտագործելով համայնքի տարբեր կողմերը և ոլորտները բնութագրող ցուցանիշներ:

Բանալի բառեր՝ տեղեկատվական համակարգ, տեղեկատվական բազա, մոնիտորինգ, տարածքային կառավարում, պետական կառավարում:

Resume

State governing and local-self governing bodies do not have enough information in adopting management decisions. Moreover, very often the present informative base is not always systemized and can serve as a source of fresh details for analyses and predictions. Probably, both analyses and prediction process both in community as well as RA Regional Management Ministry are not formalized and there aren't common approaches to solve likewise problems. That's why there is a necessity to create a common information system and also the system of assessment and monitoring indexes of territorial governing.

Key words. Informative system, informative base, monitoring, territorial governing, state governing.

Резюме

При принятии управленческих решений органы государственного управления и местного самоуправления не имеют для этого достаточной информации. Более того, не всегда имеющаяся информационная база систематизирована и может служить периодически обновляющимся источником данных, становясь основой для анализа, оценки и прогнозов. Исследования выявили, что в министерстве территориального управления РА многие процессы анализа, оценки и прогнозов не формализованы, не

сформированы единые подходы к решению проблем повышения эффективности и качества управления. Именно этим обстоятельством обусловлена необходимость создания единой информационной системы территориального управления, в которой система индексов оценки и мониторинга государственных и территориальных органов власти будет играть важную роль

Ключевые слова: информационная система, информационная база, мониторинг, территориальное управление, государственное управление, система индексов и мониторинга.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ա. Գրիգորյան

Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները, միջին մասնագիտական կրթության բնագավառում առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը՝ սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները պայմանավորված են հետևյալ գործոններով¹

- երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով,
- ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գիտության և տեխնիկայի արագընթաց փոփոխություններով,
- ազգային ինքնության ձևավորման, պահպանման ու զարգացման գործում կրթության խաթարված դերով,
- կրթության շարունակական զարգացման համար անհրաժեշտ պայմանների բացակայությամբ,
- կառուցվածքային գործազրկության մեծ ծավալներով,
- գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի ոչ մատչելիությամբ,
- առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմամբ և այլն:

Հայաստանում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից են².

¹ Դարբինյան Ա. Ծ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում: Եր.: Պետական ծառայություն, 2000, էջ 78:

² Ղուկասյան Ա. Ա., Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ա. Խ., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Եր., Մանկավարժ, 2005, էջ 121:

1. աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովումը, քանի որ համակարգը ծերացման կայուն միտում ունի և առկա է որակյալ կադրերի արտահոսք:

2. Համակարգված չեն դասավանդող անձնակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերը: Լուծված չեն նախնական և միջին մասնագիտական կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվական հաղորդակցման և դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման խնդիրները, թույլ է ձեռնարկություն-ուսումնական հաստատություն կապը, բացակայում են արդյունավետ մեխանիզմները ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման առումով:

3. Աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը: Ներկայիս համակարգը բավարար ճկուն չէ և չի հասցնում ինքնակամ արձագանքել տնտեսության արագ զարգացող որոշ ճյուղերի պահանջներին:

4. Գոյություն չունեն արդյունավետ միջազգային հարաբերություններ և համագործակցության զարգացման մեխանիզմներ՝ այլ երկրների նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու համար, միևնույն ժամանակ հաճախ չի ապահովվում միջազգային կազմակերպությունների հետ իրականացված փորձնական ծրագրերի շարունակությունը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում քաղաքականության լիարժեք իրականացմանը խոչընդոտում են նաև օրենքների և ենթաօրենսդրական ակտերի թերկիրառումը, դրանց կիրարկման մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը, ինչպես նաև օրենսդրական դաշտում առկա հակասությունները: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներկայումս չի ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքով հռչակված և երաշխավորված՝ կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

Անհրաժեշտ է իրավական փաստաթղթերի մակարդակով խրախուսել գործատուների մասնակցությունը մասնագիտական կրթության կազմակերպման գործում, քաջալերել նրանց Հայաստանի գիտելիքահենք ոլորտներում ներդրումներ կատարելուն, որը կնպաստի Հայաստանի կրթական և գիտական արդյունքի միջազգային պահանջարկի ձևավորմանը:

Կրթության համակարգի գլխավոր խնդիրը որակի ապահովումն է, ինչը պահանջում է ջանքերի ու ռեսուրսների կենտրոնացում և ենթադրում է հասարակության առավել մեծ վստահություն և պահանջատիրություն համակարգի նկատմամբ: Բարձրակարգ նվաճումները կվերականգնեն հավատը Հայաստանի կրթության ապագայի հանդեպ, ինչը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Նման նվաճումների խրախուսմանն ուղղված պետական հետևողական քաղաքականությունը կնպաստի, որ կրթական համակարգի ներսում և դրսում գտնվող անհատները, խմբերն ու հաստատություններն ավելի ակտիվորեն աշխատեն կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Վերջապես, գերազանցությունը խրախուսող քաղաքականությունը կօգնի բացահայտելու մասնագիտական կրթության գերազանցության օջախները՝ դրանք վերածելով օրինակելի կենտրոնների և նպաստելով դրանց հետագա զարգացմանը:

Միջազգային տնտեսական, հասարակական, մասնագիտական և այլ ցանցերում մասնակցությունն անհրաժեշտ է շարունակաբար նորացվող գիտելիքի համաշխարհային շտեմարանից օգտվելու, առկա գիտելիքը, փորձը արագորեն տեղայնացնելու, իսկ տեղական գիտելիքն ու նորարարությունը միջազգայնացնելու համար: Ուստի, կարևոր նպատակներից մեկը պետք է լինի անհատների և հաստատությունների միջազգային համագործակցության ներուժը զարգացնելն ու ամրապնդելը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել մասնագիտական կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պա-

հանջներին: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ՄԿՈՒ կրթական չափորոշիչների նվազագույն պահանջները սահմանել հիմք ընդունելով որակավորումների ազգային շրջանակը, զբաղմունքների դասակարգիչը, մասնագիտությունների որակավորման բնութագրերը: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման է ռեսուրսների օգտագործման նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը:

Հայաստանում գրանցված ուղղակի ներդրումների ցածր մակարդակին զուգընթաց գոյություն ունի շարունակական ճեղքվածք մասնագետների աշխատանքային հմտությունների պահանջարկի և առաջարկի միջև, որը և ձևավորում է ծավալուն գործազրկություն: Ճեղքվածքն առավել խորանում է պահանջարկի սակավության և առաջարկի առատության պայմաններում, երբ գործատուն դառնում է ավելի քմահաճ և ստեղծված պայմանները հաջողությամբ օգտագործում է աշխատուժի էժանացման համար:

Աշխատանքային շուկան Հայաստանում այսօր հավաքական հասկացություն է, որի ներքո հանդես են գալիս կոնկրետ գործատուն, վերացական գործատուն (անդեմ շուկան), միջնորդ կազմակերպությունները՝ զբաղվածության պետական և մասնավոր ծառայությունները, աշխատանքի տեղեկատու շաբաթաթերթերը («Գինդ», «Էքսպրես», «Եթեր» և այլն), կրթական ցուցահանդեսները:

Կրթական ոլորտում այսօր պետք է տարբերել 2 գործելակերպ.

- կոնկրետ գործատուի համար մասնագետ պատրաստելու պրակտիկա,
- ընդհանրական աշխատանքային շուկայի համար մասնագետ պատրաստելու պրակտիկա:

Առաջինը ենթադրում է այնպիսի մասնագետների պատրաստում, երբ հաշվի են առնվում գործատուի կոնկրետ պահանջները: Այս դեպքում կարող է իրագործվել պրոֆիլի նեղացում և խորացում: Մյուսը ենթադրում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ, լայն պրոֆիլի, շարժուն, մի քանի մասնագիտացումների տիրապետող մասնագետների պատրաստում: Այսօրվա աշխատանքային շուկան թույլ չի տալիս մասնագիտությունների տրոհում նեղ մասնագիտացումների (որակավորումների):

Այսօր բացակայում է ՄՄՈւՀ-ների շրջանավարտների աշխատանքի տեղավորման կամ բուհ ընդունվելու վերաբերյալ ճշգրիտ վիճակագրությունը:

Վերը նշված խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է, որ

1. գործատուն փնտրի հանդիպակաց ուղիներ և ծավալի կրթամետ գործունեություն,

2. ուսումնական հաստատությունները ծավալեն գործատուին միտված հետևյալ աշխատանքները. իբրև կուրսային, դիպլոմային աշխատանքների կատարման և պաշտպանության, բանվորական ուրակավորման շնորհման հանձնաժողովների ղեկավար կամ անդամ հրավիրել գործատուներին, հաստատությունների ուսանողների տարբեր տիպի պրակտիկաների կազմակերպումը ուղղակիորեն կապել գործատուի հետ՝ նախապես կնքելով պայմանագրեր, մասնագիտական կրթության պրակտիկայի ծրագիրը դարձնել գործնական և կիրառելի՝ առավելագույնս համապատասխանեցված պրակտիկայի բազային ձեռնարկության գործունեությանը, ելնելով նոր աշխատաշուկայի պայմանների թելադրանքից՝ հաստատություններում ստեղծել համապատասխան օղակ, որը ողջ ուսումնական տարվա ընթացքում կկատարի մարկետինգային գործունեություն, գործատուներին մասնագետի կարողությունների և հմտությունների վերաբերյալ պատկերացում տալու համար՝ մշակել և յուրաքանչյուր շրջանավարտի դիպլոմին կից տրամադրել նաև պրոֆեսիոգրամմա, ուսումնական հաստատությանն ու գործատուին՝ իբրև պետականությամբ ու գործառույթով շաղկապված գործընկերների, շահեկանությամբ ու վարչականորեն պարտավորեցնել գործակցել միմյանց հետ՝ պահանջարկի և առաջարկի հարցում՝ անմիջականորեն կամ զբաղվածության ծառայության միջոցով:

Հայաստանում ՄԿՈՒ արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ստեղծել մարդկային ռեսուրսների և աշխատաշուկայի փոխկապվածության տվյալների էլեկտրոնային բազա, հիմնել Ազգային հանձնաժողով (խորհուրդ)՝ ՄԿՈՒ զարգացման և գործունեության համակարգման նպատակով, ապահովել տեղեկատվություն և քարոզչություն՝ ՄԿՈՒ համակարգի պահանջարկի առաջնահերթության վերաբերյալ ուսումնական հաստատություններում հիմնել

մարդկային ռեսուրսների ծառայություն՝ շուկայամետ աշխատանքներ ծավալելու նպատակով:

Հայաստանի ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների ռազմավարության առաջադրված խնդիրների լուծման արդյունքներն են լինելու⁴.

1. բաց և ժողովրդավարական համակարգը, որն ապահովում է տարբեր սկզբնակետերից և (կամ) նախընթաց կրթության կամ աշխատանքային գործունեության ամենատարբեր փուլերից հետո այդ համակարգ մուտք գործելու հավասար մատչելիություն բոլոր քաղաքացիների համար՝ կախված անհատական բնութագրից: Այս սկզբունքը հավասարապես պետք է կիրառելի լինի նաև ՄԿՈՒ իրականացնող՝ նախապես հայտնի համապատասխան չափանիշներ բավարարող բոլոր կազմակերպությունների համար, անկախ դրանց իրավական կարգավիճակից և սեփականության ձևից:

2. Կրթության շարունակականությունը, որն անձին հնարավորություն կընձեռնի ապահովել կրթության շարունակելիություն՝ իր ցանկացած չափով: Այս նպատակով կրթական տարբեր մակարդակները (միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն) պետք է շաղկապված լինեն միմյանց: Սա հատկապես վերաբերում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգին:

3. Կրթական ծառայությունների մատուցման որակը, որի ապահովումը ենթադրում է նորագույն ընդհանուր գիտելիքները և գիտական նվաճումները, տեխնոլոգիական զարգացումները, մշակութային և ուսուցման մեթոդներն իր մեջ ներառող մասնագիտական կրթություն և ուսուցում ապահովող համակարգի հիմնադրում: Դա պահանջում է ընդհանուր և մասնագիտական առարկաների ինտեգրում, մասնագիտական կրթական ազգային նոր ծրագիր (կրթական 13 չափորոշիչ), ժամանակակից սարքավորումների ձեռք բերում, համապատասխան ուսուցիչների ներգրավում, ուսուցանողների ուսուցման համակարգի գործարկում, գործնական ուսուցման (պրակտիկայի) կատարելագործում երկու ուղղություններով՝ ժամանակակից

⁴ Մարկոսյան Ա. Խ. Պետությունը և շուկան.- Գիրք առաջին, Եր., Տիգրան Մեծ, 2000: էջ 203

լաբորատորիաների ստեղծում, և առաջին հերթին՝ պրակտիկայի առանձին փուլերի կազմակերպում աշխատատեղերում:

4. Հմտությունների ապահովումը՝ ըստ անհատական կարողությունների, որի համար ՄԿՈՒ համակարգը պետք է առաջարկի ուսանողների անհատական հակումների ու կարողությունների վրա հիմնված կողմնորոշման և մոնիթորինգի (համապատասխանաբար՝ ընդունելությունից առաջ և ուսումնառության ընթացքում) նոր, առավել արդյունավետ միջոցներ և ընթացակարգեր: Սակայն, նկատի ունենալով ֆինանսական միջոցների սահմանափակությունը, անհրաժեշտ է համակարգի ռացիոնալացում՝ հաշվի առնելով աշխատանքային շուկայի պահանջներն ու ներդրումներ կատարելու հնարավորությունները:

5. Հմտությունների ապահովումը՝ ըստ տնտեսության և աշխատանքի շուկայի կարիքների, որի նախապայմանն է արտադրության անընդհատ փոփոխվող կարիքներին արագ արձագանքելու միջոցով զբաղվածության պահանջներին վերաբերող հարցերում առավել ճկուն գործող ՄԿՈՒ համակարգը: Լավագույն համակցություն կստեղծվի՝ եթե օգտագործվի առկա ողջ տեղեկատվությունը և իրականացվի ազգային, տարածաշրջանային ու տեղական մակարդակներով աշխատանքի շուկայի ավելի ընդգրկուն ուսումնասիրությունը: Դա կկատարվի մշտական (ինստիտուցիոնալ) հիմունքներով՝ բոլոր շահագրգիռ կողմերի ու սոցիալական գործընկերների մասնակցությամբ և համագործակցությամբ:

6. Ծախսերի արդյունավետությունը, որը պայմանավորված կլինի ֆինանսավորման առկա և պոտենցիալ աղբյուրների համադրությամբ: Այս նպատակով կներմուծվի միավոր ներդրումից ստացված արդյունքի հաշվառման չափանիշների համակարգ: Արդյունավետության բարձրացման նպատակով կվերանայվի տարբեր համակարգերի կողմից նույն ծառայությունները մատուցելու ներկայիս մոտեցումը:

7. ՄԿՈՒ տարբեր ձևերի ներառումը միասնական օրենսդրական շրջանակում, որը բխում է շահագրգիռ կողմերի պատասխանատվությունների սահմանման պահանջից, հանգեցնում է մասնագիտական կրթական գործունեության, սկզբնական ու շարունակական մասնագիտական պատրաստման տարբեր տեսակների ու

դրանց փոխհարաբերությունների սահմանմանը մեկ միասնական իրավական շրջանակում: Տարբեր մարմինների ենթակայության տակ գործող ՄԿՈՒ համակարգի փոխարեն, առաջարկվում է իր տարածքային ճյուղերով ստեղծել ազգային նոր կառույց՝ մասնագիտական կրթության բոլոր գործառույթների արդյունավետ կոորդինացման համար: Ղեկավարվելով նույն սկզբունքով՝ առաջարկվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից համակարգվող մասնագիտական ուսուցման գործառույթների իրականացման համար հնարավորինս օգտագործել մասնագիտական կրթության համակարգի առկա ենթակառուցվածքը և մարդկային ռեսուրսները:

8. Մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման և ղեկավարման ռացիոնալացում, որը կապահովի դրա արդյունավետությունն ու թափանցիկությունը՝ վստահություն ներշնչելով բոլոր մասնակիցներին: Անհրաժեշտ է վերանայել ուսումնական հաստատությունների ղեկավարության նշանակման, ոլորտում որոշումների կայացման համակարգերը՝ միաժամանակ էապես բարելավելով բոլոր մակարդակների ղեկավարների կառավարչական հմտությունները:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը կապահովվի ռազմավարական մոտեցումներին և գերակայություններին համապատասխան նպատակային ծրագրերի միջոցով, որոնք կհանդիսանան ներկայումս իրականացվող հիմնական ծրագրերի տրամաբանական շարունակությունը: Իրականացվող ծրագրերը և բարեփոխումների ռազմավարությունները կվերանայվեն գլխավոր նպատակներին և ռազմավարական ուղղություններին համապատասխան:

Ոլորտի բարեփոխումների ուղղություններն են.

1. Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ինտեգրում միասնական եվրոպական կրթական տարածքին: Սա ներառում է հետևյալ միջոցառումները՝

ա) խթանել մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին,

բ) ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին, զբաղմունքների դասակարգչին, մասնագիտությունների որակավորման բնութագրերին,

գ) ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգ,

դ) բարձրացնել համակարգի մասնագետների տեղեկացվածությունը օտարերկրյա պետությունների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ,

ե) միանալ Կոպենհագենյան հոչակագրին և գործընթացին,

զ) բաց և ժողովրդավարական ՄԿՈՒ համակարգի ստեղծում,

է) օժանդակել ՄԿՈՒ հաստատությունների ցանցավորմանը:

2. ՄԿՈՒ համակարգի արդյունավետության ապահովում.

Անհրաժեշտ միջոցառումներն են՝

ա) ստեղծել մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգ,

բ) ձևավորել աշխատաշուկայի վերլուծության և մասնագիտական չափորոշիչների վրա հիմնված կարողութեսամետ կրթական չափորոշիչներ,

գ) խթանել սոցիալական գործընկերությունը և երկխոսությունը,

դ) ձևավորել ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանց,

ե) բարելավել ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազան,

զ) բարելավել ուսումնական հաստատությունների հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը,

է) բարելավել մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման որակը,

ը) ձևավորել ուսումնական հաստատությունների ժամանակակից կառավարման մեխանիզմեր,

թ) ապահովել ուսումնական հաստատությունների սովորողների եւ շրջանավարտների մասնագիտական հմտություններ՝ տնտեսության և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան,

ժ) ապահովել ուսումնական հաստատությունների ֆինասավորման միջոցների ծախսերի արդյունավետությունը,

ժա) իրականացնել ՄԿՈՒ համակարգի պլանավորումն աշխատաշուկայի և երկրի տնտեսական զարգացման ընթացիկ և ուղղվարական կարիքներին համապատասխան,

ժբ) ապահովել մոնիթորինգի արդյունավետ իրականացում և հետադարձ կապ,

ժգ) ապահովել կրթության որակի գնահատման չափորոշիչների մշակում և ներդրում:

3. Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հնարավորությունների ստեղծում.

Սրա համար պահանջվող միջոցառումներն են՝

ա) ապահովել կրթության շարունակականությունը,

բ) ապահովել մասնագիտական ուսուցման մատչելիությունը, անկախ նախընթաց կրթության մակարդակից,

գ) բարելավել մեծահասակների կրթության օրենսդրությունը,

դ) ապահովել քաղաքացու մրցունակությունը աշխատաշուկայում,

ե) ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչում:

Ամփոփելով՝ ասենք, որ շարունակական զարգացման կայուն տեմպի հետագա ապահովման անհրաժեշտությունը թելադրում է գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորումը: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգը, նախադպրոցականից մինչև հետբուհական, արմատական բարեփոխումների կարիք ունի: Այն պետք է տնտեսության և հասարակության պահանջներին համահունչ կրթության ճկուն մեխանիզմների ձևավորմամբ և ռեսուրսների նպատակային ուղղորդման միջոցով որակական բարձր ցուցանիշներ արձանագրի՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների կայուն բարեկեցությունը:

Բանալի բառեր՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, միջին մասնագիտական կրթություն, կրթության շարունակություն, կրեդիտ, սոցիալական գործընկերություն:

Գրականության ցանկ

1. Դարբինյան Ա. Ծ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացում: Եր., Պետական ծառայություն, 2000, 302 էջ:
2. Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Հ. Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., Տնտեսագետ, 1999, 464 էջ:
3. Ղուկասյան Ա. Ա., Ասատրյան Լ. Թ., Կարապետյան Ա. Խ., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Եր., Մանկավարժ, 2005, 276 էջ:
4. Մարկոսյան Ա. Խ., Պետությունը և շուկան.- Գիրք առաջին, Եր., Տիգրան Մեծ, 2000, 560 էջ:
5. Аветисян П. С., Гвуласарян А. Я., Оганесян Р. Я., Сафарян И. А. Управление образованием: современные подходы и технологии в среднем школьном образовании. Изд-во РАУ, Ер., 2004.- 120с.
6. Беляков С. А. Лекции по экономике образования. М.: Изд-во ГУ-ВШЕ, 2002.-322с.
7. Беляков С. А. Одополнительном финансировании образования Университетское правление/ N 2(25), 2003.-С. 49-52.
8. Бордовский Г. А. Управление качеством образовательного процесса: Монография, СПб, 2000.-859с.
9. Воронин А. А. Экономика образования в новых условиях хозяйствования. М.: Научно-исследовательский институт высшего образования, 1999.-С. 115-116.
10. Губарев В. В. Системное представление качества образования / Стандарты и качество/ № 4, 2002.-С.30-35.
11. Дятлов С. А. Экономика образования в условиях переходного периода.-СПб.: Изд-во СПб УЭФ, 1995.-160с.
12. Bowman M. J. The Human Investment Revolution in Economic Thought.- Sociology of Education, V. 39, 1996, N 2, p. 45.
13. High quality education and training for all, Paris, 13-14 November, 1990 World Bank. Strategies for education. Washington D.C., 1995.-42 p.
14. Schultz T. The Economic Value of Education. N.-Y, Columbia University Press, 1963.-p. 465.

Резюме

В данной статье рассмотрены проблемы, имеющиеся в системе среднего профессионального образования РА, а также факторы их возникновения. Статья, помимо этого, определяет и анализирует недостатки системы среднего профессионального образования, которые связаны с отсутствием соответствующего эффективного законодательства РА и с несоответствием деятельности рынка труда и системы высшего образования.

Статья представляет стратегии, обеспечивающие развитие системы среднего профессионального образования; приводятся также ожидаемые результаты разрешения вопросов, возникших в результате реформ в системе среднего профессионального образования РА. Реформы должны проводиться в соответствии потребностями общества и экономики.

Ключевые слова: начальное профессиональное (ремесленническое) образование, среднее профессиональное образование, продолжение образования, кредит, социальное партнерство.

Resume

The article touches upon the issues concerning the problems and available factors of middle educational system.

The shortcomings of the middle educational system have been revealed and analyzed in the work which are connected to the lack of the real legislative field, to the incorrespondence of working market and higher educational systems.

The article presents the main directions of middle educational system development. The anticipated results of the issues concerning the reformations of RA MET are also presented in the work. The reformations of middle educational system should synchronically go with the needs of the society and economy.

Key words: preliminary vocational (tradework) education, middle vocational education, further education, credit, social cooperation.

**ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՄԱՐԴԱԾԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
(ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Գ.Ս. Մանասյան

Հասարակության ծավալած բնօգտագործման ձևերին և ռելիեֆի հետ ունեցած փոխհարաբերություններին համապատասխան, ռելիեֆը ենթարկվում է մարդածին փոփոխությունների: Ռելիեֆի և ռելիեֆառաջացնող գործընթացների ընթացքի վրա մարդածին գործոնի ադեցությունը բնութագրվում է ներգործության մասշտաբներով, խորությամբ ու ինտենսիվությամբ:

Ռելիեֆի վրա մարդածին գործոնի ադեցության խորության գնահատման տեսակետից ուսումնասիրվող տարածքի համար առանձնացրել ենք բնօգտագործման հետևյալ որակական խմբերը.

1. *Չխախտող բնօգտագործման ձևեր*, որոնց դեպքում ռելիեֆն ու ռելիեֆառաջացնող գործընթացները գտնվում են բնական վիճակում, իսկ բնօգտագործումը էական ներգործություն չի ունենում մակերևույթային և ստորերկրյա ջրային հոսքերի ռեժիմի, տեղատարման գործընթացների վրա:

2. *Թույլ խախտող*, երբ մարդու կենսագործունեության հետևանքով ռելիեֆը վերափոխվում է այս կամ այն չափով, էականորեն փոփոխվում է մակերևույթային հոսքը, իսկ ստորերկրյա հոսքի վրա ներգործությունը մնում է աննշան:

3. *Խախտող բնօգտագործման ձևեր*, որոնց ժամանակ վերափոխվում է թե՛ ռելիեֆի, թե՛ ջրային հոսքերի բնական վիճակը:


Հաջորդ քայլը հանդիսացել է ռելիեֆի և բնական բաղադրիչների մարդածին վերափոխման ընդգրկման մասշտաբների որոշումը, ըստ որի ևս կատարվել է դասակարգում: Առանձնացվել են հետևյալ սահմանները.

1. *թույլ վերափոխված*, երբ վերափոխված է տարածքի մինչև 10%-ը,

2. միջին չափի վերափոխված՝ 10-30%-ը,
3. ուժգին վերափոխված տարածքներ՝ 30-50%-ը
4. խիստ վերափոխված տարածքներ՝ 50%-ից ավելին:

Վերը նկարագրված ցուցանիշների համադրումը պատկերացում է տալիս մարդկային գործոնի ազդեցության ինտենսիվությունը: Վերջինիս և տարածքի ռելիեֆի հատկանիշների, տիրապետող գեոմորֆոլոգիական իրավիճակի, բնակլիմայական պայմանների առանձնահատկությունների, բնակչության բնակեցման, տարածքի տնտեսական յուրացվածության աստիճանի և բնօգտագործման ձևերի միջև գոյություն ունեն կորելիացիոն կապեր: Ինչպես ամենուր, Շիրակի տարածքում ևս ըստ բարձրության փոփոխվում են ռելիեֆի ձևաչափական, ձևագրական ցուցանիշները, ռելիեֆառաջացնող գործընթացների բնույթն ու ինտենսիվությունը, բնակլիմայական պայմանները, հողաբուսական ծածկույթի բնույթը: Սրանց համապատասխան որոշակի օրինաչափությամբ փոփոխվում են նաև մարդու բնակեցման, նրա առողջության, կենսաապահովման ու կենսագործունեության առանձնահատկությունները: Ըստ տեղի բարձրության մարդու կենսագործունեության բնական պայմաններն ու պաշարները դառնում են աննպաստ: Դրան համապատասխան նվազում է բնակչության խտությունը և տարածքի յուրացվածության, հետևաբար նաև ռելիեֆի վրա ունեցած ներգործության աստիճանը, այսինքն՝ ռելիեֆառաջացման գործընթացում նվազում է մարդածին գործոնի ինտենսիվությունը:

Հաշվի առնելով վերը նշված օրինաչափությունները, Շիրակի տարածքի ռելիեֆի և ռելիեֆառաջացնող գործընթացների մարդածին վերափոխումը դիտարկել ենք ըստ բարձրադիր գոտիականության և կազմել ենք ռելիեֆի ծանրաբեռնվածության աստիճանի գնահատման և ռելիեֆի ու ռելիեֆառաջացնող գործընթացների մարդածին վերափոխման գնահատման քարտեզ (նկար 1):



Նկար 1 ՀԵՐԱՆԻ ՌԵԼԵՖԻ ՄԱՐԳԱԾԻՆ ԾԱՆՐԱՔԵՆՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԼԵՖԻ ՈՒ ՌԵԼԵՖՏԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՏՏՈՒՄՆԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ՔԱՐՏԵԶ

- Ստորին առավել խիստ ծանրաբեռված գոտի (1400-1600մ.)՝ վերափոխված է 95-100%-ով
- Նախալեռային սարավանդների խիստ ծանրաբեռնված գոտի (1600-1800մ.)՝ վերափոխված է 75-95%-ով
- Միջին բարձրության լեռային ծանրաբեռնված գոտի (1800-2200մ.)՝ վերափոխված է 60-80%-ով
- Բարձր լեռային համեմատաբար թույլ ծանրաբեռնված գոտի (2200-2500մ.)՝ վերափոխված է 40-60%-ով
- Բարձրադիր լեռային գոտի**
- Թույլ ծանրաբեռնված ենթագոտի (2500-2700մ.)՝ վերափոխված է 20-40%-ով
- Գրեթե չծանրաբեռնված ենթագոտի (2700-2900մ.)՝ վերափոխված է 10-20%-ով
- Չծանրաբեռնված ենթագոտի (2900մ. եվ ավելի)՝ ռելիեֆը գտնվում է քնական վիճակում

Կազմված քարտեզին համապատասխան, *ռելիեֆը ծանրաբեռնված և վերափոխված է առավելագույն չափով ամենաստորին բարձրաչափական գոտում՝ 1400-1600մ. բացարձակ բարձրությունների վրա:* Այստեղ բնակլիմայական և ռելիեֆային պայմանները բա-

րենպաստ են գյուղատնտեսական ակտիվ գործունեությամբ զբաղվելու համար: Այս բարձրաչափական գոտին համարվում է ավանդական երկրագործական շրջան, որտեղ գյուղատնտեսական հողահանրակները գրավում են գոտու ընդհանուր մակերեսի շուրջ 85%-ը:

Ռելիեֆառաջացնող գործընթացների վերափոխման մեջ երկրագործության ազդեցությունը դրսևորվում է որոշ ագրոկանոնների խախտման և ոռոգման աշխատանքների միջոցով: Ցանքատարածություններում կատարվող ոռոգման աշխատանքները, գյուղատնտեսական արտադրության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման հետ միասին, առաջ են բերում մի շարք բացասական հետևանքներ, և ամենից առաջ հողի էրոզիա, գերխոնավացում և աղակալում [1, 2]: Շիրակի տարածքում ոռոգման կարիք ունեն 30հզ. հա մակերես գրավող վարելահողեր, բազմամյա տնկարկներ ու խոտհարքներ, որոնց հիմնական մասը ընկած է քննարկվող գոտու սահմաններում: Այստեղ ոռոգման նպատակով տարեկան օգտագործվում է միջին հաշվով 160 մլն մ³. ջուր, որը կազմում է Շիրակի ընդհանուր մակերևույթային և ստորերկրյա հոսքի 38%-ը:

Ոռոգման հետևանքները գոտում տիրապետող էկոլոգագեոմորֆոլոգիական իրադրության վրա բավականին խորն են: Շիրակի ոռոգելի տարածքներում մեծ է հողագրունտների ենթաջրակալման վտանգը: Հողագրունտների ենթաջրակալման վտանգի տակ են գտնվում շուրջ 4 հզ. հա տարածքներ: Ներկայումս նման իրավիճակներ ստեղծվել են Ախուրյանի հովտի՝ Գյումրի քաղաքի, Առափի, Մարմաշեն, Վահրամաբերդ բնակավայրերի շրջակայքում: Ոռոգման հետևանքով Ախուրյան գետի նշված հատվածում գոյացել են նոր սողանքային երևակումներ: Նման վտանգավոր երևույթներից խուսափելու համար անհրաժեշտ է կազմակերպել ճշգրիտ հիդրոմելիորատիվ գործունեություն՝ հաշվի առնելով տեղանքի ռելիեֆային պայմանները:

Շիրակի ստորին բարձրաչափական գոտում են կենտրոնացված նաև հաղորդակցության ուղիների, բնակավայրերի մեծ մասը: Վերջիններս ռելիեֆի և ռելիեֆառաջացման գործընթացների ընթացքի վրա ևս ունենում են նկատելի ազդեցություն: Բնակավայրերը հանդիսանում են ռելիեֆի ձևերի վերափոխման և մակերևույթային ջրերի ու օդային ավազանի աղտոտման օջախներ: Միայն Գյումրի

քաղաքում կոշտ աղբի օրական ելքը կազմում է մոտ 250 մ³, որոնք կուտակվում են քաղաքամերձ շրջանում: Վերջին 50 տարիների ընթացքում Գյումրիի քաղաքամերձ գոտում կուտակվել է ավելի քան 30 մլն մ³ կենցաղային աղբ, որն առաջացրել է ռելիեֆի մարդածին միկրոձևեր:

Կուտակված աղբը միաժամանակ նպաստում է հիվանդություններ հարուցող միկրոօրգանիզմների, միջատների և կենդանիների զարգացմանը, վտանգավոր միկրոտարրերի տարածմանը և օդային ավազանի աղտոտմանը:

Մակերևույթային հոսքերի և ջրային այլ ավազանների աղտոտման մեջ մեծ է բոլոր բնակավայրերից արտանետվող կենցաղային կեղտաջրերի դերը: Այս ճանապարհով առավել աղտոտված են Շիրակի քաղաքներով հոսող գետերի (Գյումրիգետ, Չերքեզցուր, Արթիկցուր) ստորին հոսանքները, որոնք պատկանում են Ախուրյանի ավազանին: Սակայն Շիրակի բարձրադիր դիրքի շնորհիվ կեղտաջրերը չեն կուտակվում նրա տարածքում, այլ Ախուրյանի միջոցով հեռանում են դեպի Արարատյան գոգավորություն, որի հետ Շիրակն ունի անմիջական կապ:

Բարձրաչափական այս գոտում ռելիեֆի վերափոխման մեջ մեծ է նաև հետերկրաշարժյան ժամանակահատվածում առաջացած շինարարական թափոնների դերը: Միայն Գյումրի քաղաքից նշված ժամանակահատվածում հեռացվել է 1.25 մլն մ³ շինարարական աղբ և թափոն, որ կուտակվել է հինգ տեղամասերում՝ քաղաքամերձ գոտում, Հայկավան, Կառնուտ, Մայիսյան, Ջաջուռ բնակավայրերի հարակից շրջաններում [3]: Գյումրիից հյուսիս-արևմուտք՝ Մարմաշեն տանող ավտոճանապարհի երկու երկայնքով առաջացել են մինչև 10 մ. բարձրության թափոնային բլուրներ:

Հաջորդ 1600-1800մ. բարձրաչափական գոտում ռելիեֆի վերափոխման հիմնական գործոն հանդիսանում է գյուղատնտեսական գործունեությունը, ինչպես նաև տրանսպորտը, հանքարդյունաբերական համալիրը և ոռոգման համակարգերն ու ջրատեխնիկական կառույցները: Այս գոտին ռելիեֆի ծանրաբեռնվածության և վերափոխման աստիճանով քիչ է զիջում նախորդին: Այստեղ ևս ռելիեֆի վերափոխման գլխավոր գործոնը մնում է գյուղատնտեսությունը՝ գյու-

ղատնտեսական հողահանդակները գրավում են նրա զբաղեցրած մակերեսի 56.7%-ը:

Շիրակում զարգացած է բավականին հզոր ոռոգման համակարգ: Այստեղ գոյություն ունեն ջրատեխնիկական զանազան կառույցներ, որոնց ստեղծմամբ ռեյիեֆը ենթարկվել է խորը վերափոխումների: Ոռոգման համակարգերը բաղկացած են տարբեր չափերի հասնող 9 ջրամբարներից՝ 679 մլն. մ³ ընդհանուր ծավալով, 163.9 կմ. երկարությամբ մայր ջրանցքներից, 300 կմ. երկարությամբ միջբնակավայրային ջրանցքներից, ներհամայնքային ջրատարներից և ոռոգման ցանցերից, որոնցից միայն ջրամբարները զբաղեցնում են ավելի քան 69 քկմ. մակերես՝ գրավելով Շիրակի տարածքի 2.6%-ը: Վերջիններս կառուցված են ոչ միայն ոռոգման, այլև գետերի սելավային ու հեղեղային հոսքերի կարգավորման նպատակով:

Քանի որ Շիրակը գտնվում է երկրաշարժավտանգ գոտում, հետևաբար առանձնակի ուշադրություն են պահանջում ջրամբարների պատվարները: Ջրամբարների մեծ մասը ընկած է բարձրադիր տեղամասերում (աղյուսակ 1) և իրենց տակ ներառում են մեծ թվով բնակավայրեր և ցանքատարածություններ, հետևաբար դրանց պատվարների փլուզումները կարող են ունենալ աղետալի հետևանքներ:

Աղյուսակ 1

Շիրակի ջրամբարների որոշ ցուցանիշներ

№	Ջրամբարի անվանումը	Մուտքող գետի անվանումը	Ջրամբարի բացարձակ բարձրությունը (մ.)	Պարվարի տեսակը	Ջրամբարի մակերեսը (կմ ²)	Ջրամբարի ծավալը (մլն. մ ³)	
						ընդ.	օգտ.
1.	Ախուրյանի	Ախուրյան	1400	բետոնային	41.8	525	510
2.	Արփի լճի	Արփի լիճ	2024	բետոնային	22	100	90
3.	Կառնուտի	Կառնուտ	1600	հողային	2.15	22.6	21.8
4.	Մանթաշի	Մանթաշ	2608	բետոնային	0.764	8.2	7.9

5.	Վարդաքարի	Կարկասուն	1599	գրունտային	0.86	5.0	4.7
6.	Սառնաղբյուրի	Գառնհովիտ	1834	հողային	0.56	4.85	4.55
7.	Ջաջուտի	Ջաջուտ	1656	հողային	0.17	0.29	0.28
8.	Թավշուտի	Թավշուտ	2118	գրունտային	0.60	6.0	5.75
9.	Արթիկի	Արթիկ	1660	հողային	0.60	2	1.6

Շիրակի տարածքում աղետալի հետևանքներով նմանատիպ դեպք գրանցվել է 1997թ., երբ Արթիկի ջրամբարի պատվարի վթարի հետևանքով մեծ վնասներ կրեցին Նոր Կյանք և Վարդաքար համայնքներն ու նրանց պատկանող հողահանդակները: Այս աղետի հետևանքով զոհվեցին 4 մարդ: Իսկ 2005 թ.-ին փլուզվել է Վարդաքարի ջրամբարի պատվարը, որը ևս մեծ վնասներ է հասցրել հարակից տարածքներին:

Շիրակի ռելիեֆի վրա մեծ է նաև հանքարդյունաբերական համալիրի ներգործությունը, որով մարդն ռելիեֆի և շրջապատող միջավայրի վրա ունենում է անմիջական ազդեցություն և մեծ մասամբ առաջացնում է էկոլոգագետնորֆոլոգիական անկայուն իրավիճակներ: Հանքավայրերի հատկապես բաց եղանակով շահագործման տեղամասերում ռելիեֆը կրում է առավել խորը փոփոխություններ, երբ բնական ռելիեֆի ձևերը արմատապես վերափոխվում և փոխարինվում են տեխնածին ձևերով:

Ներկայումս Շիրակում շահագործվում են միայն շինարարական նյութերի արդյունահանման հանքավայրեր, որոնց մեջ գերակշիռ բաժինը պատկանում է տուֆերի արդյունահանմանն ու վերամշակմանը: 2000թ. դրությամբ այստեղ շահագործվել են 7 հանք, որոնցից յուրաքանչյուր տարի արդյունահանվում է 900 մ³ հանքաքար: Այս ճյուղի առավել հայտնի ձեռնարկություններից է «Արթիկ-տուֆը», որտեղ գործում են երկու տասնյակից ավել խոշոր հանքեր: Միայն նշված հանքավայրերից 1928-1991 թթ. ընթացքում արդյունահանվել են 21 մլն մ³ շինաքար՝ մշակելով 55 մլն մ³ լեռնազանգված [4, 5]:

Շիրակում հանքավայրերն ընկած են գերազանցապես 1600-1970 մ. բացարձակ բարձրությունների վրա, որտեղ հանքարդյունահանումը կատարվում է բաց եղանակով: Վերջինիս պատճառով նշված բարձրություններում ռելիեֆին և շրջապատող միջավայրին հասցվող վնասները հասնում են մեծ չափերի: Հանքերը զբաղեցնում են զգալի մակերեսներ, գրավում են նույնիսկ գյուղատնտեսության համար արժեքավոր հողատարածքները: Միայն «Արթիկտուֆ» ձեռնարկության հանքավայրերը գրավում են 700 հա մակերես, որը հավասար է Արթիկ քաղաքի զբաղեցրած մակերեսին: Վերջին տարիներին նոր հանքերի շահագործման համար այս ձեռնարկությանը տրամադրվել է ևս 100 հա հողատարածք: Ներկայումս ընդարձակվում է նաև Մարալիկի, Պեմզաշենի և Տուֆաշենի վարդագույն տուֆի հանքավայրերը:

Բոլոր հանքավայրերի տեղամասերում առաջացել են ռելիեֆի տեխնածին բացասական ձևեր՝ խոր ձորակներ, որոնցից չնչին մասն է ենթարկվում վերամշակման: Վահրամաբերդ բնակավայրից արևելք՝ Ախուրյան գետի ձախափնյա հատվածում 7 հա մակերես զբաղեցնող սև տուֆի նախկին հանքավայրը ներկայումս հանդիսանում է մինչև 15 մ. խորությամբ մի ձորակ, որի հատակային հատվածում առաջացել է փոքր ջրամբար:

Հանքարդյունահանման տեղամասերում էական փոփոխությունների են ենթարկվում ոչ միայն ռելիեֆի ձևերը, այլև ռելիեֆառաջացնող գործընթացները և ամբողջ շրջապատող միջավայրը: Մեծ մասամբ առաջանում է արտածին ռելիեֆառաջացնող գործընթացների ինտենսիվացում: Հանքավայրերում և արդյունահանման հետևանքով առաջացած թափոնների կուտակման տեղամասերում կարող են զարգանալ սողանքներ, էրոզիա և այլ երևույթներ, որոնք տվյալ տեղամասերում նախկինում գոյություն չեն ունեցել [6, 7]:

Շիրակում հանքաքարի ոչ արդյունավետ վերամշակման հետևանքով առաջացած թափոնները հասնում են մեծ ծավալների: Դրանք կազմում են տուֆազանգվածի 75, լավագույն դեպքում՝ 65 %-ը: Տարեկան գոյացած թափոնների (34 մլն մ³) 30%-ը ենթարկվում է վերամշակման, իսկ մնացած մասը կուտակվում է հարակից տարածքներում: Ներկայումս տուֆի թափոններ կան կուտակված Արթիկ, Պեմզաշեն, Տուֆաշեն, Ձորակապ, Սառնաղբյուր, Մարալիկ, Ա-

նի, Անիպեմզա և մի շարք այլ բնակավայրերի շրջակայքում, որոնց շուրջ 45 %-ը տեղաբաշխված են գետային թեք դարավանդների վրա, ժամանակավոր հոսքահուններում, իսկ 18 %-ը՝ ճանապարհների երկարությամբ: Դրանց մի մասն էլ տեղաբաշխված են գյուղատնտեսական յուրացման համար արժեքավոր հողերի վրա: Տվյալ տեղամասերում ընթանում են արտաձին ռելիեֆառաջացնող ոչ ցանկալի երևույթներ, առավելապես էրոզիա:

Առաջացած թափոնները հանդիսանում են նաև շրջապատող միջավայրը աղտոտող օջախներ: Դրանք նպաստում են հարակից տարածքների օդային ավազանի փոշով աղտոտմանը: Այս տեսակետից առավել անբարենպաստ իրավիճակում է Արթիկ քաղաքը: Այն տեղադրված է ամֆիթատրոնաձև մի գոգավորությունում, որտեղ նրա հիմնական մասը գտնվում է կենտրոնական մեղմաթեք հարթության վրա: Տուֆի հանքերը և հանքանյութի թափոնները ընկած են նրանից մոտ 50 մ.-ով ավելի բարձր: Այս ամենի պատճառով, հատկապես ամռան ամիսներին, լեռնահովտային քամիների միջոցով հանքավայրերից փոշին տարածվում է ամբողջ քաղաքի վրա:

Շիրակի տարածքի 2200 մ. և ավելի բարձրաչափական գոտիներում ռելիեֆի վերափոխման գլխավոր և հիմնական գործոնը հանդիսանում է անասնապահությունը: Անասնապահական գործունեությամբ ռելիեֆառաջացնող գործընթացների ընթացքի վրա մարդածին գործոնի ազդեցությունը արտահայտվում է շրջապատող բնական համալիրի և ամենից առաջ հողաբուսական ծածկույթի վերափոխման հետևանքով: Չկարգավորված արածեցումների հետևանքով բուսածածկույթի վատթարացումը պատճառ է դառնում էրոզիոն և սելավային երևույթների ակտիվացման համար [8-10]: Նման իրավիճակ ներկայումս ստեղծվել է Շիրակի լեռնաշղթայի կենտրոնական և արևմտյան հատվածի՝ Լեռնանցք, Սարիար, Թորոսգյուղ բնակավայրերի շրջակայքում, Արագած լեռնազանգվածի արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածների հարավիայաց թեք լանջերին: Նշված հատվածներում բուսապատվածությունը կրճատվել է 20-22%-ով, որը նպաստավոր պայմաններ է ստեղծել տեղատարման գործընթացների և հատկապես մակերևույթային էրոզիայի և սելավային հոսքերի ակտիվացման համար:

Եզրակացություն: Ռեյիեֆի նկատմամբ բնօգտագործման յուրաքանչյուր ձև հարաբերվում է յուրովի, ընդ որում կախվածությունը ռեյիեֆից մի դեպքում կարող է լինել ավել, մյուս դեպքում՝ պակաս: Ռեյիեֆից առավել չափով կախված են բնօգտագործման այն ձևերը, որոնք ունեն տարածական տարածքատար բաշխում, այսինքն՝ ընդգրկում են մեծ մակերեսներ: Դրանց շարքն են կազմում գյուղատնտեսությունը, ջրատեխնիկական կառույցները և այլն: Միջին կախվածություն ունեն գծային բաշխում ունեցող բնօգտագործման ձևերը, այսինքն՝ ճանապարհները, ոռոգման ցանցերը, խողովակաշարերը, էլեկտրահաղորդման ցանցերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը: Համեմատաբար թույլ կախվածության մեջ են գտնվում կետային տարածում ունեցող օբյեկտները: Սրանց մեջ կարելի է առանձնացնել բնակավայրերը, տրանսպորտային և արդյունաբերական հանգույցները և այլն:

Տարածքի յուրացման ու տնտեսության զարգացման տեսանկյունից Շիրակի ռեյիեֆն հանդես է գալիս ավելի շատ խոչընդոտող, քան նպաստող գործոնի դերում: Չնայած տարածքի թույլ մասնատմանը, հարաբերական բարձրությունների, մակերևույթի թեքությունների ոչ մեծ ցուցանիշներին, Շիրակի տարածքի բարձրադիր դիրքը, դրանով պայմանավորված կլիմայի, հատկապես ջերմային պայմանների էքստրեմալությունը, ռեյիեֆառաջացնող բացասական մի շարք գործընթացների առկայությունը, բարձր սեյսմաակտիվությունն ու սեյսմավտանգավորությունը հանդիսանում են խոչընդոտներ Շիրակի տարածքում տնտեսության առաջընթաց զարգացման համար: Բնական բոլոր այս երևույթները բարձրացնում են տարածքի յուրացման (օգտագործման) տնտեսական և էկոլոգիական ռիսկի մակարդակը:

Բանալի բաներ՝ ռեյիեֆի մարդածին ծանրաբեռնվածություն, էկոլոգագեոմորֆոլոգիական իրավիճակ, մարդածին ներգործության մասշտաբ, տնտեսական ռիսկ, էկոլոգիական ռիսկ, ռեյիեֆի վերափոխիչ գործոն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տերտերյան Բ., Ավետիսյան Գ., Պետրոսյան Ն. Ոռոգման բացասական հետևանքները և դրանց խուսափելու պայմանները Շիրակի մարզում: Աշխարհագրություն 2001: Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության խնդիրները, կոնֆերանսի նյութեր, Երևան, «Ձանգակ-97», 2002, էջ 75-79:
2. Հայրապետյան Է. Մ., Հարությունյան Լ. Վ. Բնության պահպանության հիմունքներ: Երևան, «Լոյս» հրատ., 1983, 427 էջ:
3. Մարտիրոսյան Լ., Սիմոնյան Ա. Շինարարական և կենցաղային թափոնների վիճակը Գյումրիում հետերկրաշարժյան շրջանում: Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը, առաջին ազգային կոնֆերանսի նյութեր, Երևան, 1997, էջ 92-94:
4. Նահապետյան Ա. Շրջակա միջավայրի պահպանությունը կապված Արթիկ տուֆի արտադրության հետ: Աշխարհագրություն 2001: Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության խնդիրները, կոնֆերանսի նյութեր, Երևան, «Ձանգակ-97», 2002, էջ 24-27:
5. Պետոյան Մ. Հանքային հանածոյի սխալ արդյունահանման վնասակար ազդեցությունը բնության պահպանության վրա «Արթիկտուֆ»-ի օրինակով: Աշխարհագրություն 2001: Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության խնդիրները, կոնֆերանսի նյութեր, Երևան, «Ձանգակ-97», 2002, էջ 45-50:
6. Рубина Е. А. Формирование техногенного рельефа и развитие экзогенных процессов в районах открытых разработок полезных ископаемых. Климат, рельеф и деятельность человека. Москва: Наука, 1981, с. 105-112.
7. Фельдбарг Н. Е. Нарушения динамического равновесия природной среды под воздействием антропогенных процессов. Климат, рельеф и деятельность человека. Москва: Наука, 1981, с. 64-70.
8. Сваричевская З. А., Лутовинов И. Л. Техногенный морфогенез. Климат, рельеф и деятельность человека. Москва: Наука, 1981. с. 58-64.

9. Борсук О. А., Спасская И. И. Роль элементов ландшафтной оболочки Земли в экзогенном рельефообразовании. Климат, рельеф и деятельность человека. Москва: Наука, 1981. с.20-26.
10. Кесь А. С., Косов Б. Ф. Антропогенные изменения геоморфологических процессов и антропогенный рельеф. Климат, рельеф и деятельность человека. Москва: Наука, 1981. с. 47-58.

Резюме

Влияние антропогенного фактора на рельеф и рельефообразующие процессы на территории Ширака в данной работе оценено по масштабам, глубине и интенсивности воздействия. С точки зрения оценки глубины воздействия антропогенного фактора на рельеф для исследуемой территории выделены три категории групп природопользования. Следующим шагом исследования явилось определение масштабов охвата антропогенной изменении рельефа и природных компонентов, согласно которому также произведена классификация.

Антропогенная трансформация рельефа и рельефообразующих процессов на территории Ширака рассмотрена в плане высокой зональной поясности и составлена карта антропогенного изменения рельефа и рельефообразующих процессов.

Ключевые слова: антропогенная нагрузка рельефа, экологогеоморфологическая ситуация, масштабы антропогенной воздействию, экономический риск, экологический риск, факторы рельефообразование.

Resume

In this paper, the influence of anthropogenic factor on the relief and relief-forming processes in the territory of Shirak region is assessed according to the scale, depth and intensity of exposure. From the point of view of the anthropogenic factors impact depth on the relief, for the studied area the three categories of Natural Resources Management groups were allocated. The next step of the research was to define the

scope of coverage of anthropogenic transformation of the relief and natural components, according to which certain classification was also done.

Anthropogenic transformation of the relief and the relief-forming processes in the territory of Shirak is discussed in terms of high assessment zoning and a map of anthropogenic changes of relief and relief-forming processes was drawn up.

Key words: anthropogenetic load of surface, ecological geomorphologic situation, human impact, economic risk, ecologic risk, relief forming factors.

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՔԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հ. Արշակյան

Զբոսաշրջությունը տնտեսական համալիր ոլորտ է, որն աշխարհի բազմաթիվ երկրներում վերածվել է առավել դինամիկ զարգացող ճյուղի: Դրան բաժին է ընկնում համաշխարհային համախառն արդյունքի, համաշխարհային ներդրումների, համընդհանուր աշխատատեղերի և համաշխարհային սպառողական ծախսումների մոտ 10%-ը, յուրաքանչյուր 16-րդ աշխատատեղը¹: Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Փոքր Ասիայի, Ասիա-խաղաղովկանոսյան տարածաշրջանի մի շարք երկրներում այն դարձել է ազգային եկամտի և շահույթի ծանրակշիռ հոդվածը (13-40%)²:

Ներկայումս զբոսաշրջության ներդրումը միջազգային տնտեսության մեջ 11% է կազմում, և զբաղվածների յուրաքանչյուր 15-րդը ուղևակիորեն կամ անուղևակիորեն ներկայացնում է զբոսաշրջությունը: Զբոսաշրջության նպատակով կատարվող ծախսերի առումով, ըստ վերջին տարիների միջինացված տվյալների, առաջին տեղում է ԱՄՆ-ն՝ 31 մլրդ դոլար, երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Գերմանիան՝ 25.2 մլրդ դոլար, ապա Մեծ Բրիտանիան՝ 21 մլրդ դոլար, այնուհետև Ռուսաստանը՝ 7.1 մլրդ դոլար³:

Մինչև 2030թ. ՀՀ գործարար և ներդրումային միջավայրում նախատեսվում է ունենալ որոշակի առաջընթաց, որի արդյունքում կդիտվի հետևյալ պատկերը՝

- զբոսաշրջության մասնաբաժինը հանրապետության ներքին համախառն արդյունքում կկազմի 12%,
- ոլորտը կընդգրկի երկրի արտահանման ծավալների 23.8%-ը,
- միջազգային զբոսաշրջային այցելություններից ստացված եկամուտը կկազմի 3 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2009թ. գներով զբո-

¹ <https://www.e-gov.am/>

² http://www.usum.am/_ld/31/3199_0rN.docx

³ ՀՀ զբոսաշրջության հայեցակարգ, Եր., 2008

սաշրջությունից ստացված եկամուտների տարեկան 11% աճի պայմաններում,

- զբոսաշրջության արտաքին առևտրի հաշվեկշիռը կշարունակի մնալ դրական,
- կապիտալ ներդրումները կկազմեն 535.3 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ներդրումների 12.3%-ը⁴,
- կապահովվի 22300 աշխատատեղ՝ կազմելով ընդհանուր զբաղվածության 2.0%-ը⁵,
- աշխատանքային պայմանները կհամապատասխանեն միջազգային չափանիշներին, կբարձրանա միջին աշխատավարձի չափը:

Ըստ ՀՀ «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի» Հայաստան կատարած այցելությունները կունենան հետևյալ բնութագիրը՝

1. 2020թ. Հայաստան այցելած զբոսաշրջիկների՝ հանգստի և ժամանցի նպատակով այցելուների թիվը կկազմի ընդհանուր այցելուների 20%-ը, իսկ 2030թ.՝ 25%-ը.

2. Զբոսաշրջիկների կորիզը կշարունակեն կազմել ամբողջ աշխարհից հարազատներին և ընկերներին այցելող սփյուռքահայերը.

3. Գործնական նպատակով Հայաստան այցելողների մասնաբաժինը կմնա նույն մակարդակի վրա՝ 10%:

Հայաստանի զբոսաշրջային արդյունքի հիմքում ընկած կլինի այսօր առաջարկվող արդյունքը՝ պատմամշակութային, էկոլոգիական, կրոնական: Մինչև 2020թ. ձմեռային զբոսաշրջությունը կտեղափոխվի առաջնային արդյունքի շարք, նույն ժամանակահատվածում առաջնային կդառնա նաև քաղաքային մշակույթը, կզարգանան առողջարանային և առողջապահական զբոսաշրջության ձևերը⁶:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով երկրի առավել դինամիկ

⁴ Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի տվյալներ, 2010թ.

⁵ Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի տվյալներ, 2010թ.

⁶ Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, Եր., 2008

զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները հստակեցված են օրենսդրորեն⁷: Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված զբոսաշրջային այցելությունների քանակի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ, աշխատատեղերի ստեղծմամբ:

Վերջին ժամանակաշրջանում լայն տարածում են գտել զբոսաշրջային քլաստերները, առանց որոնց դժվար է պատկերացնել ժամանակակից զբոսաշրջության արդյունավետ և նպատակասլաց զարգացումը: Հայաստանի Հանրապետությունում այդ ուղղությամբ դեռևս առաջին անկայուն քայլերն են արվում: Քլաստերը մի շարք տարրերի միավորումն է, ինչը կարելի է դիտարկել որպես անկախ միավոր, որն ունի որոշակի հատկություններ և առանձնահատկություններ: Զբոսաշրջային քլաստերը, որոշակի աշխարհագրական սահմաններում, միմյանց հետ փոխներգործող կազմակերպությունների և ֆիրմաների ամբողջություն է, որը զբոսաշրջության ոլորտում ապահովում է ապրանքների և ծառայությունների զարգացումը⁸: Այդ կազմակերպությունները և ֆիրմաները միմյանց հետ փոխկապակցված են և դրանց շարքում կարող են դասվել ոչ միայն մեծ, այլև փոքր կազմակերպությունները: Զբոսաշրջային քլաստերի հիմնական նպատակը մրցունակ զբոսաշրջային համալիրի ձևավորումն ու գործունեությունն է⁹:

Զբոսաշրջության քլաստերի ստեղծումը նպաստում է կազմակերպության և մրցունակ զբոսաշրջության զարգացմանը՝ ապահովելով պատշաճ և շքեղ պայմաններ զբոսաշրջիկների պահանջմունքները բավարարելու համար: Տնտեսության զարգացման համար մեծ

⁷ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 17.12.03

⁸ Цихан Т. В. Кластерная теория экономического развития. Электронный ресурс. // Теория и практика управления 2003 г. - №5. - Режим доступа: <http://www.subcontract.ru/Docum/DocumShow DocumID 168.html>.

⁹ <http://vlastdviu.ru/download/rio/j2009-2/37.doc>

ներդրումներ են կատարվում հարկային եկամուտների, արտարժույթի ներհոսքի, աշխատանքային տեղերի ավելացման, մշակութային և բնական ներուժի պահպանման և ռացիոնալ օգտագործման հաշվին:

Մի շարք գիտնականների կարծիքով զբոսաշրջային քլաստերը կազմակերպությունների և զբոսաշրջային ապրանքներ կամ ծառայություններ մատուցող ընկերությունների համագործակցություն է, որը ենթադրում է նաև հանգստից կամ արձակուրդից ստացած հաճույք, տրանսպորտի և կապի ոլորտների զարգացում, անհրաժեշտ ինստիտուցիոնալ քաղաքականություն¹⁰:

Տարածաշրջանային զբոսաշրջային քլաստերի կառուցվածքն ըստ բաղադրիչների ներառում է երեք խումբ բաղադրիչներ՝ զբոսաշրջության ոլորտում տնտեսավարող սուբյեկտները, օժանդակ հաստատությունները և փոխկապված հարթությունները¹¹: Ժամանակակից զբոսաշրջային քլաստերը ընդունակ է լուծել մի շարք խնդիրներ՝

- զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման անցկացում,
- ժամանակակից զբոսաշրջային շուկայի ստեղծում,
- ներքին և արտաքին զբոսաշրջության առաջնային զարգացում որևէ տարածքում,
- զբոսաշրջային գործունեության պետական համակարգին ինտեգրում,
- զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացում,
- փոքր և միջին ձեռնարկությունների աջակցություն,
- տարածքների ինտեգրում նաև համաշխարհային զբոսաշրջության շուկայական համակարգի մեջ,
- միջազգային համագործակցություն զբոսաշրջության բնագավառում,
- ոչ բյուջետային միջոցներով վերանորոգում և նորերի կառուցում:

¹⁰Амирханов М. М., Барзыкин Ю. А., Чуваткин П. П. Особые экономические зоны и развитие туризма. Сочи: СГУТиКД, 2006 - 153 с.

¹¹ <http://dis.podelise.ru/text/index-11822.html?page=5>

Զբոսաշրջային քլաստերները նպաստում են նաև զբոսաշրջային կադրերի նախապատրաստմանը, վերապատրաստմանը և մասնագիտական կատարելագործմանը, ժամանակակից զբոսաշրջային համակարգի ստեղծմանը, համալիր գիտական հետազոտությունների իրագործմանը զբոսաշրջային ոլորտում՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները:

Արդյունավետ աշխատող զբոսաշրջային քլաստերները անհրաժեշտ է ձևավորել առաջնորդվելով այնպիսի մոդելով, որը հաշվի է առնում զբոսաշրջային գործունեության և քլաստերային մոտեցման առանձնահատկությունները: Քլաստերային մոտեցման իրագործման համար անհրաժեշտ է մոդելը դիտարկել որպես օբյեկտի պարզեցված նկարագրություն՝ գլխավորը ընդգծելու և դրա մասին հավելյալ գիտելիքներ ստանալու նպատակով: Զբոսաշրջային քլաստերի մոդելը համամասնորեն զարգացող տարրերի միացումն է, որն անհրաժեշտ է ռեսուրսները տեղաբաշխելու և կոորդինացնելու համար: Մոդելը կարող է ստեղծել մրցունակ զբոսաշրջային ծառայությունների անհրաժեշտ պայմաններ: Հենց ռեսուրսներին է պատկանում զբոսաշրջության գլխավոր դերը, քանի որ դրանք են զբոսաշրջության ուղևորություններում մարդկանց մասնակցության գլխավոր շարժառիթը: Յուրահատուկ զբոսաշրջային ռեսուրսների առկայությունը հնարավորություն է տալիս մրցունակ զբոսաշրջային ապրանքների ստեղծման և զարգացման համար:

Զբոսաշրջության զարգացման գործում մեծ դեր են խաղում զբոսաշրջային ֆիրմաները, որոնց օգնությամբ կատարվում են զբոսաշրջային արշավների 40%-ը: Այս ֆիրմաների գործունեության գլխավոր խնդիրը զբոսաշրջիկների պահանջները բավարարող յուրահատուկ և գրավիչ զբոսաշրջային ապրանքների ստեղծումն է:

Քլաստերները կամ աշխարհագրորեն միմյանց մոտ գտնվող փոխկապակցված ընկերությունների ու օժանդակ հաստատությունների խմբերը տնտեսության զարգացման հզոր ուժ են, քանի որ նրանք օգտվում են առկա համագործակցությունից և լրացուցիչ հնարավորություններից, հաղորդակցման և համագործակցության ավելի լայն հարթակ են ստեղծում՝ դրանով իսկ խթանելով և ամրապնդելով կապերը ընկերությունների ու տնտեսության տարբեր ոլորտների միջև:

«Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում»/CAPS ծրագիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորման հինգ տարվա աջակցության ծրագիր է¹², որը կիրառում է քլաստերային մոտեցում, ուղղված է գործարար միջավայրի բարելավմանը և կոնկրետ ոլորտում ձեռնարկությունների միջև համագործակցության խթանմանը: Քլաստերի գաղափարն առանցքային է: Ոլորտների մեծ մասը բաղկացած է շահագրգիռ կողմերի տարբեր խմբերից, որոնցից են կառավարությունը՝ որպես առևտրային գործընթացները կարգավորող մարմին, կրթական հաստատությունները, որոնք մասնագետներ են պատրաստում, բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցողները, որոնք առաջարկում են խորհրդատվական և կառավարման այլ ծառայություններ, և բուն ոլորտը՝ որպես հաճախորդներին ապրանքներ և ծառայություններ տրամադրող: Քլաստերի ստեղծման գործընթացը հիմնականում բոլոր շահագրգիռ կողմերի համախմբումն է ընդհանուր նպատակների իրականացման շուրջ, որոնք հիմնականում առնչվում են մարկետինգին և վարկանիշի ձևավորմանը, ոլորտում որակի ընդհանուր բարելավմանը, աշխատուժի ուսուցմանը և/կամ առավել նպաստավոր օրենսդրության ընդունմանը:

Մասնավորապես, CAPS ծրագիրը քլաստերների բարելավման գծով իրականացնում է՝ քլաստերների մրցունակության բարելավում՝ աջակցելով ոլորտի քլաստերների ռազմավարական նպատակները նախանշելու և դրանց իրականացման գործում: Քլաստերի հիման վրա իրականացված գործողությունները ծառայում են մասնակցող կազմակերպությունների ընդհանուր կարիքների բավարարմանը՝ բարելավելով շուկայում ապրանքների ներկայացման և կառավարության վրա ներգործելու նրանց ունակությունները և, միևնույն ժամանակ, կայուն հիմք ստեղծելով իրենց առանձին նպատակների ձևավորման և իրագործման համար: Այս ծրագիրը ընտրել է տեղեկատվական տեխնոլոգիաների (SS), զբոսաշրջության և դեղագործության ոլորտները: «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրի կողմից առաջարկվում է փորձագիտական խորհրդատվության, մարկետինգի, ֆինանսական կառավարման և կադրերի կառավար-

¹² www.caps.am

ման վերաբերյալ կոնկրետ ոլորտների համար տարբեր միջոցառումներին մասնակցություն՝ ուսուցման, ենթակառուցվածքի զարգացման և այլ նպատակներով:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության քլաստերի զարգացման ազգային հայեցակարգը, որը մշակվել է քլաստերների անդամների և CAPS ծրագրի համատեղ ջանքերով, առաջարկում է յոթ հիմնական բարեփոխումներ¹³: Դրանք են՝ զբոսաշրջության ոլորտի տեսլականի ընդունում, զբոսաշրջության քլաստերի հզորացում, ներգրավում պրոդուկտների ու շուկայի զարգացման գործընթացում, նպատակային գովազդման միջոցների կիրառում, կրթական մակարդակի ու աշխատուժի հմտությունների բարելավում, ապրանքների, ծառայությունների ու անվտանգության մատչելիության ապահովում, բիզնես միջավայրի, բիզնես հաստատությունների ու բիզնես պրակտիկայի հզորացում: Կազմակերպությունները գործում են ապրանքների և ծառայությունների շուկայում զբոսաշրջությունից անկախ, բայց նրանց ներգրավումը քլաստերի կազմի մեջ կստեղծի բարձրորակ պայմաններ շրջանառության ծավալի զարգացման և մեծացման համար: Դրանց մեջ մտնում են ֆինանսական, առողջապահական ծառայությունները, մանրածախ առևտուրը՝ ներառյալ հուշանվերների վաճառքը, զբոսաշրջային սարքավորումները, ճարտարագիտական կառույցները, անվտանգության ապահովումը և այլն:

Պարզ է, որ զբոսաշրջային քլաստերները մեծ դեր են խաղում զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում: ՀՀ զբոսաշրջության ոլորտը, հատկապես վերջին տարիներին, զգալի նվաճումների է հասել զբոսաշրջային քլաստերների օգնությամբ: Մշակված ծրագրերից առանձնանում է «AECOM» (ԱԷՔՈՍ) ընկերության ՀՀ զբոսաշրջության հարավային միջանցքի զարգացման ռազմավարական նախագիծը, քանի որ հենց հարավային միջանցքում են գտնվում ՀՀ զբոսաշրջության մեծ քլաստերները¹⁴: ՀՀ հարավային միջանցքում գտնվում են 5 խոշոր քլաստերներ, որոնցից յուրաքանչյուրը ռացիոնալացնում և կենտրոնացնում է տվյալ շրջանը՝ ներդրումներ խթանե-

¹³ <http://www.caps.am/data.php/745.pdf>

¹⁴ <http://www.cf.am/files/news/226/7ca0682dcce8c76b.pdf>

լու և զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով: Նշված 5 քլասստերներն են՝ Եղեգնաձոր, Ջերմուկ, Սիսիան, Գորիս, Տաթև:

Զբոսաշրջության հարավային միջանցքի ռազմավարական նախագիծն առաջին խոշոր անկյունաքարն է Հայաստանում զբոսաշրջության զարգացման նոր մոտեցման մշակման գործում, որտեղ ներդրումային հնարավորությունները «փաթեթավորվում» են զբոսաշրջության զարգացման երթուղիների քլաստերների շուրջ՝ ստեղծելով դրական գործարար միջավայր և ապահովելով համապատասխանություն զբոսաշրջության ազգային նպատակներին:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ և խոչընդոտներ ու զբոսաշրջության զարգացման սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել զբոսաշրջային քլաստերների զարգացման ներուժը առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու հիմնախնդիրները:

Բանալի բաներ՝ զբոսաշրջային քլաստեր, հայեցակարգ, ռազմավարություն, ներուժ, բնական ռեսուրսներ, ծրագիր:

Резюме

Рассматривая развитие сферы туризма как один из главных факторов развития конкурентоспособности экономики страны, на основе реформ предусмотренной национальной концепцией была представлена актуальность развития туристических кластеров Армении, направленного формирования и развития туристических кластеров, а так же представлены некоторые теоретические и методические аспекты развития туристических кластеров. Были рассмотрены статистические данные развития туризма и туристических кластеров. Так же обоснованы возможности развития туристических кластеров в Армении.

Ключевые слова: туристический кластер, концепция, стратегия, потенциал, природные ресурсы, программа.

Resume

Regarding the development of tourism as one of the main factors of development of economic competitiveness of the country, in the article is presented actuality of development of touristic clusters in Armenia, directions of creating and developing of touristic clusters, as well as the some methodic and theoretic aspects of the development of touristic clusters. Here are analyzed statistic data of tourizm and toristic clusters development and justified the oportunities of development of touristic clusters in Armenia.

Key words: touristic cluster, conception, strategy, potential natural resources, program.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վ. Սայադյան

Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի կյանքում Հայ առաքելական եկեղեցին, հոգևոր-կրոնական առաքելությունից բացի, կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում իրականացրել է ազգապահպան գործառույթներ, դարեր շարունակ գլխավորել ազգային-ազատագրական պայքարը¹, ինչպես նաև պետականության բացակայության ժամանակ, իրականացրել «պետության գործառույթ»², ինչպես նաև ստանձնել է ազգային ինքնության, ավանդույթների, սովորույթներ և մշակույթի, սովորության իրավունքների պահպանման առաքելությունը: Այդ դարերի ընթացքում իրավունքի աղբյուր են եղել միայն եկեղեցական, կանոնական իրավունքները: Հայ առաքելական եկեղեցու իրավասության տակ էր ամուսնաընտանեկան, գույքային, քրեաիրավական հարաբերությունների լուծումը: Հայ առաքելական եկեղեցին ոչ միայն զգալի դեր է խաղացել հայ ժողովրդի կրոնական կյանքում, այլև մասնակցել է նրա քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծմանը³:

Հայ առաքելական եկեղեցին բազում դժվարությունների միջով է անցել, սակայն ամենաձանր ժամանակահատվածը նրա համար եղել է 20-րդ դարը, հատկապես Յարական Ռուսաստանի և Խորհրդային Միության տարիներին: Խորհրդային կարգերի հաստատումով Հայ առաքելական եկեղեցին թևակոխեց պատմության մի նոր շրջան՝ անհամեմատ բարդ հիմնահարցերով: Այդ տարիները Հայ առաքելական եկեղեցու համար դժվարին տարիներ էին, եկեղեցին ապրում էր իր պատմության ամենաձանր և իրավազուրկ ժամանակաշրջանը: Ասվածի վառ ապացույցներից է 1917թ. «Հողի մասին» դեկրետը⁴, որի համաձայն բոլոր վանքապատկան հողերը առգրավվեցին Հայ առաքելական եկեղեցուց և պետականացվեցին⁵: Իսկ 1917թ. դեկտեմբերի 18-ի «Քաղաքացիական ամուսնության և քաղա-

քացիական չափաբերական մատյանի մասին» դեկրետի հռչակմամբ պսակը համարվում է որպես քաղաքացիների մասնավոր ցանկություն, այլ ոչ թե պարտադիր մի գործողություն, ինչպես նախկինում է եղել՝ թելադրված Հայ առաքելական եկեղեցու կողմից⁶:

Հայ առաքելական եկեղեցու համար բարդ խնդիրներից էր նաև 1922թ. փետրվարի 2-ին բանվորագյուղացիական պատգամավորների հայաստանյան խորհուրդների 1-ին համագումարում ընդունված Սահմանադրության 6-րդ հոդվածը, որով «եկեղեցին անջատվեց պետությունից և դարոցը՝ եկեղեցուց»⁷: Դա ծանր հարված էր և՛ Հայ առաքելական եկեղեցու, և՛ հայ ազգի համար, քանի որ Հայ առաքելական եկեղեցին զրկվեց «կրթելու» բացառիկ առաքելությունից, իսկ հայ ազգը զրկվեց գրագիտությունից: 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից հետո Հայ առաքելական եկեղեցու և կառավարության միջև սկսեցին ձևավորվել ջերմ հարաբերություններ: Չնայած առաջին Հանրապետության կարճատև գոյությանը՝ Հայ առաքելական եկեղեցու համար ազատ գործելու հնարավորություն էր ստեղծվել⁸: 1918թ. մայիսյան անկախության հռչակումից հետո եկեղեցու վրայից վերցվեց «իշխանության բեռը», եկեղեցու մինչ այդ կատարած պետությանը բնորոշ գործառույթները: Նորանկախ Հայաստանի Հանրապետության ղեկավարները սկսեցին համագործակցել Հայ առաքելական եկեղեցու սպասավորների հետ: Մայր Աթոռը պատրաստակամ էր իր օգտակար ծառայությունները բերել պետական մարմիններին թե՛ քաղաքական և թե՛ ուսումնա-մշակութային աշխատանքներում⁹: Նոր ստեղծված պետության ղեկավարները միանշանակ գիտակցում էին, որ իրենք Հայ առաքելական եկեղեցու աջակցության կարիքը ունեն: Իսկ Հայ առաքելական եկեղեցին նորանկախ իշխանությանը մեծապես աջակցում էր նաև միջազգային հարաբերությունները կարգավորելու հարցում:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին պետության և Հայ առաքելական եկեղեցու համագործակցությունը ակնառու հաջողություններ արձանագրեց՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, կրթական բնագավառներում:

«1919թ. ապրիլի 15-ին դիվանատնից N 165 գրությամբ նշվում էր, որ Հայ հոգևոր իշխանության և Հայաստանի կառավարության

հարաբերությունները խիստ բարեկամական են, սակայն փոխհարաբերությունների համար չկան հրատարակած օրենքներ»¹⁰: Պարզ է, որ հասունացել էր նաև այս խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը: Արդեն ոչ միայն անհրաժեշտ, այլև հնարավոր էր փոխադարձ համաձայնությունները կարգավորել քաղաքական և հոգևոր իշխանությունների միջև, և այդ նպատակով կազմվում է ժամանակավոր մի «դաշնագիր», որը պետք է լուծեր հիշյալ խնդիրները¹¹: Դաշնագրի գաղափարի կարևորությունը և անհրաժեշտությունը սպասված էր, և կարող ենք փաստել, որ իր դերակատարմամբ մեծ նշանակություն էր ստանում պետություն-եկեղեցի հարաբերությունների կարգավորման հարցում: Հայ առաքելական եկեղեցու և պետության միջև այս ներդաշնակ հարաբերությունները շարունակվել են ընդհուպ մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Դրա վառ ապացույցը «Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցու և Հայաստանի Հանրապետության միջև կնքվելիք դաշնագիր»-ն էր¹²:

Տասնինը կետերից բաղկացած նշյալ դաշնագիրը բավականին հաջողված իրավական փաստաթուղթ էր Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորելու համար: Կարծում ենք, որ այն հիմա էլ կարող է հիմք հանդիսանալ եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները կարգավորելու հարցում: 1920թ. խորհրդային կարգերի ներխուժումը Հայաստան նոր փորձությունների սկիզբ դարձավ Հայ առաքելական եկեղեցու համար, ինչը տևեց ավելի քան 70 տարի: Այդ ժամանակից սկսած՝ Հայ առաքելական եկեղեցին մշտապես ենթարկվեց աթեիզմի կործանարար հարվածներին¹: Խորհրդային իշխանության առաջին օրենսդրական ակտերից է 1919թ. հունվարի 20-ի «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին» դեկրետը, որով վերացվեցին դավանանքի հետ կապված բոլոր արտոնությունները¹⁴: Խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցին Սահմանադրությամբ անջատ

¹ Տե՛ս Հ. Ալեքսանյան, Հոգևոր-եկեղեցական կյանքի անկումը խորհրդային համայնքներում 1920-ական թթ., Հայոց պատմության հարցեր, Երևան 2007:

համարվեց պետությունից¹⁵: Դա վերաբերում էր ինչպես Ռուս ուղղափառ, այնպես էլ Խորհրդային Միության տարածքում գտնվող բոլոր եկեղեցիներին, այդ թվում և Հայ առաքելական եկեղեցուն: Նորահաստատ վարչակարգը, պաշտոնապես հռչակելով անաստվածությունը որպես գաղափարախոսություն, սկսեց հալածել Հայ առաքելական եկեղեցուն¹⁶: Հայ առաքելական եկեղեցու կողմից հազարամյակների ընթացքում ստեղծված արժեքները մի հարվածով ոչնչացվեցին 1920թ. նոյեմբերից հետո: 1920թ. դպրոցը վերջնականապես բաժանվեց եկեղեցուց, քիչ ավելի ուշ առգրավվեց եկեղեցական ողջ ունեցվածքը՝ ծիսական սպասքը, թանգարանային նմուշները, ձեռագրական հարստությունը, հողակտորները, քանդվեցին կամ պահեստների ու ախոռների վերածվեցին հարյուրավոր եկեղեցիներ: Վիճակը սրվեց և հասավ ընդհուպ մինչև նրան, որ Հայ առաքելական եկեղեցին պետք է հրաժարվեր Եղեռնի զոհերի հիշատակը ապրիլի 24-ին նշելուց¹⁷:

1920թ. դեկտեմբերի 17-ին Հայիեղկոմն ընդունեց «Դեկրետ հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկություններն անցան Լուսժողկոմատի տնօրինության տակ¹⁸: Նույն թվականի դեկտեմբերի 31-ին Լուսժողկոմատի հրամանով արգելվեցին կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը դպրոցներում¹⁹: Պետականացվեց Էջմիածնի մատենադարանը, իսկ 1920թ. դեկտեմբերի 19-ին բռնագրավվեցին Էջմիածնի վանքի շինություններն ու ունեցվածքի մի մասըⁱⁱ: Հատկանշական է նաև 1921թ. նոյեմբերի 17-ի դեկրետը, ըստ որի հոգևորականները զրկվում են ընտրելու և ընտրվելու իրավունքիցⁱⁱⁱ: Հայաստանի Հան-

ⁱⁱ Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, 1983, թիվ 2, էջ 46, տե՛ս նաև «Կոմունիստ», 18 դեկտեմբերի 1920:

ⁱⁱⁱ Տե՛ս Ա. Բեհբուդյան, Վավերագրեր Հայ եկեղեցու Պատմության (1921-1938թթ), Երևան, 1994, էջ 4, տե՛ս նաև Ա. Մկրտչյան, Հայ առաքելական եկեղեցու և պետության հարաբերություններն ու արտասահմանյան երկրների փորձը, Ժամանակակից մարտահրավերներ, միջբուհական երիտասարդական գիտաժողովի նյութեր, Երևան 2010, տե՛ս նաև Ա. Տերչանյան «Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» Երևան, 2001, էջ 18, տե՛ս նաև Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը

րապետությունում 1921թ. խորհրդային կարգերի հաստատումից հետո մինչև 1930-ական թվականները Հայաստանում, Արցախում, ինչպես նաև Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում փակվել էին գրեթե բոլոր հայկական եկեղեցիները: Դրանցից շատերը քանդվել էին, շատերը վերածվել ակումբների և պահեստների, իսկ պատմական վանքերը՝ անխնամ վիճակում պահպանվում էին որպես պատմական հուշարձան-կոթողներ, իսկ կրոնական ցանկացած գործունեություն արգելված էր օրենքով²²: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո միայն արտոնվեց բացել մի քանի եկեղեցիներ և վերանորոգել որոշ պատմական վանքեր: Խորհրդային տարիներին Հայ առաքելական եկեղեցին ու հոգևորականությունը հալածված էին պետական վարչական միջոցներով, իսկ համաշխարհային պատերազմից հետո՝ լուր հանդուրժված, սահմանափակ իրավունքներով: 1922թ. հունվարի 2-ին հրատարակվեց դեկրետ «եկեղեցիների և թանգարանային ունեցվածքի բռնագրավման» վերաբերյալ և այն կիրառվեց նույն թվականի մարտից²³: Այս դեկրետի համաձայն Հայ առաքելական եկեղեցուց բռնագրավվեց ողջ թանգարանային և հոգևոր արժեք ունեցող գրեթե ողջ գույքը: Իսկ 1922թ. սեպտեմբերի 16-ին թիվ 131 դեկրետով Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կենտգործկոմի կողմից սահմանվում է «Խղճի ազատության մասին» դեկրետը: Այդ դեկրետը իր մեջ ներառում է դրական և բացասական կողմեր: Դրական կողմը առանձնանում է այն առումով, որ սահմանված է մարդու մտքի, խղճի, դավանանքի ազատության, ինչպես նաև կրոնական ծիսակատարությունների ազատ անցկացման իրավունքը: Իսկ բացասական կողմը առանձնանում է նրանով, որ Հայ առաքելական եկեղեցին նույնացվում է մյուս եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների հետ, ինչպես նաև խիստ սահմանափակված են, ինչպես Հայ առաքելական եկեղեցու, այնպես էլ հոգևորականների իրավունքները հասարակության տարբեր բնագավառներում: 1991թ.-ին, երբ Հայաստանի Հանրապետությունն անկախացավ, պետական կարգը դեռ շատ ամուր չէր, և դա էր պատճառը, որ մինչև 1995թ. Հայաստանի Հանրապետությու-

Հայաստանում 1920-1940, Խորհրդային իշխանություն-եկեղեցի հարաբերությունները, Երևան 2002, էջ 68:

նը դեռ Սահմանադրություն չուներ, իսկ քաղաքական անկայունության պայմաններում Հայ առաքելական եկեղեցին փորձում էր սատարել նոր անկախացած պետությանը: Միանգամայն պարզ է, որ յուրաքանչյուր պետության կայունության հիմքը և երաշխիքը Սահմանադրությունն է: Մինչդեռ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը առանց Սահմանադրության գոյատևեց մինչև 1995թ. հուլիսի 5-ի հանրաքվեն: Նոր Սահմանադրության մեջ, սակայն, Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ որևէ հոդված չկար, եթե հաշվի չառնենք 23-րդ հոդվածը²⁴, ուր ասվում է. «Յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով»: Այս հոդվածն անուղակի վերաբերում էր նաև Հայ առաքելական եկեղեցուն: Նշենք, որ այն ոչնչով չէր տարբերվում Խորհրդային Միության Սահմանադրության համանուն հոդվածից:

Կարծում ենք, որ Սահմանադրության մեջ Հայ առաքելական եկեղեցու իրավունքները և պարտականությունները սահմանող հոդվածի բացակայությունը պայմանավորված էր նրանով, որ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո նոր ձևավորվող պետության համար բոլոր բնագավառների հետ դժվար էր վերականգնել իր իրավահարաբերությունները, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցու: Իսկ ահա 2005թ. նոյեմբերի 27-ին փոփոխության և լրացման ենթարկված Սահմանադրության մեջ Հայ առաքելական եկեղեցու դերն ըստ արժանվույն գնահատվեց: Այս Սահմանադրության մեջ ևս առկա է նախորդ Սահմանադրության 23-րդ հոդվածը, որից բացի ավելացվել են նաև 8.1. և 26-րդ հոդվածները, որոնք Հայ առաքելական եկեղեցուն վերաբերում են ուղակիորեն:

1997թ. հուլիսի 14-ի ՀՀ կառավարության N 274 որոշման համաձայն Հայաստանյայց առաքելական եկեղեցուն եկեղեցիներ և վանքեր հանձնելու մասին որոշում կայացվեց^{iv}: Նշյալ որոշման համաձայն պետական սեփականություն հանդիսացող պատմության և

^{iv} Տե՛ս ՀՀ կառավարության N 274 որոշումը Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն եկեղեցիներ և վանքեր հանձնելու մասին, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 11.08.97, ընդունման ամսաթիվը՝ 14.07.1997:

մշակույթի հանրապետական նշանակության հուշարձանները՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Նորատուս գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Վարդենիկ գյուղի Իշխանավանք, Արծվանիստ գյուղի Վանեվանք և մի շարք այլ եկեղեցիներ անհատույց հանձնվեցին Հայ առաքելական եկեղեցուն սեփականության իրավունքով: Իսկ 2000թ. մարտի 17-ին ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրվեց «Մտադրությունների հուշագիր», որն առաջիկայում հիմք պիտի հանդիսանար եկեղեցիպետություն փոխհարաբերությունները կարգավորելու համար: Սա պատմական մի փաստաթուղթ է, որն առաջին անգամ ստորագրվում էր եկեղեցու և պետության միջև: ՀՀ կառավարության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև ստորագրված «Մտադրությունների հուշագրից» մեջբերենք մի հատված, ըստ որի ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում Հայ առաքելական եկեղեցու դերը հայ ազգի ինքնության պահպանման և ՀՀ կայացման ու զարգացման գործում. «Առանձնակի կարևորելով պետականության հետագա զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու անուրանալի դերակատարումն ու նշանակությունը, ինչպես նաև առաջնորդվելով մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով՝ նպատակ ունենք առավել պարզորոշել ՀՀ և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու փոխհարաբերությունների բնույթը և բովանդակությունը»²⁶: Կողմերն անհրաժեշտ համարեցին ՀՀ և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև կնքվելիք համաձայնագրի շրջանակներում աշխատանքներ ծավալել հետևյալ ուղղություններով՝

1. ՀՀ և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործում և զարգացում,

2. Հայ առաքելական եկեղեցու՝ իբրև իրավաբանական անձի սեփականության (հող, անշարժ գույք, շարժական գույք, պատմամշակութային հուշարձաններ և այլն) հետ կապված հիմնահարցերի հստակեցում,

3. Հայ առաքելական եկեղեցու և նրա ավանդական կազմակերպությունների համար որոշակի հարկային արտոնությունների սահմանում,

4. ՀՀ ՁՈՒ-ում, զինծառայողների հոգևոր կյանքում և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, ինչպես նաև քննչական մեկուսարաններում, ազատազրկման վայրերում, կալանավորների և դատապարտյալների շրջանում Հայ առաքելական եկեղեցու գործունեության հետագա ընդարձակում և այլն:

1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը փոփոխվել և լրացվել է 1997թ. սեպտեմբերի 19-ին և 2001թ. ապրիլի 25-ին, ամփոփում է 20-րդ դարավերջի Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը: Այնուհետև՝ նոր դարասկզբին՝ 2007թ. փետրվարի 22-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Հայ առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որին կանդրադառնանք հաջորդ ենթագլխում²⁷: Այսպիսով՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից երկրորդն է (Վրաստանից հետո), որ օրենսդրական ճանապարհով ազգային եկեղեցին տարանջատում է երկրում գտնվող մյուս կրոնական կազմակերպություններից՝ ընդգծելով ազգային եկեղեցու դերը և բացառիկ նշանակությունը ժողովրդի կյանքում: Այս օրենքը կարծես ևս մեկ անգամ օրինական դաշտ է մտցնում եկեղեցու և պետության միջև արդեն առկա օրենսդրական փոխհարաբերությունները կրթական, զինված ուժերի և այլ ոլորտներում՝ ավելի լայն ընդարձակելով դրանց շրջանակը և էլ ավելի խորացնելով եկեղեցի-պետություն իրավական փոխհարաբերությունները: 1991 թվականից ի վեր եկեղեցի-պետություն իրավահարաբերությունները դրական ընթացք ստացան: 1991թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը պետության կողմից եկեղեցու հանդեպ վերաբերմունքի արտահայտություններից կարելի է համարել: Սակայն այդ օրենքն, իր բոլոր առավելություններով հանդերձ, ուներ մեկ հիմնական բաց՝ Հայ Առաքելական եկեղեցին համահավասարեցվում էր կրոնական մյուս կազմակերպություններին²⁸: «Կրոնական կազմակերպություն» հասկացության ներքո ընկավում են բոլոր այն կազմակերպությունները, որոնք իրականաց-

նում են կրոնական գործունեություն՝ միևնույն ժամանակ չընդունելով քրիստոնեական վարդապետությունը: Սակայն որքանով է նպատակահարմար եղել, որ Հայ առաքելական եկեղեցին համահավասարեցվել է կրոնական կազմակերպություններին և նրանց հետ գտնվել միևնույն հարթության վրա, այսօր էլ պարզաբանման կարիք ունի: Կարծում ենք՝ անհրաժեշտ է, որպեսզի Հայ առաքելական եկեղեցին, որպես ազգային կրոնը կրող և փոխանցող եկեղեցի, ունենա հատուկ իրավունքներ և կարգավիճակ, քանի որ տարբեր պետությունների կրոնական օրենսդրության պրակտիկայում ազգային եկեղեցիները հստակորեն տարանջատվում են և ունեն հատուկ կարգավիճակ՝ տվյալ երկրում գործող մյուս եկեղեցիներից, առավել ևս՝ կրոնական այնպիսի կազմակերպություններից, որոնք առնչություն չեն ունեցել իրենց ժողովրդի ինքնության, պատմության կերտման գործընթացների: Այս առումով հարկ է նշել, որ հայ ժողովրդի ազգային մշակույթի, ինքնության պահպանման գործում կարևոր դերակատարություն է ունեցել Հայ առաքելական եկեղեցին, և որ հայ ժողովրդի կյանքի, ապագայի մեջ այն շարունակելու է ունենալ միևնույն դերակատարությունը: Այս ամենը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է վերագրյալ իրավասություններով օժտել Հայ առաքելական եկեղեցուն՝ նրա ազգապահպան գործունեությունը արժանվույնս գնահատելով:

Քանայի բառեր՝ Հայ առաքելական եկեղեցի, կրոնական իրավունք, պետական-եկեղեցիական իրավական կարգավիճակ, կրոնական կյանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Կերտող, Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Ս. Էջմիածին, 2003:
2. Ս.Հարությունյան, Հայոց եկեղեցի և պետություն, Միջազգային գիտաժողովի նյութեր, Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, 2-5. 03. 2000, Երևան, 2000:

3. Պ. Սերոբյան, Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը, Քրիստոնեություն և իրավունք, Միջազգային խորհրդաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2001:
4. Հայ ժողովրդի պատմություն, խմբագրությամբ՝ Ս. Մելիք-Բախշյանի, Երևան, 1975:
5. Ի. Մանուկյան, «Հողի մասին» լենինյան դեկրետի արձագանքները Անդրկովկասում 1917թ. վերջին և 1918թ. սկզբին, Լրաբեր հասարակական գիտությունների, N^o 5:
6. Ս. Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:
7. Ս.Ստեփանյան, Հայոց եկեղեցի և պետություն, Միջազգային գիտաժողովի նյութեր, Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, 2-5. 03. 2000, Երևան, 2000:
8. Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940, Խորհրդային իշխանություն-եկեղեցի հարաբերությունները, Երևան, 2002:
9. Ս. Բեհրույան, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921-1938թթ.), Երևան, 1994:
10. Ս.Ստեփանյան, Հայոց եկեղեցի և պետություն, Միջազգային գիտաժողովի նյութեր, Էջմիածին-Օշական-Ծաղկաձոր, 2-5. 03. 2000, Երևան, 2000:
11. Գ. Մկրտչյան, Հայոց եկեղեցին Առաջին Հանրապետության տարիներին, Հայ աստվածաբան, Գիտական հոդվածների ժողովածու, Ե, Երևան, 2013:
12. Թ. սրկ. Համբարձումյան, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և ՀՀ իրավական փոխհարաբերությունները, ավարտաճառ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008:
13. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920), Երևան 1999:
14. ՀՀ ՊԿՊԱ, §. 409, ց. 1, գ. 851, թ. 2:
15. «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Ե, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920), կազմեց Ս. Բեհրույան, ԱԿՏ, 2 դեկտեմբերի, 1920, Երևան, 1999:

16. Հ. Ալեքսանյան, Հոգևոր-եկեղեցական կյանքի անկումը խորհրդային համայնքներում 1920-ական թթ., Հայոց պատմության հարցեր, Երևան, 2007:
17. П. Гидулянов, Отделение церкви от государства, 2 изд., Москва, 1924.
18. Ս. Բեհրուդյան, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, 1921-1938, Երևան 1994:
19. Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953, Երևան, 1999:
20. ՀՄԽՀ ղեկերեսների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921:
21. «Կոմունիստ», 4 հունվարի 1921 և 6 հունվարի 1921:
22. Բանբեր Հայաստանի արխիվների, 1983, թիվ 2, էջ 46:
23. «Կոմունիստ», 18 դեկտեմբերի 1920:
24. Ս. Մկրտչյան, Հայ առաքելական եկեղեցու և պետության հարաբերություններն ու արտասահմանյան երկրների փորձը, Ժամանակակից մարտահրավերներ, Միջբուհական երիտասարդական գիտաժողովի նյութեր, Երևան, 2010:
25. Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940, Խորհրդային իշխանություն-եկեղեցի հարաբերությունները, Երևան, 2002:
26. Հայ առաքելական եկեղեցի, Քրիստոնեության ծագումը, Հայ առաքելական եկեղեցին Հայաստանի անկախությունից հետո 1991-2004,
<http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=5624&pid=61>:
27. Ա. Տերչանյան, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945), Երևան, 2001:
28. ՀՀ կառավարության N 274 որոշումը Հայաստանյայց առաքելական եկեղեցուն եկեղեցիներ և վանքեր հանձնելու մասին, սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 11.08.97, ընդունման ամսաթիվը՝ 14.07.1997:
29. Մտադրությունների հուշագիր Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու միջև, 17.03.2000:

30. «ՀՀ և Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՕ-80-Ն, 22.02.2007:
31. Լ. Ավագյան, Եկեղեցի-պետություն իրավական փոխհարաբերությունների շուրջ, Նորավանք հիմնադրամ, Հոդվածներ և վերլուծություններ, 13.09.2007, <http://www.noravank.am>:

Резюме

Армянская Апостольская Церковь, помимо духовно-религиозной миссии, всегда осуществляла функции образования, науки и культуры, а также в период отсутствия государственности, «функцию государства».

20 век был самым трудным периодом для Армянской Апостольской Церкви, который был полон лишений, ограничений и нарушений прав. В начале 20-го века Армянская Апостольская Церковь находилась под гнетом царской России, и только после, в 1918-1920 гг., с образованием Республики Армения, Армянская Апостольская Церковь пережила период расцвета. За этим последовали 70 трудных и горьких лет лишения права и атеизма. И наконец в конце 20 –ого века, в годы третьей Республики Армения, Армянская Апостольская Церковь получила достойную оценку своей деятельности.

Ключевые слова: Армянская апостольская церковь, Религиозное право, Государственно-церковных правовой статус, религиозная жизнь.

Resume

Armenian Apostolic Church, except spiritual-religious mission, has always implemented educational, scientific and cultural preserving functions and during the absence of statehood it made State functions for Armenians.

The 20th century has been the worst time for Armenian Apostolic Church. It was a time of many privations, violation and restriction of rights, because at the beginning of 20th century Armenian Apostolic Church was under the yoke of tsarist Russia. During 1918-1920, the existence of The First Republic of Armenia, Armenian Apostolic Church had its' most prosperous period in the 20th century. It was followed by the seventy years of The Soviet Union's severe and severe, pariah and atheistic times. At the end of 20th century, after the independence of The Third Republic of Armenia, Armenian Apostolic Church was properly evaluated.

Key words: The Armenian Apostolic Church, religious right, church-state, legal status, religious life.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Մկրտչյան

Իրավաբանական սխալը («error juris») անձի մոլորությունն է իր կողմից կատարվող արարքի իրավաբանական էության կամ իրավական հետևանքների վերաբերյալ: Գրականության մեջ սխալի այս տեսակն անվանում են նաև «սխալը իրավունքում»¹:

Չ.Գ.Ալիևի բնորոշմամբ իրավաբանական սխալը անձի՝ իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ այնպիսի հոգեբանական վերաբերմունքն է, որը ըստ գիտակցական և (կամ) կամային չափանիշի բովանդակում է մոլորություն քրեական օրենքի՝ արարքի հանցավորությանը, որակմանը և պատժելիությանը վերաբերող դրույթների մասին²:

Այլ կերպ ասած՝ իրավաբանական սխալի էությունը կայանում է նրանում, որ անձը ոչ ճիշտ է մեկնաբանում կամ ոչ ճիշտ է գնահատում քրեական օրենքի դրույթները արարքի հանցավորության, որակման և պատժելիության մասին:

Ըստ այդմ կարելի է առանձնացնել իրավաբանական սխալի երեք տեսակ՝

1. սխալը արարքի քրեական հակաօրինականության հարցում,
2. սխալը արարքի որակման հարցում,
3. սխալը արարքի պատժելիության հարցում:

Արարքի քրեական հակաօրինականության հարցում առանձնացվում է սխալի երկու տեսակ՝

- անձը կարծում է, թե իր արարքը հանցագործություն է, սակայն իրականում այն հանցագործություն չէ,

¹ Ст'у Уголовное право России. Общая часть / Под ред. В. Н. Кудрявцева, В. В. Лунеева, А. В. Наумова. М., 2006, էջ 203:

² Ст'у Алиев З.Г. Ошибка как особое обстоятельство оценки поведения субъекта преступления и ее уголовно-правовое значение: автореф. дис. ... канд. юрид. наук: 27.04.2007 / З.Г. Алиев. – Москва, 2007, էջ 14:

- անձը կարծում է, թե իր արարքը հանցագործություն չէ, սակայն իրականում այն հանցագործություն է³:

Առաջին դեպքում անձի քրեական պատասխանատվության հարցի առնչությամբ քրեական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում խնդիրներ չեն առաջանում: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել»: Օրինականության սկզբունքից ելնելով՝ արարքի հանցավորությունը որոշվում է միայն քրեական օրենքով, և նման դեպքում անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է. բացակայում է հանցագործության պարտադիր հատկանիշներից մեկը՝ քրեական հակասօրինականությունը⁴: Այդ հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, որն իր 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշման մեջ նշել է՝ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացառիկ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից շեղումը բացարձակապես անթույլատրելի է: Սա նշանակում է, որ անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել, ինչպես նաև՝ հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն օրենքով, որը գործել է նրա կողմից արարքը կատարվելու ժամանակ: *Nullum crimen, nulla poena sine lege* սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին⁵:

³ Տե՛ս Кириченко, В.Ф. Значение ошибки по советскому уголовному праву. / В.Ф. Кириченко. – Москва, 1952, էջ 78:

⁴ Տե՛ս Баулин, Ю.В. Обстоятельства, исключющие преступность деяния. / Ю.В. Баулин. – Харьков, 1991, էջ 48:

⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը ԼԴ/0286/01/09 գործի վերաբերյալ, 16-րդ կետ:

Ինչ վերաբերում է երկրորդ դեպքին, ապա այստեղ իրադրությունն այլ է: Գրականության մեջ գերակշռող կարծիքի համաձայն՝ օրենքի չիմացությունը չպետք է անձին ազատի քրեական պատասխանատվությունից⁶:

Պետք է նշել, որ սխալի այդ տեսակին վերաբերող դրույթները մշակվել են դեռևս հռոմեական մասնավոր իրավունքում: Այդ դրույթները հետևյալն էին՝

- մոլորության վիճակում գտնվող անձի մոտ բացակայում է կամքը, հետևաբար նրա համաձայնությունը իրական չէ («Errarentis nulla voluntas est»),
- սխալը ոչինչ չի փոխում գործի իրական փաստական հանգամանքներում («Errore veritas non amittitur»),
- իրավունքի չիմացությունը վնասում է բոլորին, փաստի չիմացությունը չի վնասում («Regula est juris quidem ignorantia cuiqui nocere, facti vero ignorantium non»):

Հին Հռոմում օրենքները սահմանվել են ողջ քաղաքացիական հանրության կողմից (communis sponsio) բոլոր քաղաքացիների համար (commune praeceptum)՝ հանդիսանալով փոխադարձ համաձայնության (sponsio) արդյունք: Իսկ այդ հանգամանքը բացառում էր անձի անիրազեկվածությունը որպես պատասխանատվությունից ազատվելու հիմք դիտարկելու հնարավորությունը:

Հարկ է նկատել նաև, որ հռոմեական մասնավոր իրավունքի հիմնական աղբյուրը՝ «Տասներկու աղյուսակների օրենքը», տեղադրված է եղել հրապարակում և հասանելի է եղել բոլորին: Եվ հենց այդ պատճառով էլ առաջացել է «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» («ignorantia juris semper hocet») իրավական արքիոմը: Ըստ մասնագետների՝ այդ արքիոմն առաջացել է մ.թ.ա. առաջին դարում: Եվ մինչ օրս աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում գործնականում կի-

⁶ Ст'у Уголовное право Российской Федерации. Общая часть: Учебник/ Под ред. Иногамовой-Хегай Л.В., Рагога А.И. – М.: Контракт, Инфа – М, 2007, էջ 152:

րառվում է այն դրույթը, որ օրենքի չիմացությունը ոչ մի պարագայում չի կարող ունենալ արդարացնող նշանակություն⁷:

Բայց պետք է նկատի ունենալ, որ օրենքների իմացության կանխավարկածը չի հանդիսանում անվերապահորեն ընդունելի աքսիոմ առանց բացառության բոլոր դեպքերի համար: Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը պահանջում է մեղքի հաստատում ոչ միայն հանցակազմի հատկանիշների, այլև օրենքի իմացության բուն փաստի վերաբերությամբ: Այդ մոտեցումն իր իրավական ամրագրումն էր գտել դեռ 18-րդ դարի վերջում աշխարհի որոշ երկրներում, երբ տեսության մեջ սկսվեց սուբյեկտիվ կողմի ուսմունքի մշակման գործընթացը:

Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ քրեաիրավական արգելքը խախտած անձը ոչ միայն չի իմացել այդ արգելքի մասին, այլև իր արարքի կատարման հանգամանքներում չէր կարող իմանալ այդ մասին: Նման դեպքերում անձի քրեական պատասխանատվությունը պետք է բացառվի:

Սխալ է կարծել, թե անձը հանրորեն վտանգավոր արարք կատարելիս միշտ գիտակցում է դրա հանրային վտանգավորությունը: Հնարավոր է իրադրություն, երբ, օրինակ, անձը ժամանել է մի երկիր, որտեղ գործում է այլ քաղաքական ռեժիմ, այլ կրոնական ավանդույթներ, սոցիալ-տնտեսական կառուցվածք: Նման դեպքերում անձը կարող է մոլորվել այն արարքների համար սահմանված քրեաիրավական արգելքների առկայության հարցում, որոնց հանրային վտանգավորությունը ակնհայտ չէ, հետևաբար՝ բացակայում է անձի մեղքը: Այլ կերպ ասած՝ այն, ինչը մի երկրում հանցանք է, կարող է մյուս երկրում համարվել իրավաչափ: Օրինակ, ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանված ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելու, մեղմացնելու, դրանց հավանություն տալու կամ արդարացնելու համար Քր.օր.-ի 397.1-րդ հոդված), իսկ Թուրքիայի քրեական օրենսգրքի տխրահռ-

⁷ St' u Римское частное право. Под ред. Новицкого И.Б., Перетерского И.С. М., Юриспруденция, 2005, էջ 271:

չակ 301-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանված տրամազծորեն հակառակ արարքի համար:

«Օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» դրույթն իր էությունը հանդիսանում է ֆիկցիա (անհրաժեշտությամբ պատճառաբանված իրավաբանական սուտ), այն բխում է հետևյալից. բոլորը չգիտեն և չեն կարող իմանալ բոլոր օրենքները, հաշվի առնելով դրանց քանակը, բարդությունը և փոփոխությունների հաճախականությունը: Օրենքները կիրառելու համար անհրաժեշտ է ելնել այն կանխադրույթից, որ օրենքները, այդ թվում նաև քրեական օրենքը, հայտնի են նրանց, ովքեր ունեն դրանց ծանոթանալու հնարավորություն, այդ իսկ պատճառով հրապարակված օրենքի չիմացությունը բոլորի կողմից ընդունվում է որպես կանխավարկած:

Գործնականում կարող է առաջանալ այն հանգամանքի ապացուցման անհրաժեշտությունը, որ անձը ունեցել է օրենքին ծանոթանալու հնարավորություն: Հետևաբար պետք է ելնել նրանից, որ եթե չի ապացուցվում, որ անձը հնարավորություն ուներ իմանալ քրեաիրավական արգելքի մասին, ապա նրա քրեական պատասխանատվությունը բացառվում է:

Խնդրո առարկայի հետ կապված՝ անչափ կարևոր նշանակություն ունի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթը՝ «Սույն օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն)»:

Ասվածը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել իրավաբանական սխալի այդ տեսակի գործողության պայմանները: Մասնավորապես, իրավաբանական սխալի այդ տեսակը բնութագրվում է հետևյալ պայմաններով՝

1. անձը սխալ է գնահատում իր արարքի իրավաբանական նշանակություն ունեցող հանգամանքները, քանի որ գտնվում է մոլորության մեջ դրա հանրային վտանգավորության և քրեական հակաօրինականության վերաբերյալ,

2. սխալ գնահատականը վերաբերում է նրան, որ անձն իր արարքը չի համարում հանրորեն վտանգավոր և քրեորեն պատժելի,

3. քրեական օրենքն այդ արարքը դասում է հանցագործությունների շարքին,

4. անձը չէր կարող իմանալ քրեափրավական արգելքի մասին, ինչի հիմքում ընկած են եղել հետևյալ հանգամանքները՝

- անձն ունի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական, սոցիալական և այլ հատկանիշներ (օրինակ, հետ է մնացել հոգեկան զարգացման մեջ, բնակվում է պետության զարգացած սոցիալ-տնտեսական գոտիներից հեռու, օտարերկրյա քաղաքացին նոր է տեղափոխվել տվյալ երկիր և այլն),
- ուժի մեջ մտած օրենքը չի հրապարակվել,
- կատարվել է օրենքի սխալ պաշտոնական մեկնաբանություն,
- կատարվել է իրավունքի այլ ճյուղերի նորմերի փոփոխություն (սահմանվել են նոր կանոններ, նորմեր, հրահանգներ), որոնց խախտումը հանդիսանում է բլանկետային դիսպոզիցիայով հանցագործության հատկանիշ, ընդ որում սուբյեկտը հնարավորություն չուներ ծանոթանալու բլանկետային դիսպոզիցիաներով վկայակոչվող նոր կանոնների հետ, որոնք փոխել են քրեափրավական արգելքի ծավալն ու բովանդակությունը:

Եթե հաստատվում է այն փաստը, որ հանրորեն վտանգավոր և քրեական օրենսգրքով նախատեսված արարքը կատարած անձը իրականում չէր կարող իմանալ քրեափրավական արգելքի գոյության մասին, ապա քրեական պատասխանատվությունը բացառվում է:

Արարքի քրեական հակաօրինականության հարցում սխալի քրեափրավական նշանակության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված հետևյալ դրույթը՝ «Եթե դիմողն առաջնորդվել է օրենքի պահանջների պահպանմամբ տրված պարզաբանումով, ապա այդ պարզաբանման և իրավասու մարմնի հետագայում տված պարզաբանման կամ եզրակացության միջև հակասություն առաջանալու դեպքում դիմող անձն ազատվում է ոչ ճիշտ պար-

զաբանման հետևանքով թույլ տրված սխալների համար նախատեսված պատասխանատվությունից»:

Ոչ ճիշտ պաշտոնական պարզաբանման վտանգն ու դրա հետևանքով իրավաբանական սխալը առկա է հատկապես այն հանցագործությունների պարագայում, որոնք նախատեսված են բլանկետային նորմերով:

Այսպիսով, «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» դրույթը չպետք է կրի բացարձակ բնույթ, քանի որ դա կհանգեցնի օբյեկտիվ մեղսայնացման: Հետևաբար, հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի կողմից իր խախտած քրեաիրավական արգելքի մասին իմանալը պետք է նախատեսվի որպես կանխավարկած, որը որոշակի դեպքերում կարող է հերքվել:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք Քր.օր.-ում ամրագրել արարքի քրեական հակաօրինականության հարցում սխալի դեպքում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պայմանները՝ Քր.օր.-ը լրացնելով հետևյալ բովանդակությամբ հոդվածով՝

«Հոդված 31.1. Իրավաբանական սխալ

1. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա բարեխղճորեն չի գիտակցել իր արարքի քրեական հակաօրինականությունը:

2. Համարվում է, որ անձը բարեխղճորեն չի գիտակցել իր արարքի քրեական հակաօրինականությունը, եթե քրեական օրենքը կամ դրանով վկայակոչվող նորմատիվ-իրավական ակտը չի հրապարակվել կամ պատշաճ կերպով չի հրապարակվել կամ անձը գործել է քրեական օրենքի կամ դրանով վկայակոչվող նորմատիվ-իրավական ակտի՝ օրենքի պահանջների պահպանմամբ տրված սխալ պաշտոնական պարզաբանումով:

3. Եթե անձը չի գիտակցել իր արարքի քրեական հակաօրինականությունը, բայց տվյալ իրադրությունում կարող էր գիտակցել այն, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ կատարված հանցագործության համար, եթե տվյալ արարքն անզգուշությամբ կատարելը քրեական օրենքով համարվում է հանցագործություն»:

Բանալի բաներ՝ իրավաբանական սխալ, իրավաբանական սխալի էություն, քրեական օրենքի դրույթ քրեական պատասխանատվություն ֆիկցիա, կանխավարկած, օրյեկտիվ մեղսայնացում, քրեաիրավական արգելք

Резюме

Юридическая ошибка - результат неправильного человеческого поступка который имеет юридическое значение.

По-другому, сущность юридической ошибки является в том, что человек неправильно комментирует или оценивает предоставления уголовного кодекса о преступлении, квалифицировании и наказании.

По литературному описанию незнание закона не должно освободить человека от уголовной ответственности.

Важно знать, что частичное знание закона ни в каком случае не является приемлемой аксиомой Судя по ответственности вины, закон всегда требует ее утверждение не только об атрибуте банды но и о факте знании закона.

Установка "Незнание закона не освобождает от ответственности" является фикцией (ложь по намерению) и она исходит от того, что не каждый может знать законы из за количкство трудность и частота измененийю Применение закона исходит от пунктаб что юридические законы известны только темб у кого был шанс с ними сталкиваться и поэтому каждый новый опубликованный закон почти всегда принимается как предположение.

Таким образом установка «Незнание закона не освобождает от ответственности» не должен иметь абсолютный характер, так как он может привести к объективной преступлению. Поэтому каждый человек который совершал опасное преступление должен принимать свое наказание по уголовному кодексу.

Ключевые слова. юридическая ошибка, сущность юридической ошибки, предоставления уголовного кодекса, уголовной ответственность, фикция, предположение, объективная преступления, уголовный кодекс.

Resume

The legal mistake is a product of a person's behavior connected to some legal essence or its result.

In other words, the essence of legal mistake lies in the fact that a person does not comment or does not estimate the clauses of the criminal law in a proper way connected to the crime, its qualification and its punishment.

According to the literary point of view, the unawareness of a law should never release someone from the liability of the criminal law.

But it should be taken into consideration that the partial awareness of a law is never accepted as an absolute axiom in any case. According to the liability of a crime the law demands the acceptance of the the guilt not only about the gang but also about the fact of the awareness of the law.

The point of the fact that "The unawareness of a law should never release someone from the liability of the criminal law" is considered to be a fiction(a concrete lie invented for some special purpose) which comes from the fact that the majority of the people is unaware of the laws which is the result of quality, difficulty and the frequent changes of the laws. While using the laws, it should be taken into consideration that all the laws, including the criminal ones are known only by the people who already had the opportunity to get acquainted with them, that's why the published law is considered to be as a presumption.

So the point of the fact that "The unawareness of a law should never release someone from the liability of the criminal law" should not have an absolute nature as it can bring to the objective transgression.

Therefore the person who made a publicly dangerous action should get acquainted with the criminal ban and it should be considered as a presumption, which can be denied in some cases.

Key words: the legal mistake, the essence of legal mistake, the clauses of the criminal law, the liability of the criminal law, fiction, presumption, objective transgression, criminal ban.

ՀԱՅՏԻ ԴԵՄ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՆՅՈՒԹԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

4. Սարգսյան

Հայցի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկություններն ուղղակիորեն կապված են վեճն ըստ էության լուծելու հետ, ուստի հանդես են գալիս որպես հայցի դեմ պատասխանողի պաշտպանության առավել տարածված միջոցներ¹:

Դեռևս նախահեղափոխական դատավարագետ Տ.Մ. Յարլոջկովը, խոսելով հարուցված հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցների մասին, ընդգծում էր, որ պատասխանողն իր շահերի պաշտպանության նպատակով կարող է կիրառել «երկակի զենք»՝ դատավարական և նյութաիրավական առարկություններ: Ընդ որում, առաջինի կիրառմամբ նա մատնանշում է «դատավարական հարաբերության իրավաչափ ծագման ու զարգացման պայմանների խախտումը», մինչդեռ նյութաիրավական առարկությունների նպատակը հայցվորի պահանջներն ըստ էության վիճարկելն է²:

Հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցների տվյալ դասակարգման կողմնակիցներ էին նաև Ե.Վ. Վասկովսկին, Կ.Ի. Մալիշևը, Ա.Ա. Դոբրովոլսկին, Մ.Ա. Գուրվիչը, Լ.Ի. Անիսիմովան³, որոնց տեսակետները հայցի էության, դրա նյութաիրավական ու դատավարական կողմերի մասին էապես կանխորոշել են հայցի դեմ պաշտպանության միջոց հանդիսացող «հավասարազոր զենքի»՝

¹ St'u Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 37:

² St'u Яблочков Т.М. Учебник русского гражданского судопроизводства. Ярославль. 1912, էջ 210:

³ St'u Васьяковский Е.В. Учебник гражданского процесса. М., 1917, էջ 231, Малышев К.И. Учебник русского гражданского судопроизводства. Т.1 СПб., 1876, էջ 265, Добровольский А.А., Иванова С.А. Основные проблемы исковой формы защиты прав. М., 1979, էջ 114, Советский гражданский процесс. Под ред. М.А. Гурвича. М., 1975, էջ 117-119:

պատասխանողի առարկությունների տեսակների ու դրանց առանձնահատկությունների վերաբերյալ մոտեցումները:

Խորհրդային և ժամանակակից դատավարագիտության մեջ հայցն առավելապես բնորոշվում է որպես վիճելի նյութական իրավահարաբերություններից բխող և որոշակի իրավաբանական փաստերի վրա հիմնված նյութաիրավական պահանջ, որ մեկ անձ (սուբյեկտիվ նյութական իրավունքի ենթադրյալ կրողը) ներկայացնում է մեկ այլ անձի (սուբյեկտիվ պարտականության ենթադրյալ կրողին), և միաժամանակ վեճը դատավարության օրենքով սահմանված որոշակի կարգով քննելու և լուծելու պահանջ, որ ներկայացվում է դատարանին⁴:

Հատկանշական է, որ և՛ նյութական, և՛ դատավարության իրավունքի գիտությունների ու օրենսդրությունների մեջ հավասարապես օգտագործվող «հայց» հասկացության տվյալ բնորոշման մեջ ընդգծվում է դրա հավաքական բնույթը, երկու կողմերի՝ նյութաիրավական և դատավարական իմաստների անխզելի կապն ու երկմիասնությունը: Հայցը, որպես դատարան դիմող սուբյեկտի իրավունքների պաշտպանության միջոց, ներկայումս առավել տարածված տեսակետի համաձայն, բարդ իրավական հասկացություն է, որն իր մեջ ներառում է գործնականորեն իրարից անբաժանելի երկու հասկացություններ, երկու կողմեր՝ նյութաիրավական կողմ, որ արտահայտվում է հայցվորի կողմից պատասխանողին ներկայացվող իրավական պահանջի մեջ, և դատավարական կողմ, որ արտահայտվում է ծագած վեճն ըստ էության լուծելու և խախտված կամ վիճարկվող իրավունքը կամ օրինական շահը պաշտպանելու համար դատարանին ուղղված խնդրանքի մեջ:

⁴ Տե՛ս, օրինակ, Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 234, Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. – 5-ое изд., перераб и доп. – М: «Статус», 2014, էջ 328: Գրականության մեջ հանդիպում են հայցի այլ բնորոշումներ ևս, որոնք, սակայն, չեն հերքում «հայց» հասկացության նյութաիրավական և դատավարական կողմերը: Տե՛ս Արզումանյան Գ.Մ., Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն.... ատենախոսություն, Եր., 2006, էջ 44:

Հայցի էության նման ընկալմամբ էլ պայմանավորվում է հայցի դեմ պատասխանողի առարկությունների դասակարգումը: Եթե ներկայացվող առարկություններն ուղղված են հայցի դատավարական կողմի դեմ և ունեն դատավարական նպատակներ (դադարեցնել վարույթն առանց հարուցված հայցն ըստ էության քննելու և լուծելու), այդպիսի առարկությունները դասվում են դատավարական առարկությունների թվին: Իսկ այն դեպքերում, երբ պատասխանողի առարկություններն ուղղված են հայցի նյութափրավական կողմի դեմ, ունեն նյութափրավական նպատակներ, դրանք դիտարկվում են որպես նյութափրավական:

Կարծում ենք, որ առարկությունների հենց նպատակային ուղղվածությունը պետք է դիտարկել որպես դրանք դասակարգելու հիմնական չափանիշ՝ թերևս միաժամանակ չբացառելով այլ չափանիշների առկայությունը, որոնք, սակայն, մեր կարծիքով, ունեն լրացուցիչ նշանակություն:

Նյութափրավական առարկությունների հիմնական նպատակը հայցվորի (սուբյեկտիվ վիճելի իրավունքի ենթադրյալ կրողի) կողմից ընդդեմ պատասխանողի (սուբյեկտիվ պարտականության ենթադրյալ կրողի) ներկայացված նյութափրավական պահանջի վիճարկումն ու դրա ըստ էության մերժմանը հասնելն է:

Հայցի դեմ նյութափրավական առարկությունների նման ընկալումն ընդհանուր առմամբ արտացոլում է դրանց էությունը:

Այդուհանդերձ, դատավարագիտության մեջ առկա են նյութափրավական առարկությունների տարբեր բնորոշումներ, որոնցից ակնհայտորեն երևում է, որ դատավարագետների մոտ միասնական մոտեցում չի ձևավորվել քննարկվող առարկությունների էության, դրանց տարրերի և կազմի վերաբերյալ:

Ս.Վ. Իվանովան գրում է. «Պատասխանողի նյութափրավական առարկություններն ուղղված են հայցային պահանջները հերքելուն, երբ պատասխանողն առարկում է ինչպես հայցի փաստական, այնպես էլ իրավական հիմնավորվածության դեմ: Այդպիսի առարկություններն արվում են նյութական իրավունքի նորմերի վկայակոչ-

մամբ և նպատակ են հետապնդում հասնելու դատարանի կողմից հայցի ըստ էության մերժմանը»⁵:

Ի.Ս. Կոմարովի կարծիքով՝ հայցի դեմ պատասխանողի առարկությունները նյութաիրավական են, եթե՝

1) ուղղված են հայցային պահանջներն ըստ էության ժխտելուն,

2) հենվում են նյութական իրավունքի նորմերի վրա,

3) հասցեատիրոջ համար համոզիչ լինելու դեպքում կարող են հանգեցնել հայցի լրիվ կամ մասնակի մերժման, հայցից հրաժարման, հաշտության համաձայնության կնքման կամ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման պատշաճ անձով⁶:

Ռ.Գ. Պետրոսյանը որպես նյութաիրավական առարկություններ է դիտարկում հայցի դեմ պատասխանողի այն առարկությունները, որոնք «հենվում են նյութական իրավունքի նորմերի վրա և ուղղված են հայցի էության, հայցվորի նյութաիրավական պահանջների դեմ»⁷: Ըստ հեղինակի՝ դրանք բացատրություններ և պատճառաբանություններ են, որոնցով պատասխանողը ժխտում է հայցի փաստական հիմնավորվածությունը կամ հայցի հիմքի փաստերից արվող իրավական եզրակացությունները, հետևաբար և՛ հաստատում են հայցապահանջները լրիվ կամ մասնակիորեն մերժելու անհրաժեշտությունը⁸:

Մ.Ա. Ռոժկովան ևս, բնորոշելով նյութաիրավական առարկությունները որպես նյութական իրավունքի նորմերի վրա հենվող և հայցային պահանջների ժխտմանն ուղղված բացատրություններ և փաստարկներ, կարծիք է արտահայտում, որ դրանք հանգում են հայցի հիմք հանդիսացող փաստերի կամ հայցվորի իրավական դիր-

⁵ Ст'у Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. – 5-ое изд., перераб. и доп. – М: «Статут», 2014, էջ 338:

⁶ Ст'у Комаров И.С. Защита ответчика в гражданском и арбитражном процессе. Дис. ... к.ю.н., Екатеринбург, 2012, էջ 162-163:

⁷ Ст'у Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 250:

⁸ Ст'у նույն տեղում:

քորոշման ժխտմանը կամ հերքմանը:⁹ Ըստ այդմ էլ հեղինակը նյութափրավական առարկությունները բաժանում է երկու խմբերի՝

1) փաստերի և իրավական փաստարկների ժխտում, առանց նոր փաստերի վկայակոչման, որը կիրառվում է այն դեպքերում, երբ հայցվորը չի ներկայացնում հայցի հիմքերը հաստատող պատշաճ ապացույցներ կամ հայցի հիմքում դնում է սխալ իրավական նորմեր, սխալ է մեկնաբանում դրանց իմաստն ու բովանդակությունը.

2) առարկություններ՝ բառի բուն իմաստով, որոնք ուղղված են հայցային պահանջների, դրանց հիմքում դրված փաստերի հերքմանը և հենվում են պատասխանողի կողմից վկայակոչվող իրավաբանական փաստերի վրա: Ընդ որում, դրանք կարող են կա՛մ հերքել հայցի հիմքի փաստերը (երբ, օրինակ, վնասի հատուցման մասին հայցով պատասխանողը մատնանշում է այն անձին, որն իրականում պատճառել է վնասը), կա՛մ, չժխտելով հայցի հիմքի փաստերը, ի չիք դարձնել վերջիններիս իրավական նշանակությունը (օրինակ՝ այն դեպքերում, երբ չժխտելով պարտքի գոյության փաստը՝ պատասխանողը վկայակոչում է հայցային վաղեմության ժամկետի անցած լինելը)¹⁰:

Փաստերի և իրավական փաստարկների հասարակ ժխտումը չդիտարկելով նյութափրավական առարկությունների տեսակ՝ Դ.Ա. Խեսինը դրանց կազմում դիտարկում է բացառապես այն առարկությունները, որոնք հենված են նյութական օրենսդրության նորմերի վրա և ուղղված են հայցը լրիվ կամ մասնակիորեն մերժելուն, իսկ հաշվանցի դեպքում՝ հայցային պահանջները կատարելուց պատասխանողին ազատելուն:¹¹

Հայցի դեմ նյութափրավական առարկություններ ներկայացնելու հիմնական նպատակը և նշանակությունը Վ.Վ. Յակովլևը տեսնում է այնպիսի փաստարկներ բերելու մեջ, որոնք հերքում են պա-

⁹ Ст'у Рожкова М.А. Возражения (процессуальный и материальный аспекты) // Вестник ВАС РФ, 2002, № 6, էջ 97-106, <http://rozhkova.com/ARTICLE/AR15.html>, էջ 1-2:

¹⁰ Ст'у նույն տեղում:

¹¹ Ст'у Хесин Д.А. Средства защиты интересов ответчика в гражданском и арбитражном судопроизводствах // Арбитражный и гражданский процесс, N 1, 2004, <http://www.lawmix.ru/comm/3361>:

տասխանողի ենթադրյալ սուբյեկտիվ նյութական իրավունքի առկայությունը¹²:

Տ.Վ. Սախնովայի բնորոշմամբ՝ նյութաիրավական առարկություններն ուղղված են նոր նյութաիրավական իրավաբանական կամ ապացուցողական փաստերի վկայակոչման և ապացուցման միջոցով հայցի հիմքը հերքելուն և նպատակ են հետապնդում հասնելու հայցի լրիվ կամ մասնակի մերժմանը¹³:

Չնայած վերը ներկայացված սահմանումներում առկա տարբերություններին, ակնհայտ է, որ անխտիր բոլոր հեղինակները նյութաիրավական առարկություններ են համարում պատասխանողի այնպիսի գործողությունները, որոնց կատարմամբ նա ժխտում (հերքում) է հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի (հայցի առարկայի) իրավաչափությունը և դատարանից պահանջում է հայցը մերժող վճռի կայացման միջոցով իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն: Անվիճելի է, որ նյութաիրավական առարկությունների նպատակը հայցն ըստ էության մերժելուն հասնելն է:

Առարկությունների քննարկվող տեսակի էությունը, դրանց իրավական բնույթը և նշանակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է վեր հանել այն գործողությունների շրջանակը, որոնց կատարմամբ պատասխանողը կարող է հասնել վերը նշված նպատակին:

Տվյալ խնդրի լուծման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի դատավարագիտության մեջ լայնորեն քննարկվող և առ այսօր իր արդիականությունը չկորցրած հայցի կառուցվածքի հարցը, որին նպատակահարմար ենք համարում անդրադառնալ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է հայցի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկությունների նպատակային ուղղվածությունն ու բովանդակությունը բացահայտելու համար:

¹² Ст'ю Гражданский процесс. Под ред. В.В. Яркова. М.: «Инфотропикс», 2012, էջ 281:

¹³ Ст'ю Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс, Клувер», 2008 էջ 331- 332:

Ընդունված է հայցը դիտարկել որպես բարդ իրավական կազմավորում, որի իրավական բնույթը որոշվում է ոչ միայն արտաքին հատկանիշներով, այլև ներքին կառուցվածքով¹⁴:

Դատավարագիտության մեջ առավել տարածված մոտեցման համաձայն՝ յուրաքանչյուր հայց, ուղղված լինելով այս կամ այն անձի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, անհատականացվում է իր տարրերով՝ առարկայով ու հիմքով: Վերջիններս որոշելու իրավունքը, դատարան դիմելու սահմանադրական իրավունքի և տնօրինչականության սկզբունքի ուժով, պատկանում է բացառապես հայցվորին, որն իր կամ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ դիմում է դատարան:

Թեև դատավարական օրենքը հստակ չի սահմանում «հայցի առարկա» և «հայցի հիմք» հասկացությունները, վերջիններիս էության վերաբերյալ գիտական մոտեցումների ընդհանրացման հիման վրա սույն աշխատանքի շրջանակներում հնարավոր ենք համարում հայցի առարկան բնորոշել որպես հայցվորի կողմից դատական կարգով պատասխանողին ներկայացվող նյութաիրավական պահանջների ամբողջություն, որոնք ուղղված են հայցվորի կարծիքով պատասխանողի կողմից խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի (օրինական շահի) պաշտպանությանը և որոնց կապակցությամբ դատարանը, իրականացնելով արդարադատություն, պետք է վճիռ կայացնի: Հայցի հիմքն այն փաստական հանգամանքների և իրավական նորմերի ամբողջությունն է, որոնք հայցվորի կողմից դրվել են ներկայացված հայցապահանջների (հայցի առարկայի) հիմքում և որոնցով հիմնավորվում է սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի առկայությունը, դրա խախտումը, ինչպես նաև դատական պաշտպանության անհրաժեշտությունը:

Ցանկացած գործով դատարանը պարտավոր է դատավարության սկզբունքների և ֆորմալ դատավարության բոլոր կանոնների

¹⁴ Տե՛ս, օրինակ, Արզումանյան Գ.Մ., Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, իրավ. գիտ. թեկն... ատենախոսություն, Եր., 2006, էջ 45, Гражданский процесс. Под ред. М.К. Треушникова. – 5-ое изд., перераб и доп. – М: «Статут», 2014, էջ 328:

պահպանմամբ հետազոտել հայցվորի կողմից վկայակոչված իրավահարաբերությունը, պարզել դրա առկայությունը կամ բացակայությունը, որոշել կիրառման ենթակա նյութական օրենսդրությունը և դրա հիման վրա վեր հանել կողմերի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների շրջանակը, ստուգել պատասխանողի դեմ ուղղված նյութափրավական պահանջի իրավաչափությունն ու հիմնավորվածությունը և հենց այդ պահանջի կապակցությամբ արտահայտել իր հրամայական եզրահանգումը վճռում: Ընդ որում, հայցը բավարարելով՝ դատարանն ըստ էության հաստատում է հայցվորի պահանջի իրավաչափությունն ու հիմնավորվածությունը:

Հատկանշական է, որ նյութափրավական առարկությունների էությունը բացահայտելու համար դատավարագիտության մեջ կարևորվում է դրանց առարկան՝ այն, ինչին ուղղված է պաշտպանության տվյալ միջոցը և հիմքը՝ այն փաստական հանգամանքները, որոնցով հիմնավորվում է առարկությունը¹⁵:

Պատասխանողը, ներկայացնելով նյութափրավական առարկություններ, ձգտում է նրան, որպեսզի դատարանն ըստ էության մերժի հայցը, իրեն չճանաչի հայցվորի նկատմամբ պարտավոր սուբյեկտ:

Հետևում է, որ հարուցված հայցի դեմ պաշտպանվող պատասխանողը հայցի առարկան (ներկայացված պահանջները) մերժելուն հասնելու նպատակով իր նյութափրավական առարկությունների շրջանակներում պետք է վիճարկի ու հերքի հայցի փաստական հիմքերը (պահանջի հիմքում դրված փաստական հանգամանքները) կամ դրանցից արվող եզրահանգումները (այդ փաստերից բխող սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների մասին):

Նյութափրավական առարկություններ ներկայացնելիս պատասխանողը պետք է նկատի ունենա, որ հայցի բավարարմանը հասնելու համար հայցվորը պետք է ոչ միայն սահմանված կարգով

¹⁵ Տե՛ս, օրինակ՝ Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 39, Анисимова Л.И. Возражение ответчика в советском гражданском процессе. М., 1961, Васильева Г.Д. Защита ответчика против иска в гражданском судопроизводстве. Красноярск, 1982, էջ 75-76, Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 107:

դիմի դատարան, այլ նաև ապացուցի երեք խումբ իրավաբանական փաստերի առկայությունը՝ իրավաստեղծ փաստերը, ակտիվ և պասիվ լեգիտիմացիայի փաստերը և հայցի առիթ հանդիսացող փաստերը¹⁶: Հետևաբար, հայցի մերժմանը հասնելու համար բավարար է ցույց տալ ու հիմնավորել իրավաբանական փաստերի վերը նշված խմբերից թեկուզև մեկի բացակայությունը: Դեռևս Լ.Ի. Անիսիմովան նկատել է, որ «...պատասխանողի յուրաքանչյուր նյութաիրավական առարկության հիմքում գործող իրավունքի տեսանկյունից հայցի փաստական հիմքի ոչ լիարժեքության վերաբերյալ պնդումն է»¹⁷: Մ.Ա. Գուրվիչը ևս հայցը մերժելու համար բավարար էր համարում հայցի հիմքի տարրերից որևէ մեկի բացակայությունը պարզելը¹⁸:

Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ որպես առարկությունների քննարկվող տեսակի առարկա կարող են դիտարկվել՝

ա) հայցվորի կողմից հայցապահանջների հիմքում դրվող փաստերը,

բ) տվյալ փաստերից արվող եզրահանգումները՝ բխող սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների, կիրառման ենթակա պաշտպանության եղանակների, հայցապահանջի բավարարման ենթակա չափի, հետևաբար նաև՝ հայցի առարկայի իրավաչափության մասին,

գ) հայցի իրավական հիմքը, այսինքն՝ իրավունքի այն նորմերը, որոնց վրա հենվելով հայցվորը որակում է իր և պատասխանողի միջև առկա վիճելի իրավահարաբերությունը, որոնք, ըստ հայցվորի, իրավաբանորեն արժեքավորում են վկայակոչված փաստերը՝ դրանց

¹⁶ Ավելի մանրամասն տե՛ս Арбитражный процесс. Учебник. Отв. ред. В.В. Ярков. М.: «Инфотропик», 2012, էջ 247-248:

¹⁷ Տե՛ս Анисимова Л.И. Возражения ответчика в советском гражданском процессе. Автореф. дис.... к.ю.н. М., 1961, էջ 14:

¹⁸ Ըստ այդմ էլ հեղինակը պնդում էր, որ հայցի հիմքի մեջ մտնող փաստերի հետազոտման հաջորդականության հարցը պետք է լուծվի դատավարական խնայողության սկզբունքի տեսանկյունից: Տե՛ս Гурвич М.А. Право на иск. М.-Л.: изд. Акад. наук СССР, 1949, էջ 187:

հետ կապելով որոշակի սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագում, փոփոխում կամ դադարեցում¹⁹:

¹⁹ Ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման, որի հետ մենք լիովին համամիտ ենք, ՔԴՕ 87-րդ հոդվածը հայցվորին չի պարտավորեցնում հայցադիմումում մատնանշել հայցի իրավական հիմքը՝ այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, ուստի հայցադիմումում հայցի իրավական հիմք նշելը հայցվորի իրավունքն է: Հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ՝ դրանով իսկ ձևավորելով հայցի իրավական հիմքը: Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ քաղաքացիական գործով 27.05.2011 թ. որոշումը: Հարկ է սակայն նշել, որ անկախ հայցվորի կողմից դատարան ներկայացված հայցադիմումում կիրառման ենթակա իրավական նորմերի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելուց, պատասխանողը կարող է դրանց վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնել դատարանին: Եթե հայցվորն իր դիրքորոշումը ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ գործի դատական քննության ընթացքում, այն մեխանիկորեն ընկնում է հայցի հիմքում և, հետևաբար, կարող է հանդես գալ որպես հայցի իրավական հիմքի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկության առարկա: Մինևույն ժամանակ, հայցի իրավական հիմքի դեմ ներկայացվող առարկություններից պետք է տարբերել պատասխանողի այն դիրքորոշումը, որը ներկայացվում է տվյալ գործով դատարանի կողմից որոշված կիրառման ենթակա իրավունքի նորմերի վերաբերյալ: Վերջիններս հայցի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկությունների առարկա համարվել չեն կարող: Բանն այն է, որ հայցի իրավական հիմքը, տնօրինչականության սկզբունքի ուժով, ձևավորում է հայցվորը (տե՛ս Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը): Մինևույն ժամանակ դատարանը կաշկանդված չէ հայցվորի կողմից վկայակոչված իրավունքի նորմերով, ՔԴՕ 149.8 հոդվածի 2-րդ մասի ուժով նա պարտավոր է նախնական դատական նիստում պարզել վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը, հետևաբար՝ դատարանի նշված գործողության կապակցությամբ պատասխանողի իրավական դիրքորոշման առարկան ոչ թե հայցի իրավական հիմքն է, այլ կայացվելիք վճռի հնարավոր իրավական հիմքը, որը, սակայն, դատարանի կողմից վերջնականորեն պետք է որոշվի (ճշգրտվի) վճիռ կայացնելիս (ՔԴՕ 131 հոդվ., մաս 1):

Նյութափրավական առարկության հիմքերն այն փաստական հանգամանքներն ու պատճառաբանություններն են, որոնցով պատասխանողը հիմնավորում է իր առարկությունը:

Հիմքերի առկայությունը պաշտպանության տվյալ միջոցի էությունը բնութագրող կարևորագույն հատկանիշն է²⁰: Առարկությունը պետք է հիմնավորված (պատճառաբանված) լինի. փաստերով և ապացույցներով չամրապնդված արտահայտությունները հայցային վարույթում առարկություններ անվանվել չեն կարող²¹: Այդ մասին է վկայում նաև ՀՀ օրենսդրի դիրքորոշումը, որը ՔԴՕ 95-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանել է, որ հայցադիմումի պատասխանում պատասխանողը պետք է ներկայացնի իր դիրքորոշումը հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին, իսկ առարկելու դեպքում պատասխանում պետք է անդրադարձ կատարի՝ ա) հայցի հիմքում ընկած այն փաստերին, որոնք նա չի ընդունում, բ) այն փաստերին, որոնք տվյալ գործի համար չունեն էական նշանակություն, գ) այն փաստերին, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցներին, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը:

Դատավարագիտության մեջ բանավիճային է այն հարցը, թե ինչպիսի տարրերից կարող են բաղկացած լինել նյութափրավական առարկությունների հիմքերը:

Որոշ հեղինակներ կարծիք են արտահայտում, որ որպես նյութափրավական առարկության հիմք կարող են հանդես գալ բացառապես պատասխանողի կողմից վկայակոչված իրավաբանական փաստերը²²: Տվյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ եթե հայցի հիմքում դրվող փաստերը չունեն իրավաբանական նշանակություն,

²⁰ Ст'у Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 107:

²¹ Ст'у Хесин Д.А. Средства защиты интересов ответчика в гражданском и арбитражном судопроизводствах // Арбитражный и гражданский процесс, N 1, 2004, <http://www.lawmix.ru/comm/3361>:

²² Ст'у, օրինակ՝ Советский гражданский процесс. Под ред. М.А. Гурвича. М., 1975, էջ 118, Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 113:

այսինքն՝ դրանց հետ օրենքը չի կապում որոշակի իրավական հետևանքների առաջացում, ապա պատասխանողի կողմից նման փաստեր վկայակոչելը գործի համար որևէ նշանակություն ունենալ չի կարող, այդպիսի փաստերը պետք է որակվեն որպես ոչ վերաբերելի:²³

Դատավարագետների մեկ այլ խումբ այն տեսակետին է, որ հայցի դեմ առարկությունների հիմքում կարող են դրվել ոչ միայն իրավաբանական փաստեր, այլ նաև այդպիսի նշանակություն չունեցող փաստեր, որոնք կարող են լինել դրական կամ բացասական, սակայն բոլոր դեպքերում հակադրվում են հայցի հիմքի փաստերին:²⁴

Կարծում ենք՝ վերջին տեսակետն ավելի ընդունելի է: Շատ դատավարագետներ ապացուցման առարկան կազմող գործն ըստ էության լուծելու համար նշանակություն ունեցող հանգամանքների շարքում դիտարկում են նաև նյութափրավական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ հերքման միջոց հանդիսացող ապացուցողական փաստերը, որոնք իրավաբանական փաստեր չեն, բայց առանձին վերցրած կամ համակցված՝ դատարանին հնարավորություն են տալիս եզրակացություններ անելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութափրավական փաստերի առկայության կամ բացակայության մասին²⁵: Համամիտ ենք, Ա.Գ. Մեղրյանի հետ այն հարցում, որ քանզի դատարանն ապացուցման առարկան որոշելիս պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված հանգամանքները, նա չի կարող անտեսել և ապացուցման առարկայի մեջ չներառել, օրինակ, վնասի հատուցման վերաբերյալ վեճի շրջանակներում պա-

²³ Տե՛ս Трашкова Н.М., նշված աշխատ., էջ 113:

²⁴ Տե՛ս Анисимова Л.И. Возражения ответчика в советском гражданском процессе. Автореф. дис.... к.ю.н. М., 1961, էջ 5, Մեղրյան Ա.Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2012., էջ 17:

²⁵ Տե՛ս Մեղրյան Ա.Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2012., էջ 17:

տասխանողի փաստարկն այն մասին, որ վնասի պատճառման պահին նա գտնվել է այլ վայրում:²⁶

Շեռտում է, որ եթե պատասխանողը կարող է հայցի հիմքի փաստերին հակադրել դրանք հերքող որոշակի հանգամանքներ, վերջիններս թեև իրավաբանական փաստեր չեն հանդիսանում, այդուհանդերձ վերաբերելի լինելու պարագայում կարող են դիտարկվել հայցի դեմ ներկայացվող առարկությունների հիմքերի կազմում:

Պատասխանողի առարկությունների հիմքերի կազմն ուղղակիորեն պայմանավորած է առարկության առարկայով:

Այսպես, *հայցվորի կողմից հայցապահանջների հիմքում դրվող փաստերը վիճարկելիս* պատասխանողը կարող է վկայակոչել հերքող փաստեր: Ընդ որում, պատասխանողի վկայակոչած փաստերը կարող են ուղղված լինել հայցի հիմքի և՛ իրավաստեղծ փաստերի, և՛ սկտիվ ու պասիվ լեգիտիմացիայի փաստերի, և՛ հայցի առիթ հանդիսացող փաստերի դեմ:

Այսպես, փոխառության գումարը բռնագանձելու վերաբերյալ հայցի դեմ առարկելիս պատասխանողը կարող է վկայակոչել այն փաստը, որ հայցվորը նվիրատվության կարգով իրեն ազատել է պարտքը վճարելու պարտականությունից (ներել է պարտքը): Տվյալ օրինակում պատասխանողի կողմից վկայակոչված պարտքի ներման կամ պարտքը մարելու փաստերը հանդես են գալիս որպես հայցի հիմքում դրված պարտքի առկայության (իրավաստեղծ) փաստը հերքող հանգամանքներ:

Միևնույն ժամանակ, պատասխանողը կարող է վկայակոչել այն փաստը, որ հայցվորն այլևս չի հանդիսանում պարտատեր փոխառության պայմանագրով, քանի որ ցեսիայի կարգով պահանջի իրավունքը զիջել է այլ անձի (այլ կերպ ասած՝ ոչ պատշաճ հայցվոր է), կամ ինքը չպետք է պատասխանի տվյալ հայցով, վերջինս հարուցվել է ոչ պատշաճ պատասխանողի դեմ, քանի որ փոխատուի համաձայնությամբ պարտքը, որի գոյությունը չի վիճարկվում, փոխանցվել է այլ անձի: Ներկայացված օրինակում պատասխանողի վկայակոչած

²⁶ Տե՛ս նույն տեղում:

փաստերն ուղղված են մի դեպքում՝ հայցի հիմքի ակտիվ, մյուս դեպքում՝ պասիվ լեգիտիմացիայի փաստերի հերքմանը²⁷:

Պատասխանողը կարող է չվիճարկել ոչ իրավաստեղծ և ոչ էլ լեգիտիմացիայի փաստերը, սակայն հերքել հայցի առիթ հանդիսացող փաստը՝ պնդելով, որ փոխառության գումարը վերադարձնելու ժամկետը դեռ չի լրացել կամ կողմերի համաձայնությամբ երկարաձգվել է, կամ պարտքը սահմանված ժամկետում լրիվ կամ մասնակիորեն վճարել է:

Հայցվորի կողմից հայցապահանջների հիմքում դրվող փաստերը վիճարկելիս պատասխանողը կարող է փաստարկներ բերել առ այն, որ իր գործողություններն իրավախախտումներ ճանաչվել չեն կարող (օրինակ՝ վնասը բացակայում է, կամ այն պատճառվել է տուժողի դիտավորությամբ, անհաղթահարելի ուժի հետևանքով կամ օրինական գործողությամբ), իր և հայցվորի միջև նյութական իրավահարաբերություններ չեն ծագել (դրական ճանաչողական հայցերով) կամ ընդհակառակը՝ նման իրավահարաբերություն առկա է (բացասական ճանաչողական հայցերով):

Միևնույն ժամանակ, հայցվորի կողմից հայցապահանջների հիմքում դրվող փաստերի առկայությունը վիճարկելիս պատասխանողը կարող է, առանց հերքող նյութաիրավական փաստեր վկայակոչելու, իր առարկությունների շրջանակներում հենվելով ապացուցման դատավարական կանոնների վրա մատնանշել հայցվորի ներկայացրած ապացույցների անբավարարությունը՝ դրանով իսկ ցույց տալով հայցի հիմքերի ապացուցված չլինելը: Մի շարք հեղինակներ,

²⁷ Այս առումով դժվար է համաձայնել Դ.Ա. Խեսինի տեսակետին, որ ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ անձով փոխարինելուն ուղղված միջնորդությունը պետք է համարել դատավարական առարկություն, քանի որ այն ուղղված է պատասխանողի դեմ հարուցված վարույթի իրավաչափության ժխտմանը, նպատակ է հետապնդում դադարեցնելու նրա մասնակցությամբ դատավարական հարաբերությունները մինչև վեճն ըստ էության լուծող դատական ակտի կայացումը: Տե՛ս Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, <http://www.lawmix.ru/comm/3118>: Նման միջնորդությամբ հանդես գալու հնարավորությունը, անկասկած, պատասխանողի շահերի պաշտպանության գործուն դատավարական միջոց է, սակայն ունի զուտ նյութաիրավական հիմքեր:

որոնց հետ համամիտ ենք նաև մենք, պատասխանողի նման գործողությունը ևս դասում են հայցի դեմ արվող նյութաիրավական առարկությունների թվին²⁸: Առաջին հայացքից նման առարկությունը հենվում է դատավարական իրավունքի նորմերի (ապացուցման կանոնների) վրա, սակայն կարծում ենք, որ դա այդպես չէ: Այն դեպքերում, երբ պատասխանողն առանց նոր փաստեր վկայակոչելու, հակառակը հաստատող ապացույցներ ներկայացնելու, պարզապես հենվելով ՔԴՕ 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի վրա, պահանջում է վճռով չհաստատված (վիճելի) ճանաչել հայցի հիմքում դրված փաստի առկայությունը և դրա բացասական հետևանքները դնել հայցվորի վրա, նրա նպատակը նյութական իրավունքի նորմերով արժեքավորվող փաստական հանգամանքների բացակայությունը հաստատելը և հայցի անհիմն լինելն ապացուցելն է: Պատասխանողի նման վարքագիծը էապես տարբերվում է հայցի կամ դրա հիմքերի պարզ ժխտումից՝ պատճառաբանված լինելու հատկանիշով: Թեև առերևույթ նման առարկության հիմքում դրվում են որոշակի դատավարական կանոններ, այդ կանոնների օգնությամբ արվում են նյութաիրավական բնույթի հետևություններ՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատված չլինելու, վիճելի մնալու, հետևաբար նաև բացակայության մասին:

Հայցի առարկայի իրավաչափությունը, գործով հաստատված փաստերից արվող եզրահանգումները հերքելու նպատակով պատասխանողը, չվիճարկելով հայցվորի վկայակոչած փաստերը, կարող է փաստարկներ բերել առ այն, որ հայցվորի վկայակոչած փաստերի հետ օրենքը չի կապում նյութական իրավահարաբերությունների առաջացում, հայցվորի մոտ չի ծագել վիճելի սուբյեկտիվ իրավունքը, իր մոտ չի ծագել համապատասխան սուբյեկտիվ պարտականությունը, առկա չեն վիճելի իրավահարաբերության ծագման, փոփոխման կամ դադարման պայմանները, ոչ իրավաչափ է իրավունքի պաշտպանության՝ հայցվորի կողմից ընտրված եղանակը,

²⁸ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 250, Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 41:

պարտավորության բովանդակությանը չի համապատասխանում հայցվորի կողմից նշված՝ իր իրավունքների և պատասխանողի պարտականությունների քանակական կողմը (հայցապահանջի չափը):

Հայցի առարկան մերժելուն հասնելու նպատակով պատասխանողը կարող է նաև վկայակոչել հայցվորի կողմից հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու փաստը, պատճառաբանել հայցային վաղեմության ժամկետի բաց թողնման պատճառների հարգելիության (Քաղ. օր. 342 հոդվ.), այդ ժամկետն ընդհատող կամ կասեցնող հանգամանքների (Քաղ. օր. 339, 340 հհ.) բացակայությունը:

Առարկությունների քննարկվող հիմքերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանց շրջանակներում պատասխանողը չի վիճարկում հայցի փաստական հիմքում դրված հանգամանքները, սակայն մատնանշում ու պատճառաբանում է դրանցից արվող եզրահանգումներում առկա սխալները, կամ ցույց է տալիս այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք, ըստ գործող օրենսդրության, բացառում են ներկայացված հայցի (դրա առարկայի) բավարարումը նույնիսկ այն դեպքերում, երբ գործով ապացուցված են հայցի հիմքում դրված իրավաստեղծ, ակտիվ և պասիվ լեգիտիմացիայի, ինչպես նաև հայցի առիթ հանդիսացող փաստերը: Հենց այս նկատառումներով, ինչպես նաև հաշվի առնելով հայցային վաղեմության ժամկետի նյութաիրավական բնույթը²⁹, համամիտ չենք Դ.Ա. Խեսինի հետ այն հարցում, որ քանզի հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու վերաբերյալ պատասխանողի հայտարարությունն ուղղված չէ հարուցված հայցի հիմքերի հերքմանը և չի վկայում ներկայացված հայցապահանջի ոչ իրավաչափության ու անհիմն լինելու մասին, ուստի այն պետք է դիտարկվի որպես դատավարական առարկություն³⁰: Ինչպես իրավագիտորեն նկատում է Ի.Մ. Պյատիլետովը, հայցային վաղեմության ժամկետի բացթողումը վկայակոչելիս պատասխանողն ըստ էու-

²⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս Терещенко Т.А. К вопросу о принципиально материально-правовой природе исковой давности // Кодекс info: Март - апрель. Правовой научно-практический журнал. - СПб., 2006, էջ 3-6:

³⁰ Տե՛ս Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, www.lawmix.ru/comm/3118: Ուշագրավ է, որ հեղինակը, հակասելով ինքն իրեն, նշում է, որ «... նման առարկության հիմքը վարույթը շարունակելու նյութաիրավական հիմքերի բացակայությունն է»:

թան չի վիճարկում հայցի փաստական հիմքերը (թեև կարող է), սակայն վկայակոչում է այնպիսի նյութաիրավական նշանակության հանգամանք, որն արգելք է հանդիսանում հայցի բավարարման համար՝ դրանով իսկ «ուժասպառ» անելով ներկայացված հայցի փաստական հիմքերը³¹:

Պատասխանողի առարկությունը կարող է ուղղված լինել *հայցի իրավական հիմքերի դեմ*: Դրանք վիճարկելու նպատակով առարկության հիմքերում կարող է նշվել, որ հայցվորի կողմից վկայակոչված իրավական նորմը կիրառելի չէ տվյալ գործով, կիրառելի են այն իրավական նորմերը, որոնք հայցվորը չի վկայակոչել, կամ հայցվորը սխալ է մեկնաբանում օրենքը, սխալ է ներկայացնում դրա բովանդակությունն ու իմաստը, կիրառում է օրենքի կամ իրավունքի անթույլատրելի անալոգիա, հենվում է այնպիսի իրավական ակտերի վրա, որոնք ուժի մեջ չեն մտել, ուժը կորցրել կամ անվավեր են ճանաչվել, կամ ընդունվել են վիճելի իրավահարաբերությունը ծագելուց հետո և հետադարձ ուժ չունեն և այլն:

Թեև դատավարական օրենքը չի պահանջում հայցի հիմքում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա ներկայացվում է տվյալ հայցապահանջը, անառարկելի է, որ իրավական հիմք չունեցող հայցապահանջը բավարարման ենթակա չէ, այն ոչ իրավաչափ է և ենթակա է մերժման, քանի դեռ գործող օրենսդրությունը, գործարար շրջանառության սովորույթները, օրենքին չհակասող լոկալ իրավական ակտերը չեն նախատեսում որոշակի փաստական հանգամանքների առկայության դեպքում նման պահանջ ներկայացնելու հնարավորություն:

Այսպիսով, առարկելով հարուցված հայցի իրավական հիմնավորվածության դեմ, պատասխանողն իր փաստարկները կառուցում է վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմերի բացակայության կամ հայցվորի կողմից վկայակոչված փաստերի նկատմամբ դրանց սխալ կիրառման (ներառյալ՝ մեկնաբանման) վրա:

³¹ St'u Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 42-43:

Այսպիսով, պատասխանողի նյութափրավական առարկություններն ունեն իրենց կառուցվածքը: Դրանք բաղկացած են երկու տարրերից՝ առարկության առարկա՝ այն, ինչին ուղղված է առարկությունը, և առարկության հիմք՝ այն փաստական և իրավական բնույթի հանգամանքները, որոնց միջոցով պատասխանողը հիմնավորում (պատճառաբանում) է իր առարկությունները: Դրանց սահմանազատումն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կարևոր նշանակություն:

Նյութափրավական առարկությունների առարկայի և հիմքի սահմանազատումը չափազանց կարևոր գործնական նշանակություն ունի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների՝ ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների շրջանակը որոշելիս, պատասխանողի վկայակոչած փաստերի վերաբերելիությունը պարզելիս, ինչպես նաև ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելիս: Մասնավորապես, ինչպես բխում է ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, հայցի դեմ պատասխանողի նյութափրավական առարկությունների հիմքերը դիտարկվում են որպես գործով ապացուցման առարկայի կազմավորման կարևոր աղբյուրներից մեկը: Նշված դրույթը, սահմանելով, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, ըստ էության ոչ միայն նախատեսում է ապացուցման առարկայի շրջանակներն ուրվագծելու դատարանի իրավասությունը, այլ նաև, «գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա» բառակապակցության օգտագործմամբ, կանխորոշում է այդ իրավասությունն իրականացնելու սահմանները³²: Դա նշանակում է, որ գործն ըստ էության լուծելու համար էական նշանակություն ունեցող նյութափրավական հանգամանքների հարաբերականորեն կայուն կազմը (ապացուցման տիպային առարկան)³³ պատասխանողի նյու-

³² Նման իրավական դիրքորոշում է հայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշման 9-րդ կետը:

³³ Այդ մասին մանրամասն տե՛ս Մեղրյան Ս.Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ

թափրավական առարկությունների հիմքերի հաշվին կարող է էապես ընդլայնվել, որի արդյունքում դատարանի մոտ ծագում է պարտակա-նություն դրանք մտցնելու ապացուցման առարկայի մեջ, ապացուց-ման սահմանված կանոններով կազմակերպելու դրանց հետազոտու-մը և վերջնական եզրահանգումներ անելու վճռում դրանց առկայու-թյան կամ բացակայության, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազ-դեցության վերաբերյալ:

Պատասխանողի կողմից դատարան ներկայացված ամբողջ փաստական նյութից դատարանը պարտավոր է ապացուցման ա-ռարկայի մեջ մտցնել և հետազոտել միայն այն հանգամանքները, ո-րոնք վերաբերում են գործին, կարող են որևէ կերպ «հակազդել» հայցին, հերքել դրա հիմքում դրված հանգամանքները, այսինքն՝ վե-րաբերելի են: Պատասխանողի նյութափրավական առարկությունների հիմքում դրված հանգամանքների վերաբերելիության հարցը դա-տարանը լուծում է առարկության տարրերի (առարկայի և հիմքի) հա-մադրության միջոցով: Համապատասխանաբար, եթե առարկության առարկայի և հիմքի միջև օբյեկտիվ կապ գոյություն չունի (օրինակ՝ պատասխանողը վկայակոչում է կիրառել հայցային վաղեմություն, մինչդեռ տվյալ պահանջի վրա հայցային վաղեմություն չի տարած-վում, կամ ծառայությունների մատուցման պայմանագրից բխող պարտքի բռնագանձման վերաբերյալ հայցի դեմ առարկելիս պնդում է, որ մինչև պայմանագրի լուծումը մատուցված ծառայության համար վճարելու պարտականություն իր մոտ չի ծագել, քանի որ հայցվորը միակողմանի վաղաժամկետ լուծել է պայմանագիրն առանց իր հետ համաձայնեցնելու), դատարանը պատասխանողի կողմից վկայակոչ-ված հանգամանքները (առարկության հիմքը) պետք է ճանաչի ոչ վե-րաբերելի՝ բացառելով գործի քննության ընթացքում դրանց հետա-զոտմանն ուղղված ապացուցողական գործողությունների կատարու-մը:

Ինչպես իրավացիորեն նշում են որոշ դատավարագետներ, նյութափրավական առարկությունների առարկայի և հիմքի սահմա-նազատումը մեծապես նպաստում է հայցի դեմ պատասխանողի

հրատ., 2012, էջ 20-29, Баулин О.В. Время доказывания при разбира-тельстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. – М., 2005, էջ 107-112:

պաշտպանության տվյալ միջոցի արդյունավետության բարձրացմանը³⁴: Առարկության տարրերից մեկի բացակայության կամ դրանց միջև կապի բացակայության պարագայում պաշտպանության տվյալ միջոցը դառնում է ոչ արդյունավետ³⁵:

Նյութաիրավական առարկության հիմքերը ճշգրիտ որոշելը, դրանց վերաբերելիության հարցը պարզելը կարևոր նշանակություն ունեն նաև գործով ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների ապացուցման պարտականությունը բաշխելու համար:

Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնը ձևակերպված է գործող ՔԴՕ 48-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է. «Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը»: Հիմնվելով տվյալ իրավանորմի վրա՝ դատարանը պետք է հենց պատասխանողի վրա դնի նրա նյութաիրավական առարկությունների հիմքում դրված վերաբերելի փաստերն ապացուցելու պարտականությունը՝ միաժամանակ պարզաբանելով դրանք հաստատող ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը և չներկայացնելու հնարավոր հետևանքները:

Նշվածով չի սահմանափակվում նյութաիրավական առարկությունների առարկայի և հիմքի սահմանազատման նշանակությունը: Ինչպես իրավագիտորեն նշում է Ն.Մ. Տրաշկովան, նյութաիրավական առարկությունների առարկայի և հիմքերի ու հայցի համապատասխան տարրերի համեմատության միջոցով հնարավոր է պատասխանել այն հարցին, թե ինչու պատասխանողի պաշտպանության որոշակի պահանջները կարող են ներկայացվել ինչպես հակընդդեմ հայցի, այնպես էլ առարկությունների ձևով, իսկ այլ պահանջների ձևակերպման համար անհրաժեշտ է ընտրել պաշտպանության միջոցներից միայն մեկը:³⁶

Ամփոփելով վերը շարադրվածը՝ ***հայցի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկությունները կարելի է բնորոշել որպես***

³⁴ Տե՛ս Анисимова Л.И. Возражения ответчика в советском гражданском процессе. Автореф. дис.... к.ю.н. М., 1961, էջ 6, Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 114:

³⁵ Տե՛ս նույն տեղում:

³⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 114:

Նյութական իրավունքի նորմերի վրա հիմնված և փաստերով ամրապնդված պարճառաբանված նկատառումներ, որոնք ուղղված են հայցվորի կողմից հայցապահանջի հիմքում դրվող փաստերի, տվյալ փաստերից արվող եզրահանգումների կամ հայցի իրավական հիմքի դեմ և նպատակ են հետապնդում հասնելու հայցի ըստ էության մերժմանը:

Բանալի բառեր՝ պատասխանողի պաշտպանության միջոցներ, առարկություններ, նյութաիրավական առարկություններ, առարկության առարկա, առարկության հիմք, ապացուցման առարկա, փաստերի վերաբերելիություն

Резюме

В статье рассматриваются проблемы понятия, структуры и правовой природы материально-правовых возражений ответчика против иска. На основе критического анализа научных подходов к проблеме материально-правовых возражений ответчика, а также процессуального законодательства и судебной практики РА делается вывод о том, что материально-правовые возражения ответчика – это основанные на нормах материального права и подкрепленные относимыми фактами мотивированные доводы ответчика, направленные против фактов, указанных истцом в качестве основания исковых требований, выводов из данных фактов либо правового основания иска, и имеющие цель добиться отказа в иске по существу.

Ключевые слова: средства защиты ответчика, возражения, материально-правовые возражения, предмет возражения, основание возражения, предмет доказывания, относимость фактов.

Resume

The article discusses problems of notion, structures and the nature of right in a material-right objections of respondent against claim. On the basis of critical analysis of scientific approaches to the

problem of material-right objections of respondent as well as procedural law and juridical practice of Russian Federation assumes that the material-law objections of respondent –are based on the norms of material right and the respondent’s arguments against the facts which are shown by the claimer as a base for claim demand is either a base for claim or in fact has a goal to reach refusal in a claim.

Key words: means of respondent’s defence, objections, material-right objections, subject of objection, bases of objection, subject of proof, relation of facts.

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՑԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

4. Սարգսյան

Ներկայացված հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելու և քաղաքացիական գործ հարուցելու հետևանքով հայցադիմումում որպես պատասխանող վկայակոչված անձը քաղաքացիադատավարական իրավահարաբերության սուբյեկտի կարգավիճակով ակամա ներգրավվում է վարույթում: Դառնալով դատավարական իրավահարաբերության սուբյեկտ՝ պատասխանողը ձեռք է բերում ոչ իրավաչափորեն հարուցված վարույթի դեմ դատական պաշտպանության իրավունք, որն իրացվում է դատավարական իրավահարաբերության ծագման պայմանների բացակայության վերաբերյալ իր նկատառումները հայտարարելու իրեն վերապահված իրավական հնարավորության, ինչպես նաև դատարանի կողմից տվյալ հանգամանքը ստուգելու և այն հաստատված համարելու դեպքում գործի վարույթը դադարեցնելու պարտականության մեջ:

Դատավարագիտության մեջ դատավարական իրավահարաբերության ծագման պայմանների բացակայության, հետևաբար նաև՝ հարուցված վարույթի ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ պատասխանողի արտահայտած պատճառաբանված նկատառումներն ընդունված է անվանել դատավարական առարկություններ:

Դատավարական առարկությունների կարևորագույն առանձնահատկությունը այն է, որ դրանք հենվում են դատավարության իրավունքի նորմերի վրա և ուղղված են վարույթի իրավաչափությունը ժխտելուն, վարույթը խափանելուն: Դրանց շրջանակներում պատասխանողը նպատակ է հետապնդում ցույց տալ վարույթի ծագման կամ այն շարունակելու ոչ իրավաչափությունը, հետևաբար նաև՝ վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը:

Գրականության մեջ դատավարական առարկությունները բնորոշվում են տարբեր կերպով: Տրվող բնորոշումներից ակնհայտորեն երևում է, որ դատավարագիտության մեջ միասնական մոտեցում չի ձևավորվել դատավարական առարկությունների կազմի, պատաս-

խանողի այս կամ այն հայտարարությունը նման առարկությունների թվին դասելու չափանիշների հարցի շուրջ:

Այսպես, Վ.Պ. Չապուրսկին պնդում էր, որ հայցի դեմ պատասխանողը կարող է պաշտպանվել ոչ միայն ըստ էության առարկելով, այլ նաև դատավարական բնույթի նկատառումներ ներկայացնելու միջոցով: Չորշափելով հայցի ըստ էության հիմնավորվածության հարցը՝ նա կարող է վկայակոչել տվյալ պահանջով հայցվորի կողմից դատարան դիմելու անթույլատրելիությունը կամ վարույթ հարուցելու և այն շարունակելու օրենքով սահմանված կանոնների չպահպանումը: Այդպիսի առարկությունները հեղինակն անվանում էր դատավարական բացարկներ՝ առարկություններ վարույթի դեմ:¹

Կ.Ս. Յուդելսոնը ևս դատավարական բացարկներ էր անվանում պատասխանողի այն հայտարարությունները, որոնք ուղղված են գործի վարույթը դադարեցնելուն առանց հայցն ըստ էության քննելու և լուծելու:²

Լ.Ի. Անիսիմովան դատավարական առարկությունները բնորոշում էր որպես հայցի դեմ պատասխանողի պաշտպանության պահանջ, որը հիմնվում է դատարանի և դատավիճող կողմերի միջև դատավարական իրավահարաբերության ծագման պայմանների բացակայության վրա:³

Ա.Գ. Կովալենկոն դատավարական առարկությունները դիտարկում է որպես վարույթի ոչ իրավաչափության վերաբերյալ հայտարարություններ, որոնք ուղղված են գործի վարույթը կասեցնելուն, կարճելուն կամ հայցն առանց քննության թողնելուն:⁴

Մ.Ա. Գուրվիչը դատավարական առարկություններ էր համարում պատասխանողի այն բացատրությունները, որոնք ուղղված են գործի քննության դեմ և պատճառաբանված են վարույթի ծագման

¹ Ст'у Гражданский процесс. М.: "Юриздат", 1948, էջ 176:

² Ст'у Юдельсон К.С. Советский гражданский процесс. М.: "Госюриздат", 1956, էջ 220:

³ Ст'у Анисимова Л.И. Возражение ответчика в советском гражданском процессе. Автореф. дисс... к.ю.н. М., 1961, էջ 8:

⁴ Ст'у Коваленко А.Г. Полнота материалов как основа правоприминительной деятельности по гражданско-правовым спорам. Автореф. дисс... к.ю.н. Свердловск, 1978, էջ 9:

կամ այն շարունակելու ոչ իրավաչափությամբ: Դրանց թվին հեղինակը դասում էր՝

1) այն առարկությունները, որոնց շրջանակներում պատասխանողը մատնանշում է հայցվորի մոտ հայց հարուցելու իրավունքի բացակայությունը և գործի վարույթը կարճելու անհրաժեշտությունը.

2) այն առարկությունները, որոնք կապված են հայց հարուցելու իրավունքի իրականացման կարգը հայցվորի կողմից խախտելու և գործի քննությունը հետաձգելու, վարույթը կասեցնելու, գործն այլ դատարանի քննությանն ուղարկելու կամ հայցն առանց քննության թողնելու անհրաժեշտության հետ:⁵

Քննադատական վերլուծության ենթարկելով այն հեղինակների տեսակետը, ըստ որոնց դատավարական առարկությունների հիմքում բացառապես դատավարական իրավունքի նորմերն են, Դ.Ա. Խեսինը տեսակետ է հայտնում, թե որոշ դեպքերում դրանք հենվում են ոչ թե դատավարական, այլ նյութական իրավունքի նորմերի վրա: Որպես օրինակ հեղինակը վկայակոչում է քաղաքացիական նյութական օրենսդրությամբ նախատեսված հայցային վաղեմության ինստիտուտը: Դ.Ա. Խեսինի կարծիքով, եթե պատասխանողը հայցի դեմ պաշտպանվում է հայցային վաղեմություն վկայակոչելով, ապա նման առարկությունը պետք է համարել դատավարական: Ընդ որում, հեղինակն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ նման առարկությունն ուղղված չէ հայցի հիմքը կազմող հանգամանքներն ըստ էության ժխտելուն, չի վկայում հայցապահանջի ոչ իրավաչափ կամ անհիմն լինելու կամ վարույթ հարուցելիս դատարանի կողմից թույլ տրված դատավարական սխալի մասին: Հայցային վաղեմության ժամկետի բացթողումը վկայակոչելիս պատասխանողն իր առարկության հիմքում, ըստ էության, դնում է գործի ըստ էության քննություն իրականացնելու, վարույթը շարունակելու համար անհրաժեշտ պայմանների բացակայության հանգամանքը՝ նպատակ հետապնդելով դադարեցնել վարույթը տվյալ գործով:⁶

⁵ Ст'у Советский гражданский процесс. М.: «Высшая школа», 1975, էջ 118:

⁶ Ст'у Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, <http://www.lawmix.ru/comm/3118>:

Հաշվի առնելով շարադրվածը Դ.Ա. Խեսինը բաժանում է դատավարական առարկությունները հետևյալ խմբերի՝

1) կոնկրետ դատավարական իրավահարաբերության դադարեցմանն ուղղված դատավարական առարկություններ:

2) դատավարական իրավահարաբերության մեջ ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուն ուղղված դատավարական առարկություններ:

Ընդ որում, առաջին խմբի մեջ են ներառվում այն առարկությունները, որոնք տեղեկություններ են պարունակում վարույթի ծագման ոչ իրավաչափության, օրենքով սահմանված կարգի խախտմամբ հայց հարուցելու, ինչպես նաև գործը քննող դատավորի ինքնաբացարկի հիմքերի առկայության մասին: Նույն խմբում է հեղինակը դիտարկում նաև այն առարկությունները, որոնք տեղեկություններ են պարունակում իրավաչափորեն հարուցված կոնկրետ գործով վարույթը շարունակելու պայմանների բացակայության մասին (օրինակ՝ հայցային վաղեմություն ժամկետի բացթողումը վկայակոչելու կամ հայցվորի՝ դատարան չներկայանալու հիմքով հայցն առանց քննության թողնելու մասին):⁷

Նշված և դատավարագիտության մեջ առկա բազմաթիվ այլ բնորոշումների մեջ ընդհանուրն այն է, որ դատավարական առարկությունները, որպես հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության միջոց, ուղղված են վարույթը շարունակելու դեմ:

Ինչպես իրավագիտորեն նկատում է Ի.Մ. Պյատիլետովը, դատավարական առարկությունների պարտադիր և կարևորագույն հատկանիշը դրանց նպատակն է⁸: Կարծում ենք, որ այդպիսին պետք է համարել այն ակնկալվող դատավարական (այլ ոչ նյութաիրավական) արդյունքը, որին ձգտում է պատասխանողը: Մեր խորին համոզմամբ, այդպիսին պետք է համարել ոչ իրավաչափորեն հարուցված վարույթի դադարեցումը՝ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու ձևով:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 35:

Հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցներ հանդիսացող դատավարական առարկությունների շրջանակը ճշգրիտ որոշելու համար չափազանց արժեքավոր ենք համարում Մ.Ա. Ռոժկովայի այն նկատառումը, որ առարկությունների քննարկվող տեսակը ներկայացնելով՝ պատասխանողը մատնացույց է անում կոնկրետ վարույթում առկա այն թերությունները, որոնք դատարանը պարտավոր է, գործելով ex-officio և պահպանելով դատավարական օրենսդրության իմպերատիվ նորմերը, վերացնել իր նախաձեռնությամբ⁹:

Եվ իրոք, հայցի հարուցման փուլում թույլ տրված և հետագայում հայտնաբերված դատավարական այնպիսի խախտումներ պարզելու դեպքում, որոնք արգելք են հանդիսանում գործի քննության և լուծման համար, դատարանը, ըստ գործող դատավարական օրենսդրության, իրավունք չունի շարունակել գործի քննությունը և պարտավոր է վարույթը դադարեցնել առանց վեճն ըստ էության լուծելու:

Դատավարության օրենսդրությունը նախատեսում է երկու տեսակի դատավարական գործողություն, որոնցով գործի վարույթն ավարտվում է առանց վեճն ըստ էության լուծելու: Դրանք են՝ 1) գործի վարույթի կարճումը և 2) հայցն առանց քննության թողնելը:

ՔԴՕ 109-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը, եթե՝ 1) վեճը ենթակա չէ դատարանում քննության, 2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, 3) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է արբիտրաժի վճիռ կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի¹⁰:

⁹ Տե՛ս Ռոջկովա Մ.Ա. Возражения (процессуальный и материальный аспекты) // Вестник ВАС РФ, 2002, № 6, էջ 97-106, <http://rozhkova.com/ARTICLE/AR15.html>, էջ 4:

¹⁰ Գործի վարույթը կարճելու մյուս հիմքերը չենք նշում, քանի որ դրանք որևէ առնչություն չունեն քաղաքացիական գործ հարուցելու պայմանների

Գործի վարույթը կարճելու թվարկված հիմքերի վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ գործի վարույթի կարճումը գործի քննությունն ավարտելու ձև է, որը հիմնականում պայմանավորված է հայցվորի մոտ դատարան դիմելու իրավունքի բացակայությամբ: Եվ քանի որ կարճումը բացառում է նույնական հայցով կրկին դատարան դիմելու հնարավորությունը (ՔԴՕ 110-րդ հոդվ., մաս 3), կարելի է եզրակացնել, որ իր առարկությունների հիմքում վարույթը կարճելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը վկայակոչելու դեպքում պատասխանողը նպատակ է հետապնդում մեկընդմիջտ դադարեցնել վարույթը՝ բացառելով իր դեմ նույնական հայցով կրկին դատարան դիմելու հայցվորի հնարավորությունը:

Հայցն առանց քննության է թողնվում այն դեպքերում, երբ հայցվորն ընդհանրապես դատական պաշտպանության իրավունք ունի, սակայն թույլ է տվել հայց հարուցելու դատավարական կարգի օրենքով նախատեսված խախտումներ, որոնց պայմաններում վարույթը շարունակվել չի կարող և պետք է դադարեցվի: Մասնավորապես, ՔԴՕ 103-րդ հոդվածը որպես հայցն առանց քննության թողնելու հիմք դիտարկում է այն իրավիճակները, երբ՝

1) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.

2) կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու կողմերի միջև առկա համաձայնությանը, և արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, ի տարբերություն գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու դեպքում համապատասխան դատական ակտը կայացնելու հիմք հանդիսացող հանգամանքները վերանալուց հետո հայցվորն իրավունք ունի դիմելու դատարան՝ գործով վարույթը վերսկսելու համար (ՔԴՕ 104 հոդվ., մաս 4): Հետևաբար, իր առարկությունների հիմքում հայցն առանց քննության թողնելու օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը դնելու դեպքում պատասխան-

խախտման հետ, թեև հանդես են գալիս գործի քննությանն ու ըստ էության լուծմանը խորհընդոտող հանգամանքներ:

ըը նպատակ է հետապնդում դադարեցնել հենց տվյալ վարույթը, թեև դա չի բացառում վարույթի հետագա վերսկսումը կամ հետագայում նույնական հայցի ներկայացումը:

Առանց վեճն ըստ էության լուծելու գործի վարույթն ավարտելու օրենքով նախատեսված ձևերի և հիմքերի ուսումնասիրությունից ակնհայտորեն երևում է, որ դրանց նպատակը գործի հարուցման փուլում դատարանի կողմից թույլ տրված դատավարական բնույթի սխալը վերացնելն է՝ առանց ներկայացված վեճն ըստ էության լուծող վճիռ կայացնելու:¹¹

Որոշ դատավարագետներ (Խեսին, Տրոժկովա), ինչպես նշել ենք, տեսակետ են հայտնում, որ հայցի դեմ պատասխանողի պաշտպանության դատավարական միջոցների թվին պետք է դասել նաև ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը:¹²

Ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու ինստիտուտը նախատեսված է ՀՀ գործող ՔԴՕ 31-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն, դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը, կամ ոչ այն անձի դեմ, որ պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով:

¹¹ ՔԴՕ-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ: Նման իրավակարգավորումը հայ հեղինակների կողմից ենթարկվել է քննադատության այն հիմքով, որ վեճն ըստ էության չլուծող դատական ակտը վճիռ անվանվել չի կարող: Այս առումով համամիտ են Ս.Գ. Մեղրյանի արտահայտած այն դիրքորոշմանը, որ թեև վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ, վերջինս կարող է անվանվել գործը լուծող դատական ակտ, սակայն դատական ակտերի դասակարգման տեսանկյունից գործն ըստ էության լուծող դատական ակտերի թվին դասվել չի կարող: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մեղրյան Ս.Գ., Քաղաքացիական գործերով առաջին ատյանի դատարանի դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 13-26:

¹² Տե՛ս, օրինակ՝ Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, <http://www.lawmix.ru/comm/3118>:

Անառարկելի է, որ պատասխանողն իրավունք ունի ներկայացված հայցի դեմ պաշտպանվելու նպատակով դատարան ներկայացված առարկությունների շրջանակներում բարձրացնել իր ոչ պատշաճ լինելու հարցը: Գործնականում դա արվում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում համապատասխան միջնորդություն ներկայացնելու միջոցով, ինչն առաջացնում է նախնական դատական նիստում ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու հնարավորության հարցը կողմերի հետ քննարկելու և լուծելու անհրաժեշտություն (ՔԴՕ 149.8 հոդվ., մաս 2, կետ 8): Նման միջնորդություն ներկայացնելիս պատասխանողը, անկասկած, նպատակ է հետապնդում դադարեցնել իր մասնակցությունը տվյալ գործի քննությանը, և եթե դատարանը, հայցվորի համաձայնությամբ, կատարում է ոչ պատշաճ պատասխանողի փոխարինում այլ անձով, ոչ պատշաճ պատասխանողի մասնակցությամբ բոլոր դատավարական հարաբերությունները դադարում են: Ծագում են նոր դատավարական հարաբերություններ, սակայն արդեն այլ պատասխանողի մասնակցությամբ:

Ոչ պատշաճ կողմը պատշաճով փոխարինելու ինստիտուտը հայցվորին օգնելու ձևերից մեկն է՝ առանց հատուկ ձևականությունների և ավելորդությունների վերացնելու իր կողմից թույլ տրված սխալները¹³: Սակայն ակնհայտ է, որ այն ուղղված է նաև որպես պատասխանող հայցվորի նախաձեռնությամբ գործի քննության մեջ ներգրավված անձի շահերի պաշտպանությանը: Այդուհանդերձ, գտնում ենք, որ ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը չի կարող դասվել դատավարական առարկությունների թվին նախ և առաջ այն պատճառով, որ պատասխանողի ոչ պատշաճությունը ենթադրում է վարույթին նրա մասնակցության նյութաիրավական հիմքերի բացակայություն:¹⁴ Ոչ պատշաճ է կոչվում այն պատասխանողը, որի վերաբերյալ գործի հանգամանքներով ժխտվում է այն են-

¹³ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջ 148:

¹⁴ Տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М.: «Волтерс Клувер», 2008, էջ 191:

թաղրությունը, թե նա հանդիսանում է վիճելի պարտականության կրող՝ դատական քննության առարկա հանդիսացող վիճելի իրավահարաբերության սուբյեկտ: Առարկություն ներկայացնելով առ այն, որ ինքն այն անձը չէ, ով պետք է պատասխանի տվյալ հայցով, պատասխանողը հիմնվում է ոչ թե դատավարական, այլ նյութական օրենսդրության նորմերի վրա և փորձում է ցույց տալ իր դեմ ներկայացված հայցի նյութաիրավական կողմի «արատը», հայցի (այլ ոչ թե վարույթի) ոչ իրավաչափությունը: Պատասխանողին փոխարինելու հարցը քննարկելու համար դատարանը պետք է հավաստիանա, որ դրա համար առկա են նյութաիրավական հիմքեր, որ ըստ նյութական օրենսդրության տվյալ պահանջը կարող էր ներկայացվել ոչ թե որպես պատասխանող ներգրավված անձին, այլ այն սուբյեկտին, որն իրականում հանդիսանում է վիճելի իրավահարաբերության կողմ: Հետևաբար, պատասխանողի ոչ պատշաճության մասին առարկությունն ըստ էության ուղղված է հայցի դեմ, ուստի այն կարող է դասվել բացառապես նյութաիրավական առարկությունների թվին, որոնց առանձնահատկություններին կանդրադառնանք սույն աշխատանքի հաջորդ պարագրաֆում:

Ինչպես վերը նշել ենք, մի շարք հեղինակներ (օրինակ՝ Դ.Ա. Խեսինը, Ի.Մ. Պյատիլետովը) հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոց հանդիսացող դատավարական առարկությունների կազմում են դիտարկում նաև հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանների խախտման հիմքով դատավարական իրավահարաբերությունները դադարեցնելու նպատակ հետապնդող հայտարարությունները: Նշված հեղինակները, մասնավորապես, դիտարկում են այն իրավիճակները, երբ ընդդատության կանոնների խախտմամբ ներկայացված հայցը վարույթ ընդունելու դեմ առարկող պատասխանողը պահանջում է գործն ուղարկել ըստ պատշաճ ընդդատության, կամ ներկայացնում է գործը քննող դատավորի ինքնաբացարկի պահանջ (միջնորդություն): Դ.Ա. Խեսինը նման առարկությունները դասում է հայցի դեմ պատասխանողի դատավարական առարկությունների թվին՝ հիմք ընդունելով այն, որ դրանք ուղղված են

տվյալ դատարանի մասնակցությամբ դատավարական իրավահարաբերությունը դադարեցնելուն:¹⁵

Նման դատողություններն անվիճելի չեն: Իհարկե, ընդդատության կանոնները պարտադիր են ինչպես հայցվորի, այնպես էլ դատարանի համար: Համապատասխանաբար, եթե մինչև քաղաքացիական գործի հարուցումը դատարանը պարզում է, որ հայցադիմումը ներկայացվել է ընդդատության կանոնների խախտմամբ, ապա պարտավոր է որոշում կայացնել հայցադիմումը վերադարձնելու մասին (ՔԴՕ 92 հոդվ.)՝ դատարան դիմած անձին առաջարկելով հայցը ներկայացնել ըստ պատշաճ ընդդատության: Սակայն եթե ինչ-ինչ պատճառներով դատարանն այդպիսի հայցադիմումը ընդունել է վարույթ և քաղաքացիական գործը հարուցել է ընդդատության կանոնների խախտմամբ, ապա, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կամ դատաքննության ընթացքում պարզելով տվյալ դատավարական խախտումը, պարտավոր է որոշում կայացնել գործն ըստ պատշաճ ընդդատության ուղարկելու մասին (ՔԴՕ 86-րդ հոդվ.):

Եթե պատասխանողը դատարան ներկայացվող իր առարկություններում վկայակոչում է ընդդատության կանոնների խախտման փաստը և պահանջում է գործն ուղարկել ըստ պատշաճ ընդդատության, նման առարկությունը ոչ մի պարագայում վարույթի դադարեցմանը և հայցի չեզոքացմանն ուղղված լինել չի կարող: Իհարկե, գործն այլ դատարան ուղարկելու և այն տվյալ դատարանի կողմից վարույթ ընդունելու արդյունքում էական փոփոխություն է տեղի ունենում ծագած դատավարական իրավահարաբերությունների ողջ համալիրում (փոխվում է դրա սուբյեկտներից մեկը՝ գործը քննող դատարանը), սակայն սխալ կլինի խոսել այն մասին, որ տվյալ դատավարական գործողության կատարման նպատակը և արդյունքը վարույթի դադարեցումն է: Գործի փոխանցումն այլ դատարանի հայցի դեմ պաշտպանվող պատասխանողի համար որևէ նշանակություն ունենալ չի կարող. ներկայացված հայցը չի «փլուզվում», չի չեզոքացվում, վեճը իրավաբանորեն չի դադարում, պատասխանողը շարու-

¹⁵ Ст'у Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, <http://www.lawmix.ru/comm/3118>:

նակում է մնալ պարտավորության ենթադրյալ կրող և ենթադրյալ իրավասխախտող: Ասվածը լիովին վերաբերում է նաև դատավորի ինքնաբացարկի միջնորդություններին:

Մենք լիովին համամիտ ենք Ն.Մ. Տրաշկովայի տեսակետին, որ գործը մեկ դատարանից մեկ այլ դատարանի հանձնելը, ինչպես նաև դատավորի ինքնաբացարկը չեն ծառայում պատասխանողի շահերի պաշտպանության ընդհանուր նպատակին, ուստի համապատասխան գործողությունները կատարելու անհրաժեշտության վերաբերյալ պատասխանողի հայտարարությունները հայցի դեմ դատավարական առարկությունների թվին դասվել չեն կարող:¹⁶

Գ.Դ. Վասիլևան և Ի.Մ. Պյատիլետովը գտնում էին, որ պատասխանողի դատավարական առարկությունները չեն սահմանափակվում գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու անհրաժեշտության վերաբերյալ պատասխանողի հայտարարություններով: Ըստ հեղինակների, դրանց կազմում պետք է դիտարկվեն նաև՝

1) գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցվորի և գործին մասնակցող այլ անձանց բացատրությունների, դիմումների, միջնորդությունների և այլ գործողությունների կապակցությամբ արվող բոլոր այն հայտարարությունները, որոնք ուղղված են նրա շահերի պաշտպանությանը,

2) գործի քննությանը խոչընդոտող հանգամանքների առկայության վերաբերյալ հայտարարությունները և վարույթը կասեցնելու կամ դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությունները:¹⁷

Նման դիրքորոշումը ևս վիճելի է: Համամիտ ենք Դ.Ա. Խեսինի հետ այն հարցում, որ հայցի դեմ պատասխանողի պաշտպանության դատավարական միջոցների շրջանակը դիտարկելիս պետք չէ դրանց մեջ ներառել այնպիսի միջոցներ, որոնք նախատեսված չեն զուտ հայցի դեմ պաշտպանվելու համար, պաշտպանական միջոց-

¹⁶ Ст'у Трашкова Н.М. Защита ответчика в гражданском процессе. Дисс... к.ю.н. - М., 2009, էջ 107:

¹⁷ Ст'у Васильева Г.Д. Защита ответчика против иска в гражданском судопроизводстве. Красноярск, 1982, էջ 98, Пятилетов И.М. Защита интересов ответчика в советском гражданском процессе. М., 1990, էջ 38:

ներ են գործին մասնակցող ցանկացած սուբյեկտի համար:¹⁸ Եվ իրոք, նման մոտեցման պարագայում ստիպված կլինենք հայցի դեմ պատասխանողի պաշտպանության դատավարական միջոցների թվին դասել մրցակցային գրեթե բոլոր իրավունքների իրականացմանն ուղղված գործողությունները: Հայցի դեմ պատասխանողի դատավարական առարկությունների նպատակը պետք է լինի վարույթին մասնակցելու «բեռից», ոչ իրավաչափորեն հարուցված հայցից ձերբազատվելը:

Իհարկե, գործի վարույթը կասեցնելու կամ դատական նիստը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունների բավարարումը կարող է նպաստել պատասխանողի կողմից իր իրավունքներն իրականացնելու համար բարենպաստ պայմանների ապահովմանը, սակայն վարույթի դադարեցման, հայցի չեզոքացման և վեճի դադարեցման հանգեցնել չի կարող:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ, հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցներ հանդիսացող դատավարական առարկությունները պատասխանողի պատճառաբանված նկատառումներն են, որոնք, ըստ էության չժխտելով հայցային պահանջները և հենված լինելով դատավարական իրավունքի նորմերի վրա, ուղղված են գործի վարույթը կարճելուն կամ հայցն առանց քննության թողնելուն:

Բանալի բաներ՝ պատասխանողի պաշտպանության միջոցներ, հայց, առարկություններ, դատավարական առարկություններ, նյութաիրավական առարկություններ, վարույթի կարճում, հայցն առանց քննության թողնելը

Резюме

На основе анализа процессуального законодательства РА и научных подходов к проблематике процессуальных возражений ответчика, в статье обосновывается тезис о том, что основным

¹⁸ St' u Хесин Д.А. Процессуальные возражения ответчика, <http://www.lawmix.ru/comm/3118>:

признаком процессуальных возражений против иска является их цель - тот процессуальный (а не материально-правовой) результат, к которому стремится ответчик, а именно: прекращение производства по делу без рассмотрения иска по существу.

На основе критического анализа предлагаемых в науке критериев отнесения действий ответчика к числу процессуальных возражений против иска, делается вывод о том, что нельзя считать таковыми действия ответчика, непосредственно не корреспондирующие иску либо имеющие материально-правовые основания.

Ключевые слова: средства защиты ответчика, иск, возражения, процессуальные возражения, материально-правовые возражения, прекращение производства, оставление иска без рассмотрения.

Resume

On the basis of procedural law of Russian Federation and scientific approaches to the problem of procedural objections of the respondent, it is mentioned in the article that the main feature of procedural objections against claim is their aim- the procedural (not material-right) result to which the respondent tends to, but not stopping the case without having considered it properly. In the critical analysis of the suggested criteria of the respondent in a procedural objections of the respondent against claim, one comes to a conclusion that we can't consider his actions on the basis of material-right or not corresponding with the claim.

Key words: means of respondent's defence, claim, objection, procedural objections, material-right objections, stopping the case, to leave the claim without consideration

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ИНТЕРПРЕТАЦИИ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ ТЮРКОЯЗЫЧНЫХ ИРАНЦЕВ В СОВРЕМЕННОЙ ЭТНОЛОГИИ

Г. Г. Аветикян

Сразу после терактов 11 сентября 2001 года в США освещение в средствах массовой информации вопросов, связанных с Исламской Республикой Иран, было почти полностью сведено к проблемам ядерной энергетики и предполагаемых планов создания оружия массового поражения. Актуализация тем, связанных с Ираном, стала поводом и для освещения ряда других вопросов, касающихся национализма и положения этнических меньшинств в Иране. В СМИ появились сообщения о существовании серьезных проблем в иранском обществе, таких как несправедливое обращение властей с (этническими) меньшинствами и неспособность государства справиться с конфликтами, проистекающими из культурного и языкового разнообразия населения страны¹. За пределами Ирана сформировалась независимая от государственного контроля сеть из ряда современных информационных ресурсов (интернет-сайты, новые телеканалы, отдельные передачи, журналы; также стоит отметить некоторые публикации в западной и постсоветской академической науке), освещающих различные аспекты жизни арабов, курдов, белуджей и тюркоязычных жителей нескольких иранских останов². Последних часто называют азери³ или азербай-

¹ В Иране набирает обороты конфликт между курдами и азербайджанцами [Электронный ресурс] // URL: http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=103467 (дата обращения: 23.08.2013).; Iran: End human rights violations against Iran's Ahwazi Arab minority [Электронный ресурс] // URL: <http://www.amnesty.org/en/library/asset/MDE13/005/2014/en/41f45df2-0d84-463e-a99e-e093175868f8/mde130052014en.html> (дата обращения: 23.08.2013).

² Единица административно-территориального деления в Иране.

джанцами в западных источниках, вольно или невольно отождествляя с населением Азербайджанской Республики – независимого государства к северу от Ирана, до 1991 г. входившего в состав Советского Союза.

Официальный курс Исламской Республики Иран исключает представление о различных этничностях и национальностях (в том числе персах-мусульманах, которые составляют большинство населения) и не признаёт разделения людей в зависимости от их этнического происхождения. Статья 19 Конституции Исламской Республики Иран, принятой в 1979 году, гласит, что «иранцы, относящиеся к любому этносу или племени, обладают равными правами; цвет кожи, раса, язык и т. п. не ставит никого в привилегированное положение»⁴. Конституция не содержит понятия этнические меньшинства, заявляя, что «все мусульмане представляют собой единую умму»⁵ и, утверждая, что руководство Исламской Республики обязано создавать условия, чтобы «его общая политическая линия основывалась на союзе исламских народов: оно должно прилагать максимум усилий к тому, чтобы осуществить политическое, экономическое и культурное единство исламского мира»⁶. Принцип равенства этносов позволяет сделать вывод о признании приоритета конфессиональной идентичности над этнической. Данный подход стал основанием для признания государством

³ В иранских источниках часто встречаются и формы азари, Азарбайджан, с целью подчеркнуть различие между Азарбайджаном (в Иране) и Азербайджаном (соседней с Ираном республикой). Путаница в названиях осложняется ещё и тем, что под термином азари принято обозначать один из иранских языков, распространённых когда-то в северных провинциях современного Ирана.

⁴ Конституция Исламской Республики Иран [Электронный ресурс] // Глава третья. Права народа. Статья 19. URL: <http://www.worldislamlaw.ru/archives/292> (дата обращения: 23.08.2013).

⁵ Умма – араб. أمة, здесь – совокупность всех мусульман.

⁶ Конституция Исламской Республики Иран [Электронный ресурс] // Глава первая. Основные принципы. Статья 11. URL: <http://www.worldislamlaw.ru/archives/292> (дата обращения: 23.08.2013).

некоторых этноконфессиональных меньшинств (зороастрийцы, христиане и иудеи). При этом различия между представителями мусульманского населения не акцентируются. Последние отличаются друг от друга родным языком или являются носителями определённых региональных и прочих идентичностей *помимо* или *наряду* с общеиранской.

Касается это и тюркоязычных иранцев, составляющих наиболее многочисленную иноязычную группу страны⁷. Эта часть населения Исламской Республики в последние годы регулярно становится объектом политических манипуляций, в ходе которых делаются публичные заявления о «разделённых народах», что вызывает обвинения в сепаратизме со стороны правительства в Тегеране.

Вопрос об иранской идентичности является центральным предметом изучения в работе Фирузе Кашани-Сабет «Пограничные фикции: формирование иранской нации, 1804-1946» [5], которая исследует то, как иранские концепции национальной географии воздействовали на культурные и политические изменения. По её мнению, «пограничные фикции» или то, каким образом иранцы рассматривали свои часто колеблющиеся границы и конфликты, которые их окружали, сыграли доминирующую роль в определении нации. На этих окраинах зарождались новые идеи гражданства и национальности, перерабатывая устаревшие понятия об этнической принадлежности. Сосредоточившись на географии, Кашани-Сабет пытается описать и объяснить иранский национализм, который охватывает всех людей, живущих в Иране, в том числе и тюркоязычное население Иранского Азербайджана.

Сторонники азербайджанского национализма в Иране строят свою аргументацию на отстаивании тезиса об отчетливой самобытности азербайджанской идентичности, подавляемой

⁷The CIA World Factbook [Электронный ресурс] // Iran. URL: <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html> (дата обращения: 23.08.2013)

персами, и образе двух братьев, оказавшихся на противоположных берегах реки Аракс. В частности, недавно опубликованная книга американской исследовательницы Бренды Шеффер «Границы и братья: Иран и вызовы азербайджанской идентичности» [8] является примером конструирования образа разделённой нации. Она описывает свои идеи и взгляд на вопрос в упомянутой выше монографии, приводя аргументы против выводов и тезисов, предложенных, в частности, ирано-голландским историком и политологом Тураджем Атабаки [3], который пытается подчеркнуть, что вопросы, связанные с азербайджанцами - иранскими гражданами, не должны быть интерпретированы в рамках представлений об угнетенной группе, которая сталкивается с проблемами, насаждаемыми «иранскими» (и потому, якобы, чужеродными) властями. Можно также предположить, что произвольное переименование северных провинций Ирана в *Гюней Азербайджан* (Южный Азербайджан) несет в себе прямую и недвусмысленную политическую нагрузку, попытку теоретически оформить территориальные претензии как символическое «воссоединение Севера и Юга».

В свою очередь Джамиль Гасанлы, бывший член Милли Меджлиса (парламента) Азербайджанской Республики, профессор Бакинского государственного университета, несколько лет назад опубликовал книгу «На заре Холодной войны: советско-американский кризис вокруг иранского Азербайджана, 1941-1946» [4], которая служит примером того, как одновременно официальные и академические деятели Азербайджанской Республики воспринимают вопрос о «Южном Азербайджане» и трактуют аспекты истории азербайджанского народа. Например, ссылаясь на события в Иранском Азербайджане через несколько месяцев после окончания Второй Мировой войны (ввод советских войск в северный Иран и провозглашение там Азербайджанской республики), автор утверждает, что это «движение 21 Азер воплощало характер национального движения, оно сформировало чувство Родины и систему национальных ценностей в сознании иранского азербайджанского населения» [4, с. xi]. Однако внимательный подход к

изучению вопроса о сепаратистских настроениях в Иранском Азербайджане показывает, что не вполне справедливо ставить вопрос о «движении», как это часто делают, и что это не всегда вопрос идентичности или «чувства родства» с теми, кто живёт в Азербайджанской Республике.

Фактически вся советская наука, начиная с 1930-х гг. исходила из принципа «единства» азербайджанского народа, (относя его «этногенез» к позднему средневековью) часть которого в силу исторических обстоятельств проживает в Иране. Показательно, в частности, что в изданном в СССР рекомендательном указателе литературы по Ирану [7] можно встретить множество работ, в заглавии которых стоит (южный) Азербайджан⁸.

Заявления о национальном пробуждении, призывы к объединению, а также в целом разработка концепции единой родины всех тюркоязычных народов Южного Кавказа и Северного Ирана в рамках географической и политической единицы под названием Азербайджан, разделенной на северную (Республика Азербайджан) и южную (иранские провинции Западный и Восточный Азербайджан) части, в значительной степени поддерживаются в Азербайджанской Республике, которая еще совсем недавно обрела независимость в результате распада Советского Союза.

⁸ См. Кашкай С. М. Из истории Маннейского царства. Баку, 1977; Али-Заде А. А. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв. Баку, 1956; Ибрагимов Дж. М. Феодалные государства на территории Азербайджана XV века. Баку, 1962; Эфендиев О. А. Образование азербайджанского государства Сефевидов (!) в начале XVI века. Баку, 1961; Петрушевский И. П. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв. Л., 1949; Рахмани А. А. «Тарих-и алам арай-и Аббаси» как источник по истории Азербайджана. Баку, 1960; Алиев Ф. М. Антииранские выступления и борьба против турецкой оккупации в Азербайджане в первой половине XVIII в. Баку, 1975; Исмаилов Ш. Ю. Философия Махмуда Шабустари. Баку, 1976 (Махмуд Шабустари фигурирует в этой книге в качестве "азербайджанского философа-пантеиста"); Ибрагимбеги Х. М. Россия и Азербайджан в первой трети XIX века. М, 1969 и т. п.

Хотя официальные представители власти не заявляют о позиции по северо-западным провинциям Ирана, периодически еще возникают случаи раздора между Ираном и Азербайджаном вокруг указанного вопроса.

В качестве примера подобного инцидента можно привести эпизод, когда, несмотря на заявления Азербайджана о том, что он не поддерживает националистическую деятельность NLMSA⁹ или UAM¹⁰, Тегеран был сильно возмущен тем, что в Азербайджане были опубликованы карты на обложках учебников для пятого класса с развевающимся азербайджанским флагом над Республикой Азербайджан и иранским Азербайджаном. Учебники были изданы политической партией Алиева несколько лет назад [6].

В апреле 2006 г. президент Азербайджана Ильхам Алиев заявил, что существует около 30 миллионов азербайджанцев в Иране, и что, по его мнению, «каждая нация, каждая страна заботится о своем народе по всему миру, и Азербайджан не является исключением. Соответственно, улучшение жизни азербайджанцев, проживающих за пределами Азербайджана, для нас является одним из главных приоритетов»¹¹. Примечательно и то, что количество предполагаемых азербайджанцев в Иране было весьма сильно преувеличено. В многочисленных националистических источниках часто употребляются и другие цифры; утверждается, что азербайджанцы в Иране сегодня составляют не менее четверти всего населения страны. Более умеренные данные о количестве тюркоязычных жителей северо-западного Ирана не превышают 5-6 миллионов [2, с. 60].

⁹ National Liberation Movement of Southern Azerbaijan – Национальное движение освобождения Южного Азербайджана

¹⁰ United Azerbaijan Movement – Движение за объединенный Азербайджан

¹¹ Aliyev I. H. A Conversation with Ilham Aliyev Presided by Brent Scowcroft [Электронный ресурс] // Rush Transcript. Federal News Service, Inc. Council on Foreign Relations. URL:

http://www.cfr.org/publication/10547/conversation_with_ilham_aliyev_rush_transcript_federal_news_service_inc.html (дата обращения: 23.08.2013).

Таким образом, азербайджанский национализм и процесс национально-государственного строительства легитимирует относительно недавнее явление, когда территории, находящиеся к северу от реки Аракс, называются тем же именем, что и область на севере Ирана. Зачастую делались попытки обосновать и оправдать действия и чаяния националистических кругов в иранском Азербайджане, вторгаясь в области гуманитарных наук, особенно истории, искусствоведения, филологии и антропологии [8]. В некоторых случаях, главным образом, в военные периоды (Вторая мировая война и советская оккупация северных провинций Ирана [4]; арцахский (нагорно-карабахский) конфликт между постсоветской Арменией и Азербайджаном), употребляемые в политических и академических дебатах аргументы доходили до отрицания того, что представители соответствующих групп готовы были признать в мирное время. Иными словами, возникновение и эскалация конфликтов способствовали становлению и укреплению новых теорий и пересмотру предыдущих. Создавались и конструировались доказательства, существование которых не всегда может быть подтверждено. Существенным источником путаницы в научных подходах или ненадлежащего упрощения вопросов этнологии является достаточно часто встречающаяся и иногда скрытая тенденция игнорирования свидетельств о прошлых исторических реалиях или их эффективной манипуляции в соответствии с современной политической ситуацией. Очевидно, что азербайджанская школа востоковедения и образовательные центры, которые проводили исследования в области гуманитарных наук, как и все другие учреждения, были потомками и в каком-то смысле последователями ранее разработанного и установленного советского дискурса.

Создание или преобразование новой национальной идентичности, которая будет соответствовать интересам нового независимого государства и относительно недавно сформированному образу «разделенной нации», подразумевало и переписывание или реинтерпретацию истории, придумывание новых традиций и попытку максимально углубиться, когда речь идет о корнях нации.

Примордиальные взгляды на национальные и исторические вопросы были распространены как в советское время, так и после него. В случае постсоветского Азербайджана они также сыграли существенную роль при создании национальной идентичности, предоставляя вариант «разумной» истории, основанной на последовательных фактах и логике, которые должны были привести к предположению, что члены нации являются потомками автохтонных групп, бывших жертв соседних народов, управляемых русскими и/или персами. Следует отметить, что во главе многих правящих династий в Иране, таких как династия Каджаров (1796–1925), были на самом деле тюркоязычные деятели, которые наряду с фарси употребляли и собственные наречия. Наличие тюркоязычных иранцев, составляющих определенную часть населения Ирана, зачастую интерпретируется, как «азербайджанская нация», страдающая от «персидского ига».

Описание прошлого с помощью современных терминов и установок национализма, в значительной степени полагаясь на лингвистику (например, утверждение, что каджарские монархи, говорящие на собственном турецком диалекте со своими соплеменниками и на персидском с придворными служащими, рассмотрели бы языковое разнообразие (если бы они когда-либо размышляли об этом), как постоянный и неизменный факт жизни, налагаемый на человека Богом [1, с. 273]), не всегда удовлетворяет критериям объективности.

Таким образом, определение и представление об отдельной от более широкого понимания иранского народа национальной идентичности тюркоязычных иранцев, а также их идентификация с азербайджанцами бывшей советской республики на основе языковых особенностей и сходства обусловлены появлением новых политико-правовых доктрин, представленных чаще за пределами самого Ирана.

Ключевые слова: политико-правовые доктрины, международные отношения, язык и этничность, Ближний Восток, тюркоязычные иранцы.

Ամփոփում

Հոդվածը քննում է Արաքս գետի երկու ափերին հաստատված բնակչության՝ ենթադրաբար ադրբեջանցիների ընդհանուր հայրենիքի ու բաժանված ազգի մասին ժամանակակից տեսակետները: ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ պետության ստեղծումը նաև ենթադրում էր հարևան Իրանի թյուրքալեզու քաղաքացիների պատմության ու ինքնության վերանայում ու վերաիմաստավորում: Այնուամենայնիվ, պաշտոնական Իրանը չի ճանաչում բնակչության՝ ըստ էթնիկ ծագման տարանջատման սկզբունքը: Հոդվածում ուշադրություն է դարձվում և քննության են ենթարկվում նաև Ադրբեջանի Հանրապատեությունում գերակշռող ու արևմետյան մի շարք աղբյուրներում տարածված տեսակետները:

Բանալի բառեր. Իրավաքաղաքական հայեցակարգեր, միջազգային հարաբերություններ, լեզու և էթնոս, Մերձավոր Արևելք, թյուրքալեզու իրանցիներ:

Resume

The article analyzes the contemporary discourse about a divided nation and common homeland of Azerbaijanis living presumably on both sides of the river Arax. The creation of a new independent state after the collapse of the Soviet Union also implied a new interpretation and revision of the history of Turkic-speaking citizens of neighboring Iran. However, official Iran does not differentiate its population based on their ethnic origins. The article focuses upon and criticizes the views, which dominate in the Azerbaijani Republic and have also been widely spread in a number of Western sources.

Key words: political and legal doctrines, international relations, language and ethnicity, Middle East, Turkic-speaking Iranians

Литература

1. Абрамян Е. Кясреви- объединяющий националист Ирана // Ближневосточные исследования. 1973. Т. 9. № 3. С. 271-295.

2. Асатрян Г. Этническая композиция Ирана. Ереван: Кавказский центр иранистики, 2012. 130 с.
3. Атабаки Т. Азербайджан: этничность и автономия в Иране в XX веке. Лондон: Бритиш академи пресс, 1993. 238 с.
4. Гасанлы Дж. На заре Холодной войны: советско-американский кризис вокруг иранского Азербайджана, 1941- 1946. Лэнхем: Издательство Роумэн и Литтлфилд, 2006. 424 с.
5. Кашани-Сабет Ф. Пограничные фикции: формирование иранской нации, 1804-1946. Принстон, Нью-Джерси: Пресса Принстонского университета, 1999. 304 с.
6. Олсон Р. Азербайджанский вопрос и турецко-иранские отношения, 2000- 2002 // Национализм и этническая политика. Зима 2002. Т. 8. № 4. С. 61-85.
7. Сахаров И. В. Рекомендательный указатель литературы. Иран. М.: Книга, 1978. 111 с.
8. Шеффер Б. Границы и братья: Иран и вызовы азербайджанской идентичности. Пресса МИТ, 2002. 300 с.

References

1. Abrahamian E. Kasravi: The Integrative Nationalist of Iran // Middle Eastern Studies. 1973. Vol. 9. No. 3. P. 271-295.
2. Asatrian G. Ethnic Composition of Iran. Yerevan: Caucasian Center for Iranian Studies, 2012. 130 p.
3. Atabaki T. Azerbaijan: Ethnicity and Autonomy in Twentieth-Century Iran. London: British Academy Press, 1993. 238 p.
4. Hasanli J. At the Dawn of the Cold War: the Soviet-American Crisis over Iranian Azerbaijan, 1941- 1946. Lanham, Md.: Rowman & Littlefield Publishers, Inc., 2006. 424 p.
5. Kashani-Sabet, F. Frontier Fictions: Shaping the Iranian Nation, 1804-1946. Princeton, NJ: Princeton University Press, 1999. 304p.
6. Olson R. The "Azeri" Question and Turkey-Iran Relations, 2000-2002 // Nationalism and Ethnic Politics. Winter 2002. Vol. 8. No. 4. P. 61-85.

7. Sakharov I. V. Recommended literature index. Iran. Moscow: Kniga, 1978. 111 p.
8. Shaffer B. Borders and Brethren: Iran and the Challenge of Azerbaijani Identity. MIT Press, 2002. 300 p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ջ.Ա. Թադևոսյան, Մ.Մ. Չաքարյան

Հայաստանի հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկա վիճակը և առկա հիմնախնդիրները..... 3

Դավիթ Հախվերդյան, Էրիկ Համբարձումյան

Հումքային ապրանքների գների դինամիկան համաշխարհային շուկայում 14

Գևորգ Գրիգորյան, Անահիտ Հակոբյան

Արտաքին պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները..... 27

Լիլիթ Ղանթարյան

«Անապահով խավ» հասկացության սոցիալ-տնտեսական բովանդակությունը 39

Argine Mardoyan

The importance and problems of reconstruction of logistic systems on the way of developing competitive business in cis countries and georgia..... 47

Արփենիկ Հայկի Մուրադյան

Համաշխարհային տնտեսական համակարգի միասնականությունը..... 58

Ա.Սիմոնյան

ՀՀ առևտրային բանկերի կողմից ավանդական բանկային ծառայությունների մատուցման կատարելագործման ուղիները..... 68

Լևոն Դոխոյան

Ձեռնարկատիրական գործունեության բնութագիրը 83
Ձեռնարկատիրական գործունեության միջազգային փորձը 91

Ա.Հ. Դռնոյան

Մրցունակության գնահատման մեթոդաբանության մշակման մի քանի հարցեր 99

Վանինե Աշոտի Երանոսյան

Բնակչության խնայողությունների և սպառման փոխկապվածության դրսևորումները ՀՀ-ում 106

Հ. Կ. Դավթյան, Է. Հ. Նասիյան

Որակի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում 114

Ծովինար Կարապետյան

Տնտեսական համակարգում ինովացիոն մշակույթի ձևավորման խնդիրները 124

Ա.Վ. Մարդոյան

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում առկա բնապահպանական հիմնախնդիրները 133

Ա.Խ.Մարկոսյան, Ա.Վ.Մարդոյան

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ներկա վիճակը և առկա զարգացումները 143

Ն. Հ. Էվոյան

Պատրաստի արտադրանքի պաշարի ինքնարժեքի որոշման մեթոդները 154
Արժույթային ճգնաժամերի ազդեցությունը արժույթային քաղաքականության վրա 171

S.Ս. Վարդումյան, Է.Հ. Նասիյան

Նորամուծությունների կառավարման առանձնահատկությունները մշակույթի ոլորտում 195

Վանինե Աշոտի Երանոսյան

Առևտրային բանկերի գործունեությունը բնակչության խնայողությունների ներգրավման գործում 204

Վիլինա Եղիազարյան

ՀՀ հյուրանոցային համակարգի արդի վիճակն ու զարգացման ուղղությունները 212

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Ռաֆիկ Խաչատրյան, Դոնարա Մանուչարյան

Հիդրոմոդուլի գրաֆիկի կառուցման և լրակազմավորման ավտոմատացումը 224

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կարինե Սարգսյան

ՀՀ պետական և տարածքային կառավարման մարմինների գնահատման և մոնիտորինգի ցուցանիշների համակարգ 230

Անդրանիկ Գրիգորյան

Միջին մասնագիտական կրթական համակարգի թերությունները և դրանց հաղթահարման մոտեցումները 237

ՏՈՒՐԻԶՄ

Գ.Ս. Մանասյան

Մակերևույթի մարդածին ծանրաբեռնվածության և վերափոխման աստիճանի գնահատում (Շիրակի մարզի օրինակով) 250

Հակոբ Արշակյան

Զբոսաշրջային քլաստերների ծնավորումն ու զարգացումը
ՀՀ-ում263

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վահե Սայադյան

Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը
20-րդ դարում 272

Հաբեթ Մկրտչյան

Իրավաբանական սխալը և դրա քրեաիրավական
նշանակությունը.....285

Կարեն Սարգսյան

Հայցի դեմ պատասխանողի նյութաիրավական առարկությունների
հասկացությունը, առարկան և հիմքերը քաղաքացիական
դատավարությունում.....294

Պատասխանողի դատավարական առարկությունները
որպես հայցի դեմ պաշտպանության միջոց..... 316

Г. Г. Аветикян

Политико-правовые проблемы интерпретации
национальной идентичности тюркоязычных иранцев в современной
этнологии329

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38

Ֆաքս (374 10) 24 00 38

Վեբ կայք <http://www.era.am>

Էլ. փոստ. segart25@yahoo.com

d.hovhannisyan@eriicta.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Ք. Անանյանի, Ն. Գևորգյանի

Ստորագրված է տպագրության 22.09.2014թ.

Ֆորմատ՝ 60x84/16 Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 21.5 մամուլ: Տպաքանակ՝ 100:

© ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, 2014

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:

Հեռ.՝ (+374 10) 52 88 00:

E-mail: info@astghik.am, www.astghik.am